ԱԿԱԿԻ ՇԱՆԻՁԵ

ՀԻՆ ՎՐԱՑԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

სომხეთის სსრ მეცნიერებათა აკადემია
აღმოსავლეთმცოდნეობის ინსტიტუტი

აკაკი შანიძე

ძველი ქართული ენის გრამატიკა

სომხეთის სსრ მეცნ. აკად. გამომცემლობა
ერევანი 1983

ДУБЛЕТ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԿԱԿԻ ՇԱՆԻՁԵ

ՀԻՆ ՎՐԱՑԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

A II/70189

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1983

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Արևելագիտության ինստիտուտի
խորհրդի որոշմամբ

Վրացերենից թարգմանեցին՝
Հ. Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Գ. Ա. ՋՈՐԱՆՅԱՆ

Պատասխանատու խմբագիրներ՝
Գ. Բ. ՋԱՀՈՒԿՅԱՆ,
Գ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել՝
Հ. Հ. ԿՈՍՏԱՆՅԱՆ, Մ. Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Շանիձե Ա. Գ.

Հին վրացերենի քերականություն /Պատ. խմբ. Գ. Ջահուկյան, Գ. Մուրադյան.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1982 224 էջ

Աշխատությունը հին վրացերենի քերականության համառոտ համակարգված շարադրանքն է։ Հեղինակը բուն գրավոր հուշարձանների հանգամանորեն բնութագրել է հին վրացերեն լեզուն, հոլովման և խոնարհման համակարգերը, ընդգծել ձևաբանական և շարահյուսական ինքնատիպությունները։ Գրքի հայերեն թարգմանությունը պարունակում է որոշ լրացումներ և փոփոխություններ։

Սույն աշխատանքը կոչված է նպաստելու վրացերենի ուսումնասիրությանը և խթանելու կովկասագիտության զարգացմանը մեր հանրապետությունում։

Շ $\frac{4602000000}{703(02)-83}$ 17—81

© *Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 1983*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5
Հայերեն հրատարակության առթիվ 7
Ներածություն 10
Վրաց այբուբենը 10
Հնչյունների դասակարգումը 17
Ուղղագրական երևույթներ 19
Հիմնական հնչյունական երևույթներ 21

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անուններ 36
Հոլովում 36
Որոշյալ անուններ 51
Դերանուններ 55
Բառածանցում 60
Բառակազմություն 70
Բայ 73
Խոնարհման կարգեր 74
Դեմք և թիվ 74
Ենթակայական ցուցիչներ 76
Խնդրային ցուցիչներ 82
Ժամանակ և եղանակ 86
Կերպ 86
Դարձողություն 87
Բազմակիություն 87
Հետևողություն 87
Բայաշարք 88
Բայածանցման կարգեր 91
Ուղղություն և կողմնորոշում 91
Սեռ 96
Ներգործական սեռ 96

Կրավորական սեռ 96
Շարժուն կրավորական 96
Կայուն կրավորական 101
Չեզոք սեռ 103
Դարձություն 103
Խոնարհում 109
Ներգործական սեռ 109
Թեմա 109
Աճական 115
Կրավորական սեռ 139
Շարժուն կրավորական 139
Նախածանցավոր կրավորական 139
Վերջածանցավոր կրավորական 146
Անածանց կրավորական 150
Կայուն կրավորական 153
Չեզոք սեռ 155
Բարդ բայեր 158
Փոխարինելիություն 165
Փոխարինելիություն ըստ թվի 166
Փոխարինելիություն ըստ բայաշարքի 168
Փոխարինելիություն ըստ դարձության 172
Հարկադրական բայաձևեր 173
Բայի անդեմ ձևեր 174
Բայանուն 174
Դերբայ 176
Ոդեռներ 181
Մակբայ 181
Կապ 183
Շաղկապ 187
Մասնիկ 190

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Ենթակա և խնդիր 196
Գերադրական աստիճանի ձևերի շարահյուսական նշանակությունը . . 206
Համաձայնություն 208
Որոշիչ-որոշյալ 213
Այլևայլք 216

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Վերջին տասնամյակներում իրականացվում է վրացական ինքնուրույն ու թարգմանական մատենագրության բնագրերի մատենաշարային հրատարակություն, ձեռագրական հավաքածուների ակադեմիական նկարագրություն, վրաց ժողովրդի անցյալի, լեզվի ու գրականության պատմության հանգուցային խնդիրների մենագրական հետազոտություն և այլն: Այդ ամենի շնորհիվ տարեցտարի ակներև է դառնում վրաց ժողովրդի ստեղծած մշակութային արժեքների ընդհանուր գիտական ու ճանաչողական նշանակությունը, աճում է և արևելագիտական մյուս բնագավառների հետաքրքրությունը դեպի վրացագիտությունը:

Վրաց ժողովրդի պատմության, մատենագրության, լեզվի ու արվեստի ուսումնասիրությունը նշանակալիորեն զբաղեցնում է նաև հայագետներին: Մատենագրական շատ հուշարձանների հայ-վրացական խմբագրությունների գոյությունը, մշակութային նույն ոլորտներում տևականորեն գտնվելու իրողությունը, ազգակցությունների ու փոխազդեցությունների առկայությունը, պատմական ու մշակութային ընդհանրական ինստիտուտների գոյության փաստը, և, ի վերջո, բարիդրացիության ու միմյանց հեցուկ լինելու հազարամյա ավանդները հայագետին պարտավորեցնում են նախանձախնդիր լինել վրացագիտության նվաճումներին:

Վրացագիտության վաստակաշատ նահապետ պրոֆ. Ակակի Շանիձեի «Հին վրացերենի քերականությունը» (լույս է տեսել 1976 թ. Թբիլիսիի համալսարանի հրատարակությամբ) վրաց լեզվի քերականության ու պատմության տևական հետազոտության համառոտակի ամփոփումն է՝ գրված ձեռնարկի տեսքով: Նրանում սահմանված ու բնութագրված են այն բոլոր ինքնատիպությունները, որոնցով հարուստ է հին վրացերենը: Գիրքն ունի բացորոշ գործնական նպատակ՝ դյուրացնելու վրաց լեզվի ու մատենագրության պատմաբանների, բնագրագետ-

ների ու աղբյուրագետների աշխատանքը: Այն միաժամանակ կոչված է գոհացում տալու օտարազգի գիտնականների հետաքրքրությանը հին վրացերենի խնդիրներում:

Սույն թարգմանությունը ձեռնարկելու հիմնական նպատակներից մեկը մեզանում ծավալվող վրացագիտական ուսումնասիրություններին նպաստավոր լինելն է: Բայց միաժամանակ՝ Ա. Շանիձեի «Հին վրացերենի քերականության» հայերեն հրատարակությունը օգտակար կլինի նաև ընդհանուր լեզվաբանական խնդիրներ արծարծող մասնագետներին:

Պետք խոստովանել, սակայն, որ քերականագիտական աշխատություններ թարգմանելու փորձի պակասը, մանավանդ վրաց լեզվի բարդ կառուցվածքի ու նրանով պայմանավորված տերմինաբանության՝ զուտ վրացերենին հատուկ համակարգի առկայության պայմաններում, զգալի դժվարություններ հարուցեց: Առանձին տերմինների թարգմանության հայացման կապակցությամբ անհրաժեշտ եղավ դիմել հեղինակին՝ խորհուրդ առնելու և կամքը հարցնելու համար: Ա. Շանիձեն այդ ամենն ընդունեց սիրալիրությամբ և առանձին դեպքերում եռանդագին պնդեց այս կամ այն տերմինը հայերեն փոխանցելու իր առաջարկած տարբերակը:

Գրքում կատարված մասնակի փոփոխությունները (թարգմանաբար լրացումները կամ հայերենի տվյալներից ելնող բացատրությունները, որոնք միշտ անկյունավոր փակագծերում են) համաձայնեցված են հեղինակի հետ: Գրաբար թարգմանությամբ են օժտվել այն օրինակները, որոնք ունեն միջնադարյան հայկական համապատասխանություն, իսկ մնացած դեպքերում դրանք թարգմանվում են նոր հայերենի: Բնագրական վկայակոչությունների մեջ նկատված վրիպումներն ուղղված են:

Հայերեն հրատարակության առթիվ հեղինակը գրել է առաջաբան, ուստի վրացերեն բնագրում եղած առաջաբանը այլևս պահելու հարկ չկար: Դարձյալ հեղինակի համաձայնությամբ, գրքի վերջից հանել ենք վկայակոչված առանձին բառերի ու տերմինների նոր վրացերեն բացատրության բառացանկը: Նույն ձևով ենք վարվել և վրացերենի բնագրերի հրատարակության, լեզվաբանական հետազոտությունների և բառարանների համառոտ մատենագիտության հետ, որոնք հայ ընթերցողին զբաղեցնող գործնական տեղեկություն գրեթե չեն բովանդակում:

ԽՄԲԱԳԻՐՆԵՐ

ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Հայ և վրաց ժողովուրդներն անհիշելի ժամանակներից անմիջական հարևաններ են։ Հաճախ նրանք պատմական ընդհանուր ճակատագիր են ունեցել և համատեղ մարտնչել են ներխուժած թշնամիների դեմ։ Անցյալում այս երկու քրիստոնյա ժողովուրդներն իրար հետ ավելի սերտ մշակութային փոխհարաբերության և փոխազդեցության մեջ են եղել քան որևէ այլ ժողովրդի հետ։ Ուստի, ինքնին հասկանալի է, որ վրացերեն խոսողը պետք է հայերեն գիտենա, իսկ հայերեն խոսողը՝ վրացերեն։

Լեզուն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է գիտենալ նրա քերականական կառուցվածքը։ Այս գիրքը կոչված է կարևորագույն և ամենաանհրաժեշտ տեղեկություններ հաղորդելու հին վրացերեն լեզվի քերականությունը ուսումնասիրող հայերին։

Ինչպես հնչյունական առումով, այնպես էլ ձևաբանորեն և շարահյուսորեն, հայերենը և վրացերենը իրարից բավականաչափ տարբեր լեզուներ են։ Հնչյունաբանությունից նշենք է, որ վրացերենն ունի երկու կատկային հնչյուն՝ ყ և ჯ, որոնք բացակայում են հայերենում։ Բացի այդ, հին վրացերենում, իբրև հունարենի ամեղայի համապատասխանություն, գոյություն ունի ჳ, որ չկա հայերենում։

Փոխարենը՝ հայերենը վրացերենի რ-ի դիմաց ունի երկու հնչյուն՝ կոշտ (ռ) և փափուկ (ր)։ Բացի այդ, հայերենն ունի ձայնավոր ը, որին համապատասխան հնչյուն գոյություն չունի ոչ հին և ոչ էլ նոր վրացերենում։

Այս բոլորով հանդերձ, հայերենի և վրացերենի հնչյունական համակարգերը շատ նմանություններ ունեն. երկուսում էլ գոյություն ունեն բաղաձայնների հինգ եռյակներ, որոնցում հնչյուններից երկուսը խուլ են, իսկ մեկը՝ ձայնեղ. პ, ფ, ბ *(պ, փ, բ),* ტ, თ, დ *(տ, թ, դ),* წ, ც, ძ *(ծ, ց, ձ),* ჭ, ჩ, ჯ *(ճ, չ, ջ),* კ, ქ, გ *(կ, ք, գ)։*

Զանազանությունից նշելի է, որ վրացերենում անունները երկու տեսակի հոգնակի ձև ունեն՝ մեկը ნ—თ-ով և մյուսը՝ ებ-ով կազմվող, որոնց շարահյուսական հատկությունը տարբեր է։ Ինքնատիպ է և վրացերենում անունների կրկնակի հոլովումը։

Առանձնապես բարդ է բայի կառուցվածքը վրացերենում։ Եթե բայը հայերենում (ինչպես և ռուսերենում, հունարենում, լատիներենում և այլն) միշտ միադեմ է, ապա վրացերենում այն կարող է լինել և՛ միադեմ, և՛ երկդեմ, և՛ եռադեմ։ Եթե միադեմ բայը մեկ բայաշարքում կարող է ունենալ միայն վեց բայաձև (երեքը եզակի թվում և երեքը՝ հոգնակի), ապա երկդեմ և եռադեմ բայերը հին վրացերենում կարող են ունենալ մինչև երեք տասնյակ բայաձև, քանի որ բայաձևում ենթակայական դեմքի հետ միասին արտահայտվում է նաև խնդրային դեմքը (դեմքերը)։

Կրավորական սեռը վրացերենում երկու տեսակի է՝ շարժուն և կայուն, որը վրացերեն լեզվի առանձնահատկությունն է։

Վրացերեն լեզվում բայի բազմադիմության հետ է կապված դարձության երևույթը, որը հատկանշական է վրացերենի համար։ Անցողական բայը վրացերենում կարող է ունենալ երեք դարձություն՝ համադարձություն, յուրադարձություն և այլադարձություն (այլ կերպ ասած՝ չեզոք, ենթակայական, խնդրային), որը բնորոշ չէ մյուս լեզուների համար։

Բայաշարքերի թիվը հին վրացերենում հասնում է տասնհինգի, որոնցից չորսը հաճախական են։ Հաճախականին համապատասխան բայաշարք հայերենում գոյություն չունի։

Վրացերենին հատուկ է նաև անցողական բայերը խոնարհելիս նրանց բաժանումը երեք բայախմբի, որը խորթ է հայերենի և մյուս լեզուների համար։

Հին վրացերենում անցողական բայը II բայախմբի բայաշարքերում ունի երկուական բայաձև՝ առաջին, երբ ուղիղ խնդիրը եզակի է, և երկրորդ, երբ ուղիղ խնդիրը հոգնակի է, որը և որոշ բարդություն է ընդգծում։

Ինքնատիպ է հին վրացերենում որոշ բայերի փոխարինելիությունը ըստ թվի և բայաշարքի։

Տարահյուսության մեջ առանձնապես նշելի է անցողական բայի հետ օգտագործվող ենթակայի և ուղիղ խնդրի հոլովափոխությունը, որը միանգամայն անծանոթ է հայերենին և մյուս լեզուներին։

Այս գրքում համառոտակի քննված են հին վրացերեն լեզվի ամենակարևոր քերականական երևույթները։

Հուսով եմ, որ այն կօգնի նրանց, ովքեր մտադիր են լրջորեն ձեռնամուխ լինել հին վրացերեն լեզվի ուսումնասիրությանը։

Թբիլիսի, 09.03.1978 թ.

Ա. ՇԱՆԻՁԵ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հին վրացերեն լեզու: *Հին վրացերեն է կոչվում այն լեզուն, որը ներկայացված է վրացական հնագույն գրավոր հուշարձաններում (V—XI դդ.)։ XI դարի հուշարձանները ևս գրված են հին վրացերեն լեզվով, սակայն նրանք պարունակում են բավականաչափ բառային-քերականական այնպիսի երևույթներ, որոնք դրանց լեզուն մերձեցնում են միջին վրացերենին։ Ուստի XI դ. լեզուն անցումային աստիճանի լեզու է, որի մեջ գերակշռում է հինը, բայց կան նաև միջին վրացերենին բնորոշ տարրեր։*

2. Խանմետոբա (խանմետություն. ხ-ավելագրություն): *Հին վրացերենի շրջանակներում առանձնանում են V—VII դարերի հուշարձանները, որոնց լեզվին բնորոշ է խանմետոբան, այսինքն* ხ *տառի ավելորդ գործածությունն այնպիսի ձևերում, ինչպիսիք են* ხ-იყო *(էր),* ხ-ეტყოდა, *(ասում էր),* ხ-უჩუენა, *(ցույց տվեց),* ხ-თბილო, *(տանեի),* ხ-უმჯობჱს-ი *(լավագույնը) և այլն։ Այս* ხ-*երը ավելորդ են IX—XI դարերի գրական լեզվի տեսանկյունից, թեև իրենց ժամանակին դրանք անհրաժեշտ են եղել։ Որոշ հուշարձանների խանմետության փոխարեն հատկանշական է հավելյալ* ჰ-*ի գործածությունը՝ հաեմետոբան (հաեմետություն,* ჰ-*ավելագրություն), որ ավելի ուշ շրջանի երևույթ է (մոտավորապես VII—VIII դդ.)։*

Հավելյալ ხ-*ի կամ* ჰ-*ի գործածման հետքերը վերապրուկի տեսքով կարող են հանդիպել նաև IX—X դդ. հուշարձաններում, օրինակ՝ Ադիշի ավետարանում (897 թ.)։*

ՎՐԱՑ ԱՅԲՈՒԲԵՆԸ

3. Մրգլովանի *(Բոլորգիծ երկաթագիր)։ Վրաց հին դպրության նշանագրերը, որոնցով գրված են մագաղաթի վրա կամ փորագրված քարերին հնագույն վրաց գրավոր հուշարձանները (ձեռագրեր, արձանա-*

գրություններ) V—IX դարերում, վրացական ազգային ինքնուրույն այբուբենի տառերն են։ Բառերը գրվում են ձախից աջ։

Սկզբնական տառերը բարձրությամբ միաչափ էին, բոլորը տեղավորվում էին երկու հորիզոնական գծերի միջև, բայց հետո որոշ տառերի ուղղահայաց գծերը երկարել են։ Այդ տառերն են՝ ԿՓ†ԿԲՎ։ Միաժամանակ՝ տառերը ուղիղ գիրք ունեին և նրանցից մի քանիսի գլխիկը հնագույն արձանագրություններում (Ե-ավելագրության շրջանում) կլորացված է եղել՝ Ղ Կ Վ Ց, սակայն հետագայում առանձնաբար բացվել է։ Ընդհանուր արտաքին տեսքի պատճառով հնագույն հուշարձանների գրությունը անվանվել է մրգ(վ)լովանի (բոլորգիծ)։

4. Կուցխովանի (անկյունավոր գիր)։ Մրգլովանի գրությունից IX դ. սերվեց ու զարգացում ապրեց կուցխովանի գրությունը, որի մեջ տարբեր բարձրության չորս տառախումբ ձևավորվեց։ Եթե երկու գծի փոխարեն տանենք չորս զուգահեռ հորիզոնական գիծ և նրանց միջև զետեղենք նոր ձևավորված տառերը, կստանանք որ.

ա) մի խմբի տառերը տեղավորված են երկու միջին գծերի արանքում. ա ղ տ տ ու. Սրանք միջնատառեր են։

բ) երկրորդ խմբի տառերի գլխիկը սկսվում է վերին գծից, իսկ իրանը՝ տեղադրվում երկու միջին զուգահեռ գծերի արանքում. ճ ծ ձ ճ և այլն։ Սրանք վերնատառեր են։

գ) երրորդ խմբի տառերի գլխիկը երկու միջին հորիզոնական գծերի արանքում է զետեղված, իսկ վերջույթները իջեցված են մինչև հիմնագիծ. կ յ ղ տ և այլն։ Սրանք ներքնատառեր են։

դ) չորրորդ խմբի տառերը զբաղեցնում են ողջ բարձրությունը՝ առաջին գծից մինչև չորրորդը. կ պ ֆ։ Սրանք բարձրատառեր են։

Երկու միջին հորիզոնականների արանքում տեղավորված կուցխովանի գրության տառերը (կամ տառերի մասերը) թեքված են ձախից աջ և գծերի հետ համաման մասերում անկյուններ են առաջացնում։ Այս տառերը տեսքով նման են շղագրերի և անկյունների պատճառով անվանում ենք անկյունավորագիր (կուցխովանի)։ Հնում ավելի շատ նուսխուրի էին կոչում։ Երկուսն էլ՝ մրգլովանին և կուցխովանին (նուսխուրի), հին վրացական հուշարձանների տառերն են. մրգլովանին սկզբնականն է, կուցխովանին՝ հետագայինը։ Կուցխովանիով գրված հուշարձաններում գործածվում է նաև մրգլովանին, սակայն միայն վերնագրերում իբրև գլխագիր։ X—XI դդ. ձեռագրերի մեծ մասը գրված է կուցխովանի տառերով։ Առաջին անգամ այսպիսի տառեր հանդիպում են 864 թ. ընդօրինակված Սինայի ճառընտրի հիշատակարանում։ Այս ձեռագիրը սկզբից մինչև վերջ գրված է մրգլովանիով, բայց նրա հիշա-

տակարանային մասը, որը ձեռագրի վերջում է զետեղված, գրված է կութխովանի տառերով։

5. Մխեդրուլի *(աշխարհիկ գիր)։ Կութխովանի գրությունից, նորից չորս խմբերի բաժանման սկզբունքով, կութխովանի տառերի անկյունավոր մասերի կլորացումով և տառերի ընդհանուր դիրքի ուղղումով XI դարում առաջացան նորատեսք տառեր։ Հին գրատեսակները (մրգլովանի և կութխովանի) մնացին եկեղեցական գործածության մեջ, իսկ աշխարհիկ գործերի համար գործածում էին նոր գրատեսակը, որն անվանվեց մխեդրուլի։ Սկզբնական շրջանում մխեդրուլի տառերը դեռևս ինչ-որ չափով նման էին կութխովանիին, սակայն հետզհետե հեռացել են նրանից, իսկ XIII դարում մխեդրուլի գրությունը վերջնականապես առանձնացել է։*

Մխեդրուլի գրությունում, ի տարբերություն խուցուրիի, սկզբում բացակայում էին հետևյալ երեք տառերը՝ Ⴡ, Ⴢ, Ⴣ, ավելի ճիշտ՝ դրանց համապատասխանությունները, բայց հետագայում դրանց համար էլ ձևավորվեցին մխեդրուլի տառատեսակներ՝ ჱ, ჲ, ჳ. (համապատասխանաբար)։

Մխեդրուլիի զարգացումից և արմատավորումից հետո հին գրությունները (մրգլովանի, նուսխուրի) անվանվեցին խուցուրի (քահանայագիր), քանի որ այն գործածում էին հոգևորականները եկեղեցական գործերի համար, իսկ մրգլովանին առանձին կոչում էին ասոմթավրուլի (գլխագրագիր, իմա՝ երկաթագիր)։

6. Զուգահեռ գործածություն։ *Մրգլովանի գրությունը չի դադարել գործածվելուց IX դարում, երբ նրանից ծագեց կութխովանին (նուսխուրի), և ոչ էլ այս վերջինն է դուրս մնացել գործածությունից XI դ., երբ դրանից զարգացավ գրության նոր տեսակ՝ մխեդրուլին։ Վրացական պարատեսակ տառերը գործածվում էին հետագայում ևս, բայց այնպես, որ եկեղեցական գրքերը գրվում էին հին տառերով (մրգլովանիով կամ նրանից առաջացած կութխովանիով, որի մեջ խառն էր նաև մրգլովանին), իսկ թագավորական հրովարտակները, դատական արձանագրությունները ու աշխարհիկ բնույթի այլ փաստաթղթերն ու գրքերը (պոեմներ, պատմվածքներ և այլն) գրվում էին մխեդրուլիով։ IX—X դդ. Ավետարանները, Գործք առաքելոցը, Պողոսի թղթերը, Սաղմոսները, Տոնականներն և ճառընտիրները գրված են մրգլովանի գրությամբ, Խըրատք Հարանցը (գրված մինչև 943 թ.), Հովհան Ոսկեբերանի վարքը (968 թ.), Օշկի կամ Աթոնի Աստվածաշունչը (978 թ.), Երուսաղեմյան Մարգարեությունները (XI դ.), Երուսաղեմյան Տոնականը (X—XI դդ.) և շատ ուրիշ գործեր գրված են կութխովանի տառերով (նուսխա-խուցու-*

րիով)։ X դ. Շատբերդի ժողովածուի մի մասը մրգլովանիով է գրված, իսկ մյուս մասը՝ կուծխովանիով (նուսխա-խուցուրիով)։ Նման գրությունն է նաև 1050 թ. արտագրված Մարտվիլիի ավետարանում։ Հետագայում հետզհետե նուսխա-խուցուրին հարթեց իր ճանապարհը և գըրեթե բոլոր եկեղեցական գրքերը, այդ թվում և Հին ու Նոր կտակարանները, գրվում էին նուսխա-խուցուրիով։

7. Տառերի անունները ու շարքը: Լավ հայտնի են նոր վրացերենում գործածվող տառերի անվանումները, որոնք ավանդաբար գալիս են հնից։ Ինչ վերաբերում է գործածությունից դուրս մնացած տառերին, նրանց անվանումներն են՝ Ⴡ-հե, Ⴢ-յե, Ⴣ-վիե, Ⴤ-խար, Ⴥ-օհ։
Վերջին տառի օհ անվանումը հնագույն ձևն է, այն հետագայում անվանվեց հոե։

Բերենք ամբողջ այբուբենը և տառերից յուրաքանչյուրի տակ գրենք անվանումը.

Ⴀ ան	Ⴁ բան	Ⴂ գան	Ⴃ դոն	Ⴄ էն	Ⴅ վին	Ⴆ զեն	Ⴡ հէ	Ⴇ թան
Ⴈ ին	Ⴉ կան	Ⴊ լաս	Ⴋ ման	Ⴌ նար	Ⴢ յէ	Ⴍ օն	Ⴎ պառ	Ⴏ ժան
Ⴐ ռաէ	Ⴑ սան	Ⴒ տառ	Ⴓ ուին	Ⴔ փառ	Ⴕ քան	Ⴖ ղան	Ⴗ ղ'առ	Ⴘ շին
Ⴙ չին	Ⴚ ցան	Ⴛ ձիլ	Ⴜ ծիլ	Ⴝ ճառ	Ⴞ խան	Ⴤ խ'առ	Ⴟ ջան	Ⴠ հաէ
Ⴥ ոէ (հոէ)								

8. Տառերի թվային արժեքները: Ⴀ-ից մինչև Ⴕ (այսինքն՝ առաջինից մինչև 24-րդ տառը) այնպես են տեղակարգված վրացերենում, որ լիովին համապատասխանում են հունական այբուբենի տառաշարքին, բացի երկու դեպքից. Ⴌ-ից հետո հունարենում քսի է՝ Ξ, իսկ Ⴎ-ից հետո Ϙ (քյու)[1], որոնց համապատասխան հնչյուններ վրացերենում չըկան։ Փոխարենը նրանց տեղում զետեղվել են՝ Ⴌ-ից հետո՝ Ⴢ, իսկ Ⴎ-ից հետո՝ Ⴏ ։ Այս պատճառով միատեսակ արտասանություն ունեցող տառերը երկու այբուբեններում էլ (հունական ու վրացական) ունեն միևնույն թվային արժեքը։ Օրինակ՝ հունարեն KAMN և վրացերեն Ⴉ Ⴊ Ⴋ Ⴌ

[1] Ϙ տառը գործածությունից ընդհանրապես դուրս է եկել, սակայն թվային նշանակությամբ այն մնացել է հունական այբուբենում. փոխարենը իր տեղում է լատինական այբուբենում՝ հենց P-ից հետո. OPQRS.

համապատասխանաբար ունեն հետևյալ թվային արժեքները՝ 20, 30, 40, 50։

Վրաց այբուբենը եզրափակում է օհ-ը (կամ հոե-ն) Ⴥ, որը համապատասխանում է հունական օմեգային։ Հունական այբուբենում Χ և Ω-ի միջև մեկ տառ է. ΧΨΩ, իսկ վրացերենում Ⴔ-ի և Ⴥ-ի միջև տեղադրված է 12 տառ, որոնք արտահայտում են վրացերենին հատուկ հնչյունները՝ Ⴔ Ⴕ Ⴖ Ⴗ Ⴘ Ⴙ Ⴚ Ⴛ Ⴜ Ⴝ Ⴞ Ⴟ Ⴠ Ⴥ, թիվ արտահայտելու համար հատուկ նշաններ գոյություն չեն ունեցել։ Ճիշտ է, Քութայիսում Բագրատի տաճարի հատակի ամրացման քրոնիկոնը՝ 223-ը (համապատասխանում է 1003 թվականին), հնդկական թվանշաններով է գրված (Եվրոպայում դրանք հայտնի են արաբական անունով, քանի որ տարածվել են արաբների կողմից), սակայն թվանշանների գործածությունը չարմատավորվեց և թվային արժեքների արտահայտման համար շարունակում էին տառեր գործածել։ Տառերով թվային արժեքների արտահայտման սկզբունքն այն ելակետն ուներ, որ առաջին ինը տառերը ցույց էին տալիս միավորները, երկրորդ ինը՝ տասնավորները, երրորդ ինը՝ հարյուրավորները, չորրորդ ինը՝ հազարավորները։ Մնում էր վերջին Ⴥ (օհ) տառը), որը նշանակում էր բյուր (այսինքն՝ տաս հազար)[1]։

միավորներ (1—9)	Ⴀ 1	Ⴁ 2	Ⴂ 3	Ⴃ 4	Ⴄ 5	Ⴅ 6	Ⴆ 7	Ⴡ 8	Ⴇ 9
տասնավորներ (10—90)	Ⴈ 10	Ⴉ 20	Ⴊ 30	Ⴋ 40	Ⴌ 50	Ⴢ 60	Ⴍ 70	Ⴎ 80	Ⴏ 90
հարյուրավորներ (100—900)	Ⴐ 100	Ⴑ 200	Ⴒ 300	Ⴣ 400	Ⴓ 500	Ⴔ 600	Ⴕ 700	Ⴖ 800	Ⴗ 900
հազարավորներ (1000—9000)	Ⴘ 1000	Ⴙ 2000	Ⴚ 3000	Ⴛ 4000	Ⴜ 5000	Ⴝ 6000	Ⴞ 7000	Ⴟ 8000	Ⴠ 9000
բյուր (10000)	Ⴥ 10000								

Այս համակարգով գրվում էր միայն այն, ինչ արտասանվում էր։ Ուստի, եթե թվի մեջ չկար հարյուրավոր, տասնավոր, կամ միավոր, այն չէր էլ գրվում։ Օր.՝ 620 — ႴႩ, 1701 — ႸႵႠ, 5039 — ႼႪႧ, Այլ օրինակներ՝ ႩႧ—29, ႰႪჁ—138, ႳႯႡ—492, ႶႬႧ—859, ႸႯႧ—1099, ჅႼႳႬႠ—15551 (մեկ բյուր հինգ հազար հինգ հարյուր հիսունմեկ) և այլն։

[1] Հնում վրացիների ընկալումով «Բևրի»-ն նշանակում էր թվական որոշակի արժեք (տաս հազար) և ոչ թե անորոշ շատ, ինչպես այսօր։

9. Վրաց այբուբենի թերությունները: *Հին վրացերենի այբուբենը թեև բավականաչափ կատարյալ այբուբեն էր, սակայն թերություններ, այնուամենայնիվ, ուներ:*

ա) უ *հնչյունի արտահայտման համար, հունարենի նման, երկու տառանշան էր գրվում՝* ႭჃ *: Այս երկու տառանշանները կուտխովանի գրչության մեջ ևս առանձին-առանձին էին գրվում՝* ⴍⴣ *, սակայն հետագայում միաձուլվեցին և առաջացան մեկ տառաձև՝* ⴓ *, որն էլ մխեդրուլի գրչության մեջ մեկ նիշ ունեցավ (*უ*): Ինչ վերաբերում է մրգլովանիին, ապա այստեղ* უ*-ի արտահայտման համար* Ⴍ *տառի գլխի վեր թեքված եղունգը ներքև շրջեցին և դրանով տարբերակում ստեղծեցին երկու ձայնավորների միջև.* Ⴍ = ო *(առ. օ, ո),* Ⴓ = უ *(ու): Այս երևույթը ավարտվեց XII դարում:* უ *հնչյունի համար սեփական տառաձև հորինվելով շտկվեց վրաց այբուբենի խոշոր թերություններից մեկը,* უ*-ն մխեդրուլի գրչության մեջ գրավեց* ჳ *տառի տեղը և ստացավ 400 թվային արժեքը:*

բ) Ⴣ*-ն առանձին վերցրած սովորական երկբարբառ էր արտահայտում և գրվում՝ այնտեղ, ուր սպասելի էր* უი*, որոնցից* უ*-ն ոչ վանկարար էր, իսկ* ი*-ն՝ վանկարար: Ուստի սովորական են* ႢႭჃႺ *և* ႢႭჃႢ *ձևերը, սակայն հազվադեպ է* ႢႭჃႢ*-ն, որի փոխարեն սովորաբար գրվում էր* ႢჃ *: Օրինակներ՝* ႢႭჃႺႩႭჃႫႭႧႤႢႬ, ႢႭჃႫႤႷႭႠႫჂ *[մեջ առում էր], բայց՝* ႫႨႹႭჃႤႬႤ *[ցույց տուր ինձ],* ႱႨႲႷႭჃႠჂ *[բառ],* ႫႤႲႷႭჃႤႪႨ *[խոսող], սակայն՝* ႱႨႲႷჃႱႠ *[բառի] և այլն:*

Բանի որ մեկ՝ Ⴣ *տառով արտահայտվում էր* უი *հնչյունակապակցությունը, այդ պատճառով որպես* Ⴣ *տառանիշի համապատասխանություն մխեդրուլիում* უი*-ի գրությունը սկսեցին գործածել: Սրանից էլ առաջացավ* ჳ *տառաձևը, որի վերին մասը ծագումով* უ *է, իսկ ստորինը՝ կցորդված* ი*:*

գ) ჱ *(հե) տառը սկզբնապես ուներ երկբարբառային արտասանություն, որ երբեմն գրվում էր նաև բուն բաղադրիչ տառերի (այսպես՝* ႤႨ*), օրինակ,* რაჲ-ეგე არს სივრცჱ და სიგრძჱ, სიმაღლჱ და სიღრმჱ *[Ինչ է լայնությունը և երկայնությունը և բարձրությունը և խորությունը] (Եփես. Գ, 18): Սակայն հետագայում այս երկբարբառը կորցրեց իր երկրորդ բաղադրիչը (*ი*) և արտասանությամբ համապատասխանեց* Ⴄ*-ին: Ուղղագրությունը, սակայն, միշտ չէ, որ կարողանում էր հետևել լեզվի զարգացմանը, և թեև շարունակում էին գործածել* ჱ*-ն, բայց այն արդեն* Ⴄ *էին ընթերցում: Այս հիմքի վրա հաճախ շփոթ է տեղի ունեցել* ე*-ի և* ჱ*-ի միջև:* ჱ *գրում էին նաև այնտեղ, ուր սպասելի էր* ე*: Օրինակներ «Բարթլեի գործից» (X դար)՝* ვიხილჱ *[տեսա],* ვერ ვიკადრჱ

[չհամարձակվեցի], შეაჭამე [կեր], მცირედრე [փոքր ինչ], მეფესა [թագավորին], მოსლვადმდე [մինչև գալուստը], ქუეშე [ներքո, տակը] և այլն: Հետագայում (արդեն XI դարում), քանի-որ Ⴡ-ն ე էր արտասանվում, գրում էին Ⴄ: Օրինակ՝ եփեսացիներին ուղղված թղթի վերոբերյալ բառերը հետագա (XI դարի) խմբագրությունում հանդիպում են՝ სივრცე და სიგრძე, სიმაღლე და სიღრმე [լայնություն և երկարություն, բարձրություն և խորություն]:

Վրացերենի այբուբենը

Հին վրացերենի տառերը, նրանց մխեդրուլի համապատասխանությունները, անվանումները և թվային արժեքները

Համար	Հին		Նոր	Անվանումը	Թվային արժեքը	Համար	Հին		Նոր	Անվանումը	Թվային արժեքը
	Մրգլ.	Նուսխ.					Մրգլ.	Նուսխ.			
1	Ⴀ	ⴀ	ა	ան	1	20	Ⴑ	ⴑ	ს	սան	200
2	Ⴁ	ⴁ	ბ	բան	2	21	Ⴒ	ⴒ	ტ	տար	300
3	Ⴂ	ⴂ	გ	գան	3	22	Ⴣ	ⴣ	ჳ	վիե	400
4	Ⴃ	ⴃ	დ	դոն	4	23	ႭჃ	ⴍⴣ	უ	ուն	—
5	Ⴄ	ⴄ	ე	էն	5	24	Ⴔ	ⴔ	ფ	փար	500
6	Ⴅ	ⴅ	ვ	վին	6	25	Ⴕ	ⴕ	ქ	քան	600
7	Ⴆ	ⴆ	ზ	զեն	7	26	Ⴖ	ⴖ	ღ	ղան	700
8	Ⴡ	ⴡ	ჱ	հե	8	27	Ⴗ	ⴗ	ყ	ղար	800
9	Ⴇ	ⴇ	თ	թան	9	28	Ⴘ	ⴘ	შ	շին	900
10	Ⴈ	ⴈ	ი	ին	10	29	Ⴙ	ⴙ	ჩ	չին	1000
11	Ⴉ	ⴉ	კ	կան	20	30	Ⴚ	ⴚ	ც	ցան	2000
12	Ⴊ	ⴊ	ლ	լաս	30	31	Ⴛ	ⴛ	ძ	ձիլ	3000
13	Ⴋ	ⴋ	მ	ման	40	32	Ⴜ	ⴜ	წ	ծիլ	4000
14	Ⴌ	ⴌ	ნ	նար	50	33	Ⴝ	ⴝ	ჭ	ճար	5000
15	Ⴢ	ⴢ	ჲ	յի	60	34	Ⴞ	ⴞ	ხ	խան	6000
16	Ⴍ	ⴍ	ო	օն	70	35	Ⴤ	ⴤ	ჴ	խար	7000
17	Ⴎ	ⴎ	პ	պար	80	36	Ⴟ	ⴟ	ჯ	ջան	8000
18	Ⴏ	ⴏ	ჟ	ժան	90	37	Ⴠ	ⴠ	ჰ	հաե	9000
19	Ⴐ	ⴐ	რ	ռաե	100	38	Ⴥ	ⴥ	ჵ	ֆոե (հոե)	10000

Նշելի է, որ սկսած XII—XIII դարերից უე երկբարբառի արտահայտման համար հին տառերով արտագրված կամ գրված ձեռագրերում արմատացավ უჱ-ն. օրինակ՝ ჩუჱნი [մեր], გუჱრდი [էջ, կողք), წუჱრო (կատար, գագաթ) և այլն, բայց սա արդեն դուրս է գալիս հին վրացերենի շրջանակներից:

գ) վերջին (ჵ-օհ) տառը ևս սկզբնապես երկբարբառ էր արտահայտում և համարժեք էր ოჳ-ին: Նրա անվանումը «օհե» էր և հազվադեպ էր գործածվում: Այն հանդիպում է, օրինակ, կոչականում գրված

կոչականների հետ. ჵ დედაკაცო [ո՛վ կին], ჵ ქალწულო [ո՛վ կույս]։ Իբրև հունարենի օմեգայի համապատասխանություն այն հանդիպում է այնպիսի բառերում, ինչպիսիք են, օրինակ՝ კლჵპა [Կլեոպա] (անձնանուն, գրվում էր նաև კლეოპა), ჵსანა [Օսաննա] (գրվում էր նաև ოსანა)։

10. Վրացերենի այբուբենը (հին վրացերենի տառերը, նրանց մխեդրուլի համապատասխանությունները, անվանումները և թվային արժեքները) տե՛ս էջ 16։

ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

11. Հին վրացերեն լեզվի հնչյունները: *Ենթադրում ենք, որ հնում վրացերեն հնչյունները արտասանվում էին մոտավորապես այնպես, ինչպես այսօր արտասանվում են գրական լեզվում և բարբառներում*[1]*։*

Ձայնավորներ՝ ა, ე, ი, ო, უ:

Կիսաձայններ՝ ჲ, ჳ:

Բաղաձայններ՝

ბ, ფ, პ, მ. *Շրթնային (լաբիալ), ավելի ճիշտ՝ երկշրթնային (բիլաբիալ) հնչյուններ են։*

ვ. *Շրթնա—ատամնային (դենտոլաբիալ) շփական հնչյուն է:*

დ, თ, ტ. *Ատամնային (դենտալ) հնչյուններ են։*

ნ. *Լնդային (ալվեոլային=վերատամնային) հնչյուն է։*

ლ. *Լնդային (ալվեոլային) հնչյուն է, որը միաժամանակ և՛ պայթական է (լեզուն կպած է լնդերին), և՛ շփական (լեզվի եզրերին ճեղքեր են)։ Այս պատճառով այն կողքային (լատերալ) հնչյուն է։*

რ. *Լնդային թրթռուն (վիբրանտ) հնչյուն է։* ლ *և* რ *հնչյուններին ընդհանրապես ձայնորդ (լիքվիդ) հնչյուններ են անվանում։ Նրանց են միացնում երբեմն նաև* ნ *հնչյունը։*

ძ, ც, წ. *Առաջնալնդային (առաջնա-ալվեոլային) հնչյուններ են։*

ზ, ს. *Առաջնալնդային (առաջնա-ալվեոլային) շփական հնչյուններ են (սպիրանտներ)։ Առաջնալնդային հնչյունների երկու տեսակներն էլ (պայթական ու շփական* ძ, ც, წ, ზ, ს*) կոչվում են սուլական հնչյուններ։*

ჯ, ჩ, ჭ. *Ետնալնդային (ետնա-ալվեոլային) հնչյուններ են։*

ჟ, შ. *Ետնալնդային (ետնա-ալվեոլային) շփական հնչյուններ են։ Երկու տեսակի ետնալնդային հնչյուններն էլ (պայթական ու շփական* ჯ, ჩ, ჭ, ჟ, შ*) անվանում են շշական։*

გ, ქ, კ. *Ետնաքիմքային (վելյար) պայթական հնչյուններ են։*

---

[1] *Հնչյունների արտահայտման համար այստեղ համապատասխան տառեր են վերցվում, սակայն մշտապես նկատի են առնվում հնչյունները։*

A 70189

ღ, ხ. Ետնաքիմքային (վելյար) շփական հնչյուններ են։ Սրանց արտասանության տեղը ավելի ետ է քաշված, քան պայթական გ, ქ, კ հնչյուններինը։

ყ, ჴ. Կատկային (ֆարինգալ) պայթական հնչյուններ են։

ჰ. Կոկորդային (լարինգալ) շփական հնչյուն է։

12. Եռաշարք բաղաձայններ։ Բաղաձայն հնչյուններում տարբերակում ենք ձայնեղներն և խուլերը։ Ձայնեղ բաղաձայններ են՝ მ, ბ, ვ, ნ, დ, ძ, ზ, ლ, ჯ, ჟ, რ, გ, ღ։

Խուլ հնչյուններում տարբերակում ենք շնչեղներն ու պարզ ձեքականները։

Շնչեղ են՝ ფ, თ, ც, ს, ჩ, შ, ქ, ხ, ჰ։

Պարզ ձեքական են՝ პ, ტ, კ, წ, ჭ, ყ։

Միևնույն տեղում կարող են արտասանվել մեկ ձայնեղ և երկու խուլ (շնչեղ և պարզ ձեքական)։ Այսպիսի եռաշարք բաղաձայնները վրացերենում հինգն են՝ ბ, ფ, პ; დ, თ, ტ; გ, ქ, კ; ძ, ც, წ; ჯ, ჩ, ჭ։

13. Լեզվի մասնակցությունը բաղաձայնների արտասանությանը։ Եթե բաղաձայնները շարադասենք ըստ լեզվի գործող մասերի, որոնք մասնակցում են բաղաձայններից մեծ մասի արտասանությանը, կստանանք հետևյալ աղյուսակը (ըստ Գ. Ախվլեդիանիի)։

		Շրթնային — երկշրթնային — ձայնեղ	Շրթնային — երկշրթնային — խուլ — շնչեղ	Շրթնային — երկշրթնային — խուլ — կտրուկ	Շրթնային — շրթնատամնային — ձայնեղ	Շրթնային — շրթնատամնային — խուլ — շնչեղ	Առաջնալեզվային — լեզվատամնային — ձայնեղ	Առաջնալեզվային — լեզվատամնային — խուլ — շնչեղ	Առաջնալեզվային — լեզվատամնային — խուլ — կտրուկ	Առաջնալեզվային — լեզվաքիմային — ձայնեղ	Առաջնալեզվային — լեզվաքիմային — խուլ — շնչեղ	Առաջնալեզվային — լեզվաքիմային — խուլ — կտրուկ	Միջնալեզվային — ձայնեղ	Ետնալեզվային — ձայնեղ	Ետնալեզվային — խուլ — շնչեղ	Ետնալեզվային — խուլ — կտրուկ	Լեզվակոկորդային — ձայնեղ	Լեզվակոկորդային — խուլ — շնչեղ	Լեզվակոկորդային — խուլ — կտրուկ	Կոկորդային — խուլ — շնչեղ
Պայթական	պարզ	მ ბ	ფ	პ			ნ დ	თ	ტ					გ	ქ	კ		ჴ	ყ	
Պայթական	բարդ						ძ	ც	წ	ჯ	ჩ	ჭ								
Շփական	շփական	[illegible]			ვ		ზ	ს		ჟ	შ		[illegible]	ღ	ხ					ჰ
Շփական	կողքային						ლ													
Շփական	թրթռուն									რ										

Վրացերենի բաղաձայնների աղյուսակ

14. Շեշտը հին վրացերենում: *Ժամանակակից վրացերենում երկվանկ բառի առաջին վանկում (վերջից՝ երկրորդում) ձայնի թեթևակի ուժեղացում է նկատվում։ Օրինակ՝* დედა [*մայր*], ფეხი [*ոտք*], ათი [*տասը*], ვაშლი [*խնձոր*], მიდის [*գնում է*], ნახა [*տեսավ*], უთხრა [*ասաց նրան*] *և այլն։ Եռավանկ բառերում ևս առաջին վանկում (այսինքն՝ վերջից երրորդ) նկատվում է ձայնի թեթևակի ուժեղացում։ Օրինակ՝* საწყალი [*խեղճ, ողորմելի*], ობოლი [*որբ*], ქათამი [*հավ*], წავიდა [*գնաց*], შეშინდა [*սարսափեց, վախեցավ*] *և այլն։*

Երկուքից ավելի վանկ ունեցող բառերի մեջ ձայնի թեթևակի ուժեղացում նկատվում է վերջից երրորդ վանկում։ Օրինակ՝ პარასკევი [*ուրբաթ*], მოურავი [*խնամակալ*], ინდაური [*հնդկահավ*], მასწავლებელი [*ուսուցիչ*], გოგებაშვილი (*Գոգեբաշվիլի*), გადაატანინა [*տեղափոխել տվեց*] *և այլն։ Կարծում ենք, որ այսպիսի իրավիճակ էր նաև հին վրացերենում։*

Բացառություն էին կազմում այն դեպքերը, երբ նախադասության մեջ կար հարցական ა *մասնիկը, որը չուներ շեշտ, բայց ո՛ր բառին էլ ավելացվում էր, այդ բառի շեշտը ետ էր քաշվում իր նախորդ վանկը։ Օրինակ՝* არას მიუგებ [*ոչինչ չես պատասխանում*], *բայց* არას მიუგება? (*ոչինչ չե՞ս պատասխանում*), არა გესმის (*չես հասկանում*), *բայց* არა გესმისა? [*չե՞ս հասկանում*], მოვიდა [*եկավ*], *բայց* მოვიდაა? [*եկա՞վ*]։ მოძღუარმან თქუენმან არა მოგუცესა ხარკი? [*Վարդապետն ձեր ո՞չ տայ զերկդրամեանն*] (*Մատթ. ԺԷ, 24*)։ არა აღმოგიკითხავსა შჯულსა [*Կամ թե չիցէ՞ ընթերցեալ յօրէնս...*] (*Մատթ. ԺԲ, 5*) *և այլն։*

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

15. ჰ հնչյունը:

ա) ჰ *հնչյունը վրացերեն բառահիմքում չի հանդիպում որպես հիմքի բաղադրիչ տարր*[1], *բայց այն հանդիպում է բայաձևերում՝ որպես դիմային ցուցիչ (այս մասին տե՛ս ձևաբանության բաժնում)։*

բ) Մինչդեռ փոխառյալ բառերում ჰ-*ն հաճախ է հանդիպում։ Այսպիսիք են, օրինակ՝* ჰამბავი [*համբավ, լուր*], ჰასაკი [*հասակ*], ჰებრაელი [*եբրայեցի*], ჰურია [*հրեա*], ჰელენე [*Հեղինե*], ჰეროდე [*Հերովդես*], აბრაჰამ [*Աբրահամ*], აჰრონ [*Ահարոն*] *և այլն։*

[1] *Թերևս բացառություն է* ჰარ *հիմքը, որից կազմված* ეი-ჰარ-ები-ს [*տանջվում են*], *ավարառու,* ეიჰრები-*ն ձևով է հանդիպում* [*հմմտ. հյ. հար, հար-ել, զինվոր*]։

գ) Հաճախակի են դեպքերը, երբ ჲ-ն կորչում է. ასაკი, ებრაელი, ელენე, ეროდე և այլն։

16. ო-ի և უ-ի փոխարինելիությունը: Հին վրացերենի ուղղագրությունը ընդհանրապես շատ կանոնավոր է, սակայն երբեմն գրության մեջ ო-ն և უ-ն փոխարինում են միմյանց։ Սպասելի է ო, իսկ գրված է უ, կամ, հակառակը, սպասելի է უ, բայց գրված է՝ ო:

Օրինակներ Սինայի ճառընտրից.

ա) ო-ի փոխարեն უ. უწუდიან (58,17)—უწოდიან [կանչում են, կոչում են, անվանում են], ბურცუსა (68,31)—ბორცუსა [բլրին], თუმა (172, 20)—თომა [Թովմա] և այլն։

բ) უ-ի փոխարեն ო. სოფევაჲ (138,2)—სუფევაჲ [արքայություն, թագավորություն], მოჭლნი (141,17)—მუჭლნი [ծնկներ], ღრობელთა (138,14)—ღრუბელთა [ամպերի], ძოძოჲს (144,18)—ძუძუჲს [ստինքի], ობრალო (250,29) —უბრალო [անմեղ] և այլն։

17. ჳ տառի ուղղագրությունը: Ինչպես ասացինք, ჳ-ն սովորաբար հնչյունակապակցություն է արտահայտում, սակայն.

ա) Հաճախ է պատահում, որ ჳ-ն ոչ վանկարար უ է արտահայտում. ტყჳეობაჲდმდე [մինչև ի գերությունն] (Մատթ. Ա, 17), ტყჳენვითგან [ի գերությենէն] (Նույն տեղում), თჳალი [աչք] (Մատթ. Ե, 29), წინაჲსწარმეტყჳელისა [մարգարէին] (Մատթ. Բ, 5) և այլն։ Համեմատաբար հաճախակի է նման ուղղագրությունը որոշ ձեռագրերում, օրինակ՝ Մարտվիլի ավետարանում (1050թ.)։

բ) Կան նաև որոշ հակառակ դեպքեր, երբ ჳ-ի փոխարեն უ է գրված. ეგუპტით [Եգիպտոսէ] (Մատթ. Բ, 15)—ეგჳპტით, თუსი [իւր] (Մատթ. Գ, 12, 7, 9)—თჳსი, გუეის [ունիմք] (Մատթ. Գ, 9)—გჳეის, სიტყუთა [բանիւ] (Մատթ. Դ, 4)— სიტყჳთა, შენთუს [զքէն] (Մատթ. Ե, 23)—შენთჳს, ამისთუს [վասն այդորիկ] (Մատթ. Զ, 25)—ამისთჳს, წუმაჲ [անձրև] (Մատթ. Է, 25; Է, 26)—წჳმაჲ և այլն։

գ) Նշելի է, որ երուսաղեմյան գլխոցի գրիչները երկբարբառային արտասանություն ունեցող երկու ձայնավորները հաճախ բառ նրանց բաղկացուցիչ մասնիկներով էին գրում. ჱ-ի փոխարեն՝ ეჲ և ჳ-ի փոխարեն՝ უი (որտեղ უ-ն ոչ վանկարար է)։ Օրինակներ Պարխալո-մրավալթավյա ճառընտիրից (10-րդ դար)։

ეჲ.—სიმდიდრეჲ [հարստություն], სიმძიმეჲ [ծանրություն], მეზუერეჲ [մաքսավոր] և այլն։

უი.—თუის [վասն, յաղագս, համար], დღისათუის [ավուրվա համար], რომლისათუის [որի համար], მშუიდობაჲ [խաղաղություն], მკუიდრნი [բնիկներ], გუირგუინი [թագ], გუიჴსნენ ჩუენ [փրկեն մեզ] և այլն։

18. Կրկնավոր հնչյուններ: *Երկու միանման հնչյուն (ձայնավոր թե բաղաձայն) վրացերենի բառահիմքում ընդհանրապես չեն հանդիպում, բայց սովորական է, որ միասին լինում են երկու միատեսակ հնչյուն, որոնցից մեկը բառակազմիչ է, կամ նախդրային և կամ մասնիկի: Օրինակներ.* დაავლო [*գցեց*], დაამტკიცა [*հաստատեց*], დააიწყდა [*մոռացավ*], შეეწყალა [*ողորմաց*], შეეხო [*շոշափեց, կպավ*] *և այլն:* მამანი ჩუენნი [*մեր հայրերը*], წიგნნი შენნი [*քո գրքերը*], სახლსა მისსა [*նրա տանը*], ძესა იოსებისსა [*Հովսեփի որդուն*], ძეთა მათთა [*նրանց որդիներին*], ძმათა მათთჳს [*նրանց եղբայրների համար*], შეევარდი [*ընկա*], მმარხველი [*պաս պահող; պահապան*] *և այլն:*

Բացառության կարգով երկու միատեսակ բաղաձայն հանդիպում է თთუე [*ամիս*] *և* ჩჩჳლი [*փափուկ, նաև՝ մանուկ*], *որից՝* სიჩჩოჲ [*փափկություն, մանկություն*] *բառերում:*

Դիտելի է նաև, որ իրար կողքի հանդիպող երկու միատեսակ տառի փոխարեն երբեմն կարող է գրված լինել մեկը. სნეულებათაგან მათა [*ի հիւանդութենէ իւրեանց*] *(Ղուկ. Զ. 18)*—სნეულებათაგან მათთა, ნაყოფთაგან მათა [*ընչից իւրեանց*] *(Ղուկ. Ը. 3)*—ნაყოფთაგან მათთა, მათაებრ [*ըստ գործոցն նոցա*] *(Մատթ. ԻԳ. 3)*—მათთაებრ, მტერნი შენი [*զթշնամիս քո*] *(Մարկ. ԺԲ. 36)*—მტერნი შენნი *և այլն:*

ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

19. Ոչ վանկարար ი-ն և նրա գործածությունը:

ա) Ոչ վանկարար ი-*ն հին վրացերենում արտահայտվում էր* Ⴢ//ჲ *տառով, որը կազմում էր երկբարբառի երկրորդ տարրը՝ վանկի վերջում: Այն սովորաբար հանդիպում է անունների ձևերում, օրինակ՝ բաղաձայնավորահիմք անունների անվանական հոլովում:* მამაჲ [*հայր*], საქმეჲ (საქმჱ) [*գործ*], კალოჲ [*կալ, կալատեղ*], ცროჲ [*կեղծ, սուտ*], *ինչպես նաև բառամիջում՝* რაჲთა [*զի, որ, որպեսզի*], წყალობითა ღმრთისაჲთა და შეწევნითა ქრისტჱსითა და მეოხებითა წმიდისა თევდორეჲსითა [*Ողորմութեամբ Աստուծոյ և օգնութեամբ Քրիստոսի և բարեխօսութեամբ սրբոյ Թէոդորոսի*] *(Բնիթղենի արձանագրություն):* შევედით იწროჲსაგან ბჭისა [*մտանք նեղ դռնով*], დედაჲ იესუჲსი [*Հիսուսի մայրը*] *և այլն:*

բ) Սովորաբար ոչ վանկարար ი-*ն որպես երկբարբառի առաջին մաս չի հանդիպում: Բառասկզբի* ი-*ն, որին ձայնավոր է հաջորդում լիարժեք ձայնավոր է, վանկարար: Որտեղ էլ որ պատահեն* ია, იე, იო *և* იუ-*ն (լինի բառասկզբում, բառամիջում, թե բառավերջում) ամենուր*

գործ ունենք երկու ձայնավորի հետ, որոնցից յուրաքանչյուրը վանկարար է: იაკობ [Հակոբ], იავარ-ყო [ավեր արավ, հափշտակեց], იესუ [Հիսուս], იერემია [Երեմիա], იოჰანე (იოვანე) [Հովհան], იოსებ [Հովսեփ], იუდა [Հուդա] և այլն:

Իբրև բացառություն ჲ-ն կարող է հանդիպել և բառասկզբում: Օրինակ՝ ჲესე, բայց սովորական է լրիվ ձայնավորը. იესე [Իեսե]:

գ) Եթե ი-ն բայամասնիկ է (յուրացարձության ი, կրավորական սեռի ი), այն ი էլ մնում է, նույնիսկ այն դեպքում, եթե նրան նախորդում է նախաբայի ձայնավորը. შეიწყალე [ողորմիր], აღმოიღე [հանիր], აღმოიკითხა [կարդաց, վերծանեց], დაიწერა [գրվեց] և այլն:

იდუმალ [գաղտնի] բառից կազմված საიდუმლო [գաղտնիք]-ում ი-ն ი էլ մնում է: Հազվադեպ է, որ այն ჲ-ի վերածվի (საჲდუმლოჲ):

20. Ոչ վանկարար უ-ն և նրա գործածությունը:

ա) Ոչ վանկարար უ-ն հնում իր նշանագիրը չուներ այբուբենում և այնպես էր գրվում, ինչպես վանկարար უ-ն, բայց ստուգապես կարելի է ճշտել, թե որն է վանկարար უ և որը՝ ոչ վանկարար: Դրանում երբեմն մեզ օգնում է նոր վրացերենը, որտեղ հին ոչ վանկարար უ-ն վերածվել է ვ-ի.

բ) Ոչ վանկարար უ-ն բառասկզբում չի հանդիպում, այն հաջորդում է որևէ բաղաձայնի ու կարող է հանդիպել բառամիջում և բառավերջում: Բառամիջում այն հանդիպում է բաղաձայնից հետո և ձայնավորից առաջ կամ՝ բաղաձայնների միջև, իսկ բառավերջում՝ բաղաձայնից հետո: Օրինակներ.

Բաղաձայնից հետո և ձայնավորից առաջ՝ გუარი [տեսակ, տոհմ, ձև], თუალი [աչք, ակն], წუერი [ծայր, կատար, գագաթ], გუერდი [կող, կողք], ტუინი (ტჳნი) [ուղեղ, ծուծ], წუიმს (წჳმს) [անձրևում է] և այլն:

Բաղաձայնների միջև՝ გურიტი [տատրակ], ვარსკულავი [աստղ], ნაძუთა [եղևնիների], მოძღურისა [ուսուցչի] և այլն:

Բառավերջում՝ ნაძუ [եղևնի], თაგუ [մուկ], მასუ [խմեցրու (ինձ)], არქუ [ասա] և այլն:

գ) Եթե հիմքը ամփոփվում է և ոչ վանկարար უ-ին հաջորդող ձայնավորը դուրս է ընկնում, ոչ վանկարար უ-ն, այնուամենայնիվ, մնում է անփոփոխ, եթե դրան չի խանգարում հնչյունադասական վիճակը: Օրինակ, ունենք բայաձևեր՝ მოვ-კუედ [մահացա], მოჰ-კუედ [մահացար], բայց՝ მო-კუ-და [մահացավ], მ-კუდ-არი [մահացած], მო-კუდ-ავი [մահկանացու], უ-კუდ-ავი [անմահ]: Վերջին չորս բառերը ամփոփված են, քանի որ դուրս է ընկել ე ձայնավորը, որն առկա է

მოვკუედ և მოჰკუედ բայաձևերում: მოკუდა, მკუდარი, მოკუდავი և უკუდავი-ի դեպքում უ-ից առաջ դրված უ-ն ոչ վանկարար է և բառի ամփոփումից հետո արդյունքին էլ մնում է: Նման օրինակներ են՝ ლუაწლი [չարչարանք, գործ, վաստակ; ճակատամարտ, կռիվ], ილუაწა [չարչարվեց, գործեց; պատերազմեց], բայց՝ ილუწის [չարչարվում է; ճակատամարտում է], ლუწოლაჲ [չարչարանք; ճակատամարտ]:

გოდოლ [աշտարակ], ობოლ [որբ], გოდორ [զամբյուղ, կողով, քթոց] և ჰოროლ [նիզակ, տեգ, գեղարդ] անունների ամփոփման հետևանքով երկրորդ ო-ի փոխարեն պետք է ստանայինք ոչ վանկարար უ, բայց այն կորչում է շրթնային հնչյունների հարևանության պատճառով (გოდლისა ობლისა, გოდრისა, ჰორლისა): გოდოლ, გოდორ և ჰოროლ բառերում ձայնավոր უ-ն կորչում է ო-ի պատճառով, իսկ ობოლ-ում ոչ վանկարար უ-ի կորչելուն ო-ից բացի նպաստում է նաև ბ-ն:

դ) Ոչ վանկարար უ-ն կարող է կորչել բաղաձայնների միջև՝ հաջորդ շրթնային բաղաձայնի ազդեցությամբ: Օրինակ՝ ունենք თქუა [ասաց], თქუმაჲ [բան, խոսք], თქუმული [բան, ասացվածք], სათქუმელი [ասելիք], բայց նաև՝ თქმული, որտեղ ոչ վանկարար უ-ն կորել է հաջորդ მ-ի ազդեցությամբ: Ունենք և՛ ჯუარს-ცუმული [խաչված], և՛ թե նրանից առաջացած ჯუარს-ცმული, որտեղ նույն երևույթն է, ինչ თქმული-ի դեպքում: Այդպիսին է նաև იჯუმევს [գործածում է]-ն ու იჯმევს-ը: შუერ հիմքից ունենք დავშუერ [աշխատեցի], შურების [աշխատում է], შურომაჲ [աշխատանք], բայց նաև՝ შრომაჲ (այստեղ նախորդող უ-ն, վերածվելով ոչ վանկարարի, կորել է հաջորդող ო-ի ազդեցությամբ):

ե) Սովորական է ոչ վանկարար უ-ի կորուստը հաջորդող ო-ից առաջ: Օրինակ՝ ვიტყუი (ვიტყჳ) [ասում եմ], բայց՝ ვიტყოდე [ասում էի], წარუძღუა [առաջնորդեց], წარჰძღუე [առաջնորդեցիր], բայց՝ წარძღოლაჲ [առաջնորդել], ლეღუი (ლეღჳ) [թուզ], բայց՝ ლეღოვანი [թզենի; թզենիների այգի]. მოგჳ-ից ունենք և՛ მოგუებაჲ, և՛ მოგობაჲ [շահել, ձեռք բերել, ունենալ]: Այստեղ առաջին դեպքում (მოგუებაჲ) պահպանված է ոչ վանկարար უ-ն, իսկ երկրորդ դեպքում (მოგობაჲ) այն կորել է հաջորդող ო-ի պատճառով:

զ) Ոչ վանկարար უ-ն հաջորդ ი-ի հետ միանալով տալիս է ჳ. ნაძუ [եղևնի], բայց՝ ნაძჳ, ნაძჳსა, ნაძჳთა: სიტყუაჲ [բան, բառ, խոսք], բայց՝ სიტყჳსა, სიტყჳთა [խոսքի, խոսքով, բանի, բանիւ] և այլն:

ჳ-ի փոխարեն կարող է հանդիպել უი. ნაძუისა, ნაძუითა, სიტყუისა, სიტყუითა, ამისთუის [վասն այսորիկ, սրա համար] և այլն, որն առավելապես Երուսաղեմի ու Սինայի ձեռագրերում է հանդիպում:

է) Ոչ վանկարար უ-ն կարող է լիարժեք ձայնավորի վերածվել և վանկարար դառնալ, եթե նրա հետ այլ ձայնավոր չկա և միավանկ բառի մեջ միայնակ է։ Օրինակ՝ მასუ მე წყალი [Տո՛ւր ինձ ըմպել] (Հովհ. Դ, 7)։ Այստեղ უ-ն ոչ վանկարար է, վանկ է կազմում նախորդող ა-ն։ Ոչ վանկարար է այն նաև მასუა և სუა բառերում, որտեղ հաջորդող ა-ն է վանկ կազմում։ მასუ-ն հրամայական է, հրամայական է նաև სუ-ն հետևյալ նախադասության մեջ. განისუენე, ჭამე, სუ და იხარებდ [Հանգիր՝ կեր, արբ և ուրախ լեր] (Ղուկ. ԺԲ, 19), բայց այս სუ-ի մեջ უ-ն վանկարար է։ Նույնն է նաև այս ձևի հոգնակի թվում. სუთ ამისგანი თქუენ ყოველთა [Արբէք ի դմանէ ամենեքին] (Մատթ. ԻԶ, 27)։ Այլ օրինակ՝ ունենք თქუა [ասաց], თქუეს [ասացին], მთქუმელი [ասացող; պատմող], որտեղ უ-ն ոչ վանկարար է ամենուր։ Բայց սրանց կողքին կա նաև თქუ [ասա] և თქუთ [ասացե՛ք], որտեղ უ-ն վանկարար է. თქუ, რაჲთა ქვანი ესე პურ იქმნენ [Ասա, զի քարինքս այսոքիկ հաց լինիցին] (Մատթ. Դ, 3 C)։ მოიკითხეთ იგი და თქუთ [Ողջոյն տայջիք նմա և ասասջիք] (Մատթ. Ժ, 12).

ը) Ոչ վանկարար უ-ն, սովորաբար, հանդես չի գալիս իբրև երկբարբառի երկրորդ տարր։ Հունարեն և լատիներեն լեզուներից փոխառյալ բառերում au, eu, iu երկբարբառների փոխարեն համապատասխանաբար ունենք ავ, ევ, ივ. პავლე, სავლე, ევსტათი, ევსებიოს, ივლიანე, ივდით։ Այսպիսի օրինակ է նաև რავდენი-ն [որքան], որն առաջացել է რაუდენ-ից, իսկ վերջինս՝ რაოდენ-ից (թուլացման պատճառով ო-ն ոչ վանկարար է դարձել, իսկ սրան փոխարինել է ვ-ն)։

թ) Բացառության կարգով կարող է ავ հանդիպել մի քանի բառի մեջ, ինչպիսիք են՝ თაჳყანის სცეს [երկրպագեցին] (Բոլնիսի արձանագր.), ხმობაჳს [հնչում է] (Խանմետյան տոնական), წარაჳლინნეს [ուղարկեցին, ճանապարհեցին] (նույն տեղում), პაჳლჱსი [Պավլեի=Պողոսի] (նույն տեղում)։

21. ვ հնչյունի փոփոխությունները։

ա) Եթե ვ հնչյունը հայտնվում է ყ, ხ, ჴ հնչյուններից հետո և նրան ձայնավոր է հաջորդում, այն վերածվում է ոչ վանկարար უ-ի. მოვალს [գալիս է], բայց՝ მოხუალ [գալիս ես], მოვედ [արի՛] (հրամայական եղանակի ձև), բայց՝ მოხუედ [եկար] (սահմանական եղանակի ձև), მოვიდეს [կգա], բայց՝ მოხუიდე (მოხჳდე) [կգաս] և այլն։

բ) Եթե ենթակայական առաջին դեմքի ვ ցուցիչը դրվի խոնարհական 3-րդ դեմքի ցուցիչից (այսինքն՝ ჰ-ից կամ ს-ից) հետո, ապա այն կվերածվի ոչ վանկարար უ-ի։ Օրինակ, ունենք დაარღჳეთ ტაძარი ესე და მესამესა დღესა აღუჰმართო ესე [Քակեցէք զտաճարդ զայդ, և զերիս աւուրս կանգնեցից զդա] (Հովհ. Բ, 19 C), որտեղ ենթակայական առաջին

գոմքի ցուցիչը չի գրված, բայց դրան հակառակ գոյություն ունի նույն აღმართვა [կանգնեցնել, կառուցել] բայի აღჰუმართე ձևը եւ. ესე ჯუარი ქრისტჱსი მე კოსტანტი აღჰუმართე ნასყიდევსა ქუეყანასა ზედა [Քրիստոսի այս խաչը ես Կոստանդինս կանգնեցրի գնածս հողի վրա] (Ծղիսիի արձանագր.), որտեղ ներգործական գոմքի ვ ցուցիչը գրա-փոխության հետևանքով ոչ վանկարար უ-ի է վերածվել: Նման օրի-նակներ են' მე თათვარაზ აღხუმართე ესე ჯუარი [Ես Թաթվարազս կանգ-նեցրի այս խաչը] (Ոսկանդորի արձանագր.), მე ფარნ... და აზარუხტ შეხუებით ესე კარი [Ես Փարն... և Ազարուխտ կառուցեցինք այս դուռը] (Բոլնիսի արձանագր.), აღხუაგზნე ცეცხლი [վառեցից հուր] [Երեմիա. ԺԷ, 27, խանմետ]:

Նման իրավիճակ է նաև ახუსება-ում [հարություն], որը խանմե-տյան տեքստերում է հանդիպում: დღესა ახუსებასა მწუხრი [հարության օրվա երեկոն]. պետք է լիներ დღესა აღვსებასა (սակայն ახუსება է գրված), քանի որ հաջորդող ს-ի ազդեցությամբ ღ-ն խլացել է և վե-րածվել ხ-ի, իսկ ვ-ն ხ-ից հետո' ոչ վանկարար უ դարձել:

თაყვანისცემა [երկրպագել] բառը բայի մեջ ვ-ն մեծ մասամբ უ-ից հետո է գրված լինում և ոչ վանկարար უ-ի վերածվում. თაყუანის-სცემდა მას და ეტყოდა [Երկիր պագանէր նմա եւ ասէր] (Մատթ. Ը, 2): Գոյու-թյուն ունի նաև խառը ձև. თავყუანის-სცემდა და ითხოვდა რასმე [Երկիր պագանէր եւ խնդրէր ինչ ի նմանէ] (Մատթ. Ի, 20 C):

գ) 1-ին ներգործական գոմքի ցուցիչը ვ-ს բայի մեջ միշտ կորչում է. ვალ [գնում եմ], ხუალ [գնում ես], ვალს [գնում է]: Օրի-նակ' ვიცი, ვინაჲ მოსრულ ვარ და ვიდრე ვალ [Գիտեմ ուստի եկի եւ յո երթամ] (Հովհ. Ը, 14): Այդպես էլ 1-ին գոմքի ներգործական ვ ցուցիչը կարող է կորչել ვ-ով սկսվող այլ բայերից առաջ. Օր.' განვლეთ ჩუენ ცეცხლი და წყალი [Անցաք մեք ընդ հուր եւ ընդ ջուր] (Սաղմ. ԿԵ, 12), պատանի էր' განვვლეთ:

դ) 1-ին ներգործական գոմքի ვ ցուցիչը կորչում է բայի մեջ უ-ից առաջ' լինի այդ უ-ն հիմքային թե այլադարձության ածանցով: Օրի-նակ' არა ვიცი, არცა უწყი, რასა-ეგე იტყჳ შენ [Ո՛չ ճանաչեմ եւ ո՛չ գիտեմ զինչ դու ասես] (Մարկ. ԺԴ, 68): Այստեղ უწყი [գիտեմ] ձևում უ-ն հիմքային է, մինչդեռ ներքոհիշյալ բայաձևերում უ-ն այլադար-ձության ցուցիչ է. ჟამსა მკისასა უბრძანო მომკალთა [Ի ժամանակի հնձոց ասացից հնձողաց] (Մատթ. ԺԳ, 30), მამასა უყუარ მე [Սիրէ զիս հայր իմ] (Հովհ. Ժ, 17): ვითარცა ჩუენ მიუტევებთ [Զի եթէ թողուցուք] (Մատթ. Զ, 12):

բ) ავ և ევ-վերջավոր բայերի մեջ կրավորական սեռի դերբայական ձևում ვ-ն կորչում է հաջորդող უ-ի պատճառով. დამარხვაჲ-[պահել; թաղել] — დამარხული [պահված; թաղված] (დამარხვეული-ի փոխարեն), დახატვაჲ [նկարել, պատկերել] — დახატული [նկարված, պատկերված], დამალვაჲ [թաքնվել] — დამალული [թաքնված], კურთხევაჲ [օրհնել] — კურთხეული (օրհնյալ, օրհնված) և այլն:

Ունենք სწავლაჲ [սովորել, ուսանել], სწავებაჲ [սովորեցնել, ուսուցանել], բայց նաև՝ სასწაული [ուսուցանող], որտեղ ვ-ն կորել է հաջորդող უ-ի ազդեցությամբ:

գ) ავ, ევ, ივ և ოვ-վերջավոր բայերի մեջ ვ-ն կարող է կորչել հաջորդող ო-ի ազդեցությամբ. ზუავ — ჰზუაობ [պարծենում ես, գոռոզանում ես], თხოვ — ითხოოთ [կխնդրեք], ითხოონ [կխնդրեն], პოვ — პოოს [կգտնի], პოონ [կգտնեն], ტევ — განუტეო, დაუტეოს [կթողնի], რევ — ვერევი [հաղթահարում եմ; խառնում եմ], բայց ვერეოდი [հաղթահարում էի; խառնում էի] (ვერევოდი-ի փոխարեն), ყივ — ყიოდა [կանչում էր], ცრემლოვ — ცრემლეოდა [արցունքոտվում էր], ტკივ — სტკიოდა [ցավում էր] և այլն: Սակայն պետք է հիշենք, որ հաճախ հանդիպում են բայաձևեր, որոնցում ვ-ն իր տեղում է. ითხოვოს, პოვოს և այլն:

դ) Ունենք ცხოველი [կենդանի, կենարար], ცხოვარი [ոչխար] և ცხოვრებაჲ [կյանք], բայց միաժամանակ սովորական է նաև ცხორებაჲ ձևը, որտեղ նախորդող ო-ի ազդեցությամբ ვ-ն կորել է:

ե) Նախորդող ო-ի ազդեցությամբ ვ-ն կորչում է նաև მაჴსოს [հիշում եմ] ձևում (փոխանակ՝ მაჴსოვს-ի, որ նույնպես պատահում է): Այս նմանությամբ ունենք მაჴსოთ և მაჴსოვთ (Փիլիպ. Ա, 7):

զ) ვ հնչյունը կորչում է հաջորդող ო-ի ազդեցությամբ. ვშევ [ծնեցի] ჰშევ [ծնեցիր], შვა [ծնեց], բայց՝ შობაჲ [ծնունդ] (<შვობაჲ), წევს [պառկած է], წვა [պառկեց], բայց՝ წოლაჲ [պառկել] (<წვოლაჲ), მყავს [ունեմ], բայց՝ ყოლაჲ [ունենալ]

է) რვაჲ [ութ] թվական անունը միշտ ვ-ով է գրվում, բայց ათ-რვა-მეტ [տասնութ]-ում უ-ն կարող է դրափոխվել, որի հետևանքով կխավում է երկու բաղաձայն՝ თვრ և ვ-ն կարող է վերածվել ոչ վանկային უ-ի՝ ათურამეტი:

ը) ვიყავ [եղա, էի], იყავ [եղար, էիր], բայց՝ იყო [եղավ, էր] (<იყვა): Այս բայի հոգնակի թվի 3-րդ դեմքի ձևն է იყვნეს [եղան, էին], սակայն երբեմն (առավելապես ուշ շրջանի հուշարձաններում) հանդիպում է იყუნეს ձևը: Սա բացատրվում է նրանով, որ ვ-ն հայտնվել է երկու բաղաձայնի միջև, որոնցից առաջինը ყ է:

22. ვ հնչյունը բաղաձայններից հետո:

ա) Եթե ვ-ն հիմքային հնչյուն է և հիմքի ամփոփման հետևանքով ვ-ն հայտնվում է բաղաձայնից հետո՝ այն ვ էլ մնում է։ Օրինակ, ասենք՝ ვშევ, პშევ, შვა, შვეს, შვილი [երեխա]։ Այստեղ შვ համադրությունը შევ հիմքի ամփոփման արդյունք է։

բ) ავ-ցուցիչավոր բայերի բայանունային ა-ն նախորդ ձայնավորը վերացնում է և ամփոփում բայի հիմքը, որի հետևանքով ვ-ն անմիջականորեն բաղաձայնից հետո է հայտնվում, սակայն որևէ փոփոխության չի ենթարկվում։ ვმალავ [թաքցնում եմ]—მალვაჲ [թաքցնել], ვხატავ [նկարում եմ]—ხატვაჲ [նկարել], ვჰმარხავ [պահում եմ]—მარხვაჲ [պահք], ვსტანჯავ [տանջում եմ]—ტანჯვაჲ [տանջանք] և այլն։

գ) Նման երևույթ է տեղի ունենում նաև ავ-ցուցիչավոր բայերի ներկա ժամանակի ենթակայական 3-րդ դեմքի հոգնակի թվի ձևում. ვმალავ—მალვენ, ვხატავ—ხატვენ, ვჰმარხავ—ჰმარხვენ, ვსტანჯავ—სტანჯვენ և այլն։

դ) ვ հնչյունը հաճախ է գործածվում հին վրացերենում, բայց հազվադեպ է, որ այն դրվի անմիջականորեն բաղաձայնից հետո և միաժամանակ բառը ամփոփված չլինի։ Սովորաբար բաղաձայնից հետո ვ-ն այն դեպքում է հանդիպում, երբ բառը ամփոփված է (օրինակ՝ ვკლავ [սպանում եմ]—მკლველი [սպանող] և այլն)։ Բայց կան մի քանի բառեր, որոնց մեջ ვ-ն բաղաձայնից հետո է, բայց չի նկատվում, թե դա ամփոփման հետևանք է։ Այդպիսի բառեր են՝ ადვილი [հեշտ, դյուրին], ზღვარი (საზღვარი) [սահման], იანვარი [հունվար], ფებერვალი [փետրվար], პირველი [առաջին], რვაჲ [ութ], რვალი [պղինձ], საფუძველი [հատակ, հիմք], ქართველი [վրացի], ქველი [քարի], ქველის საქმეჲ [քարի գործ], ქველის მოქმედი [քարտաշ], ყველი [պանիր, մաճառակ կաթին] (Ա. Թագ. ԺԷ, 18), ცვალებაჲ (ნაცვალად) [փոխել, կերպարանափոխվել, փոխարինել], წვალებაჲ (განწვალებაჲ) [հերձվածք], წყვილი [լուծ; զույգ եզան], ხვალე [վաղը, երկրորդ օրը], ჯინჭველი [մրջյուն]։

23. Առնմանություն։ Հին վրացերենում առավելապես հանդիպում է մասնակի առնմանությունը, լրիվը՝ հազվադեպ է։

ա) Ունենք გონებაჲ [միտք, խելք], გონიერი [խելոք], բայց դրա հետ միասին՝ უგუნური [անմիտ, անխելք], որը առաջացել է უ-გონ-ურ-ից (լրիվ առնմանություն)։

բ) Առնմանման հետևանքով შედ բայահիմքից ունենք შდ, որը նախդրալի հետ գործածվելիս տալիս է დაშდების բայաձևը. დაგშდების თქუენ სახლი თქუენი ოჴერი [Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր, աւերակ] (Մատթ. ԻԳ, 38 C)։ Իսկ հիմնականում մասնակի առնմանության

է տակա. შ-ի ազդեցությամբ ღ-ն փոխվում է თ-ի. დაშთა იგი [մնաց այն], დავშთი მე [ես մնացի, թողնվեցի]։

գ) შე և და նախածանցների միացումը (შედა>) შდა պետք է տար, բայց դրա փոխարեն հանդիպում է შთა, որտեղ შ-ի պատճառով հաջորդ ღ-ն դարձել է თ. შთააგდო [գցեց, ցած նետեց], შთასადებელი [ներդնելի], შთავიდა [ցած իջավ], შთავარდების [ցած, վայր է ընկնում], შთაასხა [ցած լցրեց], შთახედა [ցած նայեց], შთაჭდა [ցած իջավ] և այլն։ Հետագայում բարբառներում ձուլման հետևանքով այս შთა-ն տալիս է ჩა: Օրինակ՝ Գևորգ Սարգսյանը կազմում կա և՛ հին შთა-ն, և՛ նոր ჩა-ն. შთამოვიდა, შთამაგდებენ, შთავიდა, შთავარდ.ომად; ჩამოვიდა, ჩამოვიდით, ჩამოიტანნა:

Ձուլման ճանապարհով ხუთშაფათ [հինգշաբթի] բառի մեջ ჩ ստացել է նաև თშ-ն։ «Երուսաղեմյան կանոնը» բնագրում հաճախակի ხუჩაფათი ձևն է հանդիպում։

դ) შდობა բայից 2-րդ բայածևերի բաղաձայնների ձևերը შე նախածանցով կազմվում են այսպես՝ შეაშდევს [հեղձուցին] (Մարկ. Դ, 7C), შეაშდვის [հեղձուցանեն] (Մատթ. ԺԴ, 22C]։ Մեծ մասամբ, սակայն, այս հիմքի ღ-ն մասնակի առնմանության է ենթարկվում։ შ-ի ազդեցությամբ այն կորցնում է ձայնեղությունը և վերածվում է თ-ի։ შეაშთობდა [խեղդէր] (Մատթ. ԺԸ, 28)։ შეაშთვის (Մատթ. ԺԴ, 22DE)։

ե) ლალად-ყო [աղաղակեց] բառը բայի մեջ հաճախ ღ-ն հաջորդող ყ-ի ազդեցությամբ վերածվում է ტ-ի. ლალატ-ვყავ [աղաղակեցի], ლალატ-ყო (ლალად-ვყავ, ლალად-ყო-ի փոխարեն)։ Ինչ խոսք, հանդիպում են առնմանության չենթարկված ձևեր ևս։

զ) ესოდენ [այսքան, այսչափ]-ում եթե ო-ն դուրս է ընկնում, ღ-ն հայտնվում է ს-ի անմիջական հարևանությամբ, մասամբ նմանվում նրան և տառնում ենք՝ ესთენ: ესთენ ჟამ თქუენ თანა ვარ [Այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ] (Հովհ. ԺԴ, 9C):

է) Սովորական է, որ ամփոփման հետևանքով საჯ հիմքից առանում ենք სჯა [դատել], სჯული [օրենք, հավատ], დასჯა [դատեց], დასჯილი [դատված, դատապարտված], սակայն որանց զուգահեռ ունենք նաև մասնակի առնմանությամբ առաջված ձևեր. შჯა, შჯული, დაშჯა, დაშჯილი, որտեղ ჯ-ի ազդեցությամբ նախորդող ს-ն վերածվել է შ-ի. օրինակ՝ ნუ შჯით, რაჲთა არა დაისაჯნეთ, რამეთუ რომლითა საშჯელითა შჯიდეთ, მითცა დაისაჯნეთ [Մի դատեք՝ զի մի դատիցիք. զի որով դատաստանաւ դատիք՝ դատելոց էք] (Մատթ. Է, 1—2)։ შჯიდ სოფლისა ამის მოსრულ ვარ [Ի դատաստան եկի յաշխարհս յայս] (Հովհ.

Թ, 39): უკეთუ ვშჯიდე მე, საშჯელი ჩემი ჭეშმარიტ არს [Թէպէտ և դատիմ ես զոք, դատաստանն իմ ճշմարիտ է] (Յովհ. Ը, 16):

ը) Միաժամանակ ավելորդական է նաև, որ საჭ հիմքի ծանոթավորի ամփոփման ժամանակ նախորդող Ს-ն խլացնում է անմիջապես հաջորդող ჭ-ն և տալիս სჩ, որը հետագա հնչյունափոխության պատճառով դառնում է რჩ. რჩული, დარჩა, დარჩილი, დიდი რჩულის კანონი, გიორგი მერჩულე:

թ) Տեղի է ունենում նաև ենթակայական 2-րդ դեմքի ցուցչի և խնդրային 3-րդ դեմքի ցուցչի մասնակի առնմանություն հաջորդող ჭ, ჯ, ჩ հնչյունների հետ. შჭამით და ჰსუამთ [Ուտէք և ըմպէք] (Մարկ. Բ, 16): შჭამდეთ და ჰსუმიდეთ [Զի ուտիցէք և ըմպիցէք] (Ղուկ. ԻԲ, 30): დაშჭრიდენ ჯრმლებსა მათსა საჭნისებად [Կոտորեսցեն զսուսերս իւրեանց ի խոփս] [Մարգ. Միք. Դ, 3]: დაშჯედ [Նստեցիր], შჩან [Երևում ես], გამოშჩნდი [Երևացիր, հայտնվեցիր]:

24. Տարնմանություն:

ա) Սովորաբար եթե մեկ բառի մեջ երկու ր կա, նրանցից մեկը վերածվում է ლ-ի: Այս փոփոխությունը տեղի է ունենում ինչպես բուն վրացերեն բառերում, այնպես էլ փոխառություններում, მარგალიტი (μαργαρίτης) [մարգարիտ], მარტვლი (μάρτυς,-ρος) [մարտիրոս] և այլն: Ունենք იერ-ով վերջացող բառեր. მშიერ-ი [քաղցած], ძლიერ-ი [ուժեղ], բայց և միաժամանակ՝ ჯორციელ-ი [մարմնական, մարմնավոր], წყურიელ-ი [ծարավ]: Ունենք მცონარე-ჲ [ծույլ, անհամարձակ], მდინარე-ჲ [գետ, հոսք], բայց և՝ მჭურვალე-ჲ [ջերմ, շիկացած], მბრწყინვალე-ჲ [փայլատակող]: Ունենք მხატვარ-ი [նկարիչ, նկարող, պատկերող], მთესვარ-ი [ցանող, սերմնացան], նաև՝ მკურნალ-ი [բժիշկ, բժշկող]: Ունենք՝ უბუნურ-ი [անմիտ], բայց միաժամանակ՝ უფსკრულ-ი [անդունդ, վիհ] և այլն:

Բերված օրինակներից երևում է, որ տարնմանության է ենթարկվում երկրորդ ր-ն. *მარგარიტ-ი>მარგალიტ-ი; *ჯორციერ-ი>ჯორციელ-ი; *მჭურვარე-ჲ>მჭურვალე-ჲ; *მკურნარ-ი>მკურნალ-ი; *უ-ფსკრურ-ი>უფსკრულ-ი և այլն:

բ) Կան օրինակներ, որտեղ փոփոխության է ենթարկվում առաջին բաղաձայնը. հանդիպում է և՛ სულნელი, և՛ სურნელი [հոտավետ, անուշահոտ] (այստեղից՝ სურნელება-ჲ [օծանելիք հոտավետություն]): წულილ-ი [փոքր, մանր]-ի փոխարեն հին վրացերենի ուշ շրջանի ձեռագրերում հանդիպում է წურილი, որտեղ փոփոխության է ենթարկված

առաջին ლ-ն։ Այդ ლ-ն რ-ի է վերածվել նաև მოსრულ-ի մեջ, որ առ-
բում է მოსლ(ვ)ულ-ից։

25. Տարնմանական ձայնեղացում: Եթե բառի մեջ երկու հնչեղ խուլ հնչյուն կա, ապա նրանցից մեկը կարող է ձայնեղանալ։ Ձայնեղանում է առավելապես առաջինը։ Նման օրինակներ են՝ ებისტოლე-ჲ (ეპისტოლეჲ) [դրություն, նամակ], ებისკოპოსი (ეპისკოპოსი) [եպիսկոպոս], კაბარჭი (კაპარჭი) [կապարճ]։ Ինչ վերաբերում է ჰაპუკი-ին [պատանի] զուգահեռ ჰაბუკი բառաձևին, ապա այն կարող է հետևանք լինել պարսկերեն լեզվի պատմական զարգացման։

26. Դրափոխություն:

ա) առավելական է ნესტუი (ნესტჳ) [փող, սրինգ], բայց հանդիպում է նաև ნესუტ-ი, որտեղ უ-ն ոչ վանկարար է. ნესუტსა დაეცით თავსა თთუეთასა [Ուղարինոլի ճառընտ.], ტარსუნელისა მის ნესუტისა (Սաղմոսներ Պետրիծոնի)։

բ) ჭმარი [ամուսին] և ძმარი [քացախ] բառերում ամփոփման ժամանակ երբեմն գրափոխվում է რ-ն։ ჭრმისა [ամուսնու], ჭრმითა [ամուսինով]; ძრმისა [քացախի], ძრმითა [քացախով]. რ-ն երբեմն գրափոխված է լինում նաև ჯრმალ [սուր, թուր, սուսեր] բառում, երբ այն ամփոփված է. რჯმლები [սրեր, թրեր]։

գ) Առավելական է დადგრომაჲ [լինել, մնալ], բայց հաճախ რ-ի գրափոխություն է առկա. დადრგომაჲ. Այսպիսին է նաև ძლიერი [ուժեղ]-ի փոխարեն՝ ძრიელი, որտեղ միմյանց գրափոխել են ლ-ն և რ-ն։ Այսպիսին է նաև՝ უძრული-ն [թույլ, անուժ, հիվանդ] (უძლური-ի փոխարեն) և უძრულებაჲ-ը [թուլություն, հիվանդություն]։

դ) Դրափոխված է երևում ე-ն՝ ღმერთ [աստված] բառից կազմված ღმრთეებრ [որպես աստված] և ღმრთეება [աստվածություն] բառերում։

ե) Պատահում է ենթակայական 2-րդ դիմքի ցուցչի գրափոխություն՝ მიჰრბიოდე-ի [փախչում էիր] փոխարեն՝ მირჰბიოდე: მდაბალ [ստորին; հանդարտ, համեստ] բառից ունենք անվանական բայ, որի անցյալ կատարյալում ենթակայական 2-րդ դիմքի բաղաձևը կլինի დამსდაბლდი (დაჰმდაბლდი-ի փոխարեն)։ Քանի որ դիմային ցուցիչը գրափոխվել է, ապա ჰ-ի փոխարեն հայտնվել է ს, ինչպես պահանջում է დ-ով սկսվող բաղաձայնը։

զ) Նոր վրացերենում առավելական է, որ ლ, ნ և რ-ով վերջացող ամփոփվող հիմքում ავ-ցուցիչավոր բայերի ვ-ն գրափոխվի. ვკლავ [սպանում եմ]—კვლა [սպանություն, սպանել], ვხნავ [վարում եմ]—ხვნა [վար, վարել], შევკრავ [կապում եմ]—შეკვრა [կապել] և այլն: Հին վրացերենը նման բան չգիտե. այնտեղ գրափոխություն տեղի չի

ռնննում։ Օրինակներ՝ ვჭნავ-ჭნვაჲ, მჭნველი; მოვჰკლავ-კაცის კლვაჲ, კაცის მკლველი (մարդասպան), შევჰკრავ-შეკრვაჲ, შემკრველი և այլն։

է) Սովորական է ვ-ի դրափոխությունը თავყანის-ცემა [երկրպագել]-ում (თაყუანის-ცემაჲ, §21բ), ինչպես նաև ենթակայական 1-ին դեմքի ցուցիչի դրափոխությունը խնդրային 3-րդ դեմքի ցուցիչից հետո։ *შევხაბთ (>შეხუაბთ), ალვჰმართე>ალჳუმართე և այլն (§21բ)։ რ-ն դրափոխված է ათურამეტი թվականում (§ 21ժ)։

ը) Ինչ վերաբերում է სლვა-ին, այստեղ ს-ն նախածանցն ու վերջածանցը հին բայանվան ցուցիչներն են (ինչպես ს-რბ-ა-ում)։ Մնում է ლვ-ն, որտեղ ავ-ցուցիչավոր բայերի համանմանությամբ ვ-ն դրափոխված է։

Հավանական է նաև სულა (მოსულა-ჲ-ն), որտեղ ვ-ն երկու բաղաձայնների միջև ոչ վանկարար უ-ի է վերածված, և բաղաձայնների սկզբնական դիրքը վերականգնված է (სვლა—სულა)։ მო-სრულ-ი-ն սերում է მოსლვულ-ից, որտեղ უ-ից առաջ ვ-ն կորել է, իսկ ლ-ლ-ն տարնմանության հետևանքով რ-ლ-ի է վերածվել։

27. Կորուստ։ ლ հնչյունը կորչում է ილ-ով վերջացող անունների արտադրական հոլովում։ იწყო ტირილდ [սկսեց լալ]>იწყო ტირიდ, ადგილი [տեղ]>ადგიდ և այլն։

ნ-ն կորչում է հաջորդող ს-ի հետ՝ բաղաձայնների ազդման պատճառով. აქუნს>აქუს [ունի], მიჰნს>მიჰს։ Նույն ნ-ն կորչում է ქმნა բայի ներկայում. ვქმენ, ჰქმენ, ქმნა, բայց՝ ვიქმ, იქმ, იქმს։ ნ-ն կորել է բաղաձայնների ազդման պատճառով։ Այն հանդես չի գալիս նաև სა-ქმე և სა-ქმ-არ բառերում։

Եթե բայը սկսվում է მ-ով և միմյանց հաջորդող երկու მ է առաջանում, ապա 1-ին դեմքի խնդրային ցուցիչ მ-ն կորչում է. მოირტყენ და მსახურებდ მე [Գոտի ածեալ պաշտեա զիս] (Ղուկ. ԺԷ, 8)։ გმშიის, բայց՝ მშიოდა და არა მეცით მე ჭამადი [Զի քաղցեալ՝ և ոչ ետուք ինձ ուտել] (Մատթ. ԻԵ, 42)։

Ոչ վանկարար უ-ի կորստյան դեպքերը տե՛ս § 20գ-ը-ում։

28. Հավելում։

ա) Հաճախադեպ է ვ հնչյունի հավելումը ო-ից հետո և ება վերջածանցից առաջ. სათნოვებაჲ [լավություն, բարություն], სარწმუნოვებაჲ [հավատ], სიწრფოვებაჲ [ազնվություն, անկեղծություն], იწროვებაჲ [նեղություն, տխրություն], უცხოვებაჲ [օտարություն] և այլն։ ვ չընկալված ձևերը ևս սովորական են։

բ) Կարող է ვ հավելվել երկու ო-երի միջև. უღმრთოვეო [անաստված], უშჯულოვეო [անօրեն], կամ՝ უ-ից հետո ე-ից առաջ՝ სიცრუვეჲ [ստություն, կեղծիք]։

դ) Կարող է ვ հավելվել նաև չվերջավորվող უ-ից հետո, որով անտեղ կանխվի բաղաձայնավորների շարքը. ძუა [էգ]>ძუვი (ლომისა ძუვისაჲ), ყრუა [խուլ]>ყრუვი:

ե) ოვა հնչյունակապակցությունը հաճախ ოა-ի է վերածվում. მთოვარეჲ [լուսին]>მთოარეჲ, მჭცოვანი [ծեր]>მჭცოანი և այլն: Նույն ձևով՝ հունարենից փոխառյալ სტოა [στοά, ή, սյունասրահ; բակ] բառի մեջ երբեմն ունենք ვ-ի հավելում՝ სტოვაჲ:

զ) Կարող է რ ավելանալ ბჭე [դուռ, դարպաս] և ბჭობა [դատ, դատավարություն] բառերում՝ ბრჭეჲ, ბრჭობაჲ:

է) Երբեմն თ է ավելանում მუნქუესვე [միաժամանակ, անմիջապես] բառի մեջ՝ მუნთქუესვე:

29. Ձուլում:

ա) აუ հնչյունախումբը ო-ի է փոխվել დედოფალი [թագուհի, տիկին, կանացի վանքի առաջնորդ] բառում (დედაუფალი>დედოფალი): Հանդիպում է նաև დედუფალი:

բ) შთ հնչյունակապակցությունը ձուլման հետևանքով ჩ է տալիս՝ შთავიდა [գնաց ներս, մտավ]>ჩავიდა (պատահում է ուշ շրջանի հուշարձաններում):

գ) Ձուլման օրինակ է նաև ძს-ի վերածվելը ც-ի՝ თანა-მაც (<თანა მაძს) [պատշաճ է ինձ], ზედა-მაც (<ზედა-მაძს) [պարտ, պատշաճ է ինձ], ძალ-მიც (<ძალ-მიძს) [կարող եմ] և այլն:

դ) უა հնչյունակապակցությունը հին վրացերենում ընդհանրապես ձուլման չի ենթարկվում: Բացառություն է მქონან-ը, որը առաջացել է *მქუანან ձևից:

30. Ամփոփում: Հին վրացերենում սովորական է բառի ամփոփումը, որ տեղի է ունենում ձայնավորի սղման հետևանքով: Ձայնավորներից կարող են սղվել ა-ն կամ ე-ն, և բառը մեկ վանկով փոքրանում է (ամփոփվում). მართალ-ი—მართლ-ისა [արդար, ուղիղ], სოფელ-ი—სოფლისა [գյուղ; երկիր, աշխարհ], სენ-ი [հիվանդություն, ախտ]—სნე-ულ-ი [հիվանդ] և այլն: Սակայն, եթե սղվում են ო-ն կամ უ-ն, նրանց տեղը հայտնվում է ոչ վանկարար უ-ն. ნიგოზი [ընկույզ]—ნიგუზისა:

Սույն ոչ վանկարար უ-ն, սակայն, կորչում է, եթե նրան նախորդում կամ հաջորդում է շրթնային բաղաձայն կամ ձայնավոր. ობოლი [որբ]—ობლისა, გოდოლი [աշտարակ]—გოდლისა, ჰოროლი [նիզակ, գեղարդ, տեգ]—ჰორლისა, შურდული [ճեղապարսատիկ]—შურდლისა:

Ամփոփման հետևանքով რაოდენ-ը [որքան] դառնում է რავდენ, որովհետև պետք է լիներ რაუდენი (ոչ վանկարար უ-ով), իսկ ոչ

վանկարար უ-*ն նման պայմաններում մշտապես* ვ-*ով է փոխարինվում (օրինակ՝* პაულე>პავლე)։

ესოდენი-*ն [այչքան, այնչափ] ամփոփման հետևանքով տալիս է* ესთენი (*պետք է* ესუდენი *տար, բայց ոչ վանկարար* უ-*ն կորչում է, իսկ* ს-*ն խլացնում է անմիջականորեն հաջորդող* დ-*ին)։*

31. Ամփոփման պատճառները։

Ձայնավորների թուլացումը, ոչ վանկարար դառնալը կամ լրիվին ընկնելը (սինկոպե) տեղի է ունենում այն ժամանակ, երբ հիմքին վերջից միանում է այնպիսի տարր, որը ձայնավոր է կամ ձայնավորով է բսկսվում։ Թուլանում կամ լրիվ ընկնում է միայն այն ձայնավորը, որը դիրքով ամենամոտն է կցված մասնիկին, այսինքն՝ հիմքի վերջին ձայնավորը։ Օրինակ, վերցնենք ტაძარ *բառը և տեսնենք՝ որ դեպքում է այն ամփոփվում։*

Բաղաձայնով սկսվող վերջածանցներ (հիմքն ամփոփված չէ)	*Ձայնավորով սկսվող վերջածանց (հիմքն ամփոփված է)*	*Վերջածանցի առաջին ձայնավորը*
ტაძარ [*տաճար*]	ტაძრ—ად	ა
ტაძარ—მან	ტაძრ—ებ-ი	ე
ტაძარ—სა	ტაძრ—ისა	ი
ტაძარ—ნი	ტაძრ—ითა	ი
ტაძარ—თა	ტაძრ—ობაჲ	ო

Այստեղից երևում է, որ երբ բառի հիմքին բաղաձայնով սկսվող վերջածանց է ավելանում, ապա հիմքը չի ամփոփվում, իսկ ձայնավորով սկսվող վերջածանց ավելանալու դեպքում հիմքն ամփոփվում է։ Ամփոփման ժամանակ միշտ հիմքի վերջին ձայնավորն է ընկնում կամ թուլանում։

Ամփոփման օրենքը չի տարածվում երկու հոլովական ցուցիչների վրա՝ անվանական հոլովի ი-*ի և կոչական հոլովի* ო-*ի.* ტაძარ-ი, ტაძარ-ო: *Սա բացատրվում է նրանով, որ այս ցուցիչները ավելացվել են հնագույն վրացերենում բառերի ամփոփման օրենքների ձևավորումն ավարտվելուց հետո։*

Ամփոփում է տեղի ունենում և՛ անուններում, և՛ բայերի մեջ։ Նրանց միջև տարբերությունն այն է, որ անունների մեջ ամփոփում առաջացնում է միայն վերջածանցը, իսկ բայերի մեջ՝ և՛ վերջածանցը, և՛ նախածանցը։ Օրինակներ՝ სენ-ი [*հիվանդություն*]—სნეულ-ი [*հիվանդ*], ბრძენ—ი [*գիտուն, իմաստուն*]—ბრძნისა, სთესავს [*ցանում է*]—სთესვენ,

3—591

ესავს [ապաստան է, հուսած է]—ესვენ, ჯამს-მიჯმს [պատահում է, պետք է ինձ], გიჯმს, უჯმს, დგას-მიდგს, გიდგს, უდგს, მადგს; ძეს-*მიძს, *გიძს, *უძს, *მაძს, որոնց փոխարեն ձևային համապատասխան ստացվել է. მიც, გიც, უც, მაც (ძალ-მიც [կարող եմ], ძალ-გიც [կարող ես], ძალ-უც [կարող է] მაც/თანა-მაც [պարտ է, պատշաճ է ինձ], თანა-გაც [պարտ է, պատշաճ է քեզ], თანაac [պարտ է, պատշաճ է նրան], ჩანს-მიჩნს, სათნო-მიჩნს: Ն-ի անկումից հետո՝ მიჩს/სათნო-მიჩს [հաճելի եմ] (Բ Կորնթ. ԺԲ, 10), მაქუს [ունեմ] (<მაქუანს), მაქუნდა: სდევ (հրամ. დევ), բայց՝ შეუდგ (კეთილითა მოძღურებითა, რომელსა შეუდგ) (Ա Տիմոթ. Դ, 10): Սակայն կա և შეუდეგ (Ա Տիմոթ. Զ, 11) (հրամ.). ნუუკუე სახლებ არა გიდგს ჭამად და სუმად? [Միթե տուն ոչ ունիցիք ուտելոյ և ըմպելոյ] (Ա Կորնթ. ԺԱ, 22), არა მიჯმ შენ [Չէ ինձ պիտոյ] (Ա Կորնթ. ԺԲ, 21): Համփոփմանը չի խանգարում ღ անկանը. ჯამ-ს, սակայն՝ ჯმ-და; ჩანს, բայց՝ ჩნდა:

Համփոփումը չայն կիրառում է ստանում բայաձևերում:

32. Վերջադրում: *Վերջադրում ենք անվանում անվան հիմքի վերջին ձայնավորի կորուստը հաջորդող վերջածանցի ազդեցությամբ.* დედა-ა [մայր]—დედისა, საქმეა (ხაქმე) [գործ]—საქმისა, ლჳნოა [գինի]—ლჳნისა և այլն:

33. Հնչյունների փոխարինելիությունը: *Ունենք* ქორწილი [հարսանիք], *բայց միաժամանակ նաև՝* ქორწინ-ი, ქორწინებაა [ամուսնություն], საქორწინე-ა; შუენ-იერი [գեղեցիկ] և უ-შუერ-ი [տգեղ], ჭმირი [խիտ, հասու, հաճելի) և ყმირი, დაეჭსა [փակվեց] և დაეჭშა, სი-ზმარ-ი [երազ] և ზმან-ებაა [երազ տեսնել], ნუ ისმენთ სიზმართა თქუენთა, რომელ თქუენ გეზმანებიან [Մի՛ անսայք երազոց ձերոց, զոր դուք տեսանէք] (Երեմ. ԻԹ, 8):

34. Զուգահեռ ձևեր: *Գոյություն ունեն զուգահեռ ձևեր.* იწრაფა և ისწრაფა (այստեղից՝ მწრაფლ և მსწრაფლ [շտապ, շտապողությ]), მარჯუენაა և მარჯუენეა [աջը], მარცხენაა և მარცხენეა [ձախը], ყუდროა և მყუდროა [հանգիստ, խաղաղ], ქჳშაა և მქჳშაა [ավազ], ჭრწნაა և ხრწნაა [խորտակել, ապականել], უჭრწნელი և უხრწნელი [անապականելի], ურთიერთას [միմյանց] (հնագույն հուշարձաններում) և ურთიერთარს (ուշ շրջանի հուշարձաններում): Բայի հիմքն է ფუც, իսկ անվանը՝ ფიც: ფიცით, რომელ ეფუცა აბრაჰამსა, მამასა ჩუენსა, მოცემად ჩუენდა [Զերդումն, զոր երդուաւ Աբրահամու հօր մերում, տալ մեզ տանել] (Ղուկ. Ա, 73):

35. Հունարենի հնչյունների արտահայտման մասին.

ա) η հնչյուն ունեցող հունարեն բառերը վրացերենում սկզբնական շրջանում ე-ով էին արտահայտվում (ამენ, დემეტრე)[1], իսկ հետո (հատկապես X դարից)՝ ი-ով (ამინ, დიმიტრი), համաձայն հենց հունարենում տեղի ունեցած հնչյունական փոփոխությունների։

բ) Հունարենից կամ հունարենի միջոցով մուտք գործած օմեգա ունեցող բառերում վրացերենում ω-ի փոխարեն երբեմն ოვ է հանդիպում, որը կարող է արմատանալ և ինքնուրույն հուշարձաններում ևս հանդիպել. ქალაქსა შინა ბალდადს ბაბილოვენისისა [Բաբելոնի Բաղդադ քաղաքում] (Աբո)։

գ) Հունական այբուբենի երկրորդ տառը՝ β, հին թարգմանական երկերում ბ է տառադարձված, իսկ հետագայում՝ ვ. ბასილი-ვასილი։

դ) Հունական χ տառը հնում թարգմանական հուշարձաններում ქ-ով է տառադարձված (ქრისტე, მიქაელ և այլն), բայց հետագա շրջանի աղբյուրներում երևան է գալիս ხ-ն. მიხაელ, ხარლამპი, პროხორე և այլն։

ե) Հունական այբուբենի երրորդ տառը՝ γ-ն, հնագույն հուշարձաններում გ-ով է տառադարձված, իսկ հետագա հուշարձաններում (սկսած X—XI դարերից)՝ երկար ձայնավորից առաջ՝ ღ-ով, համապատասխան հունարենում իսկ տեղի ունեցած հնչյունական փոփոխությունների։ Օրինակ՝ Գործք առաքելոցի հին խմբագրություններում ընթերցվում է აგაბოს (11, 28; 21, 10) և აგრიპა (25, 13; 25, 22), հետագա խմբագրություններում՝ აღაბოს և აღრიპა։

զ) Հունարենից կամ հունարենի միջոցով մուտք գործած բառերում, բառասկզբի ρ-ի դիմաց վրացերենում առկա է ჰრ. ჰრომე, ჰრომაელი; ჴმაჲ ჰრამაჲთ ისმა გოდებისაჲ და ტირილისაჲ და ღაღადებისაჲ მრავალი ჰრაქელ სტიროდა შვილთა თჳსთა [Ձայն գուժեաց ի Ռամա, ողբումն եւ լալումն և աշխարումն յոյժ։ Ռաքէլ լայր զորդիս իւր] (Մատթ. Բ, 18)։

է) Դիտելի է նաև, որ հունական անունների ος վերջավորությունը մերթ ოს-ով է արտահայտված, մերթ՝ ოზ-ով. ეპისკოპოს-ი [եպիսկոպոս], ფილოსოფოს-ი [փիլիսոփա], ანგელოზ-ი [հրեշտակ], კათალიკოზ-ი [կաթողիկոս], მარკოზ-ი [Մարկոս]։

---

[1] Վերջին ე-ն այս անվան մեջ նախորդող ე-երի ազդեցությամբ է առաջացել ი-ից. დემეტრი>დემეტრე.

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆՈՒՆՆԵՐ

ՀՈԼՈՎՈՒՄ

36. Հին վրացերենում անուններն ունեն երկու քերականական կարգ՝ հոլովի և թվի։ Անունների փոփոխությունն ըստ հոլովների կոչվում է հոլովում։

Գոյական անուններում տարբերակվում է մի կողմից՝ հատուկ և հասարակ, մյուս կողմից՝ եթե անունը հասարակ է, ապա որոշյալ հոդ ունի՞, թե որոշակիացված է այլ անունով։ Որոշիչ անունը կարող է լինել գոյական, ածական կամ դերբայ, թվական կամ դերանուն։

37. Հոդ։ Հին վրացերենում, ի տարբերություն նորի, գոյություն ունի հոդ, որը ցույց է տալիս, թե անունը, որին նա կցված է, հայտնի է, որոշակի է։ Օրինակ՝ სახლი იგი *[տունն այն]։ Եթե անունը անորոշ է, ուրեմն այն հայտնի չէ, որոշակի չէ, առաջին անգամ է նրա մասին խոսվում։ Օրինակ՝* სახლი *[տուն]։ Անորոշ անվանը հին վրացերենում կարող է հարադրվել* ერთი *[մեկ] կամ* ვინმე *[ումն]* (ვინმე-*ն՝ եթե մարդու մասին է խոսքը)։ Որոշյալ առումով դրվում են ոչ բոլոր անունները, այլ միայն հասարակները։ Հատուկ անունը (անձնանունը ինչպես նաև աշխարհագրական անունը) ինքնըստինքյան որոշյալ է համարվում, ուստի նրա հետ հոդ չի գործածվում։*

Որպես հոդ հին վրացերենում գործածվում է երեք բառ, ծագումով երեքն էլ ցուցական դերանուն՝ ესე *[այս],* ეგე *[այդ],* იგი *[այն], որոնց գործածության նպատակն է. ա) անորոշը որոշակիացնել և բ) ցույց տալ նրա վերաբերումը որևէ դեմքի՝ առաջին* (ესე), *երկրորդ* (ეგე), *երրորդ* (იგი). სახლი ესე *[տունն այս],* სახლი ეგე *[տունն այդ],* სახლი იგი *[տունն այն]։ Վրացերենի (ինչպես նաև հին հայերենի) հոդին հատուկ է դիմային հարաբերումը, իսկ այլ լեզուներում հոդը (օր. հունարենում, գերմաներենում, ֆրանսերենում) զուրկ է դիմային հարաբերումից։ Փոխարենը նրանք ունեն այսպես կոչված սեռ՝ արական, իգական և չեզոք (ֆրանսերենում միայն արական և իգական)։ Հոդավոր անունները հոլովապակաս անուններ են, նրանք չունեն ուղղական և կոչական։*

38. Թիվ։ Հին վրացերենը ունի երկու թիվ՝ եզակի և հոգնակի։ Ընդ որում, հոգնակին երկու կերպ է ներկայացված, որոնցից մեկը ավելի տարածված է, քան մյուսը։ Ըստ հոգնակերտ վերջածանցի, մեկը ნ—თ-*ով է, իսկ երկրորդը՝* ებ-*ով։ Հին վրացերենում* ნ-თ-*ով հոգնակին սովո-*

ռական է և շատ տարածված, իսկ ებ-*ով՝ հազվադեպ։ Նոր վրացերենում վերջինը հակառակն է։*

Որոշ հուշարձաններ աչքի են ընկնում ებ-*ով հոգնակիի հաճախակի գործածությամբ։ Օր.՝ Եզեկիելի մարգարեության գրքում (ըստ Օշկի ձեռագրի) հանդիպում են.* აქლემებსა და ვერძებსა და ტარიგებსა [*ուղտս և խոյս և որոջս*] (*ԻԷ. 21*), ბაგინები [*բագիններ, մեհեանք*] (*Զ. 6*); ბჭეები [*դրունք*] (*ԽԸ. 31*), დაბნებმან [*աւանք*] (*ԼԸ. 13*), დანაკის კუდ-ები (*Ե. 16*), ეტლები და ეტლის თუალები [*կառք և անիւք*] (*ԻԳ. 24*), ეტლის თუალები (*ԻԷ. 19*), შორის თესლებსა (*ԺԶ. 18*), თესლებსა შორის [*ի մէջ ազգաց*] (*ԻԹ. 12*), სიმრავლენი თესლებისანი (*ԼԶ. 6*), თესლებისაგან [*յազգէ*] (*ԼԶ. 13*), თესლებმან [*ամենայն ազգք*] (*ԼԹ. 23*), კამარჭები [*զկապարճս*] (*ԻԷ. 11*), კარები [*դրունք*] (*ԼԸ. 12*), კაცებსა ჰამდა (*ԺԹ. 6*), კერპები (*Ը. 10*), კრეტსაბმელები (*Խ. 17*), კუერთხებსა (*ԼԹ. 9*), ლახურები (*ԻԶ. 9*), ლახურებსა (*ԼԹ. 9*), მსხუერპლები (*Ի. 28*) ნიშებსა (*ԺԲ. 11*), პირები (*Ժ. 22*), სარკუმლები [*պատուհանք*] (*Ժ. 16*), სარკუმლებამდე [*մինչև ի պատուհանսն*] (*ԺԱ. 16*), საკლველები (*Խ. 41*), საკლველებსა (*ԽԳ. 11*), საყოფლები (*ԺԶ. 24*), სახლები (*ԺԱ. 3; ԻԸ. 26*), სოფლებსა შორის (*Ի. 23; ԻԹ. 12*), სოფლებისაგან (*ԺԹ. 8; Ի. 34*), სუეტები (*Խ. 17; ԽԲ. 3; ԽԲ. 6*) სნეულები (*ԻԳ. 20*), სტოვაები (*Խ. 18*), სტოები (*ԽԲ. 5*), ტარიგებსა (*ԻԷ. 21*), ქალაქები მათი (*ԺԹ. 7*), ქეროპინები (*ԽԱ. 18*), ქუაბებსა (*ԼԳ. 27*), ფარები და ჩაფხუტები (*ԻԷ. 10*), ფარებსა, ჰორლებსა . . . კუერთხებსა და ლახურებსა (*ԼԹ. 9*), ცხენები (*ԺԷ. 15*), ცხენები და მჴედრები (*ԼԸ. 4*), ძელები (*ԽԱ. 25*), ძუალები (*ԼԷ. 3; ԼԷ. 11*), ძუალებსა (*ԼԷ. 4*), ხევები (*ԽԷ. 7*), ჴევნები (*ԼԲ. 6*), ჴევნებსა (*ԼԱ. 12*)։

Սովորական է ებ-*ով հոգնակիի գործածությունը ուղղականում, որտեղ* ნ-*ով հոգնակին սեփական ձև չունի և ընդհանրապես հաճախադեպ է գործիականում, որտեղ* თ-*ով հոգնակին չի կարող հատուկ արտահայտել գործիական հոլովի ֆունկցիան։ Նշված հուշարձանում ուղղական հոլովաձևով գործածված է.* ძეებ და ასულებ (*ԻԳ. 4*), *իսկ գործիական հոլովաձևով հանդիպում է.* ეტლებითა და ეტლის თუალებითა (*ԻԳ. 25*), სავსე იყვნეს თუალებითა (*Ժ. 12*); კერპებითა (*ԼԷ. 29*); მკუდრებითა (*Թ. 7*); ნავებითა (*ԻԷ. 24*); საბლებითა (*ԻԷ. 24*); ჩაფხუტებითა (*ԺԷ. 15*); ფარებითა და ჩაფხუტებითა (*ԼԸ. 4*); ცხენებითა და ეტლებითა და მჴედრებითა (*ԻԶ. 7*); ჰუნებითა (*ԼԸ. 15*)։

39. Հոլովներ։ Հին վրացերենում կա ինը հոլով.

წრფელობითი *ուղղական*

სახელობითი	անվանական
მოთხრობითი	պատմողական
მიცემითი	տրական
ნათესაობითი	սեռական
მიმართულებითი	ուղևորական
მოქმედებითი	գործիական
ვითარებითი	պարագայական
წოდებითი	կոչական

Անվանականը առանց հոլովական ցուցչի էր և համապատասխանում էր անվան հիմքին։ Եզակի թվում և ებ-ով հոգնակիում հոլովները սեփական ցուցիչներ ունեին մնացած ձևերում։ Ինչ վերաբերում է ნ—თ-*ով հոգնակիին, ապա այն ուներ երեք ձև՝ մեկն անվանական հոլովի համար* (კაცნი), *երկրորդը՝ կոչականի համար* (კაცნო) *և երրորդը՝ բոլոր մնացած հոլովների համար* (კაცთა), *բացի ուղևորականից, որ այս դեպքում բացակայում էր։*

40. Անկայուն ձայնավոր։

Երեք հոլովաձևեր եզակի թվում և ებ-*ով հոգնակիում կարող են ավարտվել* ა *ձայնավորով, որը ծագումով հոդի մնացորդ պետք է լինի։ Այն գործածվում է տրականում, սեռականում և գործիականում, ինչպես նաև* ნ—თ-*ով հոգնակիում, սակայն միայն հատուկ անունների հետ։ Հատուկ անուններն ու որոշ դերանուններ այս ձայնավորի անհրաժեշտությունը չունեն։*

Ծանոթություն 1: *Կարելի է ասել, թե* ნ—თ-*ով հոգնակին ծագումով երկակի թվային է, որը կորցրել է իր նախկին նշանակությունը, հոգնակի զարգանալ և հետագայում առաջնություն ձեռք բերել* ებ-*ով հոգնակիի նկատմամբ։ Ուշադրության արժանի է, որ* ნ—თ-*ով կազմությունն այժմ խոսակցական բարբառում մասամբ երկակի թիվն արտահայտելու համար է գործածվում, որը հնագույն իրավիճակի յուրահատուկ վերապրուկ պետք է լինի.* გამარჯვება ოჯო! *(ողջույն մեկ աղջկա, մեկ մարդու),* გამარჯვება ოჯნო! *(ողջույն երկու մարդու),* გამარჯვება ოჯებო! *(ողջույն երկուսից ավելի մարդկանց)։ Սակայն այս իրողությունը այժմյան բարբառներում ամուր և համընդհանուր գործածություն ունեցող փաստ չէ և անկման ճանապարհին է։*

Երկակի թիվ ունեցող լեզուները (օրինակ, հունարենը, հին բուլղարերենը, արաբերենը), եզակի և հոգնակի թվերի համեմատությամբ երկակի թվում ավելի քիչ ձևեր ունեն։ Հին վրացերենի ნ—თ-*ով հոգնակիում էլ (ծագումով՝ երկակի) այդ պակասը կա։*

Ծանոթություն 2: Հին վրացերենում ուղեորական հոլովը հասարակ անունների հոլովման դեպքում չէր տարբերվում անձայն սեռականից, մինչդեռ հատուկ անուններում այն տարբերվում էր նրանից ა-ի հավելումով. მიავლინა უფლისა [ուղարկեց տերը], բայց՝ მიავლინა დავითისა [ուղարկեց Դավթին]: Նույն ձևով ուղեորական ունենք 2-րդ դեմքի դերանունների հոլովման ժամանակ. მიავლინა მისა მიავლინა მათა: Օրինակ՝ მიავლინა იგი (Հիսուսը) ანა კრულლი კაიაფაჲსა მღდელთ მოძღურისა [և առաքեաց զնա Աննա կապեալ առ Կայիափա քահանայապետ] (Հովհ. ԺԸ, 24); მიავლინა მისა ორნი მოწაფენი [առաքէ երկուս յաշակերտաց անտի] (Մարկ. ԺԱ, 2), მერმე კუალად მიავლინა მათა სხუაჲ მონაჲ [դարձեալ առաքեաց այլ ծառայ] [Մարկ. ԺԲ, 4]; ვქმნეთ აქა სამ ტალავარ, ერთი შენდა, ერთი მოსესა და ერთი ელიაჲსა [արասցուք երիս տաղաւարս. մի՝ քեզ, և մի՝ Մովսիսի, և մի Եղիայի] (Մատթ. ԺԷ, 4):

41. Հոլովական ցուցիչներ.

	Եզակի թիվ		Հոգնակի թիվ
Ուղղ.	—	—	(ებ)
Անվ.	—ი	(ნ)—ი	(ებ)—ი
Պատմ.	—მან	თ(ა)	(ებ)—მან
Տրակ.	—ს(ა)	"	(ებ)—ს(ა)
Սեռ.	—ის(ა)	"	(ებ)—ის(ა)
Ուղե.	—ისა	"	(ებ)—ისა
Գործ.	—ით(ა)	"	(ებ)—ით(ა)
Պար.	—ად, დ	"	(ებ)—ად
Կոչ.	—ო	(ნ)ო	(ებ)—ო

Պարագայականում երկու հոլովական ցուցիչ է ցույց տրված, որոնցից ად-ն ավելանում է բաղաձայնահանգ հիմքով անունների հիմքերին (კაც—ად), իսկ დ-ն՝ ձայնավորահանգ հիմքերին (ცა—დ):

Պատմողական հոլովի მან վերջավորությունը ծագումով ցուցական դերանվան ձև է նույն հոլովում. მა—ნ: Այստեղից երևում է, որ պատմողական հոլովի ցուցիչը հնագույն շրջանում ნ էր:

42. Բաղաձայնահանգ հիմքով հասարակ անուններ: Բաղաձայնահանգ հիմքերով հասարակ անունների մի մասը ամփոփվող է, մյուսը՝ ոչ: Ամփոփում տեղի է ունենում եզակի թվի չորս հոլովներում (սեռական, ուղեորական, գործիական և պարագայական) և ողջ ებ-ով հոգնակիում:

Չամփոփվողահիմք անուններ: *Չամփոփվողահիմք անունների հոլովման օրինակներ՝* კაც—ი.

Եզակի	*Հոգնակի*	*Հոգնակի*
Ուղղ. კაც [*մարդ*]	—	კაც—ებ [*մարդիկ*]
Անվ. კაც—ი	კაც—ნ—ი [*մարդիկ*]	კაც—ებ—ი
Գատմ. კაც—მან	კაც—თ—(ა)	კაც—ებ—მან
Տրակ. კაც—ს(ა)	"	კაც—ებ—ს(ა)
Սեռ. კაც—ის(ა)	"	კაც—ებ—ის(ა)
Ուղեկ. კაც—ისა	"	კაც—ებ—ისა
Գործ. კაც—ით(ა)	"	კაც—ებ—ით(ა)
Պարագ. კაც—ად	"	კაც—ებ—ად
Կոչակ. კაც—ო	კაც—ნ—ო	კაც—ებ—ო

Կոչականի հոլովաձևը կարող է ստացվել անվան առաջ ჰ-*ի հավելումով.* ჰ კაცო, ჰ დედოფალო, ჰ ქალწულო *և այլն:*

Այս ձևով են հոլովվում չամփոփվողահիմք անունները. ბეჭი [*մեջք, թիկունք*], გლახაკი [*աղքատ*], გულ-ი [*սիրտ, կենտրոն*], გურიტ-ი [*տատրակ*], დანაკ-ი [*դանակ, սուր*], ველ-ი [*դաշտ, արոտավայր*], თავ-ი [*գլուխ*], თით-ი [*մատ*], თუალ-ი [*աչք, ակն*], კაპრაულ-ი [*ավանակ, գրաստ*], კბილ-ი [*ատամ*], კუდ-ი [*պոչ*], მკლავ-ი [*բազուկ*], მუჴლ-ი [*ծունկ*], ნავ-ი [*նավ*], პურ-ი [*հաց, խնջույք, ճաշ*], სადგურ-ი [*կայան*], ახლ-ი [*տուն*], ფერჴ-ი [*ոտք*], ქალაქ-ი [*քաղաք*], ქალწულ-ი [*աղջիկ*], ქარ-ი [*հողմ, քամի*], ლორ-ი [*խոզ*], ყურ-ი [*ականջ*], ცეცხლ-ი [*կրակ, հուր, խարույկ*], ცოლ-ი [*կին*], წარბ-ი [*հոնք*], ჴელ-ი [*ձեռք*], ჴორც-ი [*միս, մարմին*] *և այլն:*

ილ-*ածանց հիմք ունեցող անունները (ծագումով՝ բայանունները) պարագայական հոլովը կազմում են* დ-*ի անմիջական կցումով:* *ხადილდ, *ტირილდ, *მო-სიკუდილდ, *բայց միաժամանակ* ლ-*ն կորչում է և ունենում ենք* ხადიდ, ტირიდ, მოსიკუდიდ:

Ծանոթություն: „სახლ"-*ի հնագույն ձևը* „სახელი"[1] *էր, որը խառնվելով* „ზახელ"-*ի հետ, փոխել է այն և սա էլ է* „სახელი" *դարձել*

[1] *Այս ձևը անդ-անդ պահպանվել է հին գրավոր հուշարձաններում, օրինակ՝* ღმერთმან დაამკჳდრნის ერთ-სახენი სახელსა [*Աստուած բնակեցուցանէ զմիակրօնս ի տուն*] (*Սաղմ. կէ, 7*) *առընթերցում՝* სახლსა); მოხაჭუნდეს ქებად სახელსა უფლისასა [*Մատուցանելով օրհնութիւն ի տուն տեառն*] (*Երեմ. ժէ, 26*), *որտեղ առընթերցում այսպես էլ* „სახლსა" *է: Այս ձևից է ծագում* სახე-*ն, որ տալիս է Բասիլի ավետարանում.* სახესა მამისა ჩემისასა ჟურ-ისა ჩემი ყოფად [*ի տան հօր իմոյ պարտ է ինձ լինել*] (*Ղուկ. Բ, 49*)*: Ավելի ավետարանում այսպես* „სახლსა" *է,* ი. იმნაიშვილი, სახელთა ბრუნება და ბრუნვათა ფუნქციები ძველ ქართულში, თბ., *1957*, გვ. *39*):

(համեմ. ավար. ქახე *«անուն», մեգրել.* ვჯობი *«կոչվում եմ», «ինձ կոչում ենք»)։ Առաջին* „სახელი"-ն *(տուն,* ДОМ) *ամփոփվել է և* „სახლი" *դարձել, որով և տարբերություն է առաջացել այս երկու բառերի միջև։ Հին* „სახელი"-ն *պարադիգմական հոլովում դառնում էր* სახლდ *և* სახლად, *որոնցից* სახლდ-ը ლ-ի *ազդման ճանապարհով* სახელ *ձևի է փոխարկվել և միայն ուղղական հոլովի նշանակություն ստացել։* წარვიდა სახედ ოჯსა *[գնաց իր տուն]։ Այս* სახედ-ը *հետո,* ილ-*ածանց հիմք ունեցող անունների ազդեցությամբ, դարձել է* სახიდ *և առաջացել են զուգահեռ ձևեր՝ հին* სახედ *և հետագայի՝* სახიდ։ სახლად *ձևը մնացել է պարադիգմական նշանակությամբ։*

43. Ամփոփվողահիմք անուններ։ *Ամփոփվողահիմք անուններում կարող են անհետ սղվել* ა *և* ე *ձայնավորները, իսկ եթե սղվեն* ო-ն *կամ* უ-ն, *այս դեպքում իրենց հետք կթողնեն ոչ վանկարար* უ-ն։

Օրինակներ

ա) Սղվել է ა-ն.

	Եզակի		Հոգնակի
Անվ.	ტაძარ *[տաճար]*	—	ტაძრ—ებ *[տաճարներ]*
Ուղղ.	ტაძარ—ი	ტაძარ—ნ—ი *[տաճարներ]*	ტაძრ—ებ—ი
Պատմ.	ტაძარ—მან	ტაძარ—თა	ტაძრ—ებ—მან
Տրակ.	ტაძარ—ს(ა)	"	ტაძრ—ებ—ს(ა)
Սեռ.	ტაძრ—ის(ა)	"	ტაძრ—ებ—ის(ა)
Ուղեկ.	ტაძრ—ისა	"	ტაძრ—ებ—ისა
Գործ.	ტაძრ—ით(ა)	"	ტაძრ—ებ—ით(ა)
Պարագ.	ტაძრ—ად	"	ტაძრ—ებ—ად
Կոչ.	ტაძარ—ო	ტაძარ—ნ—ო	ტაძრ—ებ—ო

Այսպես են հոլովվում նաև ბარკალ-ი *[ազդր],* დრაჰკან-ი *[դահեկան, ոսկե դրամ],* ეკალ-ი *[փուշ, տատասկ],* კარავ-ი *[վրան, տաղավար],* კეისარ-ი *[կեսար],* მკალ-ი *[մորեխ],* მწერალ-ი *[գրող, գրիչ],* მწიგნობარ-ი *[դպիր],* მჩუარ-ი *[կոտավ],* მჴარ-ი *[ուս],* მარცუალ-ი *[հատիկ, հացահատիկ],* მაყუალ-ი *[մոշ],* მეგობარ-ი *[բարեկամ],* მოყუას-ი *[ընկեր],* მსტოვარ-ი *[հետախույզ, լրտես],* ნაცარ-ი *[մոխիր],* საჭმარ-ი *[անհրաժեշտ նյութ, գործածելիք],* უფალ-ი *[տեր],* ფიცარ-ი *[տախտակ],* ფუტკარ-ი *[մեղու],* ქათამ-ი *[հավ, աքաղաղ],* ქმარ-ი *[ամուսին],* ძმარ-ი *[քացախ],* ჯრმალ-ი *[սուր, թուր, սուսեր] և այլն։*

Դիտելի է, որ բառը կարող է չամփոփվել, բայց եթե այն բարդության մեջ է մտնում որպես երկրորդ բաղադրիչ՝ կարող է սղվել։

անուններ, որոնց հիմքը վերջատվում է, և մյուս կողմից՝ անուններ, որոնց հիմքը չի վերջատվում: Վերջատվում են այն անունները, որոնց հիմքը վերջանում է ა*-ով կամ* ე*-ով, իսկ որոնց հիմքը վերջանում է* ო*-ով կամ* უ*-ով, չեն վերջատվում:* ი*-ահանգ հիմքերով հասարակ անուններ չեն հանդիպում:*

Ձայնավորահիմք և բաղաձայնահիմք անունների հոլովման տարբերությունն այն է, որ ձայնավորահիմքերը անվանական հոլովի ი*-ի փոխարեն նրա թուլացած փոփոխակն են (*ჲ*) ստանում, որը նախորդող ձայնավորի հետ միասին երկբարբառ է կազմում.* დედა-ჲ *[կին, մայր],* სახე-ჲ *[դեմք, ձև],* ჯბო-ჲ *[հորթ],* ყრუ-ჲ *[խուլ]: Բացի դրանից, վերջատվողահիմք անունները սեռական, ուղեորական և գործիական հոլովներում* ისა *և* ითა *վերջավորությունների փոխարեն ունեն* ჲსა *և* ჲთა*, քանի որ հիմքի վերջին ձայնավորը չի վերջատվում և դրա փոխարեն հաջորդող ձայնավորն է թուլանում ու կորցնում վանկայնությունը: Այս դեպքում եա երկբարբառ է գոյանում.* ო-ჲსა, უ-ჲსა:

Ձայնավորահանգ անունները, ի տարբերություն բաղաձայնահանգերի, պարագայական հոլովում ստանում են დ *հոլովիչ:*

46. ა**-ահանգ հիմքերով անուններ:**

Հոլովման օրինակ.

ա)	Եզակի		Հոգնակի
Ուղղ.	დედა *[կին, մայր]*	—	დედ—ებ *[կանայք, մայրեր]*
Անվ.	დედა—ჲ	დედა—ნ—ი *[կանայք, մայրեր]*	დედ—ებ—ი
Պատմ.	დედა—მან	დედა—თ—ა	დედ—ებ—მან
Տրակ.	დედა—ს(ა)	"	დედ—ებ—ს(ა)
Սեռ.	დედ—ის(ა)	"	დედ—ებ—ის(ა)
Ուղեոր.	დედ—ისა	"	დედ—ებ—ისა
Գործ.	დედ—ით(ა)	"	დედ—ებ—ით(ა)
Պար.	დედა—დ	"	დედ—ებ—ად
Կոչ.	დედა—ო	დედა—ნ—ო	დედ—ებ—ო

Այսպես են հոլովվում՝ ბაგა-ჲ *[մսուր],* გზა-ჲ *[ուղի, ճանապարհ],* და-ჲ *[քույր],* თივა-ჲ *[խոտ],* ლოცვა-ჲ *[աղոթք],* მამა-ჲ *[հայր],* მთა-ჲ *[լեռ],* მონა-ჲ *[ծառա],* ტაბლა-ჲ *[սեղան],* ქვა-ჲ *[քար],* ქუეყანა-ჲ *[հող, երկիր, գյուղ],* ქჳშა-ჲ *[ավազ],* ყრმა-ჲ *[մանուկ],* ცოდვა-ჲ *[մեղք],* ძმა-ჲ *[եղբայր],* ჴმა-ჲ *[ձայն] և այլն:*

բ) ზღუაჲ *[ծով]*, სიტყუაჲ *[բան, խոսք]* *անունները և* სხუაჲ *[այլ]* *դերանունը սեռական և գործիական հոլովներում յուրահատկություն են ի հայտ բերում այն առումով, որ* ა-*ի վերջատառումից հետո ոչ վանկավոր* უ-*ն անմիջականորեն ավելանում է* ი *հոլովական ցուցչին, որի հետևանքով առաջանում է* უი, *իսկ վերջինս սովորաբար* ჳ *նշանագրով է արտահայտվում.* ზღჳსა, სიტყჳსა, სხჳსა, ზღჳთა, სიტყჳთა, სხჳთა:

գ) დაბაჲ *[վայր, ավան]* *անունը հիմնականում* ებ-*ով հոգնակիում է գործածվում, որտեղ վերականգնվում է եզակիում կորած* ნ-*ն* (დაბნები)։ *Այս* ნ-*ն պահպանվել է* უდაბნო *[անմարդաբնակ վայր, անապատ]* *բառի մեջ։*

դ) ა-*հանգ* ეკლესიაჲ *[եկեղեցի]* *և* ჰურიაჲ *[հրեա]* *բառերի ձայնավորը հնագույն հուշարձաններում չի վերջատվում* [ეკლესიაჲსა, ჰურიაჲსა], *բայց ուշ շրջանի հուշարձաններում այդ բառերը վերջատվում են.* ეკლესიისა, ჰურიისა: *Այսպիսին է նաև* გეჰენიაჲ *[գեհեն]*։ *Հմմտ.* ამის ეკლესიაჲსაჲ *[այս եկեղեցու]* *(Բոլնիսի արձանագր.)* *և* ეკლესიისა საფუძველი დადვა *[եկեղեցու հիմքերը դրեց, հիմնադրեց եկեղեցին]* *(Դարբ.)*։

ե) დრომაჲ *[դրոշ]* *և* სტავრაჲ *[թանկարժեք գործվածք]* *բառերը, որոնք սերում են* დრომაკ-*ից ու* სტავრაკ-*ից, չեն վերջատում ձայնավորը՝* დრომაისა, დრომაითა, სტავრაისა, სტავრაითა:

47. ე-ահանգ հիմքերով անուններ: ე-*ահանգ հատուկ անունների հիմքի վերջահանգը վերջատվում է սեռական, ուղղական և գործիական հոլովներում։ Ինչ վերաբերում է* ებ-*ով հոգնակիին, ապա այստեղ անունը կարող է և՛ վերջատվել, և՛ ոչ։ Բացի այդ, պետք է հիշենք, որ անվանական հոլովում* ე-*ի և* ა-*ի միացումը* (ეჲ) *սովորաբար տալիս է* ჱ։ *Հոլովման օրինակ.* მეფე-ჲ:

	Եզակի		Հոգնակի
Ուղղ.	მეფე *[թագավոր, արքա]*	—	მეფე—ებ *[թագավորներ, արքաներ]*
Անվ.	მეფე—ჲ, მეფჱ	მეფე—ნ—ი *[թագավորներ]*	მეფე—ებ—ი
Պատմ.	მეფე—მან	მეფე—თა	მეფე—ებ—მან
Տրակ.	მეფე—ს(ა)	»	მეფე—ებ—ს(ა)
Սեռ.	მეფ—ის(ა)	»	მეფე—ებ—ის(ა)
Ուղեր.	მეფ—ისა	»	მეფე—ებ—ისა
Գործ.	მეფ—ით(ა)	»	მეფე—ებ—ით(ა)
Պարագ.	მეფე—დ	»	მეფე—ებ—ად
Կոչ.	მეფე—ო	მეფე—ნ—ო	მეფე—ებ—ო

Այսպես են հոլովվում՝ ბაგე-ჲ (ბაგჱ) [շուրթ], ბჭე-ჲ (ბჭჱ) [դուռ, դարպաս], დღე-ჲ (დღჱ) [օր], თორნე-ჲ (თორნჱ) [թոնիր, փռատուն], კლდე-ჲ (კლდჱ) [վեմ, ժայռ], მეფე-ჲ (მეფჱ) [թագավոր, արքա], მნე-ჲ (მნჱ) [ավագ, ծառայապետ, հազարապետ], მოწაფე-ჲ (მოწაფჱ) [աշակերտ, սան], სავენახე-ჲ (სავენახჱ) [խաղողի այգի], საზუერე-ჲ (საზუერჱ) [մաքսատուն], სამარე-ჲ (სამარჱ) [գերեզման, դամբարան], საუნჯე—ჲ (საუნჯჱ) [ունեցվածք, գանձ, գանձարան, շտեմարան], საფასე-ჲ (საფასჱ) [գանձ, գին, վարձ], საქმე-ჲ (საქმჱ) [գործ], ღამე-ჲ (ღამჱ) [գիշեր], ძე-ჲ (ძჱ) [զավակ, որդի], ჰელმწიფე-ჲ (ჰელმწიფჱ) [տիրակալ, իշխանավոր] և այլն։

ա) Երկու և ավելի վանկանի հիմքեր ունեցող բառերի մեջ ებ-ով հոգնակիում հաճախ հիմքի վերջահանգ ე-ն վերջատվում է. მეფები (მეფეები) [արքաներ], ჰუნები (ჰუნეები) [նժույգներ], ღამები (ღამეები) [գիշերներ] և այլն։

բ) Սեռական, ուղղական ու գործիական հոլովներում ինքնատիպություն են դրսևորում ტყუე-ჲ (ტყუჱ) [գերի] և თთუე-ჲ (თთუჱ) [ամիս] բառերը։ ე-ի վերջատումից հետո ոչ վանկարար უ-ն անմիջականորեն կցվում է հոլովական ցուցիչների ი ձայնավորին, և უ-ն միասին տալիս է ჳ. ტყჳთა, თთჳსა, თთჳთა։

գ) მოწაფეჲ [աշակերտ, սան] բառի ինքնատիպությունն այն է, որ վերջահանգի վերջատման հետ միասին կարող է նաև ամփոփվել. მოწ-აფისა և მოწფისა։ Զամփոփված հոլովաձևերն ավելի հաճախադեպ են։

48. Չվերջատվող անուններ։ Չվերջատվող անունների թվին են պատկանում այն բառերը, որոնց հիմքի վերջում առկա է ო կամ վանկարար უ։ Այս անունների հոլովման առանձնահատկությունն այն է, որ սեռական, ուղղական ու գործիական հոլովներում հոլովական ցուցիչ-ների ձայնավորը թուլանում է և կորցնում վանկարարությունը. წყაროჲსა, წყაროჲთა, ძუძუჲსა, ძუძუჲთა [ստինք]։ Հոլովման օրինակ՝ წყაროჲ [աղբյուր]։

	Եզակի		Հոգնակի
Ուղղ.	წყარო [աղբյուր]	—	წყარო—ებ [աղբյուրներ]
Անվ.	წყარო—ჲ	წყარო—ნ—ი [աղբյուրներ]	წყარო—ებ—ი
Պատմ.	წყარო—მან	წყარო—თ—ა	წყარო—ებ—მან
Տրակ.	წყარო—ს(ა)	»	წყარო—ებ—ს(ა)
Սեռ.	წყარო—ჲს(ა)	»	წყარო—ებ—ის(ა)
Ուղեկ.	წყარო—ჲსა	»	წყარო—ებ—ით(ა)

Գործ.	წყარო—ათ(ა)	"	წყარო—ებ—ით(ა)
Պար.	წყარო—დ	"	წყარო—ებ—ად
Կոչ.	წყარო—ო	წყარო—ნ—ო	წყარო—ებ—ო

Այսպես են հոլովվում՝ აყირო-ა *[գդալ]*, ბაბილო-ა *[բարունակ-ուռ]*, გემო-ა *[համ]*, ეზო—ა *[բակ, գավիթ, սրահ]*, ერდო-ა *[երդիկ, տանիք]*, კალო-ა *[կալ, կալատեղ]*, კურო-ა *[ցուլ]*, ოქრო-ა *[ոսկի]*, რტო-ა *[ոստ]*, სამეუფო-ა *[արքայություն, թագավորություն]*, სამნო-ა *[անտանելություն]*, სამყარო-ა *[տիեզերք, ամբողջություն, հնդարան]*, სამწყსო-ა *[հոտ]*, სიტფო-ა *[ջերմություն]*, სიშმო-ა *[նյութ]*, ტილო-ა *[կտավ]*, უდაბნო-ა *[անմարդաբնակ վայր, անապատ]*, უღმრთო-ა *[անաստված, անօրեն]*, უშჯულო-ა *[անհավատ]*, ჩრდილო-ა *[հյուսիս, հովանի, ստվեր]*, ხურო-ა *[վարպետ, վարդապետ, հյուսն]*, ჴბო-ა *[հորթ] և այլն։*

Բացառություն է կազմում ღვნოა *[գինի] բառը, որը սեռական, ուղեկցական և պարագայական հոլովներում վերջավորվում է՝* ღვინისა, ღვინითა:

Կոչական հոլովում երկու ო*-երի միջև կարող է* ვ *հավելվել.* ულმრთოვო, უშჯულოვო: *Հոլովման օրինակ՝* ყრუ-ა *[խուլ].*

	Եզակի		Հոգնակի
Ուղղ.	ყრუ *[խուլ]*	—	ყრუ—ებ *(խուլեր)*
Անվ.	ყრუ—ა	ყრუ—ნ—ი *[խուլեր]*	ყრუ—ებ—ი
Պատմ.	ყრუ—მან	ყრუ—თა	ყრუ—ებ—მან
Տրակ.	ყრუ—ს(ა)	"	ყრუ—ებ—ს(ა)
Սեռ.	ყრუ—ას(ა)	"	ყრუ—ებ—ის(ა)
Ուղեկ.	ყრუ—ისა	"	ყრუ—ებ—ისა
Գործ.	ყრუ—ათ(ა)	"	ყრუ—ებ—ით(ა)
Պար.	ყრუ—დ	"	ყრუ—ებ—ად
Կոչ.	ყრუ—ო	ყრუ—ნ—ო	ყრუ—ებ—ო

Ծանոթություն: *უ-ահանգ միավանկ բառերում երբեմն* უ*-ից հետո* ვ *է հավելվում, որով նրանք դառնում են բաղաձայնահիմք.* ბუვ-ი *[բու]*- ქუვ-ი *[եզ, ցուլ]*, ძუვ-ი *[էգ]*, ყრუვ-ი *[խուլ] և այլն։* ბუვისათჳს, ღომ, ისა ძუვისათჳს *և այլն։*

***49.* Ոչ վանկարար უ-ահանգ հիմքերով հասարակ անուններ:**

Ոչ վանկարար უ*-ահանգ հիմքերով անունները տարանձնահատկություն են դրսևորում այն հոլովներում, որոնք* ი, ისა *հոլովական ցուցիչներ ունեն, այսինքն՝ անվանականում, սեռականում, ուղեկցականում և*

գործիականում։ Առանձնահատկությունն ի հայտ է գալիս այն պատճառով, որ ոչ վանկարար უ-*ն հաջորդող* ი-*ի հետ միանալով՝ տալիս է* ჳ։

Հոլովման օրինակ՝ ნაძჳ [*եղևնի*].

Եզակի	Հոգնակի	Հոգնակի
Ուղղ. ნაძუ	—	ნაძუ—ებ [*եղևնիներ*]
Անվ. ნაძუ—ი, ნაძჳ	ნაძუ—ნ—ი [*եղևնիներ*]	ნაძუ—ებ—ი
Պատմ. ნაძუ—მან	ნაძუ—თ—ა	ნაძუ—ებ—მან
Տրակ. ნაძუ—ს(ა)	"	ნაძუ—ებ—ს(ა)
Սեռ. ნაძუ—ის(ა), ნაძჳსა	"	ნაძუ—ებ—ის(ა)
Ուղևոր. ნაძუ—ისა, ნაძჳსა	"	ნაძუ—ებ—ისა
Գործ. ნაძუ—ით(ა), ნაძჳთ(ა)	"	ნაძუ—ებ—ით(ა)
Պար. ნაძუ—ად	"	ნაძუ—ებ—ად
Կոչ. ნაძუ—ო	ნაძუ—ნ—ო	ნაძუ—ებ—ო

Բերված ձևերում უ-*ն ամենուր ոչ վանկարար է։*

Այսպես են հոլովվում նաև՝ ბორცჳ [*բլուր*], დათჳ [*արջ*], თაგჳ [*մուկ*], იხჳ [*բադ*], ქოცჳ [*ավազանակ*], ლეკჳ [*կորյուն*], ლეღჳ [*թուզ*], მდოგჳ [*մանանեխ*], მოგჳ [*մոգ*], ნესტჳ [*փող, սրինգ*], რიცხჳ [*թիվ, քանակ*], ფესჳ [*քղանցք*], ფიჩჳ [*քուրծ, խարազն*], ლაწჳ [*ծնոտ*], შაშჳ [*կեռնեխ*], ცერცჳ [*ոլոռ*], ძარღჳ [*ջիլ, մկան*], ჯაჭჳ [*շղթա*] *և այլն։*

Նման անունները կոչականում կարող են կորցնել հիմքային վերջահանգը. მოგჳ—მოგო, ლეკჳ—ლეკო [*փոխանակ՝* მოგუო, ლეკუო]։

50. Համաքանակ անունների հոլովումը։ *Հոգնակի թվով են գործածվում որևէ համաքանակություն արտահայտող անունները (օր.՝* პავლეეთნი [*Պողոսի հետևորդներ, պողոսականներ*]), *ինչպես նաև առանց* და *կապի բարդված անունները (օր.՝* ცოლ—ქმარნი [*կին-ամուսիններ*])։

Անվ.	პავლეეთნი	ცოლ—ქმარნი	მამა—დედანი
Պատմ.	პავლეეთთა	ცოლ—ქმართა	მამა—დედათა
Տրակ.	"	"	"
Սեռ.	"	"	"
Գործ.	"	"	"
Պար.	"	"	"
Կոչ.	პავლეეთნო	ცოლ—ქმარნო	მამა—დედანო

არა შვილნი მამა—დედათა უუნჯებენ, არამედ მამა—დედანი შვილთა [*քանզի ոչ պարտին որդիք հարց գանձել, այլ հարք որդւոց*] (*Բ Կորնթ. ԺԲ, 14*)։

51. Բացառականը თ-ով հոգնակիում:

Քանի որ თ-ა *վերջավորություն ունեցող անունները հաճախ չեն տարանջատում գործիական հոլովի ֆունկցիան, ուստի հին վրացերենում բացառական հոլովի ֆունկցիայի տարանջատման համար սկսել են ավելացնել* ით *վերջավորություն.* არასადა ანგელოზთაჲთ იწყო, არამედ ნათესავისაგან აბრაჰამისა იწყო [*Քանզի ոչ երբէք զհրեշտակաց բռնի հարկանէ, այլ զզաւակէն Աբրահամու բռնի հարկանէ*] (*Եբր. Բ, 16*):

Այսպիսին է նաև՝ მფრინველთაჲთ(გან) ვიდრე საცხოვართადმდე [*Ի թռչնոց եւ յամենայն անասնոց*] (*Ղևտ. Է, 26*). ესე ნეტარი მამაჲ ჩუენი იოვანე იყო ნათესავით ქართველი, მშობელთა და პაპათაჲთ(გან) დიდებ-ული წარჩინებული [*Այս երանելի հայրն մեր Իովանէն էր ազգութեամբ վրացի, ծնողներից և պապերից փառավոր և նշանավոր*] (*Վարք Հովհ. և Եփթ.*): *Նման ձևեր բավական շատ կան «Ընձեռնավորի»-ում.* თუალთა-(ჲ)თ ცრემლი გისტყვია [*Աչքերից արցունքներ են հոսում*] (129, 3) *այլն:*

52. Հատուկ անունների հոլովումը:

Անձնանունների հոլովմանը բնորոշ են մի քանի յուրահատկություններ:

ա) Երեք հոլով ոչ մի հոլովական վերջավորություն չեն ստանում: Այդ հոլովներն են՝ ուղղական, պատմողական և կոչական, որոնցում անունները հիմքի ձևով են ներկայանում:

բ) Տրական, սեռական և գործիական հոլովներում ა *աճական չեն ստանում:*

գ) Հոգնակի թիվ չունեն:

Հոլովման օրինակներ.

Ուղղ.	დავით	მართა	ჰელენე
Անվ.	»	»	»
Պատմ.	»	»	»
Տրակ.	დავით—ს	მართა—ს	ჰელენე—ს
Սեռ.	დავით—ის	მართა—ჲს	ჰელენჱს
Ուղեկր.	დავით—ისა	მართა—ჲსა	ჰელენჱსა
Գործ.	დავით—ით	მართა—ჲთ	ჰელენჱთ
Պար.	დავით—ად	მართა—დ	ჰელენე—დ
Կոչ.	დავით	მართა	ჰელენე
Ուղղ.	პავლე	იესუ	გიორგი
Անվ.	»	»	»
Պատմ.	»	»	»

4—591

Տրակ. ბაბო—ს	იესუ—ს	გიორგი—ს
Սեռ. ბაბო—ჲს	იესუ—ჲს	გიორგი—ს
Ուղեկր ბაბო—ჲსა	იესუ—ჲსა	გიორგისა
Գործ. ბაბო—ჲთ	იესუ—ჲთ	გიორგით
Պար. ბაბო—დ	იესუ—დ	გიორგიდ
Կոչ. ბაბო	იესუ	გიორგი

დავით-*ի օրինակով են հոլովվում՝* ქოჩიკ, იაკობ, აბრაჰამ, ვახტანგ, იოსებ, სიმონ, სოლომონ, ელისაბედ, მარიამ *և այլն։*

მართა-*ի օրինակով են հոլովվում՝* ელია, ესაია, იერემია, ზაქარია, იუდა *և այլն։*

ჰელენე-*ի օրինակով են հոլովվում՝* იოჰანე (იოვანე), მოსე, პეტრე, პავლე, ჰეროდე, ლაზარე, მათე *և այլն։*

გიორგი-*ի օրինակով են հոլովվում՝* აკაკი, ბასილი.

ბაბო-*ի օրինակով՝* ნინო.

„ქრისტე"-*ն մասամբ այնպես է հոլովվում, ինչպես հատուկ անունները և մասամբ՝ ինչպես հասարակները.* ქრისტე *(ուղղ., կոչ.),* ქრისტემან *(պատմ.)* ქრისტესა *(տրակ. և սեռ.),* ქრისტჱს *կամ* ქრისტეჲს *(սեռ.),* ქრისტჱთ *(գործ.),* ქრისტედ *(պար.)։*

Եթե հատուկ անունը վերադիր բառի հետ էր գործածվում, ապա երկուսն էլ հոլովվում էին (թե հատուկ անունը և թե վերադիրը), բայց հետագայում առանձնապես սկսում է հոլովվել միայն վերադիրը։ დავით მეფჱ *(ուղղ.),* დავით მეფემან *(պատմ.),* დავითს მეფესა *(տր.),* დავითის მეფისა *(սեռ.),* დავითისა მეფისა *(սեռ.)։* მოიწია მოციქული იგი იობისი დავითისა მეფისა *(Չոգաւ հրեշտակն Յովաբայ առ արքայ յԵրուսաղէմ]* *(Բ Թագ. ԺԱ, 22).* დღეთა ჰეროდეს მეფისათა *[Յաւուրս Հերովդի արքայի]* *(Մատթ. Բ, 1).* მისცეს იგი პილატეს მთავარსა *[Ետուն ի ձեռս պոնտացւոյ Պիղատոսի դատաւորի]* *(Մատթ. ԻԷ, 2) և այլն։*

53. Բացառություններ:

ա) Երբ հատուկ անունը պետք է գրվեր գործիական կամ պարագայական հոլովներով (որտեղի՞ց կամ մինչև ե՞րբ *իմաստով), նրա փոխարեն հաճախ գործածվում էր համապատասխան պատկանելական ձևը (ածական հոլովաձևեր), որը ժամանակ էր արտահայտում.* ყოველი ნათესავი აბრაჰამითგან ვიდრე დავითისამდე ნათესავი ათოთხმეტ და დავითისითგან ვიდრე ტყუეობადმდე ბაბილონისა ნათესავი ათოთხმეტ და ტყუენვითგან ბაბილონისაჲთ ვიდრე ქრისტესამდე ნათესავი ათოთხმეტ *[Ամենայն ազգքն յԱբրահամէ մինչև ի Դաւիթ՝ ազգք չորեքտասանք։ Եւ ի Դաւթէ մինչև ի գերութիւն բաբելացւոց՝ ազգք չորեքտասանք։ Եւ ի*

գերութենէն բաբելացւոց մինչև ի Քրիստոս՝ ազգք չորեքտասանք] (Մատթ. Ա, 17C)։ Այստեղ დავითისა-ի և ქრისტესი-ի տակ նկատի է առնված Դավիթի և Քրիստոսի ժամանակը։ Համեմատե՛ք. იწყო მოსესითგან და ყოველთა წინაწარმეტყუელთა [Եւ սկսեալ ի Մովսիսէ և յամենայն մարգարէից] (Ղուկ. ԻԴ, 27)։ Նման երևույթ է նաև այստեղ՝ და მოიყვანენს იგსუ კაიაფაჲსით ტაძრად [Եւ ածեն զՅիսուս ի վանացն Կայիափայ յապարանս դատաւորին] (Յովհ. ԺԸ, 28)։ Միայն թե այստեղ դեպքում նկատի ունի ոչ թե ժամանակը, այլ՝ անձը (տուն, բակ)։ C-ի* մեջ ուղղակի նշված է. და მოჰყვანდა იგსუ სახლით კაიაფაჲსით:

բ) ა-ածանց ստոր ծագման աշխարհագրական անունների հիմքերը վաղ շրջանի հուշարձաններում չեն վերջանում, իսկ հետագայում կարող են վերջանալ։ ასიაჲ-ასიაჲსა (ավելի ուշ՝ ასიისა), ანტიოქიაჲთ და იკონიაჲთ [յԱնտիոքէ և յԻկոնիէ] (Գործք ԺԴ, 18), ანტიოქიაჲთ, ჰრომით და ალექსანდრიაჲთ [Անտիոքից. Հռոմից և Ալեքսանդրիայից] (Դարձ.), მისაზღვრამდე ქალდიაჲსა [Մինչև Քաղդէացի սահմանը] (Հարտ) և այլն

գ) ეთ վերջածանցավոր աշխարհագրական անունները ուղղականում ստանում են ი: წარვიდეს საბერძნეთა [գնացին Հունաստան], შემოვიდეს სივნიეთა [մտան Սյունիք]։ Այսպիսին է նաև՝ ჯოჯოხეთი [դժոխք], შთაჴდა ჯოჯოხეთა [իջավ դժոխք]։ Սույն յուրահատկությունը կարող է տարածվել նաև պատկանելիական Նազարեթ քաղաքի անվան վրա (ნაზარეთი). წარვიდეს გალილეად, ქალაქად თჳსა ნაზარეთა [Դարձան անդրէն ի Գալիլէա ի քաղաքն իւրեանց Նազարեթ] (Ղուկ. Բ, 39)

ՈՐՈՇՅԱԼ ԱՆՈՒՆՆԵՐ

Հին վրացերենում անունը կարող է որոշակիանալ հոդով. հատկանշային և վարող անուններով։

54. **Հոդավոր անունների հոլովումը։** Հոդավոր անունը հոլովական է, չունի ուղղական և կոչական։ Տեսականորեն կարող է գործածվել նաև պարագայականով, բայց հազվադեպ է։ Հոդը սովորաբար հաջորդում է անվանը։

	Եզակի	Հոգնակի	Հոգնակի
Անվ.	კაცი ესე [այս մարդը]	კაცნი ესე [այս մարդիկ]	კაცები ესე [այս մարդիկ]
Պատմ.	კაცმან ამან	კაცთა ამათ	კაცებმან ამან

* C-ն Ավետարանի վրացական հնագույն խմբագրության ձեռագրերից մեկի՝ Ադիշի ավետարանի (897 թ.), ցուցիչն է։ (Խմբ.)։

Տրակ. კაცსა ამას	" "	კაცებსა ამას
Սեռ. კაცისა ამის	" "	კაცებსა ამის
Ուղղ. კაცისა ამისა	" "	კაცებისა ამისა
գործ. კაცითა ამით	" "	კაცებითა ამით

Եզակի	Հոգնակի	Հոգնակի
Անվ. კაცი ეგე (*այդ մարդը*)	კაცნი ეგე (*այդ մարդիկ*)	კაცები ეგე (*այդ մարդիկ*)
Պատմ. კაცმან მაგან	კაცთა მაგათ	კაცებმან მაგან
Տրակ. კაცსა მაგას	" "	კაცებსა მაგას
Սեռ. კაცისა მაგის	" "	კაცებისა მაგის
Ուղղ. კაცისა მაგისა	" "	კაცებისა მაგისა
Գործ. კაცითა მაგით	" "	კაცებითა მაგით

Եզակի	Հոգնակի	Հոգնակի
Անվ. კაცი იგი (*այն մարդը*)	კაცნი იგი *այն մարդիկ*)	კაცები იგი (*այն մարդիկ*)
Պատմ. კაცმან მან	კაცთა მათ	კაცებმან მან
Տրակ. კაცსა მას	" "	კაცებსა მას
Սեռ. კაცისა მის	" "	კაცებისა მის
Ուղղ. კაცისა მისა	" "	კაცებისა მისა
Գործ. კაცითა მით	" "	კაცებითა მით

Բերված օրինակներից ակնհայտ է, որ հոդի ձևը հոգնակի թվի անվանականում նույնն է, ինչ որ եզակիի անվանականում (ესე, ეგე, იგი), *իսկ անուններում* ებ-*ով հոգնակիի հոլովներում հոդը նույնն է, ինչ որ եզակի թվի համապատասխան հոլովներում։*

Նախադիր հոդ։ *Հոդը սովորաբար հաջորդում է անվանը, սակայն երբ անվանը որոշիչ է նախորդում, ապա հոդը ևս տեղափոխվում է առաջ.* ყოველი იგი კოლტი ღორებისაჲ [*խոզերի ողջ այն հոտը*], ყოველმან მან კოლტმან ღორებისამან, [*խոզերի ողջ այն հոտը*] ყოველსა მას კოლტსა ღორებისასა [*խոզերի ողջ այն հոտին*] *և այլն։*

35. Համաձայնային որոշիչ։ *Համաձայնական որոշիչ կարող են լինել ածականը, թվականը, դերանունը և դերբայը։*

Ածականը՝ որոշիչ. *Օրինակ՝* მთაჲ მაღალი [*բարձր լեռ*]

Եզակի	Հոգնակի	Հոգնակի
Ուղղ. მთა მაღალ [*բարձր լեռ*]	—	მთებ მაღლებ

Անվ. მთაჲ მაღალი	მთანი მაღალნი [բարձր լեռներ]	მთები მაღლები
Պատմ. მთამან მაღალმან	მთათა მაღალთა	მთებმან მაღლებმან
Տրակ. მთასა მაღალსა	" "	მთებსა მაღლებსა
Սեռ. მთის(ა) მაღლის(ა)	" "	მთების(ა) მაღლებ-ის(ა)
Ուղղ. მთისა მაღლისა	" "	მთებისა მაღლებისა
Գործ. მთითა მაღლითა	" "	მთებითა მაღლებითა
Պար. მთად მაღლად	" "	მთებად მაღლებად
Կոչ. მთაო მაღალო	მთანო მაღალნო	მთებო მაღლებო

56. Վարող որոշիչ: *Որոշիչ անունը սեռական հոլովով է դրվում (եզակի կամ հոգնակի թվում) և ապա համաձայնվում է որոշյալի հետ՝ ըստ հոլովի: Ստանում ենք որոշիչի կրկնակի հոլովում՝ սեռական-ուղղական, սեռական-անվանական, սեռական-պատմողական, սեռական-տրական և այլն:*

	Եզակի	Հոգնակի	Հոգնակի
Ուղղ.	სახლ ძელისა (*փայտե տուն*)	—	სახლებ ძელის(ა) [*փայտե տներ*]
Անվ.	სახლი ძელისაჲ	სახლნი ძელისანი (*փայտե տներ*)	სახლები ძელისაჲ
Պատմ.	სახლმან ძელისამან	სახლთა ძელისათა	სახლებმან ძელისამან
Տրակ.	სახლსა ძელისასა	" "	სახლებსა ძელისასა
Սեռ.	სახლისა ძელისაჲსა	" "	სახლებისა ძელისაჲსა
Ուղղ.		" "	" "
Գործ.	სახლითა ძელისაჲთა	" "	სახლებითა ძელისაჲთა
Պար.	სახლად ძელისა	" "	სახლებად ძელისა
Կոչ.	სახლო ძელისაო	სახლნო ძელისანო	სახლებო ძელისაო

Ուղղականում երկու ձև է հնարավոր՝ հնագույն (სახლ ძელის) *և հետագայի* (სახლ ძელისა):

Պարագայական հոլովում վարող անունը ընդհանրապես չի համաձայնվում որոշյալի հետ, քանի որ պարագայականի დ-*ն ծագումով կապ է* (და), *իսկ որոշիչն ու որոշյալը մեկ կապ պիտի ունենան:* ჟამი მკისაჲ (*հնձի ժամանակ*), ჟამმან მკისამან, ჟამსა მკისასა, *բայց՝* ჟამადმდე მკისაჲ

Անվ. სახლნი ძმათა ჩემთანი [*իմ եղբայրների տները*]
Պատմ. სახლთა " ჩემთამან
Տրակ. სახლთა " ჩემთასა

Սեռ. სახლთა „ ჩემთაჲსა
Կոչ. სახლნო „ ჩემთანო

Այստեղից երևում է, որ եթե որոշիչը თ-*ով հոգնակիով է և իր որոշիչն ունի, այս վերջինն ստանում է* եզակի *թվի վերջավորություն։*

Եթե որոշիչն ունի սեռական հոլովաձևով դրված իր որոշիչը, ապա այս վերջինս համաձայնում է և՛ իր որոշյալի հետ (ստանում է սեռական հոլովի ցուցիչ), և՛ թե առաջին որոշյալի հետ (հոլովով ու թվով), այսինքն՝ ստանում ենք եռակի հոլովում, օրինակ.

Եզակի

Անվ.	სარტყელ—ი	ტყავ—ისა	აქლემ—ისა—ჲსა—ჲ (*ուղղի կոչվից դուրս*)
Պատմ.	სარტყელ—მან	ტყავ—ისა	აქლემ—ისა—ჲსა—მან
Տրակ.	სარტყელ—სა	„	აქლემ—ისა—ჲსა—სა
Սեռ.	სარტყელ—ისა	„	აქლემ—ისა—ჲსა—ჲსა
Գործ.	სარტყელ—ითა	„	აქლემ—ისა—ჲსა—ჲთა
Կոչ.	სარტყელ—ო	„	აქლემ—ისა—ჲსა—ო

Հոգնակի

Ուղ.	სარტყელ—ნ—ი	ტყავ—ისა	აქლემ—ისა—ჲსა—ნ—ი
Պատմ.	სარტყელ—თა	„	აქლემ—ისა—ჲსა—თა
Տրակ.	„	„	„
Սեռ.	„	„	„
Գործ.	„	„	„
Կոչ.	სარტყელ—ნ—ო	„	აქლემ-ისა-ჲსა-ნ-ო

57. Ածական անուններ: *Ածական անունը հոլովման առումով ոչնչով չի տարբերվում գոյական անունից։ Ի տարբերություն գոյականների, ածականն ունի համեմատության աստիճանացույց ձևեր* (§ 80)։

58. Թվական անուններ: *Քանակական թվականների բոլոր հիմքերը բացի ութից և ինից, բաղաձայնահանգ են.* ერთ—ი [*մեկ*], ორ—ი [*երկու*], სამ—ი [*երեք*], ოთხ—ი [*չորս*], ხუთ—ი [*հինգ*], ექვს—ი [*վեց*], შვიდ—ი [*յոթ*], რვა—ჲ [*ութ*], ცხრაჲ [*ինը*], ათ—ი [*տաս*], ათერთმეტ—ი [*տասնմեկ*], ათორმეტ—ი [*տասներկու*], ათსა(მ)მეტ—ი [*տասներեք*], ათოთხმეტ—ი [*տասնչորս*], ათხუთმეტ—ი [*տասնհինգ*], ათექვსმეტ—ი [*տասնվեց*], ათშვიდმეტ—ი [*տասնյոթ*], ათრვამეტ—ი [*տասնութ*], ათცხრამეტ—ი [*տասնինը*], ოც—ი [*քսան*], ორმეოც—ი [*քառասուն*], ერგასის—ი (ორმეოცდაათ—ი) [*հիսուն*], სამეოც—ი (სამმეოცი) [*վաթսուն*],

ოთხმეოც—ი [ութսուն], ას—ი [հարյուր], ას და ერთი [հարյուր և մեկ], ას და ორი [հարյուր և երկու], ორას—ი [երկուհարյուր], ათას-ი [հազար], ბევრ—ი [բյուր—10000]:

Դասական թվականներ. პირველი [առաջին], მეორე [երկրորդ], მესამე [երրորդ] *և այլն:* პირველი, *բայց՝* მეოცდაერთე, ოცდამეერთე [*քսանմեկերորդ*]:

მეორე-*ի* [*երկրորդի*] *փոխարեն հաճախ գործածվում է* „ერთი იგი" *կամ* „ერთი": მან განირთხა (ჴელი) და კუალად მოეგო ვითარცა ერთი იგი [*Նա ձգեաց (զձեռն)՝ և եղև ողջ իբրև զմիւսն*] (*Մատթ. ԺԲ, 13*). ერთსა მას ნავსა [*երկրորդ նավում*] (*Ղուկ. Ե, 7*): *Ընդհանրապես, երբ երկուսի մասին է խոսքը, և* ერთი-*ն* (*կամ՝* ერთი იგი-*ն*) *երկու անգամ է գործածված, առաջին* ერთი-*ն* (*կամ՝ առաջին* ერთი იგი-*ն*) *մեկ է նշանակում, իսկ երկրորդ* ერთი-*ն* (*կամ՝ երկրորդ* ერთი იგი-*ն*)*՝ երկրորդը* (*մյուսը*). არავინ მონამან შეუძლოს ორთა უფალთა მონებად, რამეთუ ერთი მოიძულოს და ერთი შეიყუაროს, ანუ ერთსა ადიდებდეს და ერთი შეურაცხ-ყოს [*Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել. զի եթէ զմին ատիցէ, զմիւսն սիրէ. կամ զմին՝ մեծարիցէ, և զմիւսն արհամարհիցէ*] (*Ղուկ. ԺԶ, 13C*): ორნი ფქვიდნენ ფქვილსა: ერთი იგი წარიტაცოს და ერთი იგი დაშთეს [*Եթէ եղիցին երկու՝ աղալ ի միասին, մին՝ առցի և միւսն թողցի*] (*Ղուկ. ԺԷ, 35C*): ზოგი *և* კერძო *բառերը նշանակում են կես.* მიგცე შენ ვიდრე ზოგადმდე სამეუფოჲსა ჩემისა [*տաց քեզ՝ մինչև ցկէս թագաւորութեան իմոյ*] (*Մարկ. Զ, 23*): ორ წყრთა და კერძო სივრცე მისი [*երկու կանգուն ու կես է նրա լայնությունը*]:

Հոլովման առումով թվական անունը ոչնչով չի տարբերվում գոյական անունից:

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

59. Անձնական դերանուններ: მე [ես], შენ [դու], ჩუენ [մենք], თქუენ [դուք] *դերանունները չեն հոլովվում: Սրանցից* მე-*ն սեռական-ում փոխարինվում է* ჩემ-*ով՝* ჩემთჳს [*ինձ համար*], ჩემგან [*ինձնից*]: *Սրանցից են կազմված* ჩემ-ი [*իմ*], შენ-ი [*քո*], ჩუენ-ი [*մեր*], თქუენ-[*ձեր*] *ստացական դերանունները: Երբ հարկ է լինում հոլովել* მე *դերանունը, նրան փոխարինում է* ჩემ-ი. ჩემ უღირსისაგან [*ինձնից՝ անարժանից*], ჩემ უღირსსა ზედა [*ինձ՝ անարժանիս, վրա*], ნუ სტირთ ჩემ ზედა, არამედ გიხაროდენ [*մի լացեք իմ վրա, այլ ուրախացե՛ք*] (*Աբո*).

იქმენ მორჩილ სრულიად სიტყუათა ჩემ გლახაკისათა [Եղիր հնազանդ լիովին իմ՝ նվաստիս խոսքերին] (Ճանձթ.): უძლიერეს არს ჩემსა [Հզորագույն է, քան զիս] (Մատթ. Գ, 11): ჩემსა შემდგომად [զկնին իմ] (Մատթ. Գ, 11):

Ուղղորդական. ჩემდა, შენდა, მისა (მასა მიმართ) (*Ա Կորնթ. ԺԴ, 4*). (*ուշ շրջանի հուշարձաններում՝* მისდა), ჩემდა მომართ, ჩუენდა მომართ, შენდა მიმართ, თქუენდა მიმართ, მათა მიმართ (*ուշ շրջանի հուշարձաններում՝* მათდა მიმართ):

Սաստկական ձևերը փոխարինում են նաև այլ անձնական դերանունների. ვცხოვნდეთ მის თანა ძალისაგან ღმრთისა თქუენითურთ [*կենդանի կլինենք ընդ նմա զորությամբն աստծոյ*] (*Բ Կորնթ. ԺԳ, 4*): უწინარეს თქუენსა [*առաջ քան զձեզ*] (*Մատթ. Ե, 12*): უფროჲს ამათსა სხუაჲ მცნებაჲ არა არს [*մեծ քան զսոսա այլ պատուիրան ոչ գոյ*] (*Մարկ. ԺԲ, 31*):

60. Ցուցական դերանուններն են՝ ესე, ეგე, იგი, *որոնք երեք հիմք են հանդես բերում՝ մեկը անվանականի և երկրորդը՝ մնացած հոլովների համար: Ցուցական դերանունները չունեն ուղղական և կոչական հոլովներ:*

	Եզակի			Հոգնակի		
Անվ.	ესე [*այս, սա*]	ეგე [*այդ, դա*]	იგი [*այն, նա*]	ესენ-ი [*սրանք*]	ეგენ-ი [*դրանք*]	იგინ-ი [*նրանք*]
Պատմ.	ამა-ნ	მაგა-ნ	მა-ნ	ამა-თ	მაგა-თ	მა-თ
Տրակ.	ამა-ს	მაგა-ს	მა-ს	"	"	"
Սեռ.	ამ-ის	მაგ-ის	მ-ის	"	"	"
Ուղղ.	ამ-ისა	მაგ-ისა	მ-ისა	ამა-თა	მაგა-თა	მა-თა
Գործ.	ამ-ით	მაგ-ით	მ-ით			
Պար.	ამა-დ	მაგა-დ	მა-დ			

Բերված օրինակներից երևում է, որ պատմողական հոլովի ցուցիչը ն-*ն է.* ამა-ნ, მაგა-ნ, მა-ნ:

61. Հարցական և անորոշ դերանուններ. ვინ [*ով*], რაჲ [*ինչ*], ვინმე [*ոմն*], რაჲმე [*ինչ-որ, իմն*]:

	Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
Անվ.	ვი-ნ [*ով*]	ვი-ნ [*ովքեր*]	ვინმე [*ոմն*]	ვინმე [*ոմանք*]
Պատմ.	ვი-ნ	ვი-ეთ	ვინმე	ვიეთმე
Տրակ.	ვი-ს	ვი-ეთ	ვისმე	ვიეთმე
Սեռ.	ვი-ს(გან)	ვი-ეთ(გან)	ვის(გან)მე	ვიეთ(გან)მე

Ուղղ. ვი-სა ვი-ეთა ვისამე ვიეთამე

ვისა მსგავს არს [*ում նման է*] (*Ղուկ. ԺԳ, 18*)։

ნ-ն *պատմողական հոլովի ցուցիչն է* (ვი-ნ), *սակայն այն պատմողականից անցել է անվանականին։*

ვინ *և* ვინმე-ն *հոգնակի թվի անվանական հոլովում հանդես են բերում նույն ձևերը, ինչ եզակի թվում.* ვინ არს, რომელმან გცა შენ [*Ո՞վ է՝ որ հարեն զքեզ*] (*Մատթ. ԻԶ, 68*), ვინ არიან, რომელთა არა ჰრწმენეს [*Այլ են ոմանք ի ձենջ՝ որ ոչ հաւատան*] (*Հովհ. Զ, 64C*), მო-ვინმე-უჳდა მას კაცი ერთი [*մատուցեալ ոմն առ նա*] (*Մատթ. ԺԹ, 16*), მო-ინმე-უჳდეს იესუსი ფარისეველნი [*Ի նմին աւուր մատեան ոմանք փարիսեցիք՝ և ասեն ցնա*] (*Ղուկ. ԺԳ, 31*)։

ვინ-*ի նման են հոլովվում* არავინ [*ոչ ոք*], ნუვინ- [*մի ոք*]։ ვიეთ-მე-*ից* [*ոմանք*] *կազմվել է* ვიეთიმე [*ոմանց*] *սեռական դերանունը՝* ჩუეულებაჲ არს ვიეთიმე [*որպէս սովոր են ոմանք*]* [*Եբր. Ժ, 25*]։

Ուղղ. რაჲ	[*ինչ*]	რაჲმე [*ինչ—որ, իմն*]
Պատմ. —		—
Տրակ. რასა, რას		რასამე, რასმე
Սեռ. რაჲსა		რაჲსამე
Գործ. რაჲთა, რაჲთ		რაჲთამე
Պար. რად		რადმე

რა-ն *պատմողական հոլովաձևեր չունի։ Անհրաժեշտության դեպքում այստեղ նրան փոխարինում է* „რომელი"-ն [*որ*]։ რა-ն *հոգնակի թիվ ևս չունի։*

Սեռականի (რაჲსა) *և պարագայականի* (რად) *հոլովաձևերը գործածվում են* რატომ [*ինչու*] *բառի նշանակությամբ.* დედაკაცო, რაჲსა სტირ [*Կին դու, զի՞ լաս*] (*Հովհ. Ի, 13*), დედაკაცო, რად სტირ (*նույն տեղում. C*)։ *Այս նույն իմաստով է գործածվում նաև* რაჲსათჳს-ը։

Հարաբերական դերանուններ ձևերն են. რაჲ-ესე ვყავ, რაჲ-ეგე ჰყავ, რაჲ-იგი ყო։ რასა-ესე ვიქმ, რასა-ეგე იქმ, რასა-იგი იქმს։

Հարաբերական են նաև რაჲცა *և* რაჲცა-იგი-ն։ რაჲ-ը *ունի նաև* რამე [*ինչ-որ բան, որևէ բան*] *իմաստը.* ნუვის რას უთხრობ [*Մի՛ ումեք ինչ ասիցես*] (*Մարկ. Ա, 44*)։

რაჲ-ի *օրինակով են հոլովվում՝* არარაჲ [*ոչ ինչ*] *և* ნურაჲ-ը [*մի ինչ*]։

* *Բառացի թարգմանությունն է. սովորություն է ոմանց։*

	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	რაოდენ (რავდენ [*որչափ, որքան, ինչքան*]	—
Անվ.	რაოდენი (რავდენი)	რაოდენნი (რავდენნი)
Պատմ.	რაოდენმან (რავდენმან)	რაოდენთა (რავდენთა)
Տրակ.	რაოდენსა (რავდენსა)	" "
Սեռ.	რაოდენისა (რავდენისა)	" "
Գործ.	რაოდენითა (რავდენითა)	" "
Պար.	რაოდენად (რავდენად)	" "

	Եզակի	Հոգնակի	Եզակի	Հոգնակի
Ուղղ.	რომელ [*որ, որը*]	—	—	—
Անվ.	რომელი	რომელნი	რომელიმე	რომელნიმე
Պատմ.	რომელმან	რომელთა	რომელმანმე	რომელთამე
Տրակ.	რომელსა	"	რომელსამე	"
Սեռ.	რომლისა	"	რომლისამე	"
Ուղե.	რომლისა	"	რომლისამე	"
Գործ.	რომლითა	"	რომლითამე	"
Պար.	რომლად	"	რომლადმე	"

რომელთამე სცეს, რომელნიმე მოწყვლნეს, რომელთამე ქვაჲ დაჰკრიბეს [*Զորն ատանչեցին, զորն սպանին, զորն քարկոծեցին*] (*Մատթ. ԻԱ, 35*)։

62. Հարաբերական դերանուններ։

	Եզակի		
Անվ.	რომელი-ესე [*որն այս*]	რომელი-ეგე [*որն այդ*]	რომელი-იგი [*որն այն*]
Պատմ.	რომელმან-ესე	რომელმან — ეგე	რომელმან — იგი
Տրակ.	რომელსა — ესე	რომელსა — ეგე	რომელსა — იგი
Սեռ.	რომლისა — ესე	რომლისა—ეგე	რომლისა — იგი
Գործ.	რომლითა — ესე	რომლითა — ეგე	რომლითა — იგი
	Հոգնակի		
Անվ.	რომელნი — ესე	რომელნი — ეგე	რომელნი — იგი
Պատմ.	რომელთა-ესე	რომელთა — ეგე	რომელთა — იგი
Տրակ.	" "	" "	" "
Սեռ.	" "	" "	" "
Գործ.	" "	" "	" "

რომელთა-იგი სძინავნ, ღამე სძინავნ, და რომელნი-იგი დაითრვენიან, ღამე დაითრვენიან [*Զի որ ննջեննն՝ գիշերի ննջեն, և որ արբենանն՝ գիշերի արբենան*] (*Ա Թես. Ե, 7*)։ განიღჳძე რომელსა-ეგე გძინავს [*Վասն որոյ և ասէ, արի որ ննջեսդ, և կանգնեաց ի մեռելոց...*] (*Եփես. Ե, 14*)։

ესე, ეგე, იგი *մասնիկները կարող են ավելացվել* ლა *մասնիկավոր անուններին*. რომელ-ლა-იგი აჴუნდეს, მო-ვე-ელოს მას [*Եւ զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ*] (*Մատթ. ԺԳ, 12C*)։ *Սովորական է, որ այն ավելացվի հոդակապավոր անվանը*։ რომლისათჳს-ესე [*վասն այսորիկ*] (*Եբր. Բ, 1*)։ რომლისათჳს-იგი [*վասն որոյ*] (*Մատթ. Գ, 3, Հովհ., Ա, 15*)։ რომელთათჳს-იგი [*յորոց*] (*Բ Թագ. Է, 15*), რომლისა თანა-იგი (*Մարկ. Ե, 15*)։ ქუეყანაჲ ეგე, რომელსა შინა-ეგე გძინავს, შენ მიგეც [*Զերկիրդ, յորում դու ննջեցեր, քեզ տաց զդա*] (*Ծննդ. ԻԸ, 13*)։

Եզակի	Հոգնակի
Ուղղ. რომელცა	—
Անվ. რომელიცა	რომელნიცა
Պատմ. რომელმანცა	რომელთაცა
Տրակ. რომელსაცა	"
Սեռ. რომლისაცა	"
Ուղե. "	"
Գործ. რომლითაცა	"
Պար. რომლადცა	"

Պատահում է նաև կրկնակի արտահայտված հարաբերական ձև რომელიცი-იგი, რომელმანცა-იგი *և այլն*։

ურთიერთას-ը [*միմյանց*] *հնագույն հուշարձաններում՝* ურთიერთარს, *չի հոլովվում*։

ერთიერთ-ն *ունի երեք հոլով. պատմ.՝* ერთმან-ერთი: ლეკუთა ლომისათა დაუტევეს ერთმანერთი [*Կորիւնք առիւծու լքին զմիմեանս*] (*Յոբ. Դ, 11*), *տրակ.՝* ერთი-ერთსა, *սեռ.՝* ერთი-ერთისა: ურთიერთას ერთი-ერთისათჳს ზრუნვიდენ [*Զմիմեանս հոգայցեն*] (*Ա Կորնթ. ԺԲ, 25*), ჯერ-არს ერთი-ერთისა მიმართ თავ-ყოფით ფერჴისა ბანაჲ [*Պարտ է միմյանց պատվելով՝ ոտքերը լվանալ*] (*Ժամմեա. ճաշոց.*)։ ამის ნუგეშინისცემისა სიტყუასა ურთიერთას ეტყოდეს და ერთი-ერთსა უბრძანებდეს [*Մխիթարության խոսք էին միմյանց ասում և միմյանց պատգամում*] (*Սինայի ճաշոց, 120, 14*), ლოცვაჲ მათი ერთი-ერთისათჳს იყო [*Նրանց աղոթքը միմյանց համար էր*] (*Նույն տեղում, 120, 18*)։

63. **Անդրադարձ դերանուն**։ *Անդրադարձ դերանվան դեր է կատա-*

բում თავი-ს (*այնպէս հոլովաձևերով*). მკურნალო, განიკურნე თავი შენი [*Բժիշկ՝ բժշկեա զանձն քո*] (*Ղուկ. Դ, 23*)։ გამოუცხადე მას თავი ჩემი [*Երևեցուցից նմա զիս*] (*Հովհ. ԺԴ, 21*)։ რომელმან აღიმაღლოს თავი თჳსი, იგი დამდაბლდეს [*Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի*] (*Մատթ. ԻԳ, 12*)։ ნუცა თავსა შენსა ჰფუცავ [*Մի՛ ի գլուխ քո երդնուցուս*] (*Մատթ. Ե, 36*)։ ხვალემან იზრუნოს თავისა თჳსისა [*Վաղին վասն իւր հոգասցի*] (*Մատթ. Զ, 34*)։ *Գործածվում է նաև հոգնակի թվով.* დაიცევენით თავნი თქუენნი ყოვლისაგან ანგაჰრებისა [*Զգոյշ լերուք յամենայն ագահութենէ*] (*Ղուկ. ԺԲ, 15*)։ რომელნი ესვენ თავთა თჳსთა [*Ասաց և առ ոմանս պանծացեալս յանձինս...*] (*Ղուկ. ԺԸ, 9*) *և այլն*:

ԲԱՌԱԾԱՆՑՈՒՄ

64. Հոլովաձևերից ածանցված անուններ. *Անվան հոլովաձևերից որևէ մեկը կարող է օգտագործվել նոր անվան ածանցման համար։ Նման դեպքում գործածվում են սեռական, գործիական և պարագայական հոլովաձևերը։*

Սեռական: *Սեռական հոլովաձևը (հատուկ անուններում՝ ամբողջ) կարող է նոր անվան հիմք ծառայել։ Այսպիսին է, օրինակ, սեռական հոլովով դրված որոշիչը.* ტაძარ ძელისა, ტაძარი ძელისაჲ, ტაძარმან ძელისამან, ტაძარსა ძელისასა, ტაძრისა ძელისაჲსა, ტაძრითა ძელისაჲთა, ტაძარო ძელისაო (§ 56)։ სახლ იაკობის, სახლი იაკობისი, სახლმან იაკობისამან, სახლსა იაკობისსა *և այլն*։

65. Գործիական: *Նոր բառի ածանցման համար օգտագործվում է չանձյալ հոլովաձևը։ Օրինակ՝* გულ [*սիրտ*] *բառի չանձյալ գործիականը կլինի* გულით: *Այս* გულით-*ը օգտագործված է որպես ածականի հիմք և դրված պարագայականով.* რასაცა იქმოდით, გულითად იქმოდეთ [*Զոր ինչ առնիցէք՝ սրտի մտօք գործեսջիք*] (*Կող. Գ, 23*)։ არავინ მაქუს სხუაჲ ერთგული, რომელმანმცა თქუენთჳს გულითად იზრუნა [*Ոչ զոք ունիմ համաշունչ, եթէ ընտանեբար հոգայցէ վասն ձեր*] (*Փիլիպ. Բ, 20*)։

ბუნება (*էութիւն, բնութիւն*) *բառի գործիական հոլովաձևն է* ბუნებით: *Այս ձևը գործածված է որպես ածական անվան հիմք.* ბუნებითი [*բուն, իսկական*] ბუნებითიმან, ბუნებითისა *և այլն*։ რომელი იგი ბუნებითი ცოლი არს და შვილნი, იგინიცა ესრეთვე მოვაქცინე შენსა შჯულსა [*Իսկ որ իմ իսկական կինն են ու երեխաները, նրանց էլ նույն ձևով ձեր հավատին կցեցի*] (*Շուշ. I, 27, 28*)։ უკუეთუ ღმერთმან ბუნებითთა მათ რტოთა არა ჰრიდა, ნუუკუე შენცა არავე გრიდოს [*Զի եթէ տատած ի*

բուն ոստոցն ոչ խնայեաց, գուցէ երբէք և ի քեզ ոչ խնայեսցէ] (Հռովմ. ԺԱ, 21)։

Այսպիսին է նաև მარჯვენითი-ი [աջակողմյան], მარცხენითი-ი [ձախակողմյան]. მაშინ ჰრქუას მარცხენითთა მათ [Յայնժամ ասասցէ և այնոցիկ՝ որ ընդ ահեկէն իցեն] (Մատթ. ԻԵ, 41)։

66. Պարագայական: დიდ-ը [պարագայական հոլովում դառնում է დიდად: Այս დიდად հոլովաձևը կարող է իբրև նոր բառի հիմք ծառայել և անվանական հոլովում կառանանք დიდად-ი: აჰა ესერა ვაწჳმო ქამსა ოდენ ამას ხვალე სიტყუაჲ დიდადი [Եւ ես ահա տեղացից վաղիւ յայսմ ժամու կարկուտ սաստիկ յոյժ] (Ելից. Թ, 18)։ მრავალთა მდიდართა დადვეს დიდადი [Բազում մեծատունք՝ արկին բազում ինչ] (Մարկ. ԺԲ, 41C)

თავ բառից է կազմված თავად-ი դերանունը [ինքը, նա], որը երեք հոլովաձևերով է պատահում. თავადი, თავადმან, თავადსა: ეგე თავადი არს ელია [Նա է Եղիա] (Մատթ. ԺԱ, 14C). თავადი მიექცა პეტრეს [Եւ նա դարձեալ ի Պետրոս՝ ասէ] (Մատթ. ԺԶ, 23)։ თავადმან მიუგო და ჰრქუა მას [Նա պատասխանի ետ և ասէ] (Մատթ. Դ, 4)։ ხოლო თავადსა ეძინა [Եւ ինքն ննջէր] (Մատթ. Ը, 24)։

Այսպիսի բառաձևությունը հատկապես հաճախակի է բայանուններից. ღორძინებად-ი [վերածնելիք], კლევად-ი [սպանանելիք], მოწყვენად-ი [գալիք], ყოფად-ი [լինելիք], შობად-ი [ծնանելիք], ჭამად-ი [ուտելիք] և այլն։

67. Կապավոր անուններ

Սովորական է նաև, որ նոր անուն ածանցվի կապավոր անունից։ Նման դեպքերում կապերը հատուկ են։ Այս հատկություններն են.

-გან-გან-ი. ჰპოოთ კიცუ დაბმული, რომელსა **კაცთაგანი** არა დაჯდომილ არს [Գտանիցէք յաւանակ մի կապեալ, յորոյ վերայ ոչ ոք ի մարդկանէ նստաւ] (Մարկ. ԺԱ, 2C)։ რომელი არს ქუეყანით, **ქუეყანი-საგანი** არს და ქუეყანისასა იტყჳს [Որ յերկրէ սուրի է, յերկրէ է և յերկրէ խօսի] (Յովհ. Գ, 31)։ მაშინ **ერისაგანთა** მათ მთავრისათა წარიყვანეს იესუ ტაძრად [Յայնժամ զինուորք դատաւորին առին զՅիսուս յապարանս] (Մատթ. ԻԷ, 27)։ მრავალთა მოწაფეთა მისგანთა, რომელთა ესმა ესე, იტყოდეს [Եւ բազումք յաշակերտացն իբրև լուան՝ ասեն] (Յովհ. Զ, 60)։ ერთი **თქუენგანი** ეშმაკი არს [Մի ի ձէնջ սատանայ է] (Յովհ. Զ, 70)։ და იგი იყო ერთი **მათგანი** [Եւ մի էր ի նոցանէ] (Յովհ. Է, 50C)։ და აჰა ორნი **მათგანნი** მივიდოდეს დაბასა [Եւ ահա՝ երկու ի նոցանէ երթային ի նմին աւուր ի գեղ մի] (Ղուկ. ԻԴ, 13)։ ხოლო თომა, ერთი იგი **ათორმეტთაგანი**, არა იყო მათ თანა [Իսկ Թովմաս՝ մի

յերկոտասանիցն որ կոչէր Երկուորեակ, ոչ էր ընդ նոսա] (*Յովհ. Ի, 24*)։ მო-ვინმე-ვიდეს **ჩუენგანნი** საფლავად [*Եւ գնացին ոմանք ի մէնջ ի գերեզմանն*] (*Ղուկ. ԻԴ, 24*) *և այլն*։

ებრ. ებრაელ-ებრ-ი [*եբրայերէն*]։

თანა–თანა-ჲ. ხოლო ხიყვნეს მაგდანელი მარიამ და იოჰანა და მარიამ იაკობისი და სხუანი **მათთანანი,** ხუთხრობდეს მოციქულთა ამას [*Եւ էին Մարիամ Մագդաղենացի և Յովհաննա և Մարիամ Յակովբայ և այլք ընդ նոսա՝ որ պատմեցին զայս առաքելոցն*] [*Ղուկ. ԻԴ, 10 համեմատ.*)։ ოდეს-იგი შეემშია მას და **მისთანათა** მათ [*Յորժամ քաղցեաւն, և որ ընդ նմայն էին*] (*Մատթ. ԺԲ, 3*)։ მათთანანი [*նրանց հետ եղողները*], მისთანათა მათ [*նրա հետ եղողներին*]։

მიმართ—მიმართ—ი. ხოლო იოვანე, ვითარცა უფლისა მოწამემან ღირსმან თქუმულნი ესე **მისა მიმართნი** არაღ შეჰრაცხნა [*Իսկ Յովհաննէս, որպես տիրոջ արժանի վկա, նրա մասին ասվածները ոչ ինչ համարեց*] (*Յովհ. Ոսկեբերանի «Բանք առ յաղանութեանն աստուծոյ», ձեռագիր* A-19, *էջ 190ա—192ա*)։

მიერ—მიერ—ი. და მოსეს **მიერთა** მათ წიგნთაცა კითხვად მოწრაფე იყო [*և Մովսեսի գրքերը կարդալու մեջ փութաջան էր*] (*Յովհ. Ոսկեբերանի «Յաղագս Մկրտութեան», համեմատ. ճառընտ. «Թբիլիսիի համալսարանի բանբեր»,* VII, *էջ 129*)։ მაქეს მე ნიჭი ქრისტეს **მიერი** [*Ես շնորհ ունիմ Քրիստոսից...*] (*Հայրո*)։

შინა-შინა-ჲ. და **საფლავეების შინათა** ცხოვრების მიმნიჭე̃ული [*և գերեզմաններում եղողներին կյանք պարգևող*] (*Հարության շարական*)։ საფლავის შინაჲ [*գերեզմանում եղող*], საფლავების შინანი [*գերեզմաններում եղողները*], საფლავების შინათა [*գերեզմաններում եղողներին*]։

68. Մակբայներից ու մասնիկներից ածանցված անուններ: *Մակբայը կարող է հիմք ծառայել ածական անվան կազմության համար.* მუნ [*անդ, այնտեղ*]—მუნ-ი [*այնտեղի*], აქა [*այստեղ*]—აქაჲ [*այստեղի*], წინა [*առաջ*]—წინა-ჲ [*առաջ եղող*], უკუანა [*ետ*]-უკუანაჲ [*ետին, ետ գտնվող*]։ *ա)* ვინაჲ [*որտեղից*], *բ)* ვინა-ჲ [*որտեղացի*]։ *Օրինակներ.* ვინანი ხართ და ვიდრე ხუალთ [*որտեղացի եք և ուր եք գնում*], მრავალნი იყვნენ წინანი უკუანა და უკუანანი წინა [*Զի բազումք եղիցին առաջինք՝ յետինք, և յետինք՝ առաջինք*] (*Մարկ. Ժ, 31*)։ იყო ეულცხო იგი მუნი მეგობარი ჩემი [*Երեկն այնտեղի իմ բարեկամն էր*] (*Աժմոնար. 103, 5*)։

Գոյական անուն կարող է ածանցվել նաև մասնիկներից. იყავნ სიტყუაჲ თქუენი ჰჱ ჰე და არაჲ არა [*Եղիցի ձեր բան, այոն՝ այո, և ոչն՝ ոչ*] (*Մատթ. Ե, 37*)։ *Այստեղից* ჰჱ-*ն և* არაჲ-*ն անվանական հո-*

լովով են գրված (ենթականներ են), իսկ მე-ն և არა-ն՝ ուղղականով (բաղադրյալ ստորոգյալի մասեր են)։

69. Նվազական անուններ: *Նվազական անունների ածանցիչ է* აკ *մասնիկը.* სახლ-აკ-ი [*տնակ*], წიგნ-აკ-ი [*գրքույկ*], კნინ-აკ-ი [*փոքրիկ*], შვილ-აკ-ი [*փոքրիկ երեխա*], თხიერ-აკ-ი [*փոքրիկ այծ*]։ აკ-*ով վերջացող անուններում վաղուց սկսվել է* კ-*ի վերջատում, մնացել է* ა-*ն, և նման անունները անցել են ձայնավորահանգ հիմքով բառերի կարգը։ Նման օրինակ է* ქალაჲ-*ն հետևյալ վկայության մեջ.* ქალა, შენ გეტყჳ-აღდეგ [*Աղջիկ դու՝ քեզ ասեմ, արի*] (*Մարկ. Ե, 41*)։ ქალა-*ն այստեղ կոչական հոլովով է և համապատասխան ցուցիչ չունի* (*պետք էր՝* ქალაო)։

70. Ունեցողական անուններ:

Ունեցողական անունների ածանցիչներն են ეან (იან), იერ, ოსან ოვან, ელ *վերջածանցները։*

ეან. ადამ-ი—ადამ-ეან-ი (ადამ-იან-ი) [*մարդ*], ავგ-ი—ავგ-ეან-ი (ავგიან-ი) [*ամոթալի*], კაეშან-ი [*թախիծ, տխրություն*]—კაეშნ-ეან-ი [*թախծոտ, տխուր*], მარილ-ი [*աղ*]—მარილ-ეან-ი [*աղի*], ბაყლ-ი [*ցեխ, կեղտ*] —ბაყლ-ეან-ი [*ցեխոտ, կեղտոտ*] *և այլն։*

იერ. ძალ-ი [*ուժ*]—ძლ-იერ-ი [*ուժեղ*], გონ-ება-ჲ [*միտք, խելք*]—გონ-იერ-ი [*խելոք*], მატყლ-ი [*բուրդ*] მატყ-იერ-ი (მატყლ-იერ-ი) [*բրդոտ*], ფას-ი [*գանձ, ունեցվածք; արժեք, գին*]—ფას-იერ-ი [*ունևոր*]։ *Ինչպես նաև բայահիմքերից՝* მაქუს [*ունեմ*], მაქუს-იერ-ი [*ունևոր*], მოსიეს [*հագել է*]—მოს-იერ-ი [*հագնված*], სწადის [*ցանկանում է, փափագում է*]—წადიერ-ი (წადნ-იერ-ი) [*ցանկալի, փափագելի*], შეუნის [*պատշաճում է*]—შეუნ-იერ-ი [*պատշաճելի, գեղանի*], შელმის [*ցավում է (ինձ)*], ლმობაჲ [*ցավ*]—ლმობიერ-ი [*հիվանդ, ցավագար*], ჰშმის [*քաղցում է*]—შმ-იერ-ი [*քաղցած*]։ რ *հնչյունով հիմքերից՝ տարնմանությամբ** იელ՝ ჭორც-იელ-ი [*մարմնավոր, մարմնական*], სწყურის [*ծարավում է*]—წყურ-იელ-ი [*ծարաված*]։]

ოვან, ოან. ვენაჴ-ი [*խաղողի այգի, վազ*]—ვენაჴ-ოვან-ი (ვენაჴოანი) [*խաղողուտ, խաղողի այգի*], კეთრ-ი [*բոր*]— კეთრ-ოვან-ი [*բորոտ*], კლდე [*ժայռ, վեմ, ապառաժ*]—კლდ-ოვან-ი [*ժայռոտ, ապառաժոտ*], მაყუალ-ი [*մոշ*]—მაყუალ-ოვან-ი (მაყლოანი) [*մոշենի; մոշուտ*], მჴცე [*ճերմակ, ալիք*]—მჴც-ოვან-ი (*ալեհեր*), სახელ-ი [*անուն*]—სახელ-ოვან-ი [*անվանի*], ჴელ-ი [*ձեռք*]—ჴელ-ოვან-ი [*արհեստավոր, վարպետ*] *և այլն։*

Այն անունները, որոնց հիմքը ավարտվում է ոչ վանկարար უ-*ով,*

ოვან վերջածանցի ավելացումից հետո ստորաբար կորցնում են այդ უ-ն. ლელუ-ი [եղեգ]—ლელ-ოვან-ი [եղեգնի], ნაძუ-ი [եղևնի]—ნაძ-ოვან-ი [եղևնուտ], ნესუ-ი [սեխ]—ნეს-ოვან-ი [սեխի մշակման վայր] և այլն։

ოსან. *Ցույց է տալիս՝ ունեցողը, կրողը։*

მშჳლდ-ი [աղեղ]—მშჳლდ-ოსან-ი [աղեղնավոր, աղեղնակիր], ფარ-ი [վահան]—ფარ-ოსან-ი [վահանակիր], ლახუარ-ი [նիզակ, տեգ]—ლახუარ-ოსან-ი [նիզակավոր, տեգավոր], ფიჩუ-ი [քուրձ, խարազն]—ფიჩ-ოსან-ი [խարազնազգեստ, քրձազգեստ; աբեղա], პატივ-ი [պատիվ]—პატი(ვ)-ოსან-ი [պատվավոր, պատվական], ტჳრთ-ი [բեռ], ტჳრთ-ოსან-ი [բարձված, բեռնավորված, բեռնակիր] և այլն։ ჴელ-ից կազմված է ինչպես ჴელოვან-ი, այնպես էլ՝ ჴელ-ოსან-ი։ ჴელოვანი նշանակում էր վարպետ, արհեստավոր, որևէ արհեստի հետևող (օրինակ՝ քարգործ), իսկ ჴელოსანი-ն՝ որևէ պաշտոն ունեցող, պաշտոնյա, ձեռնավոր (օրինակ՝ վանքում ատնան)։

ედ. ფესუ-ი [քղանցք, փեշ] ფესუ-ედ-ი [քղանցքավոր հագուստ], კარ-ი [դուռ]—კარ-ედ-ი [դռնանի], ხატ-ი [պատկեր, կերպ]—ხატ-ედ-ი [պատկերավոր], ფრთე [թև] ფრთე-ედ-ი [թևավոր]։ ქორ-ი [վերնահարկ]—ქორ-ედ-ი [վերնահարկանի տուն], ჯაჭუ-ი [շղթա]—ჯაჭუ-ედ-ი [շղթաներով արդուզարդված] ათ-ეზოედ-ი [տասնավարագուրյան] (Ելից, ԻԶ, 1), ოქრო-ალჳრ-ედ-ი [ոսկեսանձ], ოთხკუთხ-ედ-ი [քառակուսի, խորանարդ], პილოჲს ძუალ-ედ-ი [փղոսկրյա] և այլն։

Այդպես է կազմված նաև შარავანდ-ედ-ი [*թագակիր, թագավոր*], *իսկ* შარავანდ-ი-ն (*պարսկական ծագման բառ*) *նշանակում է թագ.* რავდენნი ძლიერნი და მეფენი, რომელთა ედგნეს შარავანდედნი თავთა მათთა [*Քանիսը հզորներից և արքաներից, որոնք թագ ունեին իրենց գլխներին*](*Սին. ճառընտ., 224. 3*)։

71. Ժխտողական անուններ։ *Ժխտողական անունները կազմվում են* უ-ურ *և* უ-ო *նախածանց-վերջածանցների միջոցով։ Սրանցից ավելի հին է* უ-ურ-*ն, որը հիմքում* რ *ունեցող բառերի մեջ վերածվում է* უ-ულ-*ի։* ურ *և* ო *վերջածանցները ամփոփում կամ վերջացնում են բառահիմքը։*

უ-ურ (უ-ულ). ძალ-ი [ուժ, կարողություն]—უ-ძლურ-ი [անուժ, անկարող; տկար, հիվանդ (հակառակն է՝ ძლ-იერ-ი [ուժեղ, կարող]), ჭამ-ლ-ი [կոշիկ]—უ-ჭამ-ურ-ი [անկոշիկ, ոտաբոբիկ], სახე [դեմք, կերպ]—უ-სახ-ურ-ი [անդեմ, տգեղ], წმიდა [մաքուր, սուրբ]—უ-წმიდ-ურ-ი [անմաքուր, գարշանք], გემო [համ]—უ-გემ-ურ-ი [անհամ], გონ-ება-ჲ [միտք, խելք]—უ-გუნ-ურ-ი [անմիտ, անխելք] (უგონურ-ից, հակա-

ակն է՝ გონ-იერ-ი [խելոք, հասկացող]), კაც-ი [մարդ]—უ-კაც-ურ-ი [անբնակ, անմարդ], კეთ-ილ-ი [լավ]—უ-კეთ-ურ-ი [չար, անօրեն], ფსკერ-ი [հատակ]—უ-ფსკრ-ულ-ი [անհատակ, անդունդ, վիհ], ფერ-ი [գույն, պատկեր]—უ-ფერ-ულ-ი [գունաթափ, անգույն] և այլն: Նման ձևով է կազմված նաև უ-რწყ-ულ-ი [անջուր], բայց նրա հիմքը ոչ թե წყალი-ն է [ջուր], այլ *რწყალ-ი-ն (հմմտ. მო-რწყ-ვა [ոռոգում]):

უ-ო. დედა-ჲ [մայր]—უ-დედ-ო-ჲ [անմայր], ბრალ-ი [մեղք]—უ-ბრალ-ო-ჲ [անմեղ], ბიწ-ი [բիծ]—უ-ბიწ-ო-ჲ [անբիծ], ჭორც-ი [միս, մարմին]—უ-ჭორც-ო-ჲ [անմարմին; հրեշտակ], ღმერთ-ი [աստված]—უ-ღმრთ-ო-ჲ [անաստված], ნაყოფ-ი [բերք, պտուղ, արգասիք]—უ-ნაყოფ-ო-ჲ [անբերրի, անպտուղ, անարգասիք], პატივ-ი [պատիվ]—უ-პატი(ვ)-ო-ჲ [անպատիվ], შვილ-ი [զավակ, որդի]—უ-შვილ-ო-ჲ [անզավակ], ეკალ-ი [փուշ, տատասկ]—უ-ეკლ-ო-ჲ [անփուշ, փշերից զուրկ], ენა-ჲ [լեզու]—უ-ენ-ო-ჲ [անլեզու] և այլն:

Այսպիսի ածանցումն առավել տարածված է:

Մի երկու մխտոդական անուն էլ ածանցվում են միայն უ *նախածանցով.* უ-რიცხუ-ი [անթիվ, անհամար], უ-ღირს-ი [անարժան]:

Բայահիմքերից նման ձևով ածանցվում են՝ უ-რჩ-ი [անհնազանդ], უ-ქმ-ი [անբան, անգործ, պարապ], უ-სმ-ი [անհնազանդ, չլսող], უ-ტყუ-ი [անխոս, համր]:

72. Ծագումացույց անուններ: *Ծագումացույց անունների ածանցիչն է* ელ *վերջածանցը, որը կարող է ամփոփել կամ վերջանալ անվան հիմքը:* მცხეთა [*Մցխեթ*]—მცხეთ-ელ-ი [*մցխեթացի*], წილკან-ი [*Ծիլկան*]—წილკნ-ელ-ი [*ծիլկանցի*]: ის *և* ეთ-*վերջածանցավոր անունները կորցնում են այդ* ის-*ն ու* ეთ-*ը.* ტფილ-ის-ი [*Տփղիս*]—ტფილ-ელ-ი [*տփղիսեցի*], ქუთათ-ის-ი [*Քութաթիս*]—ქუთათ-ელ-ი [*քութաթիսեցի*], მანგლ-ის-ი [*Մանգլիս*]—მანგლ-ელ-ი [*մանգլիսեցի*], ურბნ-ის-ი [*Ուրբնիս*]—ურბნ-ელ-ი [*ուրբնիսեցի*], ტბ-ეთ-ი [*Տբեթ*]—ტბ-ელ-ი [*տբեթցի*] *և այլն:*

Որոշ նման անուններ վերջածանցի հետ միասին ունեն նաև նախածանց: Այդ նախածանցն է მ *(վերջածանցի հետ միասին՝* მ-ელ). არგუ-ეთ-ი [*Արգվեթ*]—მ-არგუ-ელ-ი [*արգվեթցի*], არად-ეთ-ი [*Արադեթ*] (*գյուղ է Քարթլիում*)—მ-არად-ელ-ი [*արադեթցի*], ეგჳპტე [*Եգիպտոս*]—მ-ეგჳპტ-ელ-ი [*եգիպտացի*] (*կամ՝* მ-ეგჳპტ-ელ-ი), ეგრ-ის-ი [*Եգրիսի, Եգերաց աշխարհ*]—მ-ეგრ-ელ-ი [*եգերացի, մեգրել*] *և այլն: Այսպիսի կազմությունը շատ հին է և մի քանի անվան մեջ է պահպանվել:*

ტბელი-ს դուգահեռ գոյություն ունի მ-არ-ի միջոցով կազմված მ-ტბევ-არ-ი (որպես հիմք ենթադրվում է՝ *ტბევ-ი).

მ-ურ, მ-იურ: ლაბა [*գլուխ, ավագ*]—მ-ლაბ-ურ-ი կամ მ-ლაპ-იურ-ი [*գլխավոր*], *ասվում է նաև՝* მლაბიოი: იყო ვინმე კაცი მლაბიოჲ [*Կար մի գլխավոր մարդ*] (*Թամծ.*):

—ურ (*տարբերակությամբ՝* **ულ**). სომხ-ურ-ი [*հայերեն, հայկական*], ქართ-ულ-ი [*վրացերեն, վրացական*] (*հիմքն է* *ქართ-ნ-ი, *որն էլ* ქართლი *է ասել*), ბერძ-ენ-ი [*հույն*]—ბერძ-ულ-ი [*հունարեն, հունական*]:

—ნიერ: სმნიერ-ი [*երեք տարեկան, որ.՝ երինջ*]: ნ *հնչյունը չի խանգարում, որ* სამ *հիմքը ամփոփվի հաջորդող* ი-*ի ազդեցությամբ* (*այստեղ նույն երևույթն է, ինչ* ჯამ-ს—ჯმ-ღა-*ում*):

73. Վերացական անուններ: *Վերացական անունների ածանցիչներն են* ება *և* ობა *վերջածանցները և* სი-ე (სი-ო) *նախածանց-վերջածանցը:* ება-*ն և* ობა-*ն բարդ վերջածանցներ են* (ებ-ა, ობ-ა):

—ება: კაც-ება-ჲ (კაც-ობა-ჲ) [*մարդկություն*], ღმრთ-ება-ჲ [*աստվածություն*], სიწრფო-ება-ჲ [*ուղղություն, անմեղություն*], სათნო-ება-ჲ [*լավություն, առաքինություն*], სარწმუნო-ება-ჲ [*հավատ*], ძლიერ-ება-ჲ [*զորություն*], საუც-ება-ჲ [*տեսիլք*], მოქალაქ-ება-ჲ (მოქალაქობაჲ) [*գործունեություն, քաղաքավարություն*], სიჩრო-ება-ჲ [*փափկություն*], მოციქულ-ება-ჲ [*առաքելություն*]: *Այսպիսի կազմության ժամանակ* ო-ე-*ի միջև կարող է* ვ *հավելվել՝* (ოვე). სიწრფოვებაჲ, სიჩროვებაჲ, სათნოვებაჲ *և այլն:*

—ობა: სერ-ობა-ჲ [*ընթրիք*], მჴეც-ობა-ჲ [*գազանություն, վայրենություն*], მწიგნობრ-ობა-ჲ [*գրչություն, մատենագրություն*], მტერ-ობა-ჲ [*թշնամություն*], მჴედრ-ობა-ჲ [*հեծելազոր*] *և այլն:*

სი-ე: ე *վերջածանցը ամփոփվում կամ վերջանում է անունը:* სი-ბერ-ე-ჲ [*ծերություն*], სი-წითლ-ე-ჲ [*կարմրություն*], სი-ბნელ-ე-ჲ [*մթություն, խավար; տխրություն*] სი-ბოროტ-ე-ჲ [*բռնություն, չարություն*], ბრმა-ჲ [*կույր*]—სი-ბრმ-ე-ჲ [*կուրություն*], ბრძენ-ი [*իմաստուն*]—სი-ბრძნ-ე-ჲ [*իմաստություն*], სი-გლახაკ-ე-ჲ [*աղքատություն*], სი-გრილ-ე-ჲ [illegible], სი-ვერაგ-ე-ჲ [*նենգություն, ոճրագործություն*], ვრც-ელ-ი [*ընդարձակ, լայն*]—სი-ვრც-ე-ჲ [*լայնատարածություն*], სი-ლაღ-ე-ჲ [*հանդգնություն, ամբարտավանություն*], მართალ-ი [*արդար, ճշմարիտ*]—სი-მართლ-ე-ჲ [*արդարություն, ճշմարտություն*], ღრმა-ჲ [*խոր*]—სი-ღრმ-ე-ჲ [*խորություն*], სი-ყრმ-ე-ჲ [*մանկություն*], სი-შავ-ე-ჲ [*սևություն*], სი-წმიდ-ე-ჲ [*սրբություն*]:

Հնագույն հուշարձաններում ეჲ-*ի փոխարեն սովորաբար գրվում էր* ჱ: სიმრავლჱ [*բազմություն*], სივრცჱ [*լայնություն*] *և այլն:*

სა-ო. Այսպես անուններ են ածանցում այնպիսի հիմքերից, որոնց վերջում կան շրթնային უ, ფ, ბ հնչյուններ. ტფ-ილ-ი [ջերմ, տաք]—სა-ტფ-ო-ჲ [ջերմություն, տաքություն], ტკბ-ილ-ი [քաղցր]—სა-ტკბ-ო-ჲ [քաղցրություն], მსხუ-ილ-ი [առատ, մեծ]—სა-მსხ-ო-ჲ [առատություն], ჩჩუ-ილ-ი [մանուկ; փափուկ]—სა-ჩჩ-ო-ჲ [մանկություն; փափկություն], ლბ-ილ-ი [կակուղ]—სა-ლბ-ო-ჲ [կակղություն], წულ-ილ-ი [մանր, փոքր]—საწულ-ო-ჲ (სა-წლ-ო-ჲ) [մանրություն, փոքրություն]:

Երբեմն անուններ են ածանցում նաև այնպիսի հիմքերից, որոնք რ-ով վերջանում են՝ ჭმ-ირ-ი [խիտ, խոր]—სა-ჭმ-ო-ჲ (խտություն, նյութ):

74. Նշանակային անուններ: Նշանակային անունների ածանցման համար հին վրացերենում գործածվում են სა-ე, სა-ო և სა-ურ նախածանց-վերջածանցները:

სა-ე. სა-ვა-ნე-ჲ [իջևանատուն, օթևան], სა-ზეთ-ე-ჲ [ձեթ լցնելու աման], სა-ზუერ-ე-ჲ [մաքսատուն], სა-ვენაჴ-ე-ჲ [խաղողի այգի], წუენ-ი [արգանակ]—სა-წუნ-ე-ჲ [որից կամ որով արգանակ է պատրաստվում], სა-წიგნ-ე-ჲ [գրադարան, մատենադարան], სა-წყვ-ე-ჲ [պատամուհան], სა-მურ-ე-ჲ [փուռ], სა-კრ-ე-ჲ [կամավոր, կամավորաբար] և այլն: ეა-ի փոխարեն սովորաբար գրվում էր ჱ. სავანჱ, საზეთჱ, საზუერჱ և այլն:

სა—ო. სა-ზამთრ-ო-ჲ [ձմեռային], სა-ზაფხულ-ო-ჲ [ամառային], სა-კელრ-ო-ჲ [մթերանոց], სა-ტრაპეზ-ო-ჲ [ճաշարան, սեղանատուն] և այլն:

სა-ურ (տարբերակությամբ՝ სა-ულ). ცეცხ-ლ-ი [հուր]—სა-ცეცხ-ურ-ი [կաթսա], განძ-ი [գանձ, ունեցվածք]—სა-განძ-ურ-ი [գանձարան], *რწყ-ილ-ი—სა-რწყ-ულ-ი [ըմպանակ, ամփոր, թասիկ] և այլն:

75. Գործունեության անուններ: Գործունեության անունները ածանցվում են მე-ე և მე-ურ նախածանց-վերջածանցների միջոցով: Վերջածանցը կարող է վերջանալ կամ ամփոփել արմատական բառի հիմքը: ნავ-ი [նավ]—მე-ნავ-ე-ჲ [նավավար, նավաստի], ზუერ-ი [մաքս]—მე-ზუერ-ე-ჲ [մաքսավոր], კარ-ი [դուռ]—მე-კარ-ე-ჲ [դռնապան], კეც-ი [խեցի]—მე-კეც-ე-ჲ [խեցեգործ, բրուտ], მტილ-ი [պարտեզ]—მე-მტილ-ე-ჲ [պարտիզպան], სათხეველ-ი [ուռկան, ձկնորսական ցանց]—მე-სათხეველ-ე-ჲ (ձկնորս, ուռկանավոր), სუეტ-ი [սյուն]—მე-სუეტ-ე-ჲ [սյունակյաց], მე-უდაბნო-ე-ჲ [անապատական], მე-მურ-ე-ჲ [հացթուխ], მე-ლორ-ე-ჲ [խոզարած] և այլն:

Այսպես է կազմված նաև՝ მე-უფ-ე-ჲ [արքա, թագավոր], որը հետագայում *მე-უფე ձև է դառնում, վերջինս էլ հետագա փոփո-

խումբերանններից հետո՝ მე-ფ-ე: Հիմքն უფ-ն է, որից և ունենք უფ-ალ-ი [տեր], ს-უფ-ევ-ა-ჲ [արքայություն]:

მე-ურ (*տարբերակությամբ՝* **მე-ულ**): *Այսպես են կազմված* მე-თევზ-ურ-ი [*ձկնորս*], მე-განძ-ურ-ი [*գանձապահ, գանձատեր, գանձապան*], მე-მახ-ურ-ი [*թռչուններ որսալու համար թակարդ դնող*], მე-რწყ-ულ-ი [*ջրաբեր, ջրկիր, ջուր բերող*]:

76. Դասական և կոտորակային անուններ: *Հերթականություն ցույց տալու համար քանակական թվականներին ավելացվում է* მე-ე *նախածանց-վերջածանցը, որը նույնն է, ինչ զբաղմունքացույց անունների ածանցիչը.* მე-ორ-ე-ჲ [*երկրորդ*], მე-სამ-ე-ჲ [*երրորդ*], მე-ოთხ-ე-ჲ [*չորրորդ*], მე-ხუთ-ე-ჲ [*հինգերորդ*], მე-ათ-ე-ჲ [*տասներորդ*], მე-ათორმეტ-ე-ჲ [*տասներկուերորդ*], მე-ათექუსმეტ-ე-ჲ [*տասնվեցերորդ*], მე-ოც-ე-ჲ [*քսաներորդ*] *և այլն: Չի գործածվում* მე-ერთ-ე-ჲ, *այլ՝* პირველი [*առաջին*], *սակայն* და-*ով բարդված թվական անուններում* მე-ერთ-ე-ն *գործածվում է՝* ოც და მე-ერთ-ე-ჲ [*քսանմեկերորդ*], ორმეოც და მე-ერთ-ე-ჲ [*քառասունմեկերորդ*] *և այլն:*

77. Կոտորակային անուններ: *Կոտորակային անունների ածանցիչն է* მე-ედ *նախածանց-վերջածանցը.* მე-სამ-ედ-ი [*մեկ երրորդ*], მე-ოთხ-ედ-ი [*մեկ քառորդ*], მე-ხუთ-ედ-ი [*մեկ հինգերորդ*] *և այլն: Չի գործածվում* მე-ორ-ედ-ი, *այլ՝* ზოგი* [*կես*]. ზოგი ნაყოფთა ჩემთაჲ მივსცე გლახაკთა [*Զկէս ընչից իմոց տաց աղքատաց*] (*Ղուկ. ԺԹ, 8*): *Կոտորակային է նաև* ნა-ალ-*ով կազմված* ნა-სამ-ალ-ი [*(մեկ) երրորդ*], ნა-ოთხ-ალ-ი [*քառորդ*]:

—ეულ. *Սա քանակական թվական անուններից ածանցում է կոտորակային թվականներ.* ათ-ეულ-ი [*(մեկ) տասներորդ-տասանորդ*]. ათეულსა შევსწირავ ყოვლისაგან მონაგებისა ჩემისა [*Տամ տասանորդս յամենայն ստացուածոց իմոց*] (*Ղուկ. ԺԸ, 12*). *Կամ ցույց է տալիս, թե որևէ առարկա քանի անգամ է ավելի՝ մեկի համեմատությամբ.* ნაყოფსა გამოიღიან ოცდაათეული და სამოცეული და ასეული [*Տան պտուղ ընդ միոյ՝ երեսուն, և ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ՝ հարիւր*] (*Մարկ. Դ, 20*):

78. Աշխարհագրական անուններ: *Աշխարհագրական անունների հատուկ ածանցիչն է* -ეთ *վերջածանցը.* სპარს-ეთ-ი [*Պարսկաստան*], სომხ-ეთ-ი [*Հայաստան*], სივნი-ეთ-ი [*Սյունիք*], ოვს-ეთ-ი [*Օսք*]: *Հատկանշական է, որ նման անունները ունենում են նաև* სა- *նախածանց.* სა-ბერძნ-ეთ-ი [*Հունաստան*], სა-სარკინოზ-ეთ-ი [*Ասորիք. Սիրիա*]:

---

* *Հմմտ. հայ. զոյգ*

79. Բուսաշատ վայրերի անուններ: *Բուսաշատ վայրերի անունների ածանցման համար գործածվում է* -ნარ *վերջածանցը.* ეკალ-ი [*փուշ, տատասկ*]—ეკლ-ნარ-ი [*փշանոց, փշաստան*], ძეძჳ (ძეძუ-ი) [*ցրդենի, ակրա*]—ძეძუ-ნარ-ი [*ցրդանոց*], ფიჭჳ-ი [*նոճի*]—ფიჭჳ-ნარ-ი [*նոճաստան*]։

80. Ածականացույց անուններ. *Ածականացույց անունները հին վրացերենում երկուսն են՝ դրական և գերադրական. արմատական անունը համարվում է դրական, իսկ ածանցյալը՝ գերադրական։*

Գերադրական աստիճանի ածանցիչը սկզբնական շրջանում უ-ჱს *վերջածանցն էր, իսկ հետագայում՝ նրա պարզեցված ձևը՝* უ-ეს. მჴობ-ი—უ-მჴობ-ჱს-ი (უ-მჴობ-ეს-ი) [*լավ, ավելի լավ*]։ *Վերջածանցը ի վիճակի է ամփոփել կամ վերջատել արմատական բառի հիմքը.* ახალ-ი [*նոր*]—უ-ახლ-ჱს-ი (-ეს-ი) [*ավելի նոր*], მოკლე [*կարճ, համառոտ*]—უ-მოკლ-ჱს-ი (-ეს-ი) [*ավելի կարճ*]։

Բացի այդ, որոշ ელ *և* ილ *վերջածանցավոր հիմքեր գերադրական աստիճանի ածանցման ժամանակ կորցնում են այս վերջածանցները.* გრძ-ელ-ი [*երկար*]—უ-გრძ-ჱს-ი (-ეს-ი), კეთ-ილ-ი—უ-კეთ-ჱს-ი (-ეს-ი), უ-ადვილჱს-ი (-ეს-ი), უ-დიდჱს-ი (-ეს-ი), უ-მდიდრჱს-ი (-ეს-ი), უ-მცირჱს-ი (-ეს-ი), უ-მაღლჱს-ი (-ეს-ი), უ-მეტჱს-ი(-ეს-ი), უ-ძჳრჱს-ი (-ეს-ი), უ-წმიდჱს-ი (-ეს-ი) *և այլն։* ძაღლი ცოცხალი უმჯობჱს არს ლომისა მკუდრისა [*Շուն որ կենդանի է, լաւ է քան զառիւծն մեռեալ*] (*Ժողովող. Թ, 4*)։

Գերադրական աստիճանը սովորաբար ածանցվում է ածականներից, սակայն հին վրացերենում այն կարող է ածանցվել նաև գոյականներից: უ-მკუეთელ-ჱს-ი(-ეს-ი), უ-მოსწრაფ-ჱს-ი (-ეს-ი), უ-მოლხინ-ჱსი (-ეს-ი), უ-საზარელ-ჱს-ი (-ეს-ი), უ-საშინელ-ჱს-ი (-ეს-ი), უ-შეგინებულ-ჱს-ი (-ეს-ი), უ-საწყალობელ-ჱს-ი (-ეს-ი), უ-სანატრელ-ჱს-ი (-ეს-ი) *և այլն։* ცხოველ არს სიტყუაჲ ღმრთისაჲ და მჴე და უმკუეთელჱს უფროჲს ყოვლისა მახჳლისა ორ-პირისა [*Կենդանի է բանն աստծու՝ և ազդող՝ և հատու քան զամենայն սուր երկսայրի*] (*Եբր. Դ, 12*)։

Որոշ հիմքերից գերադրական աստիճանի ածանցիչն է՝ უ-ოჲს: *Այսպիսին են.* ტკბ-ილ-ი [*քաղցր*]—უ-ტკბ-ოჲს-ი [*ավելի քաղցր*]։ თაფლისა უტკბოჲსსა და უსარგებლჱსსა იტყოდა [*Մեղրից ավելի քաղցր ու ավելի օգտակար էր նա խոսում*] (*Սին. ճառըն. 86, 7*)։ *Հանդիպում է նաև* უტკბილჱს *ձևը.* უტკბილჱს არიან იგინი უფროჲს თაფლისა მის გოლეულისა [*Քաղցր է նա քան զմեղու խորիսխ*] (*Սաղմ. ԺԸ, 11*)։ მსხუ-ილ-ი (მსხჳლი) —უ-მსხ-ოჲ (უ-მსხ-ოჲსი). ნუკი ჩემი

უმსხო არს წელთა მამისა ჩემისათა [Ճկոյթ իմ ստուար է քան զմէջ հօր իմոյ] (Գ Թագ. ԺԲ, 10)։

Այսպես պետք է կազմված լինի նաև უ-ურ-ოპს-ი-ს [առավել], բայց սրա հիմքը չի երևում, որից կազմված է նաև ურ-იად մակբայը։

Հանդիպում է նաև ձև՝ կազմված უ-ე կամ უ-ო նախածանց-վերջածանցների միջոցով. უ-მოლხინ-ე [զվարթագույն, ավելի հեշտ], უ-ძლიერ-ე [ավելի ուժեղ], უ-ხუც-ე [ավագ, տարեց, երեց], უ-მსხ-ო [ավելի ստվար, հաստ] և այլն. არა ჴრს უმძიმე და უმნელე ტჳრთი ვითარცა ცოდვაჲ და განდგომილებაჲ [չկա ավելի ծանր և դժվար բեռ ինչպես մեղքն ու ապստամբությունը] (Սին. ճառընտ. 105, 9), սակայն ավելի հաճախակի են უ-ეს-ով (უ-ეს-ով) կազմված ձևերը։

Հնագույն շրջանում գերադրական աստիճանի անունների սկզբում ավելացվում էր ს (ս-ավելացության շրջանում) կամ ჰ (ჰ-ավելացության շրջանում). ხუმჯობჱსი (ჰუმჯობჱსი)։ Այս ს-ն (կամ՝ ჰ-ն) ծագումով բայի 3-րդ դեմքի խնդրային ցուցիչն է. ხუმჯობჱსი- նրանից ավելի լավ։ Սրա հետ միասին պետք է, որ գոյություն ունենար მიმჯობჱსი [ինձնից ավելի լավ] և გიმჯობჱსი [քեզնից ավելի լավ] ու նաև՝ გუმჯობჱსი և მიმჯობჱსი [մեզնից ավելի լավ, մեզ գերադասելի] ձևերը, բայց 1-ին և 2-րդ դեմքերը վաղ են դուրս եկել գործածությունից, և միայնակ մնացած ხუმჯობჱს-ჰუმჯობჱს ձևը կորցրել է դեմքային նշանակությունը։ Այս հնագույն շրջանից է մինչև մեր օրերը հասել նաև ხუცეს-ი (ხ-უ-ც-ეს-ი)-ն, որը սկզբնապես ավագ էր նշանակում (ինչպես մեգրելերեն უჩაში-ն), հետո՝ ավագ քահանա՝ եկեղեցական կյանքում, իսկ ավելի ուշ՝ ընդհանրապես եկեղեցական։

Գերադրական աստիճան կարող ենք առանձնել նաև մակբայներից. ზემოთ—უ-ზემოა-ეს(-ეს) [ավելի բարձր, բարձրագույն], *ალრე—უ-ალრ-ეს (-ეს) [ավելի շուտ], *დარე—უ-დარ-ეს(-ეს) [ամենաառաջ, ամենավաղ], ქუემო—უ-ქუემო-ეს (-ეს) [ամենաստորին], წინარე—უ-წინარ-ეს (-ეს) [ամենից ցածր, ամենից ներքև] և այլն։ Սրանցից հետագայում ստացվել են ածականներ. უზემოესი, უალრესი, უწინარესი և այլն։

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

81. Կրկնավոր անուններ: Առաջին հերթին պետք է վկայակոչել այնպիսի կրկնավորումը, ինչպիսին է՝ დიდ-დიდი [մեծամեծ, շատ մեծ], և ძჳრ-ძჳრი [չարագույն, վատթար] (վերջինս առավելապես պարագայական հոլովաձևով է գործածվում)։ Այսպիսի կրկնավորումը

ամենազգնում է բառի նշանակությունը. დიდ-დიდ-ი [շատ մեծ], ძჳრ-ძჳრად [ամենաչար, ամենախիստ, վատթար ձևով]: Պարագայականով են գրված կրկնավորության երկու անդամներն էլ. კაცად-კაცად-ი, პირად—პირად-ი, ფერად-ფერად-ი, გუარად-გუარად-ი: კაცად-კაცად-ი է առնում մեկային մարդկանց վերաբերյալ և նշանակում է «յուրաքանչյուրը», «ամեն մեկը», իսկ პირად-პირადი, ფერად-ფერადი և გუარად-გუარადი նշանակում է «գույն-գույն», «այլևայլ»: ალსავსე არს ყოვლითა კეთილითა, ხილითა და ვენაჴებითა და მხლითა გუარად-გუარადითა [Լի է ամենայն բարիքով, պտղով ու այգիներով և այլևայլ բանջարեղենով] (Պետրիծոնի Սահմանք):

Կրկնավորվում են նաև մակբայները. ადრე-ადრე [շատ-շատ, շուտափույթ, վաղվաղակի]: Մակբայի իմաստով է գործածվում նաև თჳს-თჳს կամ თჳს-თჳსად [առանձին-առանձին] և, ընդհանրապես, կրկնավորված բառը գրված պարագայականով. ზჳნად-ზჳნად [Եւ ժողովեցին գնդա կոյտս կոյտս] (Ելից. Ը 14), მწყობრად-მწყობრად [Եւ բազմեցան դասք դասք] (Մարկ. Զ. 40) և այլն:

Քանակական թվականի կրկնավորումը ցույց է տալիս, թե քանի միավորից են կազմված առանձին խմբերը, որոնց մասին խոսվում է նախադասության մեջ. ორ-ორი [երկու-երկու, զույգ-զույգ], სამ-სამი [երեք-երեք], ხუთ-ხუთი [հինգ-հինգ], ათ-ათი [տաս-տաս], ოც-ოცი [քսան-քսան] և այլն: და დასხდა მწყობრად-მწყობრად ას-ასი და ერგასის-ერგასისი [Եւ բազմեցան դասք դասք, ըստ հարյուր և ըստ յիսուն] (Մարկ. Զ. 40), იყვნეს მუნ სარწყულნი ქვისანი მდგომარენი ექუსნი, რომელთა შეიასხიან საწყაული ორ-ორი გინა სამ-სამი [Անդ էին թակոյք կճալք վեց՝ ըստ սրբութեան տանէին մի մի ի նոցանէ մարս երկուս կամ երիս] (Յովհ. Բ, 6):

82. Կրկնավորում՝ ձայնավորի փոխարկմամբ: ერთ-ի ձայնավորափոխարկված ձևն է ურთ: ურთიერთის դերանունը (որ շրջանի հուշարձաններում՝ ურთიერთარს) ճիշտ այս ურთ-ի և ერთ-ի միացումով է կազմված: Այն առաջացել է ურთიერთთა-ից, որին, բառի ավելի հատակ ընկալվելու նպատակով, ավելացվել է սրական հոլովի Ս վերջավորությունը, բայց երկու თ-երից մեկը կորել է՝ ურთიერთთა (>ურთიერთას): Նրա կրած հետագա փոփոխությունը რ-ի ավելացումն է. ურთიერთარს: Այս բառի մեջ ձայնավորը փոխարկված է բարդության առաջին մասում, իսկ ძუელ-ძუელი (Վարք հարանց) կրկնավորման մեջ ձայնավորը փոխարկված է նրա երկրորդ կեսում (ძუელ-ძუელი>ძუელ-ძული [շատ հին, հնագույն], որ վանկարար უ-ն կորել է უ ձայնավորից առաջ):

Կրկնավորման օրինակ է նաև რიკუ-რაკუ մակբայը (და განთიად რიკუ-რაკუს ოდენ ნიად ადგა და გამოვიდა მიერ და განვიდა უდაბნოსა ადგილსა [Եւ ընդ այգ ընդ առաւօտն՝ յարուցեալ՝ ել և գնաց յանապատ տեղի] (Մարկ. Ա, 35), սակայն այստեղ ი ձայնավորի փոխարկումը ა-ն է։

83. Գոյականն իբրև բարդ անվան առաջին բաղադրիչ։ *Գոյական անունը միայն հիմքով է ներկայացված և բարդ անվան հոլովմանը չի մասնակցում.* დედა-კაც-ი [*կին*], დედა-კაც-მან, დედა-კაც-სა, დედა-კაც-ისა *և այլն։ Այդպիսին է նաև* მამაკაცი [*տղամարդ*], რომელმან დაჰბადნა დასაბამსა, მამაკაცად და დედაკაცად შექმნნა იგინი [*Որ հաստատեացն ի սկզբանէ՝ արու և էգ արար զնոսա*] (*Մատթ. ԺԹ, 4*)։ დედა *և* მამა *բառերը այստեղ ընական սեռը նշելու համար են գործածված։ Այդպիսիք են նաև՝* მამა-მძუძე [*դայեակ*] *և* დედა-მძუძე [*դայեակ, ստնտու*]։

84. Ածականն որպես բարդության առաջին բաղադրիչ. დიდროა-ჲ, დიდძალი։ *Սրանից* დიდროაჲ-ը [*չքնաղեղ*] *գոյական է, գոյական է նաև* დიდფასი-ն, *իսկ* დიდძალი-ն՝ *ածական։* დიდროვაჲ რაჲ იყო, ცაჳუთამდინარჱ იგი სახლსა მას და ვერ შეუძლო შეძრვად [*Ի յառնել հեղեղաց՝ բախեաց գետ զտունն, և ոչ կարաց շարժել զնա*] (*Ղուկ. Զ, 48*)։ დიდფასისა საგებელი (*Վարք հարանց*)։ და იყო მუნ კოლტი ღორთაჲ დიდძალი [*Եւ անդ էր առ լերամբն՝ երամակ մի խոզաց արածական մեծ*] (*Մարկ. Ե, 11*)։ *Այդպիսին է նաև* შუვალამე-ჲ-ն։ *Նրա բաղկացուցիչ մասերը առանձին-առանձին գրենք, թե միասին՝ ամենայնիվ, այն մեկ բառ է մնում։* მწუხრი ანუ შუვალამეს ანუ ქათმისა ჴმასა ანუ განთიად [*Զի ոչ գիտէք երբ տէր տանն գայցէ. յերեկորեայ եթէ ի մէջ գիշերի, եթէ ի հաւախօսի, եթէ ընդ առաւօտ*] (*Մարկ. ԺԳ, 35*)։

85. Օրերի անունները: *Օրերի անունների մեջ թվական անունը առաջին տեղում է՝ ուղղական հոլովաձևով.* ერთ-შაბათ-ი, ორ-შაბათ-ი, სამ-შაბათ-ი, ოთხ-შაბათ-ი, ხუთ-შაბათი (*երբեմն՝* ხუჩაბათი). ნიად განთიადსა მას ერთ-შაბათისასა მოვიდეს საფლავსა მას ჱედა [*Եւ ընդ առաւօտն միաշաբաթւոյն գան ի գերեզմանն ընդ արեւագալն*] (*Մարկ. ԺԶ, 2*)։

86. Բարդված անուններ: *Բարդման տարատեսակներից մեկն է* მამა-დედან-ი [*հայր ու մայր, ծնողներ*], *որի մեջ բարդված են երկու անուններ՝ առանց* და *շաղկապի.* თავ-ფერჴი [*ոտնգլուխ*], დაბა-ქალაქი [*գյուղաքաղաք*], თესლ-ტომი [*ազգատոհմ, ազգականներ*], ვეშაპ-თევზი [*վիշապաձուկ*], ვირ-კუროჲ [*իշացուլ,* onocentaurus], მშჳლდ-კაპარჭი

[աղեղ և կապարճ], ურემ-ჯარი [եզասայլ], მსუენ-ლომი [գետնառյուծ], მწავ-ძაღლი [շրշուն], სირ-აქლემი [ջայլամ], აქლემ-ვეფხი [ընձուղտ] և այլն։

87. Ածականներով ու դերբայներով բարդված անուններ: Գոյական անվան հիմքին ավելացված ածականը կամ դերբայը ցույց է տալիս, թե որևէ առարկայի ինչն է բնութագրական. თავ-გატეხილი է նա, ում գլուխը ջարդված է։ რტო-წვლილი է այն ծառը, որը մանր ոստեր ունի։ Նման բարդ անուններից են. ყელ-გრძელ-ი [երկարավզեց], ენა-მძიმე [ծանրալեզու, կակազ], ჴმა-შუენიერ-ი [քաղցրաբարբառ, գեղեցկախոս], თმა-გარდატევებულ-ი [վարսաթափ], თუალ-დაწუხვილ-ი [աչքերը փակ], ქარ-დაჭმულ-ი [ցանցառ], მუჴლ-მოდრეკილ-ი [ծնկաչոք, ծնրադիր], ზღუდე-დარღუეულ-ი [պարիսպներն ավերված], ყურ-კუეთილი (կամ ყურ-წარკუეთილ-ი) [ականջները կտրած] և այլն։

ԲԱՑ

88. Բայական կարգեր: Վրացերենում բայական կարգերը բաժանվում են երկու խմբի։ Առաջին խմբի մեջ այն կարգերն են, որոնք մասնակցում են խոնարհմանը և կազմում են խոնարհման համակարգը մեկ բառային նշանակության սահմաններում։ Սրանք խոնարհման (կոնյուգացիայի) կարգերն են։ Երկրորդ խմբի մեջ այն կարգերն են, որոնք, ի տարբերություն արմատականի, այլ բառային նշանակություն ունեցող բայեր են կազմում։ Սրանք բայածանցման (դերիվացիայի) կարգերն են։

89. Հին վրացերեն լեզուն ունի **խոնարհման հետևյալ կարգերը՝** դեմք, թիվ, ժամանակ, եղանակ, կերպ, գործողություն, բազմակիություն, հետևողականություն և բայաշարք։ Սրանցից բայաշարքը բարդ կարգ է, որը միավորում է մի քանի խոնարհման կարգ, իսկ մյուսները պարզ են։ Յուրաքանչյուր բայաշարքի սահմաններում դեմքը և թիվը փոփոխական կարգեր են, իսկ մյուսները՝ անփոփոխ և հայտնի են **բայաշարքի տարբեր անվանումով**։

Բայածանցման կարգերն են՝ ուղղություն, կողմնորոշում, սեռ, դարձություն, ադերս (կոնտակտ)։

Կերպը հին վրացերենում խոնարհման կարգ էր, սակայն նրա արտահայտամիջոցը ժամանակի ընթացքում աստիճանաբար փոխվել է և նոր վրացերենում այն դարձել է բայածանցման կարգ։

90. Անցողականություն: Որոշ բայեր անցողական են, մյուսները՝ անանցողական։ Բայը անցողական է, եթե այն ուղիղ խնդիր ունի։ Ուղիղ

խնդիրը հոլովափոխ է․ առաջին բայախմբի բայաշարքերի ձևերի հետ այն դրվում է տրական հոլովով, իսկ երկրորդ և երրորդ բայախմբերի բայաշարքերի ձևերի հետ՝ անվանականով․ აღ. მყრობს ჴელსა [բարձրացնում է ձեռքը]—აღიმყრა ჴელი [բարձրացրեց ձեռքը]—აღუმყრიეს ჴელი [բարձրացրել է ձեռքը]; მოჰკლავს ირემსა [սպանում է եղջերուին]—მოკლა ირემი [սպանեց եղջերուին]—მოუკლავს ირემი [սպանել է եղջերուին]։

Անցողական բայի ենթական ևս հոլովափոխ է։ Առաջին բայախմբի բայաշարքերի ձևերի հետ այն դրվում է անվանականով, երկրորդ բայախմբի բայաշարքերի ձևերի հետ՝ պատմողականով, իսկ երրորդ բայախմբի բայաշարքերի ձևերի հետ՝ տրականով։ Օրինակ․ კაცი აღმყრობს ჴელსა [մարդը բարձրացնում է ձեռքը]—კაცმან აღიმყრა ჴელი [մարդը բարձրացրեց ձեռքը]—კაცსა აღუმყრიეს ჴელი [մարդը բարձրացրել է ձեռքը]։ Կան բայեր, որոնք ուղիղ խնդիր չունեն, սակայն նրանց համար բնութագրական է ենթակայի հոլովափոխությունը։ Այսպիսին է, օրինակ՝ ივნებს კაცი [մարդը վնասում է]—ივნო კაცმან [մարդը վնասեց]; დაიძინებს იგი [նա քնում է]—დაიძინა მან [նա քնեց]; იხარებს მამაჲ [հայրը ուրախանում է]—იხარა მამამან [հայրը ուրախացավ] և այլն: Այսպիսի բայերը կարելի է պայմանականորեն անվանել կիսաանցողական: Կիսաանցողական են որոշ բարդ բայեր. օրինակ՝ ნათელ-სცა [մկրտեց նա նրան, բայը երկդեմ է], ნათელ-იღო [մկրտվեց նա, միադեմ է], თაყ—უცო [պատվեց նա նրան, երկդեմ է] և այլն։

Բայը անանցողական է, եթե այն ուղիղ խնդիր չի առնում. ზის [նստած է], მოკუდა [մեռավ], მოვიდა [եկավ], დაჯდა [նստեց], აღდგა [կանգնեց], დავარდა [ընկավ], შეწუხნების [տխրում է], დაიწუების [պառկում է], ემალების [թաքնվում է], განახლდების [նորանում է] և այլն:

Անցողական բայը երկդեմ է կամ եռադեմ, իսկ անանցողականը՝ միադեմ կամ երկդեմ։ Կիսաանցողական բայը ևս միադեմ է կամ երկդեմ։

ԽՈՆԱՐՀՄԱՆ ԿԱՐԳԵՐ

ԴԵՄՔ ԵՎ ԹԻՎ

91. Դեմքի և թվի կարգերն անհրաժեշտ է միասին քննարկել, քանի որ բայի մեջ թիվ կարող է ունենալ միայն դեմքը։ Դիմային ձևը, առհասարակ, բովանդակում է թվային ձև։

Դեմքի ցուցիչները փոխվում են դեմքին, թվին և բայաշարքին համապատասխան։ Հնչյունական պատճառներով դեմքի ցուցիչը կարող է փոխարինվել, փոփոխությունների ենթարկվել կամ էլ բոլորովին կորչել։

Հին վրացերենում բայը երկու թիվ ունի՝ եզակի և հոգնակի։ Եզակին պատկերացում է տալիս մեկ դեմքի գործողության մասին, իսկ հոգնակին՝ մեկից ավելի դեմքերի։

Դեմքը լինում է երկու կարգի՝ ենթակայական (սուբյեկտային) և խնդրային (օբյեկտային)։ Ենթակայական է այն դեմքը, որը ներկայացված է իբրև գործողություն կատարող։ Խնդրային է այն դեմքը, որը գործող չէ և նրա վրա ուրիշներն են ներգործում կամ՝ նրա համար ուրիշներն են գործողություն կատարում։

Ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թվում ենթակայական դեմքերը հին վրացերենում երեքն են. 1-ին, 2-րդ, 3-րդ։ Մինչդեռ խնդրային դեմքերն երեքն են եզակի թվում (1-ին, 2-րդ, 3-րդ) և չորսը՝ հոգնակի թվում (1-ին ներառական, 1-ին արտառական, 2-րդ և 3-րդ) (§ 105)։

92. Ուղիղ և անուղղակի խնդրայնություն։ *Խնդրային դեմքը երկու տեսակ է՝* ուղիղ և անուղղակի։

Ուղիղ-խնդրային *է այն դեմքը, որը ստանում է ուղիղ խնդիր, այսինքն՝ անուն, որը հոլովափոխ է. առաջին բայախմբի ձևերի հետ դրվում է տրական հոլովով, իսկ երկրորդ բայախմբի ձևերի հետ՝ անվանական հոլովով.* ჭამს პურსა [*հաց է ուտում*]—ჭამა პური [*հաց կերավ*], მოჰკლავს ირემსა [*եղջերու է սպանում*]—მოკლა ირემი [*եղջերու սպանեց*] *և այլն։*

Անուղղակի-խնդրային *է այն դեմքը, որը ստանում է անուղղակի խնդիր։ Անուղղակի է կոչվում այն խնդիրը, որը հոլովափոխ չէ. և՛ I բայախմբի, և՛ II բայախմբի բայաձևերի հետ այն դրվում է տրական հոլովով.* ესმის დედასა ჴმაჲ ყრმისაჲ [*մայրը լսում է երեխայի ձայնը*]. ესმა დედასა ჴმაჲ ყრმისაჲ [*մայրը լսեց երեխայի ձայնը*]։

Բայի մեջ ուղիղ-խնդրային և անուղղակի-խնդրային դեմքերը ունեն իրարից տարբերվող ձևեր միայն 3-րդ դեմքում, որտեղ անուղղակի-խնդրային դեմքը միշտ ունի իր ցուցիչը, եթե այն հնչյունական պատճառներով դուրս չի ընկել։ Մինչդեռ ուղղակի-խնդրային դեմքը II բայախմբի ձևերում իր ցուցիչը չունի, իսկ I բայախմբի ձևերում՝ ունի միայն որոշակի դեպքերում, որի մասին խոսք կլինի ստորև (§ § 163, 164)։ Ուղիղ-խնդրային դեմքը II բայախմբի ձևերում բայի մեջ թվի ցուցիչ ունի այն դեպքում, երբ իբրև ուղիղ խնդիր հանդես եկող անունը դրված է ნ*-ով հոգնակիով (այս մասին ևս ստորև, § 171)։*

93. Դեմքերի քանակը մեկ բայաձևում: Վրացերենի բայաձևերը կարող են լինել միադեմ, երկդեմ և եռադեմ։ Բայի մեջ դեմքերի քանակը որոշվում է ըստ այն բանի, թե սույն 9 բառերից՝ მე [ես, ինձ], შენ [դու, քեզ], იგი [նա, նրան], მან [նա], მას [նրան], ჩვენ [մենք, մեզ], თქვენ [դուք, ձեզ], იგინი [նրանք], მათ [նրանք, նրանց], որոնք կոչվում են կրելի, քանիսի առկայությունն է ենթադրվում բայաձևում։

Բայը միադեմ է, եթե նրա մեջ ենթադրվում է մեկ կրելիի առկայություն։ Այդ դեմքը սովորաբար ենթակայական է. ვზი [նստած եմ] (ես), დავჯდე [նստեցի] (ես), სდგა [կանգնած ես] (դու), ძეს [ընկած է, դրված է] (նա), წარვალთ [գնում ենք] (մենք), მოხვედით [եկաք] (դուք), მოიქცეს [դարձան) (նրանք)։

Բայը երկդեմ է, եթե նրա մեջ արտահայտված է երկու դեմք և ունի երկու կրելի։ Այս դեմքերից մեկը ենթակայական է, մյուսը՝ խնդրային։ Ընդ որում, այդ խնդրային դեմքը կարող է լինել ուղղակի կամ անուղղակի։ Ուղղակի է, եթե բայը անցողական է, անուղղակի՝ եթե բայը անանցողական է։ Օրինակներ (կրելիների շարքում նախ նշվում է ենթակայական դեմքը և ապա՝ խնդրային).

ա) Բայը անցողական է, խնդրային դեմքն՝ ուղիղ-խնդրային. ვიხილე [տեսա] (ես նրան), წარგიყვანა [տարավ] (նա քեզ), თქვეს [ասացին] (նրանք նրան), დამალნა [թաքցրեց] (նա նրանց), შემკრიბენით [հավաքեցիք] (դուք մեզ) և այլն։

բ) Բայը անանցողական է, խնդրային դեմքն՝ անուղղակի-խնդրային, օրինակներ. მოუჴდეს [մոտեցան] (նրանք նրան), ესმა [լսեց] (ձայնը նա), ეჩუენა [երևաց] (նա նրան) և այլն։

Եռադեմ բայաձևում մեկ դեմքը ենթակայական է, իսկ մյուս երկուսը՝ խնդրային։ Խնդրային դեմքերից մեկը ուղիղ-խնդրային է, մյուսն՝ անուղղակի-խնդրային։ Օրինակներ (կրելիների շարքում նախ բերվում է ենթակայական դեմքը, ապա՝ անուղղակի-խնդրայինը և վերջում՝ ուղիղ-խնդրայինը). მრქუა [ասաց] (նա ինձ այն), შეხუაბთ [կապեցինք] (մենք նրան այն), შევჰვედრეთ [աղաչեցինք] (մենք նրանց այն) և այլն։

ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

94. Ենթակայական դեմք: Ենթակայական դեմք գոյություն ունի բոլոր տեսակի բայաձևերում։ Եթե անգամ բայը անդեմ է, ենթակայական դեմքը համենայն դեպս ներկայացված է լինում բայաձևում. ქუხს [որոտում է], ელავს [փայլատակում է]։

1-ին և 2-րդ դեմքերում ներթակայական ցուցիչները դրվում են սկզբում՝ նախածանցներ են, իսկ 3-րդ դեմքում՝ վերջում, վերջածանցներ են։ Բայահիմքի և 1-ին և 2-րդ դեմքերի ցուցիչների միջև կարող է լինել գործածության ցուցիչ (ა, ი), կամ սեռի ցուցիչ (ი, უ)։ Իսկ ամենասկզբում՝ նախաբայը։

95. Առաջին ներթակայական դեմքի ցուցիչ։ Առաջին ներթակայական դեմքի ցուցիչն է ვ, որը უ ձայնավորից առաջ կորչում է։ Այն ընդհանուր է երկու թվերի համար էլ. հոգնակիություն արտահայտելու համար թվի ձևին վերջից ավելացվում է თ և դառնում հոգնակի թիվ։ Օրինակներ՝ ვ-არ, ვ-არ-თ [եմ-ենք], ვ-დგა, ვ-დგა-თ [կանգնած եմ-կանգնած ենք], ვ-იხილე, ვ-იხილე-თ [տեսա-տեսանք], (ვ)უწყი, (ვ)უწყი-თ [գիտեմ-գիտենք] և այլն։

ვ-ն կորչում նաև ვ-ով սկսվող ვალ-ვედ-ვიდ [գնալ] բայից առաջ. მი-ვალ (მი-ვვალ-ի [գնում եմ] փոխարեն)։ ვ-ով սկսվող այլ բայերից առաջ ვ-ն կարող է կորել կամ չկորել. დავვარდი կամ დავარდი [ընկա]։

96. Երկրորդ ներթակայական դեմքի ցուցիչ։ Երկրորդ ներթակայական դեմքի ցուցիչն է ჰ, որը ենթակա է հաջորդ հնչյունի ազդեցությանը. ձայնավորներից առաջ այն կորչում է, ատամնային և քմային ինն բաղաձայններից առաջ՝ ტ დ თ (ատամնայիններ), ჭ ჯ ჩ (ետնալնդայիններ), წ ძ ც (առաջնալնդայիններ), դառնում է ს։ Այսպես էլ հոգնակի թիվը կազմվում է თ-ի ավելացումով։ Օրինակներ՝ შე-ჰ-კარ, შე-ჰ-კარ-თ [կապեցիր-կապեցիք], გან-ჰ-ყიდე, გან-ჰ-ყიდე-თ [վաճառեցիր-վաճառեցիք]։ Ձայնավորից առաջ ჰ-ն կորչում է (այդ կորած ჰ-ն վերցված է փակագծերի մեջ). (ჰ)უწყი, (ჰ)უწყით [գիտես-գիտեք], (ჰ)იხილე, (ჰ)იხილეთ [տեսար-տեսաք]։ Ատամնային և լնդային հնչյուններից առաջ ჰ-ն դառնում է ს. ს-ტირ, ს-ტირ-თ [լալիս ես-լալիս եք], ს-დგა, ს-დგა-თ [կանգնած ես-կանգնած եք], და-ს-წერო, და-ს-წერო-თ [կգրես-կգրեք], გან-ს-ძლიერდი, გან-ს-ძლიერდი-თ [հզորացար-հզորացաք], ს-ცან, ს-ცან-თ [իմացար-իմացաք], ს-ჭამე, ს-ჭამე-თ [կերար-կերաք], და-ს-ჯედ [նստեցիր], ს-ჩან, ს-ჩან-თ [երևում ես-երևում եք]։

Շչական հնչյուններից առաջ ს-ն հաճախ դառնում է შ. შჭამე, შჭამეთ; შჩან, შჩანთ; დაშჯედ։

Հաճախակի ჰ-ն դուրս է ընկնում նաև որոշ բաղաձայններից առաջ, ինչպիսիք են ს, ზ, ხ-ն։ Մի երկու օրինակ՝ ნუ ზრუნავთ [մի՛ հոգաք] (Մատթ. Զ, 25), ნუ ჰზრუნავთ (Մատթ. Զ, 34); რაჲ შჭამოთ და რაჲ ჰსუათ [Ինչ ուտեք կամ ինչ ըմպեք] (Ղուկ. ԺԲ, 29), რაჲ შჭამოთ და რაჲ სუათ (Մատթ. Զ, 25)։

ჰ հնչյունի հարմարում-փոփոխությունը՝ հաջորդող հնչյունների ազդեցությամբ, ստուգաբանաբար էր տեղի ունենում: Հին ձեռագրերում ჰ կարող է հանդիպել բաղաձայններից առաջ, առավելապես ատամնա-յին և լնդային հնչյուններից առաջ, որտեղ սպասելի է ს, օրինակ՝ ჰტირთ [լայք] (Մարկ. Ե, 39): Այս բաղաձայններից առաջ հաճախակի է նաև երկու տառի՝ ჰს գրությունը: Այս երկուսը միասին արտահայտում էին ჰ-ից ს անցումային ստուգանի մեկ բարդ հնչյուն: Այս երևույթը հատկապես հաճախակի է որոշ ձեռագրերում, օրինակ Ջրուճի ավետա-րանում (936 թ.), որին հակադրվում է Պարխալի ավետարանը (973 թ.). երբ առաջինում ჰს (ჰშ) է, երկրորդում միայն ს (შ) ունենք: Օրինակ-ներ Մարկոսի ավետարանից. რომელი ჰსწყევე [զոր անիծէր] (Մարկ. ԺԱ, 21), რომელი სწყევე; რაჟამს ჰსდგეთ ლოცვასა [յորժամ յաղօթս կայցէք] (Մարկ. ԺԱ, 25), სდგეთ; ჭეშმარიტად ჰსთქუ [ճշմարիտ ասա-ցեր] (Մարկ. ԺԲ, 7), სთქუ; რაჲთა ჰშჭამოთ [զի կերիցես] (Մարկ. ԺԴ, 12), შჭამოთ; შენ ჰსთქუ [դու ասացեր] (Մարկ. ԺԵ, 2), შენ სთქუ:

97. Խոնարհման տեսակների ցուցումները: *Խոնարհման հուշարձան-ներում, ինչպես ձայնավորներից, այնպես էլ բաղաձայններից առաջ, 2-րդ ենթակայական դեմքի ցուցիչը ամենուրեք* ხ *է.* ხ-იბილე, ხ-იბი-ლე-თ; ხ-ტირ, ხ-ტირ-თ; ხ-დგა, ხ-დგა-თ; და-ხ-წერო, და-ხ-წერო-თ; გან-ხ-ძლიერდი, გან-ხ-ძლიერდი-თ; ხ-ცან, ხ-ცან-თ; ხ-ჰამე, ხ-ჰამე-თ; და-ხ-ჯდე; ხ-ჩან, ხ-ჩან-თ; ხ-ზრუნავ, ხ-ზრუნავ-თ; ნუ ხზრუნავთ, რაჲ ხჭამოთ და რაჲ ხსუათ *և այլն:*

Այս ხ-*ն իբրև 2-րդ դեմքի ցուցիչ պահպանվել է միմիայն երկու բայի մեջ.* ხარ [*ես*], ხუალ [*գնում ես*]: უფალო, ვიდრე ხუალ [*Տէր, յո՞ւր երթաս*] (*Հովհ. ԺԳ, 36*): *Նախածանցների ավելացումով կլինի.* მო-ხუალ, მოხუედ, მოხჳდე; წარხუალ, წარხუედ, წარხჳდე *և այլն: Սույն* ხ-*ն, ինչ խոսք, առկա է և հոգնակի թվի բայաձևերում.* ხართ; მოხუ-ალთ, მოხუედით, მოხჳდეთ.

98. Դեմքի ցուցիչը հրամայականում: *Հրամայական եղանակը լի-նում է երկու տեսակի՝ հորդորական և արգելական (ժխտական): Հին վրացերենում հորդորական հրամայականը ինքնուրույն բայաշարքեր ուներ միայն 2-րդ և 3-րդ դեմքերի համար: 1-ին դեմքը եղակիում ընդ-հանրապես հրամայական չունի, իսկ հոգնակիում այդ նպատակով օգ-տագործվում է ստորադասական բայաշարքը:*

*Արգելական (ժխտական) հրամայականը առանձին բայաշարք չու-ներ և կիրառում էր կամ ներկայի բայաձևը (*ნუ *մասնիկի հետ), կամ երկրորդ ստորադասականի բայաձևը (*არა *մասնիկի հետ): Արգելական (ժխտական) հրամայականը պահանջում է դեմքի ցուցիչ, որը նրան է*

անցնում գործածության համար փոխառնված բայաձևերի հետ միասին. მოკალ! [սպանի՛ր], սակայն՝ ნუ მოჰკლავ, არა მოჰკლა [մի՛ սպանիր, չսպանե՛ս], დაწერე [գրի՛ր], սակայն՝ ნუ დასწერ, არა დასწერო [մի՛ գրիր, չգրես], დადევ [դի՛ր], սակայն՝ ნუ დასდებ, არა დასდვა [մի՛ դիր, չդնե՛ս], აღდეგ [վեր կա՛ց], սակայն՝ ნუ აღსდგები, არა აღსდგე [մի՛ վեր կաց, վեր չկենաս], დაჯედ [նստի՛ր], սակայն՝ ნუ დასჯდები, არა დასჯდე [մի՛ նստիր, չնստես] և այլն: Այստեղ վկայակոչվեցին եզակի թվի բայաձևեր: Նրանց თ ավելացնելով ստանում ենք հոգնակի թվի բայաձևեր. ნუ დასწერთ, არა დასწეროთ; ნუ მოჰკლავთ, არა მოჰკლათ; ნუ აღსდგებით, არა აღსდგეთ: დაჯდომა [նստել] բայի հոգնակի թվում փոխարինում է დასხდომა-ն, ნუ დაჰსხდებით, არა დაჰსხდეთ:

99. Երրորդ ներակայական դեմքի ցուցիչներ: *Երրորդ ենթակայական դեմքի ցուցիչները վերջածանցներ են և բոլորն էլ վերջից են ավելացվում բային: Եզակի և հոգնակի թվի ցուցիչները տարբեր են, որոնք դանազանվում են նաև ըստ բայաշարքերի:*

Երրորդ ներակայական դեմքի ցուցիչները եզակի թվում: *3-րդ ենթակայական դեմքի ցուցիչները եզակի թվում չորս են՝* ს, ნ, ა, ო: *Ամենից հաճախ, իբրև երրորդ ենթակայական դեմքի եզակի թվի ցուցիչ, գործածվում է* ს-*ն: Այն գործածական է ներկայում* (აქებ-ს [*գովում է*]), *անցյալ անկատարի հաճախականում* (აქებდი-ს [*գովում էր հաճախ*]), *երկրորդ հաճախականում* (აქო-ს [*գովեց հաճախ*]), *I և II ստորադասականներում (կամ ըղձականում)՝* აქებდე-ს, აქო-ს [*գովելու է, կգովի*]) *և այլն:*

ნ-*ն գործածվում է.*

ա) ներկայի հաճախականում. არ-ნ [*է*], ვალ-ნ [*գնում է*], ადიდებ-ნ [*մեծարում է*]:

բ) հարգորական հրամայականի 3-րդ ենթակայական դեմքում. იყავ-ნ [*լինի՛*], მოვედი-ნ [*գա*]:

ა-*ն գործածվում է.*

ա) անցյալ անկատարում. აქებდ-ა [*գովում էր*], ეძიებდ-ა [*փնտրում էր*], იქმოდ-ა [*գործում էր*], ჭმობდ-ა [*ձայնում էր*] *և այլն:*

բ) անցյալ կատարյալում. დაშთ-ა [*մնաց*], დაჯდ-ა [*նստեց*], დადგ-ა [*կանգնեց*], დამალ-ა [*թաքցրեց*], წარიყვან-ა [*տարավ*], აღაშენ-ა [*շինեց*] *և այլն:*

ო-*ն գործածվում է անցյալ կատարյալում որոշակի բայերի հետ, ամենից առաջ միաբաղաձայնավորահիմք, ինչպես օրինակ.* გ-ება (აღაგ-ო [*կառուցեց*], განაგ-ო [*կարգավորեց*], და-აგ-ო [*փռեց*], მიუგ-ო [*պատասխանեց*], წარაგ-ო [*կորուստ տվեց*], მოიგ-ო [*շահեց*] *և այլն*), პ-ება (განაპ-ო, დაიპ-ო [*ճեղքեց*]), ქ-ება (აქო [*գովեց*]), ღ-ება

(ალალ-ო [բացեց], ალილ-ო [վերցրեց], შეილ-ო [մացրեց], მოილ-ო [վերցրեց], წარულ-ო [խլեց] և այլն), ძ-ება(განაძ-ო [հալածեց]), წ-ება (დააწ-ო [թացացրեց]), ხ-ება (შეახ-ო [շոշափեց, կպցրեց])։

Բացառություն են կազմում ბ-მა-ნ *[կապել] և* ც-ემა-ნ *[տալ], որոնք ստանում են* ა. შეაბ-ა; მი-სც-ა, და-სც-ა *և այլն։*

ო *են ստանում նաև երկրորդաձայնավորահիմք բայերը, օրինակ՝* ალმოავსო *[լցրեց],* დაათრო *[քարշ տվեց],* დაალტო *[թացացրեց],* შეამკო *[զարդարեց],* განატფო *[ջերմացրեց],* ვ-ყავ *[էի],* ჰ-ყავ *[էիր],* ყო (*ყვა) *[էր],* განყო *[բաժանեց];* შე-ყო *[հարեց],* და-ყო *[մնաց, իշխանեց, անցկացրեց] և այլն։* განაძღო *[կշտացրեց],* სცხო *[օծեց],* იწყო *[սկսեց],* მიუწყო *[չափեց] և այլն։*

Այս բայերը ო *ստանում են այն դեպքում, երբ ուղիղ խնդիրը եզակի թվով է կամ* ებ-*ով հոգնակիով։ Սակայն, երբ ուղիղ խնդիրը դրված է* ნ-*ով հոգնակիով, ապա բայաձևին ավելացվում է ուղիղ խնդրի հոգնակիության ցուցիչ, և* ო-*ն փոխարինվում է* ა-*ով.* ყო იგი, *սակայն՝* ყვნა იგინი, ალაგო იგი, *բայց՝* ალაგნა იგინი *և այլն։*

100. Երրորդ ներակայական դեմքի ցուցիչները հոգնակի թվում։ *Հոգնակի թվում 3-րդ ենթակայական դեմքի ցուցիչներն են՝* ენ, ან, ნ, ეს *որոնք եւ բային են ավելացվում վերջից և գործածվում որոշակի կարգով։ Բայաշարքի կամ բայաշարքերի մի խմբի հետ նրանցից մեկն է, այլ բայաշարքերի հետ՝ ուրիշը։ Նրանցից յուրաքանչյուրի գործածությունը այսպիսի պատկեր է ներկայացնում.*

ენ. *Հանդես է գալիս իբրև անցողական բայերի մեծ մասի ցուցիչ ներկայում.* ჭმობ-ენ *[ծախում են],* აქებ-ენ *[գովում են],* ადიდებ-ენ *[մեծարում են],* ჭამ-ენ *[ուտում են],* ისმენ-ენ *[լսում են],* დაარღუევ-ენ *[խախտում են, քանդում են],* მოავლინებ-ენ *[ուղարկում են] և այլն։*

ან. *Ստանում են բայերը, որոնք դեմքի ցուցիչից առաջ ունեն* ი, *ընդ որում՝ այդ* ი-*ն կարող է լինել և՛ թեմայի, և՛ բայաշարքի ցուցիչ.* ყოვნი-ან *[հապաղում են],* იცინი-ან *[ծիծաղում են],* არი-ან *[են],* მო-რბი-ან *[վազում են],* ჭმობდი-ან *[ծախում էին],* დაარღუევდი-ან *[խախտում էին] և այլն։ II հարանականի ցուցիչն է* ი, *ուստի նրանից հետո 3-րդ ենթակայական դեմքի ցուցիչը հոգնակիում կլինի* ან։ დამა-ლი-ან *[թաքցրեցին],* შეწირი-ან *[զոհաբերեցին],* შეაგბი-ან *[եփեցին] և այլն։* ოდ-*աճականավոր բայերը I ապառնիում (I ապառնի) իբրև բայաշարքի ցուցիչ ունեն* ი, *հետևաբար՝ այս բայաշարքում նմանատիպ բայերի ենթակայական 3-րդ դեմքի ցուցիչը կլինի* ან. იქმოდიან *[կգործեն],* იტყოდიან *[կասեն],* იცინოდიან *[կծիծաղեն] և այլն։*

ნ. *Բայերն այն ստանում են* I *և* II *ստորադասականում.* ჰყოფდე-ნ [*ունենալու են*], აქებდე-ნ [*գովելու են*], ადიდებდე-ნ [*մեծարելու են, փառաբանելու են*], ტქუა-ნ [*կասեն*], დაკლა-ნ [*կմորթեն*], მისცე-ნ, [*կտան*], მოილო-ნ, [*կստանան*], მიუგო-ნ [*կպատասխանեն*] *և այլն: Ենթադրվում է, որ այստեղ* ენ *վերջավորությունում սղում է տեղի ունեցել:*

ეს. *Այս վերջավորությունը ստանում են բոլոր բայերը անցյալ անկատարում և անցյալ կատարյալում.* იმღერდ-ეს [*ծաղրում էին*], ჰმობდ-ეს [*ձայնում էին*], სცემდ-ეს [*տալիս էին*], იხილ-ეს [*տեսան*], მოიღ-ეს [*ստացան*], დაკლ-ეს [*մորթեցին*], ტქუ-ეს [*ասացին*] *և այլն:*

Ծանոթություն 1: ოდ-*ածանցավոր բայերը անցյալ անկատարում բայաշարքի ցուցիչ ունեն* ე (ვიქმოდე [*գործում էի*]), *որը 3-րդ դեմքի բայաձևում՝* ა-*ից առաջ վերջանում է.* იქმოდ-ა [*գործում էր*]: *Ուստի ենթադրում ենք, որ* ა-*ն հոգնակիում ևս վերջանում է.* იქმოდ-ეს [*գործում էին*]:

Ծանոթություն 2: *Որոշ դեպքերում եզակի 3-րդ դեմքի բայաձևը համընկնում է այլևայլ բայաշարքի եզակիի և հոգնակիի հետ.* ადიდებ-დეს [*մեծարում էին, փառաբանում էին (նրանք նրան)*]. *բայաձևը հոգնակի է, բայաշարքը՝ անցյալ անկատար և* ადიდებდეს [*մեծարելու է, փառաբանելու է (նա նրան, նրանց)*]՝ I *ստորադասականի* (I *ապառնի*) *բայաշարքի եզակի:*

ედ. *Բայերն ստանում են ներկայի հաճախականում և երկու հրամայականներում.* ადიდებ-ედ [*մեծարում են (հաճախ)*], ადიდებდ-ედ [*մեծարեն*], იყვნ-ედ [*լինեն*], მოვიდ-ედ [*գան*]:

101. **3-րդ ենթակայական դեմքի ցուցիչների տախտակ:**

Եզակի	Հոգնակի	օրինակներ
ს	ენ	ადიდებ-ს, ადიდებ-ენ
ს	ან	ადიდებდი-ს, ადიდებდი-ან
		ყოვნი-ს, ყოვნი-ან
		იქმოდი-ს, იქმოდი-ან
		დგა-ს, დგან-ან; მიყუარ-ს, მიყუარ-ან
ს	ნ	ადიდებდე-ს, ადიდებდე-ნ
		ადიდო-ს, ადიდო-ნ
		ტქუა-ს, ტქუ-ან
		ამაღლდე-ს, ამაღლდე-ნ
		ადიდნე-ს, ადიდნე-ნ
ნ	ედ	ადიდებ-ნ, ადიდებ-ედ

6—591

ა   ეს   იხილ-ა, იხილ-ეს; თქუ-ა, თქუ-ეს
              დაწერ-ა, დაწერ-ეს
ო   ეს   აღაღ-ო, აღაღ-ეს; იყ-ო, იყვ-ნ-ეს

ԽՆԴՐԱՅԻՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ

102. **Խնդրային դեմքերի ցուցիչները և նրանց տեղը:** *Խնդրային դեմքի ցուցիչ կարող է ունենալ ինչպես անցողական, այնպես էլ անանցողական բայը: Բոլոր բայերի խնդրային ցուցիչները նախածանցներ են, նախորդում են բայահիմքին: Խնդրային ցուցիչները կամ անմիջականորեն միանում են բայահիմքին սկզբից, կամ միանում նրան* ე ა ი უ *ձայնավորների միջնորդությամբ: Սրանցից* ა-*ն և* უ-*ն դարձության ցուցիչներ են,* ი-*ն կարող է լինել ինչպես դարձության, այնպես էլ կրավորական սեռի ցուցիչ, իսկ* ე-*ն կրավորական սեռի ցուցիչ է:*

Խնդրային դեմքը լինում է երկու տեսակ՝ ուղիղ և անուղղակի: Նրանց ցուցիչները I-ին և 2-րդ դեմքերում միատեսակ են, իսկ 3-րդ դեմքում՝ տարբեր:

1-ին խնդրային դեմքի ցուցիչը եզակի թվում მ-**ն է, և՛ ուղղակի, և՛ անուղղակի խնդրի համար:** *Հոգնակի թվում* მ-*ն է կամ* გუ-*ն, որտեղ* უ-*ն ոչ վանկարար է:*

2-րդ խնդրային դեմքի ցուցիչն է გ-**ն,** *նորից երկու խնդրի համար էլ, ընդ որում՝ ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թվում:*

103. **3-րդ ուղիղ-խնդրային դեմքի ցուցիչ:** *Անցողական բայի ուղիղ-խնդրային դեմքը II բայախմբի բայաձևերում ցուցիչ չունի, փոխարենը այդ նույն բայախմբում ուղիղ-խնդրային դեմքը ստանում է հոգնակիության ցուցիչ այն դեպքում, երբ ուղիղ խնդիրը* ნ-*ով հոգնակի անուն է (այս մասին ստորև, § 171): Մինչդեռ I բայախմբում ուղիղ-խնդրային դեմքը կարող է ցուցիչ ունենալ որոշակի դեպքերում (տե՛ս ստորև, § 163):*

Անանցողական երկդեմ բայի մեկ դեմքը անուղղակի-խնդրային է: Այս դեմքը խնդրային ցուցիչ է պահանջում:

104. **3-րդ անուղղակի-խնդրային դեմքի ցուցիչն է** ჰ-**ն** *կամ նրա հնչյունափոխված ձևը, այսինքն՝ ձայնավորներից առաջ ոչինչ (քանի որ* ჰ-*ն այս դեպքում կորչում է), իսկ ատամնային և լնդային բաղաձայններից առաջ՝* ს, *որ* ჰ-*ից է առաջացել: Այդ բաղաձայններն են.* ტ დ თ; წ ძ ც; ჭ ჯ ჩ: *Հետևաբար, 3-րդ անուղղակի-խնդրային դեմքի ցուցիչը համընկնում է 2-րդ ենթակայական դեմքի ցուցիչի հետ և նմանապես*

Հնչյունական պարադաներում կրում է նույն փոփոխությունները, ինչ 2-րդ ենթակայականը. (օրինակ՝ ს-ն շչական բաղաձայններից առաջ վերածվում է შ-ի)։ Ինչ վերաբերում է խանմետյան հուշարձաններին, նրանցում 3-րդ անուղղակի-խնդրային դեմքի ցուցիչը բոլոր դեպքերում ხ-ն է։

Օրինակներ՝

მ-კითხა, გ-კითხა, ჰკითხა (ხანძ. ხკითხა), გუ-კითხა *կամ* მ-კითხა; მ-თხოვა, გ-თხოვა, ს-თხოვა (ხანძ. ხ-თხოვა, ჰაემ. ჰ-თხოვა), გუ-თხოვა *կամ* მ-თხოვა; მო-მ-ცა, მო-გ-ცა, მი-ს-ცა (ხანძ. მი-ხ-ცა, ჰაემ. მი-ჰ-ცა), მო-გუ-ცა *կամ* მო-მ-ცა; მ-ი-ყო, გ-ი-ყო, (ჰ)უყო (ხანძ. ხ-უყო, ჰაემ. ჰ-უყო), გუ-იყო (გჳყო) *կամ* მ-იყო; მ-აჩუენა, გ-აჩუენა, აჩუენა (ხანძ. ხ-აჩუენა, ჰაემ. ჰ-აჩუენა), გუ-აჩუენა *կամ* მ-აჩუენა։

Ծանոթություն: *Որոշ ձեռագրերում, իբրև 3-րդ խնդրային դեմքի ցուցիչ, հաճախ ունենք* ჰს(ჰშ), *որը ցույց է տալիս, թե* ჰ-*ի վերածումը* ს-*ի (կամ* შ-*ի) դեռևս ավարտված չի եղել։*

105. **Ներառություն և արտառություն (ինկլուզիա և էքսկլուզիա):** *1-ին խնդրային դեմքի հոգնակի թվի ձևը ենթադրում է հոգնակիություն՝* **մենք**, *սակայն այդ* **մենքը** *երկու տեսակ է՝ այլ է այն* **մենքը**, *երբ նրա մեջ ենթադրվում են* **ես և դու**, *կամ՝* **ես և դուք**, *այսինքն՝ խոսակցի հետ միասին նաև 2-րդ դեմքը։ Սա հենց ներառության ձևն է։ Ուրիշ է այն* **մենքը**, *որի մեջ ենթադրվում են* **ես և նա, ես և ինքը, ինձ և նրան**, *կամ նրանից* **ես և նրանք, ինձ և նրանց**, *այսինքն՝ ձև, որից հանված է 2-րդ դեմքը և նրա փոխարեն մտցված 3-րդը։ Սա արտառության ձևն է։ Հետևաբար, ներառական ձևի մեջ առկա է 2-րդ դեմքն և բացակայում է 3-րդ դեմքը, իսկ արտառության ձևում առկա է 3-րդ դեմքն և բացակայում է 2-րդը։*

Նշաններ կան, թե գրական վրացերենում հնագույն ժամանակներում 1-ին խնդրային դեմքի հոգնակի թվում ներառական-արտառական ձևերը տարբերվում էին. გუ-*ն պետք է լիներ ներառական դեմքի ցուցիչ, իսկ* მ-*ն՝ արտառականի։ Սրա վկայությունն է «Հայր մերի» հետևյալ հատվածը.*

პური ესე ჩუენი არსობისაჲ მომეც ჩუენ დღეს და მომიტევენ ჩუენ თანანადებნი ჩუენნი... და ნუ შემიყვანებ ჩუენ განსაცდელსა, არამედ მიჴსნენ ჩუენ ბოროტისაგან *[Զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր և թող մեզ զպարտիս մեր... և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէն] (Մատթ. Զ, 11—13)։ Մեջբերված հատվածում ամենուր արտառական բայաձևեր են. Նրանցից երկուսը հաղորդում են*

ուղիղ-խնդրային հարաբերություն. ნუ შემიყვანებ ჩუენ, მიჴსენ ჩუენ, *իսկ մյուս երկուսը՝ անուղղակի-խնդրային.* მომეც ჩუენ, მომიტევენ ჩუენ: *Սակայն պետք է նշել, որ մեզ հասած բնագրերում ներառական և արտառական ձևերը խառնորեն տարբերակված չեն։*

106. Ուղիղ-խնդրային դեմքի արտահայտումը հոգնակի թվում: *Ուղիղ-խնդրային դեմքի հոգնակիությունը արտացոլվում է բայաձևում այն դեպքում, երբ բայը դրված է II բայախմբի բայաշարքով և նրա հետ համաձայնեցված ուղիղ խնդիրը* ნ*-ով հոգնակի է։ Հոգնակի ուղիղ խնդրի ցուցիչն է* ენ *կամ՝* ნ, *որը ստացվել է* ე *ձայնավորի սղման հետևանքով։*

Օրինակ՝

	Ուղիղ խնդիրը եզակի է (*նա*)	*Ուղիղ խնդիրը հոգնակի է* (*նրանք*)	
Եզ.	**1.3** ვიხილე [*տեսա նրան*]	ვიხილენ [*տեսա նրանց*]	**3.1** მიხილა [*տեսավ ինձ*]
	2.3 იხილე	იხილენ	
			3.2 გიხილა [*տեսավ քեզ*]
	3.3 იხილა	იხილნა	**3.3** იხილა [*տեսավ նրան*]
Հոգն.	**1.3** ვიხილეთ	ვიხილენ(ი)თ	**3.1** გუიხილნა [*տեսավ մեզ*]
	2.3 იხილეთ	იხილენ(ი)თ	**3.1** მიხილნა [*տեսավ մեզ*]
	3.3 იხილეს	იხილნეს	**3.2** გიხილნა [*տեսավ մեզ*]
			3.3 იხილნა [*տեսավ նրանց*]

შენ ჩუენ მიხილე [*դու մեզ տեսար*], თქუენ ჩუენ მიხილენ(ი)თ [*դուք մեզ տեսաք*], მე თქუენ გიხილენ [*ես ձեզ տեսա*], ჩუენ თქუენ გიხილენ(ი)თ [*մենք ձեզ տեսանք*]։

Հետևաբար, II բայախմբի բայաձևերում յուրաքանչյուր ենթակայական դեմք երկուական ձև ունի. մեկը՝ ուղիղ խնդիրը եզակի թվով համաձայնելիս և մյուսը՝ ուղիղ խնդիրը հոգնակի թվով համաձայնելիս։

107. Շրջադասություն (ինվերսիա): *Անցողական բայի համար III բայախմբի բայաձևերում բնորոշ է դեմքի ցուցիչների շրջադասությունը։ Գործող դեմքը (ենթակա) I և II բայախմբերի բայաձևերում արտա-*

Հայտնվում է ենթակայական ցուցիչներով, որոնք պատկանում են ვ-ի շարքին, իսկ III բայախմբում՝ խնդրային ցուցիչներով, որոնք վերաբերում են მ-ի շարքին. დავწერ, დავწერე, დამიწერია; ვადიდებ, ვადიდე, მიდიდებია; ვიქმ, ვქმენ, მიქმნია և այլն: III բայախմբում գործող դեմք արտահայտող խնդրային ցուցիչները անուղղակի խնդրի ցուցիչներ են, որ ավելի հստակ երևում է 3-րդ դեմքի ձևում. და(ჰ)-უწერია, (ჰ)უდიდებია, (ჰ)უქმნია (խանմեթյան հուշարձանների համաձայն կանոնանց՝ დახუწერია, ხუდიდებია, ხუქმნია): Ահա, III բայախմբում դեմքի ցուցիչների ֆունկցիաների փոփոխությունն է, որ շրջադասությունն է:

108. Դեմքի արտահայտումը բայի մեջ և դեմքի ցուցիչը: *Բայաձևում որևէ դեմք արտահայտելու համար պարտադիր չէ, որ համապատասխան դեմքի ցուցիչը անպայման լինի բայաձևի կազմում: Անհրաժեշտ է միայն, որ այդ բայաձևը հնչյունական առումով զանազանվի միևնույն բայաշարքի այլ բայաձևերից: Օրինակ՝* ვიხილე, იხილე, იხილა, ვიხილეთ, იხილეთ, იხილეს:

Բոլոր այս բայաձևերը տարբերվում են իրարից ինչպես ձևով (հնչյունական առումով), այնպես էլ քերականական բովանդակությամբ: Սրանք բոլորը, բացառությամբ 2-րդ դեմքի (იხილე, იხილეთ), *ունեն դեմքի ցուցիչ: Սակայն հնում՝ նշվածները ևս ունեին դեմքի ցուցիչ՝* ჰიხილე, ჰიხილეთ *(խանմեթյան հուշարձաններում՝* ხიხილე, ხიხილეთ): *Այդ ցուցիչը կորել է, բայց բայաձևի նշանակությունը նույնն է մնացել ինչ հնում, քանի որ բայաձևը համենայն դեպս տարբերվում է մյուսներից:*

Վերցնենք այլ օրինակ. მტკიცედ დგა *[ամուր կանգնի՛ր]: Այստեղ* დგა *բայաձևը դեմքի ցուցիչ չունի, սակայն անկասկած է, որ այն եզակի թվի 2-րդ դեմքի հրամայականն է: Ցուցիչ չունենալու շնորհիվ այն ևս զանազանվում է նման այլ բայաձևերից՝* ვდგა, სდგა, ვდგათ, სდგათ: *Բերվածները սահմանական եղանակի անցյալ կատարյալ բայաշարքի բայաձևեր են և նրանցից ոչ մեկը նշանակությամբ չի համապատասխանում* **დგა** *բայաձևին, որը 2-րդ դեմքի հրամայականն է, մինչդեռ* სდგა-*ն սահմանական եղանակի անցյալ կատարյալ բայաշարքի 2-րդ դեմքի բայաձևն է:*

Այս օրինակներից ակնհայտ է, որ բայը կարող է դեմքի ցուցիչ չունենալ, սակայն դեմքը նրա մեջ ներկայացված է լինում:

109. Անուղղակի-խնդրային դեմքի պատկերումը բայի մեջ: სხდა *[նստել] բայը միադեմ է: ა գործառության ցուցիչի ավելացումով այն դառնում է երկդեմ* (და-ა-ხხდა, მო-ა-სხდა) *և ստանում անուղղակի*

խնդիր. ილაგზნეს ცეცხლი და გარე-მოასხდეს მას [*Լուցին կրակ և նստան շուրջ*] (*Ղուկ. ԻԲ, 55*)։ *Այստեղ անուղղակի-խնդրային դեմքի* ჰ *ցուցիչը ձայնավորից առաջ կորել է.* გარე-მო(ჰ)ასხდეს: ჰ-ն *նույն կերպ կորել է և* დაჰაკუეთა-ի *մեջ.* სულმან არაწმიდამან და(ჰ)აკუეთა იგი [*Այսն չարչարեաց զնա*] (*Մարկ. Թ, 20*)։ და(ჰ)აკუეთა-ի *կողքին գործածվում է և* დაჰკუეთა-ն. (C *խմբ.*)։ *Այս երկու բայաձևերից ավելի հին է* ა-*ով կազմվածը* (დაჰაკუეთა)։ მოქმნა-ն *երկդեմ անցողական բայ է.* ამან (ფარნავაზ) მოქმნა ციხე წყლით კერძო [*Նա* (*Փառնավազը*) *բերդ շինեց ջրի կողմում*] (*Դարձ.*), *տարբերակն ունի է և հազվադեպ* მოაქმნა-ն (*მოჰაქმნა). და ამან (არსოკ) ქალაქსა ზღუდენი მოაქმნნა [*Եվ նա* (*Արսոկը*) *քաղաքին պարիսպներ շինեց*]։

Այստեղից երևում է, որ բայաձևում անուղղակի-խնդրային դեմքի պատկերման համար անհրաժեշտ է դնել համապատասխան դեմքի ցուցիչ, սակայն այդ ցուցիչը կարող է դուրս ընկնել հնչյունական հանգամանքների բերումով։

ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ԵՂԱՆԱԿ

110. **Ժամանակների և եղանակների ձևերը:** *Վրացերենում ժամանակները երեքն են՝ ներկա, անցյալ և ապառնի։ Երեքն են նաև եղանակները՝ սահմանական, ստորադասական և հրամայական։ Սահմանական եղանակը առավել հարուստ է արտահայտում ժամանակը։* დავსწერ ([*գրում եմ*]—*ներկա*), დავსწერდ *կամ* დავწერე ([*գրում էի, գրեցի*]—*անցյալ*), დავწერო ([*կգրեմ*]—*ապառնի*)։ *Յուրաքանչյուր բայախումբ ունի իր ստորադասականը.* დავსწერდე (I *ստորադասական*), დავწერო (II *ստորադասական*), დამეწეროს (III *ստորադասական*)։

11. **Ընդհանուր բայաձևեր:** *Սահմանական և ստորադասական եղանակներն ունեն ընդհանուր բայաձևեր։ Այսպես, I ապառնիի (սահմ. եղ.) և I ստորադասականի բայաձևը միևնույնն է՝* დავსწერდე: *Հարկ եղած դեպքում այն և՛ սահմանական է (ապառնի ժամանակ), և՛ ստորադասական։* დავწერო-*ն, ըստ ենթատեքստի, կարելի է և՛ իբրև սահմանական եղանակի բայաձև (II ապառնի), և՛ իբրև II ստորադասականի բայաձև ընկալել։*

ԿԵՐՊ

112. Հին վրացերենում I բայախմբի բայաձևերը հակադրվում են II բայախմբի բայաձևերին այն առումով, որ կերպավոր բայերում I

բայախմբի բայաձևերը արտահայտում են անկատար գործողություն, իսկ II բայախմբայինները՝ կատարյալ։ Այս հարցում նախաբայը ոչ մի նշանակություն չունի, գրվում է այն, թե ոչ՝ միևնույն է. I բայախմբի բայաձևերը անկատար են, II բայախմբինը՝ կատարյալ։

Կերպը հին վրացերենում խոնարհման կարգ է, նոր վրացերենում՝ բայածանցման։

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

***113.** Անցյալում կատարված գործողությունը կարող է լինել տեսած կամ չտեսած (այլ կերպ՝ ներկա և հեռակա)։ Տեսած (ներկա) գործողությունը հատուկ բայաշարք չունի, իսկ չտեսածը (հեռականը)՝ ունի.* უქმნიეს, მოუკლავს, დაუწერიეს։ *Ի հակադրություն սրանց,* ქმნა, მოკლა, დაწერა *բայաձևերը տեսած (ներկա) գործողության բայաձևեր են։*

ԲԱԶՄԱԿԻՈՒԹՅՈՒՆ

***113ա.** Անցյալում պատահած կամ կատարված գործողությունը կարող է տեղի ունեցած լինել մի անգամ կամ բազմիցս։ Բազմիցս կատարվող գործողություն հին վրացերենում արտահայտում են համախական բայաշարքերը՝ ներկայի համախականը* (მოსცემნ [*տալիս է հաճախ*]), *անցյալ անկատարի համախականը* (მოსცემდის [*տալիս էր հաճախ*]), *II համախականը* (მოსცის [*տվեց հաճախ*])։ *Ի հակադրություն սրանց, անցյալ կատարյալի բայաձևը* (მოსცა [*տվեց*]) *արտահայտում է մի անգամ կատարված գործողություն։*

ՀԵՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

***114.** Երկու գործողություն կարող են այնպիսին լինել, որ մեկը նախորդի, մյուսը հաջորդի։*

Նախորդում-հաջորդումը կարող է տեղի ունենալ անցյալում կամ ապագայում։ Հին վրացերենը (և վրացերենն ընդհանրապես) նախորդող գործողությունն ի վիճակի է արտահայտել միայն անցյալում։ Այս նպատակի համար կա բայաշարք, որը հայտնի է II հետևանքային բայաշարք անունով. უქმნა, მოეკლა, დაეწერა։ მოვიდა, რომელსა-იგი ორი ქანქარი მიელო, და ჰრქუა [*Մատուցեալ և որոյ զերկուսն քանքարսն առեալ էր և ասէ*] (*Մատթ. ԻԵ, 22*)։ მოაქუნდა, რაჲ-იგი მოემზადა სულნელები [*Բերին զխունկսն, զոր պատրաստեցին*] (*Ղուկ. ԻԴ, 1*)։

115. Բայաշարքը բարդ կարգ է, որը միաժամանակ պարունակում է բայաշարքի տարբեր կոչվող մի քանի պարզ կարգ, առավելապես՝ ժամանակ և եղանակ։

Երեք բայաշարք դիմապակաս են՝ ներկայի հաճախականը և երկու հրամայականները (I և II)։ Հրամայական բայաշարքը եզակի 1-ին դեմք ընդհանրապես չունի, ինչ վերաբերում է հոգնակի թվին, ապա այստեղ հրամայել կարող է և 1-ին դեմքը, սակայն սեփական բայաձևի բացակայության պատճառով, ինչպես ասացինք, կիրառվում է ստորադասական բայաձևը։

Ներկայի հաճախականը, որը կիրառում է ներկայի հիմքը, չունի 1-ին և 2-րդ ենթակայական դեմքերի համար առանձին բայաձևեր։ Առկա են միայն 3-րդ ենթակայական դեմքի բայաձևերը. არნ — არიელ, წერნ — წერიელ։

116. Բայախմբեր։ *Բայաձևերի կազմության տեսանկյունից, ինչպես նաև ըստ անցողական բայերի շարահյուսական բնույթի, հին (ինչպես և նոր) վրացերեն լեզվի բայաշարքերը բաժանվում են երեք խմբի, որոնց կոչում են բայախմբեր։*

I բայախմբում կա վեց բայաշարք, II-ում՝ հինգ, III-ում՝ չորս, ընդամենը՝ 15 բայաշարք։

117. Բայաշարքերի անվանման շուրջ։ *Սահմանական եղանակ պարունակող բայաշարքերից յուրաքանչյուրն ունի իր անունը՝ ներկա, անցյալ անկատար, անցյալ կատարյալ։ Ինչ վերաբերում է հետևանքայիններին, որոնք ևս սահմանական եղանակ են արտահայտում և պատկանում են III բայախմբին, ապա դրանք համարակալում ենք՝ I հետևանքային, II հետևանքային։*

Սահմանական եղանակ են բովանդակում նաև հաճախականները, որոնք երկուսն են I բայախմբում և մեկական՝ I-ում և III-ում։ Այս մեկականները համարակալում ենք ըստ բայախմբերի՝ II հաճախական, III հաճախական։ Բայց քանի որ I բայախմբում կա երկու հաճախական, նրանց կոչում ենք ըստ այն բանի, թե որ բայաշարքի հիմքն են կիրառում։ Ըստ այդմ ունենք՝ ներկայի հաճախական (կիրառում է ներկայի հիմքը) և անցյալ անկատարի հաճախական (հիմնվում է անցյալ անկատարի հիմքի վրա)։ Մնում են հրամայականները և ստորադասականները, որոնց անվանում ենք ըստ այն բանի, թե որ բայախմբին են պատկանում. I բայախմբում ունենք I հրամայական, II բայախմբում՝

II հրամայական։ Նմանապես, I ստորադասականը I բայախմբի բայաշարք է, ինչպես որ II ստորադասականը II բայախմբի բայաշարք է, իսկ III ստորադասականը՝ III բայախմբի։

Ծանոթություն։ *I և II ստորադասականների բայաձևերը հին վրացերենում գործածվում էին և՛ ստորադասական, և՛ սահմանական եղանակ արտահայտելու համար։ Ուստի կարելի էր դրանք կոչել I սահմանական-ստորադասական և II սահմանական-ստորադասական։ Սակայն, քանի որ նոր վրացերենում դրանք պահպանել են միայն ստորադասական իմաստ, իսկ սահմանական՝ ոչ, ուստի գերադասելի է դրանք կոչել ստորադասական (I և II)։ Այնուամենայնիվ, պետք է հիշել, որ դրանք ունեցել են նաև սահմանական եղանակի ապառնիի իմաստ։*

118. **Բայաշարքերի նշանակությունը։**

I բայախումբ

1. **Ներկա։** *Ժամանակը ներկա է, եղանակը՝ սահմանական.* აღიღებს։

2. **Ներկայի հաճախական։** *Եղանակը սահմանական է, արտահայտում է անցյալում բազմիցս կրկնված գործողություն, կամ այնպիսի գործողություն, որը սովորական է և տեղի է ունենում մշտապես.* აღიღებნ։

3. **Անցյալ անկատար։** *Ժամանակը՝ անցյալ է, եղանակը՝ սահմանական.* აღიღებდა։

4. **Անցյալ անկատարի հաճախական։** *Ժամանակը՝ անցյալ է, եղանակը՝ սահմանական, արտահայտում է բազմիցս կատարված գործողություն.* აღიღებდის։

5. **I հրամայական։** *Ժամանակը՝ ներկա է կամ ապառնի, եղանակը՝ հրամայական.* აღიღებდინ։

6. **I ստորադասական (I ապառնի)։** *Ժամանակը՝ ապառնի է, եղանակը՝ սահմանական կամ ստորադասական.* აღიღებდეს։

Կերպավոր բայերի բայաձևերը I բայախմբի բայաշարքերում անկատար կերպի են։

II բայախումբ

1. **Անցյալ կատարյալ։** *Ժամանակը՝ անցյալ, եղանակը՝ սահմանական.* აღიღო։

2. **II հաճախական։** *Ժամանակը՝ անցյալ է, եղանակը՝ սահմանական։ Արտահայտում է անցյալում կրկնված գործողություն, կամ այն-*

պիսի գործողություն, որը սովորական է և մշտապես կատարվող. ადი-დის: Վկայակոչումներ հուշարձանից. ესე არს ბნელ და არა ნათელ ვითარცა-სახედ-იგი ივლტინ კაცი პირისაგან ლომისა და ემთხჳის მას დათჳ და შევარდის იგი სახლსა და შეადგნის ჴელნი მისნი კედელსა და სცის მას გუელმან [Նա խաւար է, և ո՛չ լոյս, որպէս օրինակ թէ փախիցէ մարդ յերեսաց առիւծու և պատահիցէ նմա արջ, և փախիչեալ ի տուն և յեցուցէ զձեռս իւր յորմն և յարկանիցէ զնա օձ] (Ամովս. Ե, 19): Բերված հատվածում ივლტინ-ը ներկայի հաճախական է, իսկ մյուս բայաձևերը (ემთხჳის, შევარდის, შეადგნის, სცის) II հաճախական են: Այլ օրինակ՝ სნეულთა გამოუცხადიან სენი თჳსი მკურნალთა და მიიღიან კურნებაჲ და წარვიდიან და ადიდებედ ღმერთსა სიხარულით [Հիվանդները ցույց էին տալիս իրենց ախտը բժիշկներին, դարմանում էին տանում: Գնում էին և փառաբանում էին աստծուն] (Վարք Հովհ. Ոսկ. 43ա-43բ): Այս հատվածում ადიდებედ-ը ներկայի հաճախականի բայաձև է, իսկ մյուս բայաձևերը II հաճախական են:

3. II հրամայական: *Ժամանակը՝ ապառնի է, եղանակը՝ հրամայական.* ადიდე:

4. II ստորադասական (II ապառնի): *Ժամանակը՝ ապառնի է, եղանակը՝ սահմանական կամ ստորադասական.* ადიდოს:

Կերպավոր բայերում II բայախմբի թվարկված բոլոր բայաշարքերի բայաձևերը կատարյալ կերպի են:

4. Խառը ստորադասական (խառը ապառնի): *Ժամանակը՝ ապառնի է, եղանակը՝ սահմանական կամ ստորադասական, կերպը՝ անկատար.* ადიდოდის:

III բայախումբ

1. I հետևանքային: *Ժամանակը՝ անցյալ է, եղանակը՝ սահմանական, գործողությունը՝ չտեսած.* უდიდებიეს:

2. II հետևանքային: *Ժամանակը՝ անցյալ է, եղանակը՝ սահմանական, գործողությունը՝ տեսած և չտեսած.* უდიდა; კაცთა მათ რომელთა შეეპყრა იესუ, ეკიცხევდეს მას და ჰსცემდეს [Արքն, որ պահէին զնա, այպն առնէին զնովաւ և հարկանէին] (Ղուկ. ԻԲ, 63):

3. III հաճախական: *Ժամանակը՝ անցյալ է, եղանակը՝ սահմանական, գործողությունը՝ բազմակի.* უდიდის:

4. III ստորադասական: *Ժամանակը՝ անցյալ է, եղանակը՝ ստորադասական.* უდიდოს:

Այսպիսով, բաղաձայնների ընդհանուր թիվը 15 է։

ԲԱՅԱԾԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԵՐ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

119. Ուղղություն։ *Հին վրացերենում, ինչպես և նորում, բազում բայեր արտահայտում են ուղղություն դեպի որևէ կետ, որը կարող է լինել բարձր կամ ցածր, ներսում կամ դրսում, մակերեսի վրա կամ խորքում, առջևում կամ ետևում, այն կողմում կամ այս կողմում։ Բայը ի վիճակի է նշել, թե դեպի որ կետն է ուղղված իր արտահայտած գործողությունը.* აღფრენა [*վեր թռչել*], შეფრენა [*ներս թռչել*], გარდაფრენა [*թռչել ինչ-որ բան հաղթահարելով*] *և այլն։ Ուղղությունն արտահայտվում է նախադրույթների միջոցով։*

120. Կողմնորոշում։ *Նախադրույթների միջոցով արտահայտվում է մեկ այլ քերականական կարգ ևս, որը հայտնի է* **կողմնորոշում** *անունով։ Այն ցույց է տալիս, թե դեպի ուր է ուղղված ուղիղ խնդիրը (եթե բայը անցողական է), կամ ենթական (եթե բայը անանցողական է). դեպի այս կողմ է ուղղված և մերձենում է 1-ին դեմքին, թե՞ այն կողմ և հեռանում է 1-ին դեմքից։ Ըստ այսմ, ունենք մերձեցնող կամ հեռացնող, կամ՝ այսկողմային և այնկողմային կողմնորոշում։ Այսկողմային կողմնորոշում է հաղորդում, ամենից առաջ,* მო *նախադրույթը* (მოვიდა, მოიყვანა), *այնկողմային՝* მი-*ն* (მივიდა, მიიყვანა)։ *Մյուս նախադրույթներն արտահայտում են այնկողմային կողմնորոշում, սակայն երբ նրանց կցվում է* მო, *դառնում՝ այսկողմային։* აღ-ვიდა, წარ-ვიდა, შე-ვიდა, გან-ვიდა, გარდა-ვიდა — *սրանք բոլորն արտահայտում են այնկողմային կողմնորոշում, իսկ* აღმო-ვიდა, წარმო-ვიდა, შემო-ვიდა, გამო-ვიდა, გარდამო-ვიდა *և այլն՝ այսկողմային։*

Եթե բայը գործածվում է առանց նախադրույթի, այն չի կարող արտահայտել ո՛չ ուղղություն, ո՛չ կողմնորոշում, օրինակ՝ წევს [*պառկած է*], ზის [*նստած է*], დგას [*կանգնած է*], უყუარს [*սիրում է*]։

121. Նախադրույթները հին վրացերենում։ *Հին վրացերենում գործածվում են հետևյալ նախադրույթները, որոնք դասավորված են ըստ կողմնորոշման.*

Այնկողմային՝ მი და აღ გან შე წარ გარდა შთა უკუნ წიაღ։

Այսկողմային՝ მო დამო აღმო გამო შემო წარმო გარდამო შთამო უკუმო წიაღმო։

და-*ն ցույց է տալիս ուղղություն՝ վերից վար, որտեղ 1-ին դեմքը ներկա չէ.* დავიდა։

დამო-ն՝ *նույն ուղղությունը, սակայն գնալի առաջին դեմքը.* დამოვიდა: დამოსდიოდეს ნაკადულნი ცრემლთანი თუალთაგან მათთა [*Արցունքների առվակները ցած էին հոսում նրանց աչքերից*] *(Դարձ.)։*

აღ-ը *ցույց է տալիս վարից վեր ուղղություն.* აღვიდა, *իսկ* **აღმო-ն՝** *նույնը, սակայն գնալի առաջին դեմքը՝* აღმოვიდა:

გან-ը՝ *ներսից դուրս.* განვიდა, *իսկ* **გამო-ն՝** *նույնը գնալի 1-ին դեմքը.* გამოვიდა: გამო-*ում* ნ-*ն կորել է հաջորդող* მ-*ի ազդեցությամբ:*

შე-ն՝ *դրսից ներս.* შევიდა, *իսկ* **შემო-ն՝** *նույնը գնալի 1-ին դեմք.* შემოვიდა:

წარ-ը՝ *այստեղից այնտեղ.* წარვიდა, **წარმო-ն՝** *այնտեղից այստեղ.* წარმოვიდა:

გარდა-ն *ցույց է տալիս ուղղություն՝ որևէ խոչընդոտի հաղթահարումով.* გარდავიდა, *իսկ* **გარდამო-ն՝** *նույնը, ուղղությունը միայն թե գնալի 1-ին դեմքը.* გარდამოვიდა:

შთა-ն *ցույց է տալիս այնպիսի շարժում, որը ուղղված է վերևից ներքև և միևնույն ժամանակ՝ դրսից ներս.* შთავიდა, *իսկ* შთამო-*ն՝ նույնը, միայն թե գնալի 1-ին դեմքը.* შთამოვიდა:

შთა-ն *առաջացել է* **შდა-ից՝** *մասնակի առնմանությամբ ձայնդարձով, որն, իր հերթին, կազմված է* **შე-და-ից:** *Սրանով է բացատրվում, որ այն պարունակում է երկու նախադասների նշանակությունն էլ՝ դրսից ներս* (**შე**) *և վերևից ներքև* (**და**)*: Ուշ շրջանի հուշարձաններում* შთა-*ի փոխարեն հաճախ գործածվում է* ჩა-*ն:*

უკუნ-ը *ցույց է տալիս հակադարձ գործողություն.* უკუნიქცა, *իսկ* **უკუმო-ն՝** *հակադարձ շարժում, սակայն գնալի 1-ին դեմքը.* უკუმოიქცა: უკუნ-*ը նույն* უკუან-*ն է.* ა-*ն ընկել է, իսկ նրան նախորդող* უ-*ն շարունակում է մնալ ոչ վանկարար.* უკუმო-*ում* ნ-*ն կորել է հաջորդող* მ-*ի ազդեցությամբ:* უკუნ-*ը և* უკუმო-*ն հազվադեպ գործածվող նախադասներ են.* უკუნდგეს, უკუნიქცეს, უკუნსცა, ნუ უკუმოიქცევინ:

წიაღ-ն *օգտագործվում է ջրի վրայով անցումը նշելու համար, որը կարող է լինել գետ (մեծ կամ փոքր), լիճ, ծով:* წიაღვიდა-*ն նշանակում է անցնել այն կողմ, որտեղ 1-ին դեմքը ներկա չէ, իսկ* **წიაღმო-ն՝** *նույնը, միայն թե գնալի 1-ին դեմքը.* წიაღმოვიდა: *Այս նախադասը ևս հազվադեպ է գործածվում.* განაპო ზღუაჲ და წიაღიყვანნა იგინი [*Հերձ զծովն և անցույց զնոսա*] *(Սաղմ. ՀԷ, 13)։*

აღ *նախադասի մասին պետք է գիտել, որ* **ღ-ն** *երբեմն կորչում է.* აღვიარებ [*Գոհանամ զքեն*] *(Ղուկ. Ժ, 21), սակայն նաև՝* ავიარებ *(Մատթ. ԺԱ, 25)։* აღჴდა იგი ნავსა [*Եմուտ ի նաւն*] *(Մատթ. Ը, 23 C).*

առկայն՝ იგი აჴდა ნავსა *Մարկ. Դ. 1 C)*. აჴოლვად [*բառնալ*] *(Ղուկ. Ա, 25 C) և այլն:*

122. Ուղղություն դեպի 2-րդ դեմքը: მო-ն *ցույց է տալիս ուղղություն դեպի 1-ին դեմքը, իսկ* მი-ն՝ *դեպի 3-րդ դեմքը.* ჩუენდა მომართ იგავსა ამას იტყჳ, ანუ ყოველთა მიმართ [*Առ մե՞զ ասացեր զառակդ զայդ թէ առ ամենեսեան*] *(Ղուկ. ԺԲ, 41C): Ինչ վերաբերում է 2-րդ դեմքին, այն անփոփոխ նախածանց չունի և օգտվում է 1-ին կամ 3-րդ դեմքի նախածանցից.* ესე ყოველი მიგცე შენ [*Զայս ամենայն քեզ տաց*] *(Մատթ. Դ, 9)*: მიგცნე შენ კლიტენი სასუფეველისა ცათაჲსანი [*Տաց քեզ զփականս արքայութեանն երկնից*] *(Մատթ. Զ, 19)*: მოგაგოს შენ ცხადად [*Հատուսցէ քեզ յայտնապէս*] *(Մատթ. Զ, 4)*: მოგიგოს და გრქუას თქუენ [*Հատուսցէ քեզ և ասասցէ*] *(Յովհ. Ժ, 25)*: ნეტარ არს, რომელმან მიგაგოს მისაგებელი შენი, რომელ შენ მომაგე ჩუენ [*Երանի որ հատուսցէ զհատուցումն քո, զոր դու հատուցեր*] *(Սաղմ. ՃԼԶ, 8)*: რომლითა საწყაულითა მიუწყუოთ, მითვცა მოგეწყოს თქუენ [*Որով չափով չափէք՝ չափեսցի քեզ*] *(Մատթ. Է, 2)*: მცნებასა ახალსა მიგცემ თქუენ [*Պատուիրան նոր տամ ձեզ*] *(Յովհ. ԺԳ, 34)*:

მო-ն *և* მი-ն *փոխարինում են իրար միևնույն հատվածում.* ვინ მოგცა შენ ჴელმწიფებაჲ ესე [*Ո՞վ ետ քեզ զիշխանութիւնդ զայդ*] *(Մատթ. ԻԱ, 23 DE)*, ვინ მიგცა შენ ჴელმწიფებაჲ ესე *(նույն տեղում, C խմբ.)*:

123. Նախածանցների կազմությունը: *Այնկողմյան ուղղության նախածանցներից բարդ են* გარდა, შთა, წიაღ-ը: გარდა-*ի կազմությունն է.* გარ-და:

შთა-ն, *ինչպես ասացինք, բաղկացած է երկու նախածանցից* (შე-და): წიაღ-*ի առաջին մասը ներառում է* წი, *որն, ինչպես երևում է, ծագում է* წყლო-*ից, իսկ երկրորդ մասը* ალ-ն *է: Ինչ վերաբերում է այնկողմյան ուղղության նախածանցներին, ապա դրանցից պարզ է միայն* მო-ն, *մյուսները բարդված են* მო-*ի ավելացումով:*

124. Երկու կամ երեք նախածանց միասին: მი *նախածանցին կարող է կցվել* მო, *և կստանանք այս և այն կողմ կատարվող շարժում նշող բարդ նախածանց.* თქუენ მიერ მიმოეფინა სიტყუაჲ იგი უფლისაჲ [*Ի ձէնջ հնչեաց բանն տեառն*] *(Ա Թես. Ա, 8)*: მიმოვალნ ურწყულთა ადგილთა [*Շրջի ընդ անջրդին տեղիս*] *(Մատթ. ԺԲ, 43)*: მიმოიქცეოდა გარემო სოფლებსა მას [*Շրջէր շուրջ զգաւառօքն*] *(Մատթ. Զ, 6)*: *Հաճախ* მიმო-*ին ավելանում է նաև* და *նախածանցը.* ყოველნივე მიმოდაიბნიენეს და ეგაგრე დგა მარტოჲ [*Բոլորը վար թափվեցին և նվագը*

մի այնակ կանգնեցի] *(Եվագր և Շիո)*։ სივლტოლაჲ და მიმოდამალვაჲ *[Փախուստ և թաքնվել այստեղ այնտեղ]* *(Դարձ)*։ მოძულენი ჩუენნი მიმოდამიტაცებდეს ჩუენ *[Ատելիք մեր յափշտակեցին զմեզ]* *(Սաղմ. ԽԳ, 11)*։ ანგელოზი უფლისაჲ გარდამოჴდა შორის აზარიაჲთსა და მიმოდგარა ალი იგი საჭუმილისა მისგან ცეცხლისაჲსა *[Հրեշտակ տեառն էջ ընդ Ազարիանս ի հնոցն այդ և թոթափեաց զբոց հրոյն ի հնոցէ անտի]* *(Դան. Գ, 49)*։ იწყო ქადაგებად და მიმოდადებად სიტყჳსა მის *[Սկսաւ քարոզել յոյժ, և հռչակ հարկանել զբանն]* *(Մարկ. Ա, 45)*։

125. Նախդրայի երկրորդային նշանակությունը։ *Նախդրայի առաջնային նշանակությունն ուղղության և կողմնորոշման նշումն է, որը հստակորեն երևում է շարժում ցույց տվող բայերի հետ գործածվելիս։ Սակայն, շատ դեպքերում նախդրայը նոր, այլ նշանակություն ունեցող բայ է կազմում։ Այսպիսին է, օրինակ.* აღმო-კუეთა *[փորել. բրել]* *և* და-აკუეთა *[կարել, հատել]*, გან-აგო *[կարգել, նախախնամել]* *և* მი-აგო *[հատուցել]*, მოკლა იგი შურდულითა *[սպանեց նրան պարսատիկով]* *և* დაკლა იგი მახჳლითა *[խողխողեց նրա սրով]*, დასცა იგი *[գետին տապալեց նրան]* *և* მისცა მას იგი *[տվեց նրան այն]*, მოიკითხა იგი *[ողջունեց նրան]* *և* წარიკითხა იგი *[կարդաց այն]* *և այլն*։

126. Նախդրայի կատարելացնող հատկությունը։ *Նախդրայը նոր վրացերենում ունի կատարելացնող հատկություն, այսինքն՝ այն կիրառվում է կատարյալ կերպ կազմելիս.* ვწერ—დავწერ, ვაკეთებ—გავაკეთებ *և այլն։ Հին վրացերեն լեզվի հուշարձաններում նկատվում է, որ նախդրայը սկսում է կատարելացնող հատկություն ձեռք բերել։ Օրինակ՝* ნუ შჯით, რაჲთა არა დაისაჯნეთ, რამეთუ რომლითა საშჯელითა შჯიდეთ, მითცა დაისაჯნეთ *[Մի դատիք՝ զի մի դատիցիք. զի որով դատաստանաւ դատիք դատելոց էք]* *(Մատթ. Է, 1—2)*։ *Այստեղ* შჯით*-ը և* შჯიდეთ*-ը անկատար կերպի բայաձևեր են, իսկ* დაისაჯნეთ*-ը՝ կատարյալ կերպի։ Սա միայն սկիզբն է այն երևույթի, որը հետագայում ամբողջական զարգացավ և տարածվեց բայերի ողջ համակարգի վրա։*

127. Միջնարմատում ([illegible]—*բառահատում, տարանջատում*)։ *Այսպես է կոչվում նախդրայի անջատումը բայից որևէ բառով (կամ բառերով), որը (որոնք) դրվում է նախդրայի և բայի միջև։ Օրինակներ՝* სამ გზის გამოეცხადა იესუ თავი თჳსი მოწაფეთა თჳსთა, აღ-რაჲ-დგა მკუდრეთით *[Երիցս անգամ երևեցաւ Յիսուս աշակերտացն՝ յարեալ ի մեռելոց]* *(Յովհ. ԻԱ, 14)*։ მო-ვინმე-უჴდა მას კაცი *[Մատուցեալ ոմն առ նա]* *(Մատթ. ԺԹ, 16)*։ მო-თუ ვინმე-კუდეს უშვილოჲ *[Եթէ ոք*

մեայի անուրդի] (Մատթ. ԺԲ, 24C)։ მო-ნუ-ისთულიან ეკალთაგან ყურ-
ძენი [Միթէ քաղիցե՞ն ի փշոց խաղող] (Մատթ. Է, 16 C)։ ალ-ნუ ვინ-
ანთის სანთელი და ქუეშე შედგის ჭურჭლისა [Մի եթէ գայ ճրագ, զի ընդ
գրուանաւ դնիցի] (Մարկ. Դ, 21)։ შე-ვე ესევითარი-ჰგვანდა ჩუენდა
მღდელთმოძღუარი [Զի այսպիսի իսկ և վայել էր մեզ քահանայապետ]
(Եբր. Է, 26)։ ში-ვიეთმე-უგეს მწიგნობართა [Պատասխանի ետուն ոմա
նք ի դպրացն] (Ղուկ. Ի, 39)։ ალ-რე-გუალე ზემო კერძო [Ի վեր
մատիր] (Ղուկ. ԺԴ, 10)։

Միջնադասանումը պատահում է նաև անդեմ բայաձևերի հետ. შე-
რე-დგინებად მცირედ [Սակաւիկ մի տանել ի ներքս] (Ղուկ. Ե, 3)։
შე-თუმცა-საძლებელ იყო [Եթէ հնար ինձ էր] (Գաղատ. Դ, 15)։ და-ვე-
სჯილ არს [Դատապարտեալ է] (Հռոմ. ԺԴ, 23)։ გან-მე-ყოფილ არსა
ქრისტე [Բաժանեալ ինչ իցէ Քրիստոս] (Ա Կորնթ. Ա, 13)։ წარ-ღათუ-
წირულ ვართ, არამედ არა განწირულება-გჳს [Կարօտեալք այլ ոչ
տարակուսեալք] (Բ Կորնթ. Դ, 8)։ და-ღათუ-ვრდომილ ვართ, არამედ
არა წარწყმედულ ვართ [Զարչարեալք՝ այլ ո՛չ սատակեալք] (Բ Կոր-
նթ. Դ, 9)։

*Միջնադասական գործածության դեպքերը հաճախակի են վաղ
համարժեքներում, իսկ ուշ շրջանում առավել պակաս են։ Օրինակ, հին
խմբագրության բնագրում կարդացվում է.* რომელმან ფრიად მოიღო,
არღარა ემატა, და რომელმან მცირედ, მას და-არაჲ-აკლდა [Թէ որ բա-
զումն առ՝ ոչ առաւելաւ, և որ սակաւն՝ ոչ նուազեցաւ] (Բ Կորնթ.
Ը, 15)։ *Նույն նախադասությունը* XI *դարում խմբագրված տեքստում
այսպես է ներկայացված.* რომელმან ფრიად მიიღო, არაჲ ემატა, და
რომელმან მცირედ, არაჲ დააკლდა: *Հին խմբագրությունում ընթերց-
ված է.* მცირედიცა იგი გან-ვე-ქარდეს [Փոքր ի շատէս խափանեսցի]
(Ա Կորնթ. ԺԳ, 10), *իսկ հետագա շրջանի խմբագրությունում՝* მცირე-
დიცა იგი განქარდესვე (CD *խմբ.*)։ *Նույնպիսին է վիճակը նաև այս-
տեղ.* შე-უკუე-იმოსეთ [Զգեցարուք այսուհետև] (Կողոս. Գ, 12 AB),
შეიმოსეთ უკუე (CD *խմբ.*)։

Ժխտություն: არარაჲ [ոչինչ] *գերադասվում է առաջադասա-
վել* ვე *մասնիկի նկատմամբ.* წინადაცუეთილებაჲ არარაჲ არს და
წინადაუცუეთილებაჲ არა-ვე-რაჲ არს [Թլփատութիւն ոչինչ է, և ան-
թլփատութիւն ոչինչ] (Ա Կորնթ. Է, 19)։ *Այսպես է ընթերցումը հին
(AB) խմբագրության մեջ, իսկ հետագա շրջանի* (CD) *խմբագրու-
թյունում առանց.* ...არარაჲვე არს: *Կամ՝* განჰმარტის ბღუარი არარასა
ზედა და დამოკიდა ქუეყანაჲ არა-ვე-რასა ზედა [Զգեաց զհիւսիս
ոչընչիւ և կախեաց զերկիր ի վերայ ոչնչի] (Յոբ. ԻԶ, 6—7)։

ՍԵՌ

128. Սեռերի համակը: *Սեռերը վրացերենում երեքն են՝ ներգործական (ակտիվ), կրավորական (պասսիվ) և չեզոք (մեդիում)։*

Կրավորական սեռը երկու տեսակ է՝ շարժուն (դինամիկ) և կայուն (ստատիկ)։

Իրարից պարզորոշ զանազանվում են ներգործականի և շարժուն կրավորականի բայաձևերը։ Կայուն կրավորականը և չեզոք սեռը որոշ առանձնահատկություններ ունեն։

Կան և այնպիսի բայեր, որոնք ըստ ձևի պատկանում են որևիցե սեռի, սակայն հակադիր բայաձևեր չունեն և, ըստ էության, անսեռ են։

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ

129. Ներգործական սեռին է պատկանում այն բայը, որն անցողական է և ունի ուղիղ խնդիր։

Ներգործական սեռի բայը հիմքից առաջ կարող է ունենալ դարձության ցուցիչ, որի մասին խոսք կլինի ստորև (§§ 143—145)։ Բացի այդ, հիմքի վերջում այն ունի թեմայի ցուցիչ, որի մասին ևս խոսք կլինի ստորև (§ 150—160)։

Ներգործական սեռի բայը լինում է երկդեմ կամ եռադեմ։ Երկդեմ են՝ დაწერა *[գրեց (նա այն)],* განჰკურნებ *[բուժելու ես (դու նրան)],* განვტეხო *[կկոտրեմ (ես այն)] և այլն։ Եռադեմ են՝* მივეც *[տվեցի (ես նրան այն)],* განუყავ *[բաժանեցիր (դու նրան այն)],* მოჰკვეთა *[կտրեց (նա նրան այն)] և այլն։*

ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ

ՇԱՐԺՈՒՆ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ

130. Շարժուն կրավորականի կազմումը: *Կրավորական սեռի բայերը անանցողական են, միադեմ կամ երկդեմ։*

Շարժուն կրավորականի բայակերտը նախածանց է կամ վերջածանց, ըստ այդմ՝ կրավորականը նախածանցավոր է կամ վերջածանցավոր։ Գոյություն ունի նաև կրավորականի երրորդ տարատեսակ, որի կազմության ժամանակ նախածանց կամ վերջածանց չի կիրառվում, սակայն այն պարզորոշ տարբերվում է ներգործականի համապատասխան բայաձևերից։ Դրանց կոչում ենք անածանց կրավորական։

131. Նախածանցավոր կրավորական: *Նախածանցավոր կրավորականի բայակերտը ձայնավոր է՝* ი *կամ* ე, *որոնք ավելանում են անմիջապես բայահիմքից առաջ: Սրանց նախորդում են դեմքի ցուցիչները (խնդրային բոլոր դեմքերի և 1-ին և 2-րդ ենթակայական դեմքերի), իսկ ամենասկզբում՝ նախաբայը, եթե բայը նախաբայավոր է:* ი *նախածանցով կազմվում են միադեմ բայաձևերը, որոնք համապատասխանում են ներգործական սեռի երկդեմ բայաձևերին, իսկ* ე*-ով՝ երկդեմները, որոնք համապատասխանում են ներգործականի եռադեմ բայաձևերին: Օրինակներ՝*

ი: მო-იკლა [*սպանվեց (նա)*], და-იხატე [*նկարվեցիր (դու)*], და-ვიმალე [*թաքնվեցի (ես)*], მო-იკლნენ [*սպանվեցին (նրանք)*], და-იხატენით [*նկարվեցիք (դուք)*], და-ვიმალენით [*թաքնվեցինք (մենք)*]:

ე: და-ეწერა [*գրվեց (բառը գրատախտակին)*], მი-ეცა [*տրվեց (գիրքը նրան)*], მო-ეგო [*բերվեց (նա ուշքի)*]:

Տարբաղադրյալ եռադեմ բայ, ինչպիսին էլ լինի նրա կազմությունը, կրավորականի վերածվելիս ստանում է ე. შესძინა [*ձեռք բերեց (նա նրան այն)*], შეეძინა [*ձեռք բերվեց (նա նրան)*], განუყო [*բաժանեց (նա նրան այն)*], განეყო [*բաժանվեց (նա նրան)*], განუღო [*բացեց*] (*նա նրան դուռը*), განეღო [*բացվեց*] (*դուռը նրան*): *Իսկ օրինակ վերցնենք միևնույն բայահիմքը.* დაწერა [*գրեց (նա այն)*]—დაიწერა [*գրվեց (այն)*], მისწერა [*գրեց (նա նրան նամակ)*]—მიეწერა [*գրվեց (նամակ նրան)*], დააწერა [*գրել տվեց (նա գրատախտակին բառ)*]—დაეწერა [*գրվեց (բառ գրատախտակին)*]: *Ընդհանրապես, կրավորականի վերածվելիս բայը մեկ դեմք կորցնում է. եռադեմ ներգործականը դառնում է երկդեմ կրավորական* (მისწერა—მიეწერა), *երկդեմը՝ միադեմ* (დაწერა—დაიწერა):

132. Վերջածանցավոր կրավորական: *Հին վրացերենում վերջածանցավոր կրավորականը ներկայացված է երկու ածանցով՝* ენ *և* დ, *որոնցից հնագույնն է* ენ*-ը, իսկ* დ*-ն հետագայում ծագել է* ნ*-ից: Երկուսն էլ անմիջականորեն ավելանում են բայահիմքին՝ վերջից: Վերջածանցավոր բայերը մեծ մասամբ անվանական են:*

ენ *հնագույն կրավորակերտ ածանցը պահպանվել է որոշակի բայերում, որոնց հիմքի վերջահանգներն են՝* მ, ვ, დ, თ, ქ, ს, ც, ღ, ხ: *Օրինակներ՝* დუმნა, და-; განცრუვნა, ალყუავნა; განდიდნა, დაყუდნა. გამოცხადნა, შეშფოთნა; განჭაბუკნა, დაგლახაკნა, განმწჳსნა; განერცნა, განმტკიცნა, განკაცნა; განლაღნა, შეწუხნა (შე-ღათუ-წუხნა) (*Մատթ. ԺԴ, 9*) *և այլն: Թվում է, նույնպիսի կազմություն ունի և* გან-თე-ნა-ն

[լուսանալ], որի վերջածանցի ნ*-ն միջին վրացերենում դարձել է հիմքային, որի հետևանքով էլ հետագայում այն ընդունել է* გათენდა *տեսքը:*

Այս բայերում ամբողջական տեսքով ენ *կրավորակերտը հանդես է գալիս միայն անցյալ կատարյալի 1-ին և 2-րդ դեմքերում* (შევწუხენ, შესწუხენ, შევწუხენით, შესწუხენით) *և II հրամայականի 2-րդ և 3-րդ դեմքերում՝* შეწუხენ, შეწუხენით; შეწუხენინ: *Մնացած դեպքերում* ე *ձայնավորը ամենուրեք դուրս է ընկնում հաջորդ ձայնավորի ազդեցությամբ, և մնում է միայն* ნ*-ն.* შევწუხნები, შევწუხნე *և այլն:*

133. დ կրավորակերտը: *Ինչպես ասացինք, վերջածանցավոր կրավորականը մեծ մասամբ կազմվում է անուններից, որոնցից այս նպատակով գլխավորապես գործածվում են ածականները: Սրանցից շատերի հիմքը վերջանում է թրթռուն հնչյուններով* (ლ, რ)*, որոնց ազդեցությամբ էլ արդեն հին վրացերենում* ნ *կրավորակերտը փոխվել է* დ*-ի: Այդպիսի ածականներ են՝* ლ: ბნელ-ი, ნათელ-ი, მართალ-ი, ახალ-ი, ძუელ-ი, ცოცხალ-ი, სნეულ-ი, მაღალ-ი, მდაბალ-ი, მხიარულ-ი, ჴორციელ-ი *և այլն:* რ: ბერ-ი, ძლიერ-ი, ოჴერ-ი, ძჳრ-ი *և այլն:*

Այս և նմանատիպ վերջահանգավոր հիմքերից կազմված բայերի համար արդեն հին վրացերենում իբրև կրավորակերտ հանդես է գալիս დ*-ն.* დაბნელდა, განნათლდა, განმართლდა, განახლდა, დაძუელდა, განცოცხლდა, დასნეულდა, აღმაღლდა, დამდაბლდა, განმხიარულდა, განჴორციელდა, დაბერდა, განძლიერდა, აღოჴრდა *և այլն:*

Եթե անունը ամփոփվող է, ապա բայակազմության ժամանակ կիրառվում է նրա ամփոփված ձևը. მართალ-ი—მართლ-ისა: გან-მართლ-და; მაღალ-ი—მაღლ-ისა: აღმაღლდა; ახალ-ი—ახლ-ისა: გან-ახლ-და *և այլն:*

Կրավորականի կազմության ժամանակ ე*-ով վերջացող անունների* ე*-ն վերջատվում է.* მწვანე, მწარე, მცირე, მოკლე—განმწვანდა, განმწარდა, აღმცირდა, შემოკლდა:

Ինչպես տեսանք, დ *վերջածանց են ստանում անվանակազմ բայերը, սակայն պատահում են և բացառություններ. որոշ պարզ բայերի կրավորականը ևս կազմվում է* დ*-ով՝* დაჰჴსნა—დაჰჴსნდა *[ընդարձակվել]* (დაჰჴსნდეს ძარღუნი მკლავთა მისთანი *[Ընդարձակվեն նրա բազուկների ջլերը]* *(Ծանձթ.)*, განტეხა—განტყდა *[կոտրվեց]* *(մասնակի առնմանությամբ՝* *განტხდა*-ի փոխարեն)*, განხეთქა—განხთქდა *[պատռվեց, բաժանվեց]* *(հետագայում՝* განსთქდა), გამოაჩინა—გამოჩნდა *[երևան եկավ]*, დაავიწყა—დაავიწყდა *[մոռացվեց]*:

134. ენ-վերջածանցավոր և დ-վերջածանցավոր կրավորականների տարբերությունը: *Վերջածանցավոր կրավորականի* ენ-*վերջածանցավոր և* დ-*վերջածանցավոր բայաձևերի միջև մեկ տարբերություն է հայտ գալիս. անցյալ կատարյալի 1-ին և 2-րդ դեմքերի համար, ինչպես և II հրամայականի 2-րդ դեմքի համար, բնութագրական է* ენ-*ը.* შევწუხენ, შესწუხენ; შევწუხენით, შესწუხენით; შეწუხენ, შეწუხენით: *Մինչդեռ* დ-*վերջածանցավոր բայաձևերն անցյալ կատարյալի 1-ին և 2-րդ դեմքերում ստանում են* ი *վերջավորություն.* აღვმაღლდი, აღმაღლდი, აღმაღლდა, აღვმაღლდით, აღმაღლდით, აღმაღლდეს: II *հրամայական՝* აღმაღლდი, აღმაღლდით; აღმაღლდინ, აღმაღლდედ:

135. Նախածանցի և վերջածանցի փոխարինելիությունը: *Երբեմն միևնույն հիմքից կրավորականը կազմվում է և՛ նախածանցով, և՛ վերջածանցով: Օրինակ, Ջրուճ-Պարխալյան ավետարաններում կարդացվում է.* დამტკიცნეს ყოველი სიტყუაჲ [*Հաստատեսցի ամենայն բան*] (*Մատթ. ԺԸ, 16*), *որին Ադիշի ավետարանում համապատասխանում է.* დაემტკიცოს ყოველი სიტყუაჲ: *Գործք առաքելոցի հնագույն խմբագրությունում ընթերցվում է.* განემტკიცნეს ფერჴნი მისნი და კოჭნი [*Հաստատեցան բարձք նորա և սրունք*] (*Գ, 7*), *իսկ հետագայի խմբագրությունում՝* განუმტკიცნეს ფერჴნი მისნი და კოჭნი: *Կարելի է մտածել, թե այս բայաձևերում* ნეს *վերջավորությունը միևնույնն է, իրականում, սակայն, այդպես չէ.* განემტკიცნეს-*ի մեջ* ნ-*ն հոգնակերտ է (եզակիում այն չկա՝* განემტკიცა მას ფერჴი), *իսկ* განუმტკიცნეს-*ի մեջ՝ կրավորակերտ և հանդես է գալիս նաև եզակի թվում.* განუმტკიცნა მას ფერჴი:

Նախածանցավոր և վերջածանցավոր կրավորականի փոխարինելիության օրինակ է նաև հետևյալը. დედაკაცსა მას შეეშინა და ძრწოდა [*Կինն զարհուրեալ և դողացեալ*] (*Մարկ. Ե, 33*), *որի փոխարեն այլ խմբագրությունում առկա է.* დედაკაცი იგი შეშინდა და ძრწოდა: შეეშინა-*ն երկդեմ է ծագումով, իսկ* შეშინდა -*ն՝ միադեմ: Նույնպիսի տարբերություն է և այստեղ.* გამოეცხადა [*երևեցաւ (նա նրան)*] *և* გამოცხადნა [*երևաց (նա)*]:

136. Երրորդ տիպի կրավորական (անածանց): *Երրորդ տեսակի կրավորականը ո՛չ կրավորակերտ նախածանց ունի և ո՛չ էլ վերջածանց, սակայն նրա բայաձևերը ամենուր տարբերվում են ներգործական սեռի համապատասխան բայաձևերից և երբեք չեն շփոթվում: Նրանց համար բնութագրական է հիմքային ներքին ձայնավորը, սակայն այս ձայնավորն էլ հանդես է գալիս միայն II բայախմբի երկու բայաշարքե-*

րում, իսկ այլուր կորչում է հաջորդ ձայնավորի ազդեցությամբ, որը կամ դեմքի ցուցիչ է (նաև՝ դեմքի ցուցիչի ձայնավոր), կամ՝ բայաշարքի ցուցիչ։ Ներքին ձայնավորով կազմված հիմքը ე-ով է ներկայանում անցյալ կատարյալ և II հրամայական բայաշարքերում։

Այս տիպի են, ամենից առաջ, ձայնավորափոխ բայերը, այսինքն՝ այն բայերը, որոնք ներգործական սեռում I բայախմբի բայաձևերում ունեն ე, իսկ II բայախմբում՝ ი, ինչպես օրինակ. მოვსდრეკ—მოვდრიკე [հակեցի, կորացրեցի]։ Այս խմբի բայերից մի քանիսը ე են առնում առաջին բաղաձայնից հետո. მოვდერკ, მოსდერკ, սակայն՝ მოდრკა; მოვდერკით, მოსდერკით, բայց՝ მოდრკეს։ Հրամայական՝ მოდერკ, მოდერკით; მოდერკონ, սակայն՝ მოდრკედ։ Ինչպես նշեցինք, այլ բայաշարքերում այս հիմքային ე-ն կորչում է. მოდრკების, მოდრკეს և այլն։

Այս խմբի բայերն են. შევჰკრებ—შევკრიბე [հավաքեցի], დავჰშრეტ—დავშრიტე [մարեցի], მოვსწყუედ—მოვწყჳდე [կոտորեցի, ոչնչացրեցի], განვსწმედ—განვწმიდე [մաքրեցի]։ Սրանցից შეკრება բայը ներգործական սեռում պահանջում է հոգնակի թվով դրված ուղիղ խնդիր, իսկ կրավորականում՝ հոգնակի թվով ենթակա, որը, սակայն, կարող է դրվել և III դեմքի եզակիով, եթե ենթական հավաքական անուն է. შეკრბა (ერი [ժողովուրդ; զորք]), შევკრბით, შეჰკრბით, შეკრბეს։ მოწყუედა բայը ամփոփվելով կրավորականում կորցնում է ոչ վանկարար უ-ն. მოწყდეს, მოვწყდეთ, მოსწყდეთ։

Ինչ վերաբերում է განწმედა բային, նրա կրավորականը թե՛ սաստիկի განწმდების ձևն է, թե՛ ენ-վերջավորությամբ ձևը՝ განწმიდნების, განწმიდნა։ Այստեղից հրամայականի 2-րդ դեմքի բայաձևն է՝ განწმიდენ, զուգահեռաբար՝ განწმიდნი։ Այս խմբին են պատկանում նաև այլ բայեր, որոնք են, վկայակոչվածների օրինակով, անցյալ կատարյալում և II հրամայականում հիմքում ე ունեն. აღდგების [կանգնում է] (გან-, წარ-), დაადგრების [դրվում է], განჰკრთების [զգում է (վախից)], მოკუდების [մեռնում է], განტფების [տաքանում է], დაშურების [աշխատում է, չարչարվում է], დასცხრების [հանգստանում է], დაშდების [մնում է] (մասնակի առնմանությամբ՝ დაშთების), წარუძლუების [առաջնորդում է], ჴდების [ընթանում է] (მო-, გან-, შე-, გარდა-, წარ-, გარდმო-), განჴმების [չորանում է], დაჯდების [նստում է], დასხდების [նստում է (զորքը, ամբոխը)] և այլն։

Այսպիսի բայերից մի քանիսն արդեն հին վկայություններում անցյալ կատարյալում և II հրամայականում կորցրել են ներքին ձայնավորը և փոխարենը առնում ი վերջավորությունը. მე დავშთი ეკალთა შორის

ეარდისათა [Նա մնայի վարդի փշերի միջև] (Դարձ.)։ Հին նորմերի համաձայն պետք սպասելի էր დავშედ։

ԿԱՅՈՒՆ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ

137. Կայուն կրավորական բայերի բայաշարքերը պակասավոր են. մի խումբն ունի միայն ներկա և II բայախմբի բայաշարքեր, իսկ մյուս խումբը՝ միայն I բայախմբի բայաշարքեր, առանց II բայախմբի։ Բոլոր կայուն կրավորական բայերը առանց նախդրաչի են, ուստի զուրկ են ուղղության և կողմնորոշում արտահայտելու ունակություններից։

Առաջին խմբի կայուն կրավորականները ներկայում հիմքի վերջում ստանում են վերջածանց, որին էլ կցվում են 3-րդ դեմքի ցուցիչները (ს՛ եզակիում, ან՛ հոգնակիում) և თ հոգնակերտը (1-ին և 2-րդ դեմքերում)։ II բայախմբի բայաձևերի կազմությամբ հարում են նախածանցավոր կրավորականներին, և քանի որ վերջիններս երկդեմ են (թեկուզ և ծագումով), կայուն կրավորականներում էս իրրև կրավորակերտ հանդես է գալիս ე-ն։ Օրինակ. ვჰგონიე—ვეგონე, ჰგონიე—ეგონე, ჰგონიეს—ეგონა, ვჰგონიეთ—ვეგონენით, ჰგონიეთ—ეგონენით, ჰგონიან—ეგონენეს։ Այս խմբի բայերն են. ასმიეს—ესმა, ჰგიეს—ეგო, უპყრიეს—ეპყრა, ჰმოსიეს—ემოსა, უფლიეს—ეფლო, ჰფლიეს—ეფლა (სადა-იგი ეფლა ბუში წმ. რაჟდენისი [Որտեղ թաղված էր սուրբ Ռաժդենի գլուխ]) (Ջուանշեր, 156), ჰრტყიეს—ერტყა (სარტყელი ტყავისაჲ ერტყა წელთა მისთა [Գոտի մաշկեղէն ընդ մէջ իւր]) (Մատթ. Գ, 4), სტევიეს—ეტია (მტკუარი ვერღარა ეტია ნაღინებსა მისსა [Մտկվարին (Կուրը) էլ չէր տեղավորում նրա ալիքները]) (Մատ. 193), აცუიეს—ეცუა: ეცუა ბეჭ [շղթայված էր] (Դարձ.)։

Կայուն կրավորականների շարքին են պատկանում և այլ կազմության բայեր.

Ծանոթություն: *II հաճախականի բայաձևերը երբեմն գործածվում են և հրամայականի համար, սակայն այս դեպքում սահմանականի և հրամայականի միջև ձևական տարբերություն չկա. ենթակայական ցուցիչ է անհրաժեշտ նաև հրամայական բայաձևին։ Օրինակներ.* სამ გზის წელიწადსა დღესასწაული ჰყვეთ ჩემი [*Երիս ժամանակս ի տարւոջ արասջիք ինձ տօնս*] (*Ելք ԻԳ, 14*)։ უკუეთუ წული იყოს, მოჰკლით იგი [*Թէ արու իցէ՝ սպանջիք զնա*] (*Ելք Ա, 16*)։

ա) Ուղիղ խնդիրը եզակի է (նա)

Եզ.	*2.3*	მოკალ	[*սպանի՛ր*]	დაწერე	[*գրի՛ր*]	ალავსე [*լցրու՛*]
	3.3	მოკალნ		დაწერენ		ალავსენ
Հոգն.	*2.3*	მოკალთ		დაწერეთ		ალავსეთ
	3.3	მოკლედ		დაწერედ		ალავსედ

բ) Ուղիղ խնդիրը հոգնակի է (նրանք)

Եզ.	*2.3*	მოკლენ	დაწერენ	ალავსენ
	3.3	მოკლენინ	დაწერენინ	ალავსენინ
Հոգն.	*2.3*	მოკლენ(ი)თ	დაწერენ(ი)თ	ალავსენ(ი)თ
	3.3	მოკლნედ	დაწერნედ	ალავსნედ

II ստորադասական (II ապառնի)

ա) Ուղիղ խնդիրը եզակի է (նա)

Եզ.	*1.3*	მოვკლა	[*կսպանեմ*]	დავწერო	[*կգրեմ*]	ალვავსო	[*կլցնեմ*]
	2.3	მოჰკლა		დასწერო		ალავსო	
	3.3	მოკლას		დაწეროს		ალავსოს	
Հոգն.	*1.3*	მოვკლათ		დავწეროთ		ალვავსოთ	
	2.3	მოჰკლათ		დასწეროთ		ალავსოთ	
	3.3	მოკლან		დაწერონ		ალავსონ	

բ) Ուղիղ խնդիրը հոգնակի է (նրանք)

Եզ.	*1.3*	მოვკლნე	დავწერნე	ალვავსნე
	2.3	მოჰკლნე	დასწერნე	ალავსნე
	3.3	მოკლნეს	დაწერნეს	ალავსნეს
Հոգն.	*1.3*	მოვკლნეთ	დავწერნეთ	ალვავსნეთ
	2.3	მოჰკლნეთ	დასწერნეთ	ალავსნეთ
	3.3	მოკლნენ	დაწერნენ	ალავსნენ

172. **ევ-վերջածանցավոր բայերի առանձնահատկությունը: ევ-**
վերջածանցավոր բայերի (բացի ვაკურთხევ [*օրհնում եմ*] *և* ვსძლევ [*հաղթում եմ*] *բայերից)*[1] *վերջածանցը* II *բայախմբի բայաշարքերում*

---

[1] *Այս բայերի* ევ *վերջածանցը* II *բայախմբի ձևերում դուրս է ընկնում.* აკურთხევს—აკურთხა, სძლევს—სძლო:

վերածվում է ავ-ի, ընդ որում՝ ածանցային ვ-ն կորչում է և մնում է ი-ն. განვაბნევ [ցրում եմ]—განვაბნიე [ցրեցի], განაბნიე, განაბნია և այլն (განვაბნიევ, განაბნიევ, განაბნიევა ձևերի փոխարեն)։ Այդ ვ-ն հանդես չի գալիս և այն ժամանակ, երբ բայի հետ համաձայնող ուղիղ խնդիրը դրված է ნ-ով հոգնակիով. განვაბნიენ, განაბნიენ, განაბნინა և այլն։

Օրինակներ՝ გარდამოსთხინა ძლიერნი საყდართაგან [*Քակեաց զհզօրս յաթոռոց*] *(Ղուկ. Ա, 52)*, ქარმან განაქრინეს იგინი და ნიავ-ქარმან განაბნინეს იგინი [*Հողմք տարցին զնոսա, և մրրիկք ցրուեսցեն* *(Եսայի, ԽԱ, 16)*։

173. ობ-ցուցիչավոր բայերի առանձնահատկությունը: *Որոշ ობ-ցուցիչավոր բայեր II բայախմբի բայաշարքերում բայահիմքի վերջում առնում են* ვ, *որը* ო-*ից առաջ կորչում է.* შევამკობ [*հնձում եմ*]—შევამკევ [*հնձեցի*], შეამკევ, შეამკო, შევამკევით, შეამკევით, შეამკევს; შევამკო იგი—შევამკენ იგინი: *Այսպես են խոնարհվում նաև.* შევამთობ [*խեղդում եմ*]—შევამთევ [*խեղդեցի*], დავადნობ [*հալում եմ*]—დავადნევ [*հալեցի*], დავალტობ [*թացացնում եմ*]—დავალტევ [*թացացրեցի*], განვაგრძობ [*շարունակում եմ*]—განვაგრძევ [*շարունակեցի*] (განვაგრძევნ სიტყუანი ჩემნი [*Ուսուցի զբանս իմ*]) *(Առակք, Ա, 24)*, განვაკრთობ [*զարհուրեցնում եմ*]—განვაკრთევ [*զարհուրեցրեցի*] (განვაკრთევნე [*զարհուրեցից*]) *(Եսայի, ԽԲ, 14)*, დავაცხრობ [*հանգստացնում եմ*]—დავაცხრევ [*հանգստացրեցի*] *և այլն:*

174. Եռադեմ բայեր: *Եռադեմ բայն ունի երկու խնդիր՝ ուղիղ և անուղղակի: Ինչպես գիտենք, ուղիղ խնդրի 3-րդ դեմքը II բայախմբի բայաձևերում բոլորովին չի արտացոլվում, իսկ I բայախմբի բայաձևերում արտացոլվում է որոշակի դեպքերում: Ինչ վերաբերում է անուղղակի խնդրին, նրա դեմքը մշտապես արտացոլվում է և՛ I, և՛ II բայախմբի բայաշարքերում: Նրա ցուցիչը նույնն է, ինչ որ I բայախմբում ուղիղ խնդրի ցուցիչը, այսինքն՝* ჰ-*ն կամ նրա հնչյունափոխությունը՝ ձայնավորներից առաջ ոչինչ (ենթադրվում է, որ* ჰ-*ն կորել է), իսկ բաղաձայններից առաջ՝* ს. *Այսպիսի բայեր են.*

ჰკითხავს [*հարցնում է (նա նրան այն)*]—ჰკითხა [*հարցրեց (նա նրան այն)*], დამოჰკიდებს [*կախում է*]—დამოჰკიდა [*կախեց*], შეჰვედრებს [*աղաչում է*]—შეჰვედრა [*աղաչեց*], მიჰყიდის [*վաճառում է*]—მიჰყიდა [*վաճառեց*], წარჰკვეთს [*հատում է*]—წარჰკვეთა [*հատեց*], სთხოვს [*խնդրում է (նա նրան այն)*]—სთხოვა [*խնդրեց (նա նրան այն)*], დასდებს [*դնում է (նա նրան ձեռք)*]—დასდვა [*դրեց (նա նրան ձեռք)*],

დასწერს [գրում է (նա նրան խաչ, խաչակնքում է)]—დასწერა [գրեց (նա նրան խաչ, խաչակնքեց)] և այլն։

II բայախմբի բայաձևերի ձևերում հաճախ բայի երեք դեմքերն էլ կարող են արտահայտվել. Նման օրինակ է მივსცენ-ը [կտամ], որը արտահայտ է տարանջատված՝ მი-ვ-ს-ც-ენ։ Այստեղ მი-ն նախդիր է, ვ-ն՝ ենթակայական դեմքի ցուցիչ, ს-ն՝ 3-րդ անուղղակի-խնդրային դեմքի ցուցիչ, ც-ն՝ բայահիմք, իսկ ენ-ը՝ ուղիղ խնդրի հոգնակիության ցուցիչ։ Հետևաբար, նշված է ենթակայի և անուղղակի խնդրի դեմքը, և ուղիղ խնդրի թիվը։

175. Խոնարհման նմուշներ.

Անցյալ կատարյալ

Եզ. *1.3.3*	ალევკიდე	მივყიდე	დავსწერე[1]	მივეც[2]
	[կախեցի]	*[վաճառեցի]*	*[գրեցի]*	*[տվեցի]*
2.3.3	ალკიდე	მიჰყიდე	დასწერე	მიეც (*მიჰეც)
3.3.3	ალკიდა	მიჰყიდა	დასწერა	მისცა
Հոգն. *1.3.3*	ალევკიდეთ	მივყიდეთ	დავსწერეთ	მივეც(ი)თ
2.3.3	ალკიდეთ	მიჰყიდეთ	დასწერეთ	მიეც(ი)თ
3.3.3	ალკიდეს	მიჰყიდეს	დასწერეს	მისცეს

բ) Ուղիղ խնդիրը հոգնակի է (նրանք)

Եզ. *1.3.3*	ალევკიდენ	მივყიდენ	დავსწერენ	მივსცენ
2.3.3	ალკიდენ	მიჰყიდენ	დასწერენ	მისცენ
3.3.3	ალკიდნა	მიჰყიდნა	დასწერნა	მისცნა
Հոգն. *1.3.3*	ალევკიდენ(ი)თ	მივყიდენ(ი)თ	დავსწერენ(ი)თ	მივსცენ(ი)თ
2.3.3	ალკიდენ(ი)თ	მიჰყიდენ(ი)თ	დასწერენ(ი)თ	მისცენ(ი)თ
3.3.3	ალკიდნეს	მიჰყიდნეს	დასწერნეს	მისცნეს

II Հաճախական

ա) Ուղիղ խնդիրը եզակի է (նա)

Եզ. *1.3.3*	ალევკიდი	მივყიდი	დავსწერი	მივსცი
	[կախեցի]	*[վաճառեցի]*	*[գրեցի]*	*[տվեցի]*
	(հաճախ)	*(հաճախ)*	*(հաճախ)*	*(հաճախ)*
2.3.3	ალკიდი	მიჰყიდი	დასწერი	მისცი
3.3.3	ალკიდის	მიჰყიდის	დასწერის	მისცის

1 დავწერე [ես նրան] երկրորդ է, დავსწერე [ես նրան այն]՝ նույնպես (დავსწერე მე მას ჯვარი [գրեցի ես նրան խաչ, խաչակնքեցի])։

2 Հաեմետյան հուշարձաններում կլինի მიჰეც, իսկ խանմետյաններում՝ მიხეც։

Հոգն. **1.3.3** ალვჰკიდით	მივჰყიდით	დავსწერით	მივსცით
2.3.3 ალჰკიდით	მიჰყიდით	დასწერით	მისცით
3.3.3 ალჰკიდიან	მიჰყიდიან	დასწერიან	მისციან

բ) Ուղիղ խնդիրը հոգնակի է (նրանք)

Եզ. **1.3.3** ალვჰკიდნი	მივჰყიდნი	დავსწერნი	მივსცნი
2.3.3 ალჰკიდნი	მიჰყიდნი	დასწერნი	მისცნი
3.3.3 ალჰკიდნის	მიჰყიდნის	დასწერნის	მისცნის
Հոգն. **1.3.3** ალვჰკიდნით	მივჰყიდნით	დავსწერნით	მივსცნით
2.3.3 ალჰკიდნით	მიჰყიდნით	დასწერნით	მისცნით
3.3.3 ალჰკიდნიან	მიჰყიდნიან	დასწერნიან	მისცნიან

II հրամայական: *Այս բայաշարքի ձևերը լիովին համընկնում են անցյալ կատարյալի 2-րդ դեմքի համապատասխան բայաձևերի հետ.* ალჰკიდე, მიჰყიდე, დასწერე, მიეც:

II ստորադասական (II ապառնի)

ա) Ուղիղ խնդիրը եզակի է (նա)

Եզ. **1.3.3** ალვჰკიდო	მივჰყიდო	დავსწერო	მივსცე
[կկախեմ]	*[կվաճառեմ]*	*[կգրեմ]*	*[կտամ]*
2.3.3 ალჰკიდო	მიჰყიდო	დასწერო	მისცე
3.3.3 ალჰკიდოს	მიჰყიდოს	დასწეროს	მისცეს
Հոգն. **1.3.3** ალვჰკიდოთ	მივჰყიდოთ	დავსწეროთ	მივსცეთ
2.3.3 ალჰკიდოთ	მიჰყიდოთ	დასწეროთ	მისცეთ
3.3.3 ალჰკიდონ	მიჰყიდონ	დასწერონ	მისცენ

բ) Ուղիղ խնդիրը հոգնակի է (նրանք)

Եզ. **1.3.3** ალვჰკიდნე	მივჰყიდნე	დავსწერნე	მივსცნე
2.3.3 ალჰკიდნე	მიჰყიდნე	დასწერნე	მისცნე
3.3.3 ალჰკიდნეს	მიჰყიდნეს	დასწერნეს	მისცნეს
Հոգն. **1.3.3** ალვჰკიდნეთ	მივჰყიდნეთ	დავსწერნეთ	მივსცნეთ
2.3.3 ალჰკიდნეთ	მიჰყიდნეთ	დასწერაეთ	მისცნეთ
3.3.3 ალჰკიდნენ	მიჰყიდნენ	დასწერნენ	მისცნენ

176. **Հնագույն կազմության բայեր:** *Կան մի շարք բայեր, որոնք եր-*

կու անուն են ստանում՝ ենթակա և ուղիղ խնդիր, սակայն ըստ խոնարհման համապատասխանում են եռադեմ բայերին՝ նրանց II բայախմբի բայաձևերում հանդես է գալիս 3-րդ անուղղակի-խնդրային դեմքի ցուցիչ։ Այդպիսին են հետևյալ բայերը. დაჰბადა [նա ծնեց], აღჰმართა, დაჰფლა, დაჰმარხა, დაჰნერგა, დაჰბეჭდა, დასთესა, დაჰჭშა և այլն։ Որ դրանք ծագումով եռադեմ են՝ հաստատվում է նրանցով կրավորական սեռի բայաձևերի կազմությամբ։ Նրանց, ինչպես սովորաբար եռադեմ բայերի, կրավորականը կազմում է ე-ով. დაჰბადა—დაებადა (შაბათი კაცისათჳს დაებადა, და არა თუ კაცი შაბათისათჳს [Շաբաթ վասն մարդոյ եղև, և ոչ թէ մարդ վասն շաբաթու]) (Մարկ. Բ, 27), აღჰმართა—აღემართა (აღდგა მჴელეული ჩემი და აღემართა [Կանգնեցաւ որայն իմ, եկաց ուղղորդ]) (Ծննդ. ԼԷ, 7), დასთესა—დაეთესა (რომელ-იგი ეკალთა შორის დაეთესა, ესე არს [Որ ի մէջ փշոցն սերմանեցաւ, այն է]) (Մատթ. ԺԳ, 22), და(ჳ)ასრულა [կատարեց, ավարտեց]—დაესრულა [կատարվեց, ավարտվեց] և այլն։ Ուստի անկասկած է, որ დაჰბადა-ի տիպի բայերը, որոնք հին վրացերենում երկու անուն են ստանում (երկդեմ են), հնագույն ժամանակներում եռանուն են եղել (եռադեմ), որոնցից մեկը՝ ժամանակավորապես անուղղակի խնդիրը, հետագայում կորել է, սակայն այդ բայերը պահպանել են նախկին տեսքը։

177. Խոնարհման նմուշներ.

II ԲԱՅԱԽՈՒՄԲ

Անցյալ կատարյալ

ա) Ուղիղ խնդիրը եզակի է (նա)

Եզ.	1.(3).3 დავჰბადე[1] [արարեցի]	აღვჰმართე[1] [բարձրացրեցի]	დავსთესე[1] [ցանեցի]
	2.(3).3 დაჰბადე	აღჰმართე	დასთესე
	3.(3).3 დაჰბადა	აღჰმართა	დასთესა
Հոգն.	1.(3).3 დავჰბადეთ	აღვჰმართეთ	დავსთესეთ
	2.(3).3 დაჰბადეთ	აღჰმართეთ	დასთესეთ
	3.(3).3 დაჰბადეს	აღჰმართეს	დასთესეს

---

[1] Հանմետյան հուշարձաններում դրանց փոխարեն կլինեն. დაჰებადე, აღჰემართე, დაჰეთესე, իսկ խանմետյաններում՝ დახებადე, აღხემართე, დახეთესე։

բ) Ուղիղ խնդիրը հոգնակի է (նրանք)

Եզ.	*1.(3).3* დავჰბადენ	ალევჰმართენ	დავსთესენ
	2.(3).3 დაჰბადენ	ალჰმართენ	დასთესენ
	3.(3).3 დაჰბადნა	ალჰმართნა	დასთესნა
Հոգն.	*1.(3).3* დავჰბადენ(ი)თ	ალევჰმართენ(ი)თ	დავსთესენ(ი)თ
	2.(3).3 დაჰბადენ(ი)თ	ალჰმართენ(ი)თ	დასთესენ(ი)თ
	3.(3).3 დაჰბადნეს	ალჰმართნეს	დასთესნეს

II ժամանակաձևում *կլինի՝* დავჰბადი, დავჰბადნი; ალევჰმართი, ალევჰმართნი; დავსთესი, დავსთესნი *և այլն: II հրամայականի բայաձևերը համընկնում են անցյալ կատարյալի հետ, իսկ* **II ստորադասականի (II ապառնիի)** *բայաձևերը կլինեն՝* დავჰბადო, დავჰბადნე; ალევჰმართო, ალევჰმართნე; დავსთესო, დავსთესნე *և այլն:*

178. **Խառն ստորադասական (խառն ապառնի):** *Խառն ստորադասականը (խառն ապառնին) խիստ ինքնատիպ բայաձև է: Այն կազմվում է II բայախմբի հիմքից, սակայն այդ հիմքին կցվում է* ოდ *ածանցը, որը վերցված է I բայախմբից: Շարահյուսական կապի առումով խառն ստորադասականը (խառն ապառնին) մերձ է II բայախմբի բայաձևերին. անցողական բայի հետ ենթական դրվում է պատմողական հոլովով, իսկ ուղիղ խնդիրը՝ անվանականով: Սակայն գոնե մեկ ձևաբանական հատկանիշի այն մոտիկ է կանգնած I բայախմբի բայաձևերին. կերպավոր բայերը այս բայաձևերում անկատար կերպի են, ինչպես I բայախմբի բոլոր բայաձևերում: Օրինակ՝* რაჲთა მღდელმან შეწიროდის მსხუერპლი [*Որպեսզի քահանան զոհ զոհի*], რაჲთა მღდელმან შეწირონოდის მსხუერპლნი [*Որպեսզի քահանան զոհեր զոհի*], რაჲთა მღდელთა შეწირონოდიან მსხუერპლნი [*Որպեսզի քահանաները զոհեր զոհեն*]:

Խոնարհման նմուշներ.

ա) Ուղիղ խնդիրը եզակի է (նա)

Եզ.	*1.3* შევწიროდი [*կզոհեի*]	განვაბნიოდი [*կցրեի*]	დავიბანოდი [*կլվանայի*]
	2.3 შესწიროდი	განაბნიოდი	დაიბანოდი
	3.3 შეწიროდის	განაბნიოდის	დაიბანოდის
Հոգն.	*1.3* შევწიროდით	განვაბნიოდით	დავიბანოდით
	2.3 შესწიროდით	განაბნიოდით	დაიბანოდით
	3.3 შეწიროდიან	განაბნიოდიან	დაიბანოდიან

բ) Ուղիղ խնդիրը հոգնակի է (նրանք)

Եզ.	*1.Յ* შევწირნოდი	განვაბნინოდი	დავიბანნოდი
	2.Յ შესწირნოდი	განაბნინოდი	დაიბანნოდი
	3.Յ შეწირნოდის	განაბნინოდის	დაიბანნოდის
Հոգն.	*1.Յ* შევწირნოდით	განვაბნინოდით	დავიბანნოდით
	2.Յ შესწირნოდით	განაბნინოდით	დაიბანნოდით
	3.Յ შეწირნოდიან	განაბნინოდიან	დაიბანნოდიან

Վկայություններ հուշարձաններից. და შჯიდენ ყოველსა ჟამსა ერსა ამას და ყოველი სიტყუაჲ მძიმჱ მოგართოდიან შენ და სიტყუაჲ ადვილი განსაჯოდიან მათ და აღგიმცირონოდიან და შეგეწეოდიან შენ [*Դատեսցին զժողովուրդդ յամենայն ժամ. եւ զբանն ինչ մեծ, որ քեզ հասուցանիցեն. և զփոքր ինչ դատաստան՝ ինքեանք դատեսցին. և թեթեւացուսցեն ի քէն, եւ եղիցին քեզ օգնականք*] (*Ելք, ԺԸ, 22*)։ განიძარცოდიან სამოსელი მათი, რომლითა-იგი ჰმსახურებდეს მათ, და დადვოდიან იგი საჯდომელსა მას წმიდათასა და შეიმოსოდიან სამოსელი სხუაჲ [*Մերկասցին զպատմուճանս իւրեանց որով պաշտիցեն. եւ դիցեն զնոսա ի սենեակսն սրբութեանց, եւ զգեցցին այլ պատմուճանս*] (*Եզեկ. ԽԴ, 19*)։ უბიწონი შეწირონოდიან [*Անարատ արասցեն*] (*Եզեկ. ԽԴ, 25*)։ საყურძენი იგი მისცეს სხუათა მოქმედთა, რომელთა მისცოდიან მას ნაყოფი ჟამთა მათთა [*Զայգին տացէ այլոց մշակաց, որք տացեն նմա զպտուղս ի ժամու իւրեանց*] (*Մատթ. ԻԱ, 41C*)։ რაჲთა წარავლინნოდის იგინი ქადაგებად [*Զի առաքեսցէ զնոսա քարոզել*] (*Մարկ. Գ, 14C*)։

III ԲԱՅԱԽՈՒՄԲ

179. Բայաշարքերի կազմությունը: *III բայախմբում բայաշարքերը չորսն են՝ I հետևանքային, II հետևանքային, III հաճախական և III ստորադասական։*

III բայախմբի բայաշարքերի բայաձևերում անցողական բայերի համար բնութագրական է շրջադասությունը, այսինքն՝ ենթակայական դեմքերի ցուցիչների փոխարինումը անուղղակի-խնդրային դեմքերի ցուցիչներով, իսկ ուղիղ-խնդրայիններինը՝ ենթակայականով (§ 107)։ Այս նշանակում է, որ եթե I և II բայախմբերի բայաշարքերի ձևերում ենթակայական դեմքերը նշվում են ենթակայական ցուցիչներով, իսկ խնդրային դեմքերը՝ խնդրային ցուցիչներով, ապա III բայախմբի բայաշարքե-

րի ձևերում ենթակայական դեմքերը արտահայտվում են անուղղակի-խնդրային ցուցիչներով, իսկ ուղիղ-խնդրային դեմքերը՝ ենթակայական ցուցիչներով։ Ըստ այսմ՝ ենթական դրվում է տրական հոլովով, իսկ ուղիղ խնդիրը՝ անվանականով։ Օրինակ՝ მე შე-ვიპყრობ ტრედსა, მე შე-ვიპყარ ტრედი, მე შე-მიპყრიეს ტრედი; შენ და-სწერ წიგნსა, წენ და-სწერე წიგნი, შენ და-გიწერიეს წიგნი; იგი მო-ჰკლავს ირემსა, მან მო-კლა ირემი, მას მო-(ჰ)უკლავ-ს ირემი *և այլն։*

III բայախմբի բայաշարքերում ենթակայական դեմքերի հոգնակի թվի բայաձևերը համընկնում են եզակի թվի բայաձևերի հետ, տարբերություն գոյություն ունի միայն I-ին դեմքի եզակի և հոգնակի ներառական բայաձևերի միջև. მე დამიწერიეს, ჩვენ დაგვიწერიეს:

I հետևանքային: *Այս բայաշարքը կազմվում է ըստ այլադարձ դարձության, սակայն դարձության հասկացություն չի պարունակում, քանի որ բացակայում են հակադիր բայաձևերը։* ავ *և* ამ *թեմայի ցուցիչ ունեցող բայերը I հետևանքայինում այն պահպանում են, օրինակ՝* მი-ხილ-ავ-ს, გიხილ-ავ-ს, (ჰ)უხილ-ავ-ს. მი-თქუ-ამ-ს, გი-თქუ-ამ-ს, (ჰ)უ-თქუ-ამ-ს *և այլն։* ნეტარ არიან, რომელთა არა უხილავ და ჰრწმენე [*Երանի որոց ոչ իցէ տեսեալ՝ և հաւատասցեն*] *(Յովհ. Ի, 29)։ Մյուս բայերը ընդունում են* იე *վերջածանցը, որը բնորոշ է կայուն կրավորական բայերի համար ներկայում։*

Մնացած բայաշարքերը (II հետևանքային, III հաճախական և III ստորադասական) կազմվում են կրավորական սեռի ე*-նախածանցավոր բայերի հետևողությամբ։*

II հետևանքային: *Այս բայաշարքը հիմքից առաջ ստանում է* ე *նախածանց, իսկ հոգնակի թվում՝ ներառում* ნ *միջածանց.* დამეწერა—დამეწერნეს, დამეხატა—დამეხატნეს *և այլն։*

III ստորադասական: *Այս բայաշարքը սկզբից ստանում է* ე, *իսկ վերջում՝* ო. მ-ებრძანოს: *Այս բայաշարքի բայաձևերը հազվադեպ են։*

III հաճախական: *Այս բայաշարքը սկզբից ստանում է* ე, *իսկ վերջում՝* ა *կամ* ო, *ըստ այնմ, թե ինչպես է կազմվում բայի II ստորադասականը.* ეწეროს, ეთქუას: ცემა *բայը ավելով ստանում է* ე. მიმეცეს:

180. **Խոնարհման նմուշներ.**

I հետևանքային

ա) Ուղիղ խնդիրը եզակի է (նա)

Եզ. 1.3 დამიწერიეს [*գրել եմ*]	მომიკლავს [*սպանել եմ*]	მითქუამს [*ասել եմ*]
2.3 დაგიწერიეს	მოგიკლავს	გითქუამს
3.3 დაუწერიეს	მოუკლავს	უთქუამს

Հոգն. Ներ. დაგვწერიეს	მოგვკლავს	გვთქუამს
Արտ. დამიწერიეს	მომიკლავს	მითქუამს
2.3 დაგიწერიეს	მოგიკლავს	გითქუამს
3.3 დაუწერიეს	მოუკლავს	უთქუამს

բ) Ուղիղ խնդիրը հոգնակի է (նրանք)

Եզ. 1.3 დამიწერიან	მომიკლვან	მითქუმან
2.3 დაგიწერიან	მოგიკლვან	გითქუმან
3.3 დაუწერიან	მოუკლვან	უთქუმან
Հոգն. Ներ. დაგვწერიან	მოგვკლვან	გვთქუმან
Արտ. დამიწერიან	მომიკლვან	მითქუმან
2.3 დაგიწერიან	მოგიკლვან	გითქუმან
3.3 დაუწერიან	მოუკლვან	უთქუმან

Շրջադարձ կարգի դեպքում. დაუწერიეი (*նրան նա*), დაუწერიეი (*նրան դու*), დაუწერიეს; დაუწერიეთ, დაუწერიეთ, დაუწერიან: *Պատմականորեն՝ թվարկվածները առաջացել են այսպիսի բառաձևերից՝* დავჰუწერიეი, დაჰუწერიეი, დაჰუწერიეს; დავჰუწერიეთ, დაჰუწერიეთ, დაჰუწერიან:

Զուգահեռաբար հանդիպում են նրանց այնպիսի ձևեր, որոնք հաճախականի իմաստ ունեն՝ შევიკრიბი, სადა არა განმიბნევიედ [*Ժողովեմ՝ ուր ոչ սփռեցի*] (*Մատթ. ԻԵ, 26*)։

II հետևանքային

ա) Ուղիղ խնդիրը եզակի է (նա)

Եզ. 1.3 დამეწერა [*գրել էի*]	მომეკლა [*սպանել էի*]	მეთქუა [*ասել էի*]
2.3 დაგეწერა	მოგეკლა	გეთქუა
3.3 დაეწერა	მოეკლა	ეთქუა
Հոգն. Ներ. დაგუეწერა	მოგუეკლა	გუეთქუა
Արտ. დამეწერა	მომეკლა	მეთქუა
2.3 დაგეწერა	მოგეკლა	გეთქუა
3.3 დაეწერა	მოეკლა	ეთქუა

բ) Ուղիղ խնդիրը հոգնակի է (նրանք)

Եզ. 1.3 დამეწერნეს	მომეკლნეს	მეთქუნეს
2.3 დაგეწერნეს	მოგეკლნეს	გეთქუნეს
3.3 დაეწერნეს	მოეკლნეს	ეთქუნეს

Հոգն. Ներ. დაგვეწერნეს	მოგვეკლნეს	გვეთქვნეს
Արտ. დამეწერნეს	მომეკლნეს	მეთქვნეს
2.դ დაგეწერნეს	მოგეკლნეს	გეთქვნეს
3.դ დაეწერნეს	მოეკლნეს	ეთქვნეს

III հաճախական

ա) Ուղիղ խնդիրը եզակի է (նա)

Եզ. 1.դ დამეწერის |*գրում եմ*| (*հաճախ*)	მომეკლის |*սպանել եմ*| (*հաճախ*)	მეთქვის |*ասել եմ*| (*հաճախ*)
2.դ დაგეწერის	მოგეკლის	გეთქვის
3.դ დაეწერის	მოეკლის	ეთქვის
Հոգն. Ներ. დაგვეწერის	მოგვეკლის	გვეთქვის
Արտ. დამეწერის	მომეკლის	მეთქვის
2.դ დაგეწერის	მოგეკლის	გეთქვის
3.դ დაეწერის	მოეკლის	ეთქვის

բ) Ուղիղ խնդիրը հոգնակի է (նրանք)

Եզ. 1.դ დამეწერნიან	მომეკლნიან	მეთქვნიან
2.դ დაგეწერნიან	მოგეკლნიან	გეთქვნიან
3.դ დაეწერნიან	მოეკლნიან	ეთქვნიან
Հոգն. Ներ. დაგვეწერნიან	მოგვეკლნიან	გვეთქვნიან
Արտ. დამეწერნიან	მომეკლნიან	მეთქვნიან
2.դ დაგეწერნიან	მოგეკლნიან	გეთქვნიან
3.դ დაეწერნიან	მოეკლნიან	ეთქვნიან

III ստորադասական

ա) Ուղիղ խնդիրը եզակի է (նա)

Եզ. 1.դ დამეწეროს	მომეკლას	მეთქვას
2.դ დაგეწეროს	მოგეკლას	გეთქვას
3.դ დაეწეროს	მოეკლას	ეთქვას
Հոգն. Ներ. დაგვეწეროს	მოგვეკლას	გვეთქვას
Արտ. დამეწეროს	მომეკლას	მეთქვას
2.դ დაგეწეროს	მოგეკლას	გეთქვას
3.դ დაეწეროს	მოეკლას	ეთქვას

բ) Ուղիղ խնդիրը հոգնակի է (նրանք)

Եզ.	*1.3* დამეწერნენ	მომეკლნენ	მეთქუნენ
	2.3 დაგეწერნენ	მოგეკლნენ	გეთქუნენ
	3.3 დაეწერნენ	მოეკლნენ	ეთქუნენ
Հոգն.	*Ներ.* დაგვეწერნენ	მოგვეკლნენ	გვეთქუნენ
	Արտ. დამეწერნენ	მომეკლნენ	მეთქუნენ
	2.3 დაგეწერნენ	მოგეკლნენ	გეთქუნენ
	3.3 დაეწერნენ	მოეკლნენ	ეთქუნენ

ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ

ՇԱՐԺՈՒՆ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ

Նախածանցավոր կրավորական

181. **Թեմայի ցուցիչ:** *Կրավորական սեռի շարժուն բայերը սեփական թեմայի ցուցիչ չունեն, և* ავ, ამ, ებ, ევ, ემ, ობ, *ოფ-ցուցիչավոր բայերի թեմայի ցուցիչը ներգործականից անցնում է կրավորականին: Ընդ որում, ავ և ამ-ցուցիչավոր բայերի ა ձայնավորը ներկայի ი ցուցիչի ավելացման ժամանակ ամփոփվելով կորչում է և մնում են՝ ვ և მ.* დავჭმალავ—დავიმალვი, დავსდგამ—დავიდგმი: **ოდ** *ածանցը ավելացնելիս ავ-ցուցիչավոր բայերը կորցնում են նաև ვ-ն.* დავიმალ(ვ)ოდე:

ი-ցուցիչավոր բայերը իբրև թեմայի ցուցիչ ստանում են ებ, *որի պատճառով ი-ն կորչում է: Բացի այդ, եթե բայահիմքը ներգործականում ամփոփված է, ապա կրավորականում այն վերականգնվում է.* დავჰსჯი—დავისაჯები, აღვჰზრდი—აღვიზარდები, გამოვსცდი—გამოვიცადები *և այլն:*

Թեմայի ցուցիչ չունեցող բայերը կրավորականում իբրև թեմայի ցուցիչ ստանում են ებ (დავსწერ—დავიწერ-ებ-ი), *միայն թե անցողիչ ձայնավորափոխ բայերի համար* ებ-ը *ավելացվում է* II *բայախմբի հիմքի վրա.* მივჰფენ—მივჰფინე—მიეფინ-ებ-ის; დავსწნეხ—დავწნიხე—დაიწნიხ-ებ-ის:

Սրանց թվին չեն պատկանում այն ევ-*ցուցիչավոր բայերը, որոնց* ევ-ը II *բայախմբի բայաշարքերի ձևերում վերածվում է* ივ-*ի: Օրինակ.* მივაქც-ევ—მივაქც-ი(ვ)-ე—მივიქც-ევ-ი *և այլն:*

Իրեն թեմայի ցուցիչ ებ *են ստանում նաև վերջածանցավոր և անածանց կրավորականները.* შევწუხნ-ებ-ი, განვახლდ-ებ-ი, განვტფ-ებ-ი:

Պետք է ավելացնել, որ ებ, ობ *և* ოფ-*ցուցիչավոր բայերին կարող է կցվել նաև* ვ: ვჰგმობ—ვიგმობვი, ვჰყოფ—ვიყოფვი, მივაგებებ—მივეგებვი (მივეგებებვი-ს-*ի փոխարեն) և այլն: Անձնականավոր բայաշարքերում* ვ-*ն կարող է կորչել հաջորդ* ო-*ի ազդեցությամբ.* ვიგმობოდე, ვიყოფოდე, მივეგებოდე *և այլն:*

Բոլոր տեսակի շարժուն կրավորական բայերը (նախածանցավոր, վերջածանցավոր, անածանց) իրեն աճական ստանում են ოდ:

182. Բայաշարքերի ցուցիչներ:

Ներկայի և ներկայի հաճախականի *ցուցիչը բոլոր բայերում* ი *է.*

დავჰსჯი—დავისაჯებ-ი, დავჰწერ—დავიწერებ-ი, გამოვჰსცდი—გამოვიცადებ-ი, დავჰკლავ—დავიკლევ-ი, დავანთქამ—დავინთქმ-ი, ვადიდებ—ვიდიდებ-ი, ვაკურთხევ—ვიკურთხევ-ი, განვჰყოფ—განვიყოფვ-ი, ვჰგმობ—ვიგმობვ-ი, განვატფობ—განვტფებ-ი *և այլն: Ներկայի հաճախականի օրինակներ՝* დაისაჯებინ, დაიწერებინ *և այլն:*

Անցյալ անկատարի և I հրամայականի *ցուցիչն է* ე. დავიწერებოდ-ე, დავისაჯებოდ-ე, განვტფებოდ-ე *և այլն:*

I *հրամայականի 3-րդ դեմքը՝* დაიწერებოდენ, დაისაჯებოდენ, განტფებოდენ *և այլն:*

Անցյալ անկատարի հաճախականի *ցուցիչն է* ი. დავიწერებოდ-ი, დაიწერებოდ-ი, დაიწერებოდ-ი-ს, დავისაჯებოდ-ი, განვტფებოდ-ი *և այլն:*

I ստորադասականի *(***I պայմանի***)* *ցուցիչը ևս* ი *է.* დავიწერებოდ-ი, დავისაჯებოდ-ი, განვტფებოდ-ი: *Քանի որ անցյալ անկատարի հաճախականի և I ստորադասականի (I պայմանի) բայաշարքի ցուցիչը միևնույնն է, ուստի նրանց բայաձևերը բացարձակապես համանման են: Պարզելու համար, թե որ բայաշարքին է պատկանում բայաձևը՝ օգնում է ենթատեքստը: Երկու բայաշարքերի խոնարհման մեջ տարբերություն է նկատվում միայն ուշ շրջանի հուշարձաններում, որոնցում I ստորադասականի (I պայմանի) հոգնակի 3-րդ դեմքում* **ოდიან** *վերջավորության փոխարեն հանդես է գալիս* **ოდინ**: *Անցյալ անկատարի հաճախականը ունի* **ოდიან** *վերջավորություն, իսկ I ստորադասականը (I պայմանին)՝* **ოდინ**: ჯუარი ერთი გინა ხატი ერთი ესუენის (სენაკთა შინა), რაჲთა, რაჲამს ილოცვიდენ მათ წინაშე, თაყუანის-სცემდენ და ემთხუეოდინ [*Մի խաչ կամ սրբապատկեր ունեն (խցերում), որպեսզի երբ որ աղոթեն նրանց առաջ՝ երկրպագեն և համբուրակաց լինեն*] (*Վարք*

Յովհ. և Եփ. 81)։ საკელროვსა წესი ესრეთ გაეწესა, რაჲთა საჭმელსა არა იქმოდიან [*Մխիթարեցի համար այսպիսի կարգ էր հաստատել, որ ուտելիք չպատրաստեն*] (*Նույն տեղում, 96, 1*)։

Խոնարհման նմուշներ.

I ԲԱՅԱԽՈՒՄԲ

183. **Նախածանցավոր կրավորական։**

Ներկա

	Միակազմ	*Երկկազմ*	*Միակազմ*	*Երկկազմ*
Եզ. 1	დავიწერები [*գրվում եմ*]	დავე—	დავიხატვი [*նկարվում եմ*]	დავე—
2	დაიწერები	დაე—	დაიხატვი	დაე—
3	დაიწერების	დაე—	დაიხატვის	დაე—
Հոգն. 1	დავიწერებით	დავე—	დავიხატვით	დავე—
2	დაიწერებით	დაე—	დაიხატვით	დაე—
3	დაიწერებიან	დაე—	დაიხატვიან	დაე—

Ներկայի հաճախական

Եզ. 1	დაიწერებინ [*գրվում եմ*] (*հաճախ*)	დაე—	დაიხატვინ [*նկարվում եմ*] (*հաճախ*)	დაე—
Հոգն. 3	დაიწერებიედ	დაე—	დაიხატვიედ	დაე—

Անցյալ անկատար

Եզ. 1	დავიწერებოდე [*գրվում էի*]	დავე—	დავიხატ(ვ)ოდე [*նկարվում էի*]	დავე—
2	დაიწერებოდე	დაე—	დაიხატ(ვ)ოდე	დაე—
3	დაიწერებოდა	დაე—	დაიხატ(ვ)ოდა	დაე—
Հոգն. 1	დავიწერებოდეთ	დავე—	დავიხატ(ვ)ოდეთ	დავე—
2	დაიწერებოდეთ	დაე—	დაიხატ(ვ)ოდეთ	დაე—
3	დაიწერებოდეს	დაე—	დაიხატ(ვ)ოდეს	დაე—

Անցյալ անկատարի հաճախական և I ստորադասական (I պայմանի)

Եզ. 1	დავიწერებოდი [*գրվում էի*] (*հաճախ*)	დავე—	*Հոգն.* 1	დავიწერებოდით	დავე—
2	დაიწერებოდი	დაე—	2	დაიწერებოდით	დაე—
3	დაიწერებოდის	დაე—	3	დაიწერებოდიან	დაე—

Ուշ շրջանի հուշարձաններում I ստորադասականի (I ապառնիի) հոգնակի 3-րդ դեմքի დაიწერებოდინ, დაე—*բայաձևերի ակունքը X դարի հուշարձաններն են։ Ընդհանրապես, այսպիսի բայաձևերը բնորոշ են* ოდ-*ածանցավոր բայերի համար*. ყოველნი რომელნი თანა-წარჰვიდოდინ, დაწუხნენ მის ზედა [*Ամէն, որ անցանէ՝ ընդ նմա տրտմեսցի*] (*Երեմ. ԺԹ, 8*)։ რაჲთა გუესმოდინ სწავლანი და საღმრთონი საქმენი და შრომანი მისნი [*Որպեսզի լսեն նրա խրատները, աստվածային գործերը և աշխատանքները*] (*Վարք Զարզմ.*)։ რაჲთა იყოფოდინ მის თანა [*Որպեսզի լինեն նրա հետ*] (*Վարք Իլարիոնի*)։ რომელნი მომეახლებოდინ [*Մերձաւորս իմ*] (*Ղևտ. Ժ, 3*)։

I Հրամայական

	Միադեմ	*Երկդեմ*	*Միադեմ*	*Երկդեմ*
Եզ. 2	დაიწერებოდე [*գրվի՛ր*]	დაე—	დაიხატ(ვ)ოდე [*նկարվի՛ր*]	დაე—
3	დაიწერებოდენ	დაე—	დაიხატ(ვ)ოდენ	დაე—
Հոգն. 2	დაიწერებოდეთ	დაე—	დაიხატ(ვ)ოდეთ	დაე—
3	დაიწერებოდედ	დაე—	დაიხატ(ვ)ოდედ	დაე—

II ԲԱՅԱԽՈՒՄԲ

184. **Նախածանցավոր կրավորականի II բայախմբի բայաշարքերի հոգնակի թվի բայաձևերում** ენ **ածանցի հանդես գալու պատճառը:** *Կրավորական սեռի բայը ներգործական սեռի բայի շրջադարձ ձևն է (§ 146)։ Ներգործական սեռի բայերը II բայախմբի բայաշարքերում երկուական բայաձև ունեն. մեկը՝ ուղիղ խնդրի եզակիության դեպքում, մյուսը՝ ուղիղ խնդիրը* ნ*-ով կազմվող հոգնակիով դրվելու դեպքում։ Բայց կրավորականի վերածելիս ուղիղ-խնդրային դեմքը դառնում է ենթակայական, ուստի* ენ *հոգնակիության ցուցիչը ներգործականից փոխանցվում է կրավորական՝ այդ ենթակայական դեմքին։*

	Ներգործական		Կրավորական	
Եզ. 3.1	დამწერა	[*գրեց (ինձ)*]	1 დავიწერე	[*գրվեցի*]
3.2	დაგწერა		2 დაიწერე	
3.3	დაწერა		3 დაიწერა	

Հոգն. Ներ. დაგუწერნა (*დაგუწერენა)
Արտ. დამწერნა (*დამწერენა)
3.2 დაგწერნა (*დაგწერენა)
3.3 დაწერნა (*დაწერენა)

1 დავიწერენით
2 დაიწერენით
3 დაიწერნეს

Ներգործական սեռում ուղիղ-խնդրային դեմքերը եզակի թվում ენ *չունեն* (დამწერა, დაგწერა, დაწერა), *այն կրավորականում չեն տանում և ենթակայական դեմքերը* (დავიწერე, დაიწერე, დაიწერა)։ *Սակայն, երբ ուղիղ-խնդրային դեմքը դրված է* ნ-*ով հոգնակիով, բայաձևում հանդես է գալիս* ენ *ածանցը* (დაგუწერნა, დამწერნა, დაგწერნა, დაწერნა), *որն և կրավորական սեռում հոգնակի թվի կազմության ժամանակ փոխանցվում է ենթակայական դեմքերին* (დავიწერენით, დაიწერენით, დაიწერნეს)։

185. **Խոնարհման նմուշներ.**

Անցյալ կատարյալ

	Միադեմ	*Երկդեմ*	*Միադեմ*	*Երկդեմ*
Եզ. 1	დავიწერე [*գրվեցի*]	დავე—	დავიხატე [*նկարվեցի*]	დავე—
2	დაიწერე	დაე—	დაიხატე	დაე—
3	დაიწერა	დაე—	დაიხატა	დაე—
Հոգն. 1	დავიწერენით	დავე—	დავიხატენით	დავე—
2	დაიწერენით	დაე—	დაიხატენით	დაე—
3	დაიწერნეს	დაე—	დაიხატნეს	დაე—

II հաճախական

Եզ. 1	დავიწერო [*գրվեցի*] (*հաճախ*)	დავე—	დავიხატო [*նկարվեցի*] (*հաճախ*)	დავე—
2	დაიწერო	დაე—	დაიხატო	დაე—
3	დაიწეროს	დაე—	დაიხატოს	დაე—
Հոգն. 1	დავიწერნით	დავე—	დავიხატნით	დავე—
2	დაიწერნით	დაე—	დაიხატნით	დაე—
3	დაიწერნიან	დაე—	დაიხატნიან	დაე—

II հրամայական

	Միադեմ	*Երկդեմ*	*Միադեմ*	*Երկդեմ*
Եզ. 2	დაიწერე [*գրվի՛ր*]	დაე—	დაიხატე [*նկարվի՛ր*]	დაე—
3	დაიწერენ	დაე—	დაიხატენ	დაე—
Հոգն. 2	დაიწერენით	დაე—	დაიხატენით	დაე—
3	დაიწერნედ	დაე—	დაიხატნედ	დაე—

II ստորադասական (II ապառնի)

Եզ.	*1*	დავიწერო [*կգրվեմ*]	დავე—	დავიხატო [*կնկարվեմ*]	დავე—
	2	დაიწერო	დაე—	დაიხატო	დაე—
	3	დაიწეროს	დაე—	დაიხატოს	დაე—
Հոգն.	*1*	დავიწერნეთ	დავე—	დავიხატნეთ	დავე—
	2	დაიწერნეთ	დაე—	დაიხატნეთ	დაე—
	3	დაიწერნენ	დაე—	დაიხატნენ	დაე—

III ԲԱՅԱԽՈՒՄԲ

186. III բայախմբում միադեմ և երկդեմ բայերը անհրաժեշտ է քննարկել առանձին-առանձին։

ա) Միադեմ բայեր

I հետևանքային

Եզ.	*1*	დაწერილ	ვარ [*գրվել եմ*]	დახატულ	ვარ	[*նկարվել եմ*]
	2	„	ხარ	„	ხარ	
	3	„	არის	„	არის	
Հոգն.	*1*	„	ვართ	„	ვართ	
	2	„	ხართ	„	ხართ	
	3	„	არიან	„	არიან	

II հետևանքային

Եզ.	*1*	დაწერილ	ვიყავ [*գրվել էի*]	დახატულ	ვიყავ [*նկարվել էի*]
	2	„	იყავ	„	იყავ
	3	„	იყო	„	იყო
Հոգն.	*1*	„	ვიყვენით	„	ვიყვენით
	2	„	იყვენით	„	იყვენით
	3	„	იყვნეს	„	იყვნეს

III ստորադասական

Եզ.	*1*	დაწერილ	ვიყო [*գրված լինեմ*]	დახატულ	ვიყო [*նկարված լինեմ*]
	2	„	იყო	„	იყო
	3	„	იყოს	„	იყოს
Հոգն.	*1*	„	ვიყვნეთ	„	ვიყვნეთ
	2	„	იყვნეთ	„	იყვნეთ
	3	„	იყვნენ	„	იყვნენ

բ) Երկդեմ բայեր

III բայախմբի բայաշարքերում երկդեմ բայերի բայաձևերը հազվադեպ են։ Նրանց կազմությունը այսպիսին է. I հետևանքայինը ստանում է იე վերջավորությունը։

I հետևանքային

Եզ. 1.3 შევჰმთხუევიე [հանդիպել եմ (նրան)] დავსწერიე [գրվել եմ (նրան)]
2.3 შეჰმთხუევიე დასწერიე
3.3 შეჰმთხუევიეს დასწერიეს
Հոգն. 1.3 შევჰმთხუევიეთ დავსწერიეთ
2.3 შეჰმთხუევიეთ დასწერიეთ
3.3 შეჰმთხუევიან დასწერიან

II հետևանքային

Եզ. 1.3 შევჰმთხუე(ვ)ოდე [հանդիպել էի (նրան)] დავსწეროდე [գրվել էի (նրան)]
2.3 შეჰმთხუე(ვ)ოდე დასწეროდე
3.3 შეჰმთხუე(ვ)ოდა დასწეროდა
Հոգն. 1.3 შევჰმთხუე(ვ)ოდეთ დავსწეროდეთ
2.3 შეჰმთხუე(ვ)ოდეთ დასწეროდეთ
3.3 შეჰმ_ხუე(ვ)ოდეს დასწეროდეს

III ստորադասական

Եզ. 1.3 შევჰმთხუე(ვ)ოდი [հանդիպած լինեմ (նրան)] დავსწეროდი [գրված լինեմ (նրան)]
2.3 შეჰმთხუე(ვ)ოდი დასწეროდი
3.3 შეჰმთხუე(ვ)ოდის დასწეროდის
Հոգն. 1.3 შევჰმთხუე(ვ)ოდით დავსწეროდით
2.3 შეჰმთხუე(ვ)ოდით დასწეროდით
3.3 შეჰმთხუე(ვ)ოდიან დასწეროდიან

Խնդրային կարգի դեպքում՝ მომცემიეს, მოგცემიეს, მისცემიეს, ნუ იყოფინ, თუმცა ჩემ ძლით რაჲ შეჰმთხუეოდა ძმასა ამას [*Չլինի, որ իմ պատճառով թեկուզ և որևէ բան պատահած լինի այն եղբորը*] (*Վարք Զարզմ.*)։ *Այստեղ* შეჰმთხუეოდა-*ն սահմանական եղանակի բայաձև է*

10—591

(II հետևանքային), III տառադասական փոփոխման (მეტათეზისის), *որի պատճառը* მცა *մասնիկն է* (თუ-მცა):

ՎԵՐՋԱԾԱՆՑԱՎՈՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ

187. Վերջածանցավոր կրավորականի ցուցիչները: *Վերջածանցավոր կրավորականը կազմվում է* ენ-*ով կամ* დ-*ով, որը ծագում է* ნ-*ից:* ენ *վերջածանցը կորցնում է* ე *ձայնավորը, եթե նրան հաջորդում է ձայնավոր (դեմքի, թվի, բայաշարքի ցուցիչներ,* თუ *ածական), օրինակ.* შევწუხნები (*შევწუხ-ენ-ებ-ი), შევწუხენ, *սակայն՝* შეწუხნა, შევწუხნე; დავვლახაკენ, დავმდაბლდი [*Տառապեցայ և խոնարհ եղէ յոյժ*] *(Սաղմ. ԼԷ. 7): Այստեղ երկու բայն էլ վերջածանցավոր են, որոնցից մեկը* ენ-*վերջածանցավոր է, մյուսը՝* დ-*վերջածանցավոր:* დავყრუვდი, დავმდაბლდი, დავდუმენ მე კეთილთაგან და სალმობანი ჩემნი განმიახლდეს [*Խուլ եղէ և խոնարհեցայ, լռեցի ի բարւոք՝ և ցաւք իմ նորոգեցան յիս (Սաղմ. ԼԸ. 3): Այստեղ տրված երեք բայ* დ-*վերջածանցավոր է* (დავყრუვდი, დავმდაბლდი, განმიახლდეს), *մեկը՝* ენ-*վերջածանցավոր* (დავდუმენ):

188. Խոնարհման նմուշներ.

I ԲԱՑԱՅՏՈՒՄԸ

Ներկա

Եզ. 1	განვკაცნები [*մարդանում եմ*]	შევწუხნები [*տրտմում եմ*]	განვახლდები [*նորանում եմ*]
2	განჰკაცნები	შესწუხნები	განახლდები
3	განკაცნების	შეწუხნების	განახლდების
Հոգն. 1	განვკაცნებით	შევწუხნებით	განვახლდებით
2	განჰკაცნებით	შესწუხნებით	განახლდებით
3	განკაცნებიან	შეწუხნებიან	განახლდებიან

Ներկայի ճանախական

Եզ. 3	განკაცნებინ [*մարդանում է*] *(հաճախ)*	შეწუხნებინ [*տրտմում է*] *(հաճախ)*	განახლდებინ [*նորանում է*] *(հաճախ)*
Հոգն. 3	განკაცნებიედ	შეწუხნებიედ	განახლდებიედ

Անցյալ անկատար

Եզ. 1	განვკაცნებოდე *[մարդանում էի]*	შევწუხნებოდე *[տրտմում էի]*	განვახლდებოდე *[նորանում էի]*
2	განჰკაცნებოდე	შესწუხნებოდე	განახლდებოდე
3	განკაცნებოდა	შეწუხნებოდა	განახლდებოდა
Հոգն. 1	განვკაცნებოდეთ	შევწუხნებოდეთ	განვახლდებოდეთ
2	განჰკაცნებოდეთ	შესწუხნებოდეთ	განახლდებოდეთ
3	განკაცნებოდეს	შეწუხნებოდეს	განახლდებოდეს

Անցյալ անկատարի հաճախական և I ստորադասական (I ապառնի)

Եզ. 1	განვკაცნებოდი *[մարդանում էի (հաճախ), մարդանալու եմ]*	შევწუხნებოდი *[տրտմում էի (հաճախ), տրտմելու եմ]*	განვახლდებოდი *[նորանում էի (հաճախ), նորանալու եմ]*
2	განჰკაცნებოდი	შესწუხნებოდი	განახლდებოდი
3	განკაცნებოდის	შეწუხნებოდის	განახლდებოდის
Հոգն. 1	განვკაცნებოდით	შევწუხნებოდით	განვახლდებოდით
2	განჰკაცნებოდით	შესწუხნებოდით	განახლდებოდით
3	განკაცნებოდიან	შეწუხნებოდიან	განახლდებოდიან

Այստեղ ևս հոգնակի թվի 3-րդ դեմքի բայաձևերում ուշ շրջանի հուշարձաններում իբրև I ստորադասականի (I ապառնիի) կազմության վերջավորություն, **ოდიან**-*ի փոխարեն առկա է* **ოდინ**. განკაცნებოდინ, შეწუხნებოდინ, განახლდებოდინ *և այլն։*

I հրամայական

Եզ. 2	განკაცნებოდე *[մարդացի՛ր]*	შეწუხნებოდე *[տրտմի՛ր]*	განახლდებოდე *[նորացի՛ր]*
3	განკაცნებოდენ	შეწუხნებოჳენ	განახლდებოდენ
Հոգն. 2	განკაცნებოდეთ	შეწუხნებოდეთ	განახლდებოდეთ
3	განკაცნებოდედ	შეწუხნებოდედ	განახლდებოდედ

II ԲԱՅԱԽՈՒՄԲ

189. II բայախմբի բայաշարքերի կազմության մասին խոսելիս նշելի է, որ **ენ** *կրավորակերտ վերջածանցը հանդես է գալիս միայն անցյալ կատարյալի 1-ին և 2-րդ դեմքերում և նրա նմանողությամբ կազմվող հրամայականում, իսկ բոլոր մնացած դեպքերում նրա* **ე** *ձայնավորը*

սղվում է հաջորդ ձայնավորի ազդեցությամբ, որը դեմքի կամ բայաշարքի ցուցիչ է։ დ-վերջածանցավոր կրավորականը անցյալ կատարյալի I-ին և 2-րդ դեմքերում իրեն բայաշարքի ցուցիչ ստանում է ი։

Խոնարհման նմուշներ.

Անցյալ կատարյալ

Եզ. 1	განვკაცენ [*մարդացա*]	შევწუხენ [*սրամտեցի*]	განვახლდი [*նորացա*]
2	განჰკაცენ	შესწუხენ	განახლდი
3	განკაცნა	შეწუხნა	განახლდა
Հոգն. 1	განვკაცენ(ი)თ	შევწუხენ(ი)თ	განვახლდით
2	განჰკაცენ(ი)თ	შესწუხენ(ი)თ	განახლდით
3	განკაცნეს	შეწუხნეს	განახლდეს

II հաճախական

Եզ. 1	განვკაცნი [*մարդացա (հաճախ)*]	შევწუხნი [*սրամտեցի (հաճախ)*]	განვახლდი [*նորացա (հաճախ)*]
2	განჰკაცნი	შესწუხნი	განახლდი
3	განკაცნის	შეწუხნის	განახლდის
Հոգն. 1	განვკაცნით	შევწუხნით	განვახლდით
2	განჰკაცნით	შესწუხნით	განახლდით
3	განკაცნიან	შეწუხნიან	განახლდიან

II հրամայական

Եզ. 2	განკაცენ [*մարդացի՛ր*]	შეწუხენ [*սրամտի՛ր*]	განახლდი [*նորացի՛ր*]
3	განკაცენინ	შეწუხენინ	განახლდინ
Հոգն. 2	განკაცენ(ი)თ	შეწუხენ(ი)თ	განახლდით
3	განკაცნედ	შეწუხნედ	განახლდედ

II ստորադասական (II ապառնի)

Եզ. 1	განვკაცნე [*կմարդանամ*]	შევწუხნე [*կսրամտեմ*]	განვახლდე [*կնորանամ*]
2	განჰკაცნე	შესწუხნე	განახლდე
3	განკაცნეს	შეწუხნეს	განახლდეს
Հոգն. 1	განვკაცნეთ	შევწუხნეთ	განვახლდეთ
2	განჰკაცნეთ	შესწუხნეთ	განახლდეთ
3	განკაცნენ	შეწუხნენ	განახლდენ

Ինչպես երևում է բերված օրինակներից, დ-վերջածանցավոր կրավորականի 1-ին և 2-րդ դեմքերի բայաձևերը անցյալ կատարյալում և II հաճախականում համընկնում են, սակայն դրանք կարելի է զանազանել ենթակայի օգնությամբ։

III ԲԱՅԱԽՈՒՄԲ

190. Այստեղ էլ III բայախմբում միադեմ և երկդեմ բայերը քննելի են առանձին-առանձին։

ա) Միադեմ բայաձևեր

I հետևանքային

Եզ. 1	განკაცებულ ვარ [*մարդացել եմ*]	შეწუხებულ ვარ [*տրտմել եմ*]	განახლებულ ვარ [*նորացել եմ*]
2	" ხარ	ხარ	" ხარ
3	" არს	" არს	" არს
Հոգն. 1	" ვართ	" ვართ	" ვართ
2	" ხართ	" ხართ	" ხართ
3	" არიან	" არიან	" არიან

II հետևանքային

Եզ. 1	განკაცებულ ვიყავ [*մարդացել էի*]	შეწუხებულ ვიყავ [*տրտմել էի*]	განახლებულ ვიყავ [*նորացել էի*]
2	" იყავ	" იყავ	" იყავ
3	" იყო	" იყო	" იყო
Հոգն. 1	" ვიყვენით	" ვიყვენით	" ვიყვენით
2	" იყვენით	" იყვენით	" იყვენით
3	" იყვნეს	" იყვნეს	" იყვნეს

III ստորադասական

Եզ. 1	განკაცებულ ვიყო [*մարդացած լինեմ*]	შეწუხებულ ვიყო [*տրտմած լինեմ*]	განახლებულ ვიყო [*նորացած լինեմ*]
2	" იყო	" იყო	" იყო
3	" იყოს	" იყოს	" იყოს
Հոգն. 1	" ვიყვნეთ	" ვიყვნეთ	" ვიყვნეთ
2	" იყვნეთ	" იყვნეთ	" იყვნეთ
3	" იყვნენ	" იყვნენ	" იყვნენ

բ) Երկդիմ բայաձևեր

დამავიწყდების [*մոռանում եմ (այն)*], დამავიწყდა [*մոռացա (այն)*], დამვიწყებიეს [*մոռացել եմ (այն)*]։ I *հետևանքային՝* დამვიწყებიეს იგი [*մոռացել եմ (այն)*], დამვიწყებიან იგინი [*մոռացել եմ (նրանք)*]։ II *հետևանքային՝* დამვიწყებოდა [*մոռացել էի*], III *ստորադասական՝* დამვიწყებოდის [*մոռացած լինեի*]։ რომელთა დაჰვიწყებიეს უფალი [*Որ մոռանային զտէր*] (*Յովբ Ը, 13*).

ԱՆԱԾԱՆՑ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ

191. **Խոնարհման նմուշներ.**

I ԲԱՅԱԽՈՒՄԲ

Ներկա

Եզ.	*1* მოვკუდები [*մեռնում եմ*]	ავლდგები [*բարձրանում եմ*]	დავადგრები [*իջևանում եմ*]
	2 მოჰკუდები	ალსდგები	დაადგრები
	3 მოკუდების	ალდგების	დაადგრების
Հոգն.	*1* მოვკუდებით	ავლდგებით	დავადგრებით
	2 მოჰკუდებით	ალსდგებით	დაადგრებით
	3 მოკუდებიან	ალდგებიან	დაადგრებიან

Ներկայի հաճախական

Եզ.	*3* მოკუდებინ [*մեռնում է*] (*հաճախ*)	ალდგებინ [*բարձրանում է*] (*հաճախ*)	დაადგრებინ [*իջևանում է*] (*հաճախ*)
Հոգն.	*3* მოკუდებიედ	ალდგებიედ	დაადგრებიედ

Անցյալ անկատար

Եզ.	*1* მოვკუდებოდე [*մեռնում էի*]	ავლდგებოდე [*բարձրանում էի*]	დავადგრებოდე [*իջևանում էի*]
	2 მოჰკუდებოდე	ალსდგებოდე	დაადგრებოდე
	3 მოკუდებოდა	ალდგებოდა	დაადგრებოდა
Հոգն.	*1* მოვკუდებოდეთ	ავლდგებოდეთ	დავადგრებოდეთ
	2 მოჰკუდებოდეთ	ალსდგებოდეთ	დაადგრებოდეთ
	3 მოკუდებოდეს	ალდგებოდეს	დაადგრებოდეს

Անցյալ անկատարի հաճախական և I ստորադասական (I ապառնի)

Եզ. 1 მოვკუდებოდი *[մեռնում էի (հաճախ), մեռնելու էի]*	აღვდგებოდი *[բարձրանում էի (հաճախ), բարձրանալու էի]*	დავადგრებოდი *[իջևանում էի (հաճախ), իջևանելու էի]*
2 მოჰკუდებოდი	აღსდგებოდი	დაადგრებოდი
3 მოკუდებოდის	აღდგებოდის	დაადგრებოდის
Հոգն. 1 მოვკუდებოდით	აღვდგებოდით	დავადგრებოდით
2 მოჰკუდებოდით	აღსდგებოდით	დაადგრებოდით
3 მოკუდებოდიან	აღდგებოდიან	დაადგრებოდიან

Ուշ շրջանի հուշարձաններում I ստորադասականի (I ապառնիի) հոգնակի 3-րդ դեմքի արտահայտման համար **ოდიან** *վերջավորության փոխարեն հանդիպում է* **ოდინ**-*ը*. მოკუდებოდინ, აღდგებოდინ, დაადგრებოდინ:

I հրամայական

Եզ. 2 მოკუდებოდე *[մեռի՛ր]*	აღდგებოდე *[բարձրացի՛ր]*	დაადგრებოდე *[իջևանի՛ր]*
3 მოკუდებოდენ	აღდგებოდენ	დაადგრებოდენ
Հոգն. 2 მოკუდებოდეთ	აღდგებოდეთ	დაადგრებოდეთ
3 მოკუდებოდედ	აღდგებოდედ	დაადგრებოდედ

II ԲԱՑԱԽՈՒՄԲ

Անցյալ կատարյալ

Եզ. 1 მოვკუედ *[մեռա]*	აღვდეგ *[բարձրացա]*	დავადგერ *[իջևանեցի]*
2 მოჰკუედ	აღსდეგ	დაადგერ
3 მოკუდა	აღდგა	დაადგრა
Հոգն. 1 მოვკუედით	აღვდეგით	დავადგერით
2 მოჰკუედით	აღსდეგით	დაადგერით
3 მოკუდეს	აღდგეს	დაადგრეს

II հաճախական

Եզ. 1 მოვკუდი *[մեռա]* *(հաճախ)*	აღვდგი *[բարձրացա]* *(հաճախ)*	დავადგრი *[իջևանեցի]* *(հաճախ)*
2 მოჰკუდი	აღსდგი	დაადგრი
3 მოკუდის	აღდგის	დაადგრის

Հոգն.	1 მოვკუდით	აღვდგით	დავადგრით
	2 მოჰკუდით	აღსდგით	დაადგრით
	3 მოკუდიან	აღდგიან	დაადგრიან

II հրամայական

Եզ.	2 მოკუედ [*մեռի՛ր*]	აღდეგ [*բարձրացի՛ր*]	დაადგერ [*իջևանի՛ր*]
	3 მოკუედინ	აღდეგინ	დაადგერინ
Հոգն.	2 მოკუედით	აღდეგით	დაადგერით
	3 მოკუდედ	აღდგედ	დაადგრედ

II ստորադասական (II ապառնի)

Եզ.	1 მოვკუდე [*կմեռնեմ*]	აღვდგე [*կբարձրանամ*]	დავადგრე [*կիջևանեմ*]
	2 მოჰკუდე	აღსდგე	დაადგრე
	3 მოკუდეს	აღდგეს	დაადგრეს
Հոգն.	1 მოვკუდეთ	აღვდგეთ	დავადგრეთ
	2 მოჰკუდეთ	აღსდგეთ	დაადგრეთ
	3 მოკუდენ	აღდგენ	დაადგრენ

III ԲԱՅԱԽՈՒՄԲ

ա) Միադեմ բայաձևեր

I հետևանքային

Եզ.	1 მომკუდარ ვარ [*մեռել եմ*]	აღდგომილ ვარ [*բարձրացել եմ*]	დადგრომილ კარ [*իջևանել եմ*]
	2 " ხარ	" ხარ	" ხარ
	3 " არს	" არს	" არს
Հոգն.	1 " ვართ	" ვართ	" ვართ
	2 " ხართ	" ხართ	" ხართ
	3 " არიან	" არიან	" არიან

II հետևանքային

Եզ.	1 მომკუდარ ვიყავ [*մեռել էի*]	აღდგომილ ვიყავ [*բարձրացել էի*]	დადგრომილ ვიყავ [*իջևանել էի*]
	2 " იყავ	" იყავ	" იყავ
	3 " იყო	" იყო	" იყო

Հոգն.	1	"	ვიყვენით	"	ვიყვენით	"	ვიყვენით
	2	"	იყვენით	"	იყვენით	"	იყვენით
	3	"	იყვნეს	"	იყვნეს	"	იყვნეს

III ստորադասական

Եզ.	1	მომკუდარ ვიყო *[մեռած լինեմ]*		აღდგომილ ვიყო *[բարձրացած լինեմ]*		დადგრომილ ვიყო *[իջևանած լինեմ]*	
	2	"	იყო	"	იყო	"	იყო
	3	"	იყოს	"	იყოს	"	იყოს
Հոգն.	1	"	ვიყვნეთ	"	ვიყვნეთ	"	ვიყვნეთ
	2	"	იყვნეთ	"	იყვნეთ	"	იყვნეთ
	3	"	იყვნენ	"	იყვნენ	"	იყვნენ

բ) Երկդեմ բայաձևեր.

მოუკუდების *[նա նրան]*, მოუკუდა *[նա նրան]*, მოჰკუდომიეს *[նա նրան]*, მოჰკუდომიეს, მოჰკუდომოდა, მოჰკუდომოდის։

ԿԱՅՈՒՆ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ

192. Կայուն կրավորական բայերը հին վրացերենում սակավաթիվ են։ Նրանց առանձնահատկությունը բայաշարքային պակասավորությունն է։ I բայախմբի բայաշարքերից նրանք ունեն միայն ներկա և ներկայի հաճախական, իսկ II բայախմբի բայաշարքերը կազմում են ენ*-նախածանցավոր կրավորականների հետևողությամբ։ Նրանցից որոշ բայեր ընկալվում են իբրև միադեմ, թեև նրանք բոլորն էլ ծագումով երկդեմ են. այդ երևում է այն բանից, որ II բայախմբի բայաշարքերի ձևերը կազմվում են* ე *-ով։ Այս բայերը I բայախմբի բայաշարքերում գործածվում են այս կամ այն դարձության ձևով, սակայն հակադիր բայաձևերի բացակայության պատճառով դարձության իմաստ չունեն։*

ი*ეს վերջավորությունը ուշ շրջանի հուշարձաններում հաճախ ներկայացված է* ია *ձևով.* ჰგონია, უჰყრია, ჰმოსია *և այլն։*

I ԲԱՅԱԽՈՒՄԲ

Ներկա

ա) Ենթակայական կարգով

Եզ.	1.3	ვჰგონიე	ვჰკიდავ		
	2.3	ჰგონიე	ჰკიდავ		
	3.3	ჰგონიეს	ჰკიდავს	სთრავს	სძინავს

Հոգն.	1.3 ვჰგონიეთ	ვჰკიდავთ
	2.3 ჰგონიეთ	ჰკიდავთ
	3.3 ჰგონიან	ჰკიდევან

բ) Խնդրային կարգով

Եզ.	3.1 მგონიეს	მკიდავს	მთრავს	მძინავს
	3.2 გგონიეს	გკიდავს	გთრავს	გძინავს
	3.3 ჰგონიეს	ჰკიდავს	სთრავს	სძინავს
Հոգն. Ներ.	გუგონიეს	გუკიდავს	გუთრავს	გუძინავს
Արտ.	მგონიეს	მკიდავს	მთრავს	მძინავს
	3.2 გგონიეს	გკიდავს	გთრავს	გძინავს
	3.3 ჰგონიეს	ჰკიდავს	სთრავს	სძინავს

II ԲԱՑԱԽՈՒՄԲ

Անցյալ կատարյալ

ա) Ենթակայական կարգով

Եզ.	1.3 ვეგონე	ვეკიდე		
	2.3 ეგონე	ეკიდე		
	3.3 ეგონა	ეკიდა	ეთრო[1]	ეძინა
Հոգն.	1.3 ვეგონენით	ვეკიდენით		
	2.3 ეგონენით	ეკიდენით		
	3.3 ეგონნეს	ეკიდნეს	ეთრო	ეძინა

բ) Խնդրային կարգով

Եզ.	3.1 მეგონა	მეკიდა	მეთრო	მეძინა
	3.2 გეგონა	გეკიდა	გეთრო	გეძინა
	3.3 ეგონა	ეკიდა	ეთრო	ეძინა
Հոգն. Ներ.	გუეგონა	გუეკიდა	გუეთრო	გუეძინა
Արտ.	მეგონა	მეკიდა	მეთრო	მეძინა
	3.2 გეგონა	გეკიდა	გეთრო	გეძინა
	3.3 ეგონა	ეკიდა	ეთრო	ეძინა

---

[1] Գտանում է նաև სთროდა (*անցյալ անկատար*) სთროდა მთრვალობითა მით სიფრთხილისათა [*Թողց էր գալիս հարբեցողությամբ*] (*Սին. ճառընտիր 188, 32*).

II ստորադասական (II ապառնի)

ա) Ենթակայական կարգով

Եզ. **1.3**	ვეგონო	ვეკიდო		
2.3	ეგონო	ეკიდო		
3.3	ეგონოს	ეკიდოს	ეთროს	ეძინოს
Հոգն. **1.3**	ვეგონნეთ	ვეკიდნეთ		
2.3	ეგონნეთ	ეკიდნეთ		
3.3	ეგონნენ	ეკიდნენ		

բ) Խնդրային կարգով

Եզ. **3.1**	მეგონოს	მეკიდოს	მეთროს	მეძინოს
3.2	გეგონოს	გეკიდოს	გეთროს	გეძინოს
3.3	ეგონოს	ეკიდოს	ეთროს	ეძინოს
Հոգն. Ներ.	გუეგონოს	გუეკიდოს	გუეთროს	გუეძინოს
Արտ.	მეგონოს	მეკიდოს	მეთროს	მეძინოს
3.2	გეგონოს	გეკიდოს	გეთროს	გეძინოს
3.3	ეგონოს	ეკიდოს	ეთროს	ეძინოს

გინა თუ გუეძინოს, გინა თუ გუელვძოს [*Եթէ արթուն լինեմք՝ և եթէ ննջեսցեմք*] (*Ա. Թես. Ե, 10*)։

193. **მჳედიეს: ჳედ** [*հանձնել, ավանդել*] *հիմքից է կազմված կալուն կրավորական* მჳედიეს (*նա ինձ*) *բայը.* გჳედიეს (*նա քեզ*), ჰჳე-დიეს (*նա նրան*), მჳედიან (*նրանք ինձ*)։ მჳედიეს *նշանակում է «հանձնել եմ»,* გჳედიეს—*«հանձնել ես»։ Ներկայում սովորական է* იეს-*ի փոխարեն* ია *վերջավորությունը.* მამაო; გჳედია ევფროსინე, დაჲ ჩუენი [*Հայր, քեզ է հանձնված Եվփրոսինեն, մեր քույրը*] (*Վարք Խանձթ.*)։ ჩემდა მსგავსად ესენი გჳედიან, შვილო, რომელთა გულს-მოდგინედ მსახურებაჲ ჩემი თავს-იდვეს [*Իմ նման սրանք քեզ են հանձնված, որդի՛, որոնք հանձն առան ջերմեռանդորեն սպասավորել ինձ*] (*Վարք Խանձթ.*)։ *Այս հիմքից է կազմված* ვედრი [*հանձնելիք, ավանդելիք, ապավինելիք*], *իսկ սրանից էլ՝* ვედრებაჲ [*աղոթք, աղերսանք*]։

ՉԵԶՈՔ ՍԵՌ

194. Թեմայի ցուցիչ։ *Չեզոք սեռի բայերի մի մասի թեմայի ցուցիչն ընդհանուր է ներգործական սեռի բայերի հետ* (ი, ავ, ებ, ობ),

իսկ որոշ բայեր թեմայի ցուցիչ չունեն, մի բան, որ հանդիպում էր նաև ներգործական սեռի բայերում: Սակայն չեզոք բայերն ունեն նաև սեփական բարդ թեմայի ցուցիչ՝ ოვ (ოვ-ი), *որը բնորոշ է միայն նրանց համար.* ვმაღლოვი, ვცრემლოვი, ვპეროვი *և այլն: Այստեղ* ვ-*ն* ოდ *ածանցից առաջ, ավելորդաբար, դուրս է ընկնում.* ცრემლო(ვ)ოდა:

Չեզոք բայերը կազմում են միայն I բայախմբի բայաշարքեր, II և III բայախմբերի բայաձևեր նրանք չունեն:

Խոնարհման նմուշներ.

I ԲԱՅԱԽՈՒՄԲ

Ներկա

Եզ.	*1* ვბრწყინავ	ვკუნესი	ვცრემლოვი
	[փայլում եմ]	*[հառաչում եմ]*	*[արցունքակալում եմ]*
	2 ჰბრწყინავ	ჰკუნესი	სცრემლოვი
	3 ბრწყინავს	კუნესის	ცრემლოვის
Հոգն.	*1* ვბრწყინავთ	ვკუნესით	ვცრემლოვით
	2 ჰბრწყინავთ	ჰკუნესით	სცრემლოვით
	3 ბრწყინვენ	კუნესიან	ცრემლოვიან

Ներկայի հաճախական

Եզ.	*3* ბრწყინავნ	კუნესინ	ცრემლოვინ
	[փայլում է]	*[հառաչում է]*	*[արցունքակալում է]*
	(հաճախ)	*(հաճախ)*	*(հաճախ)*
Հոգն.	*3* ბრწყინვედ	კუნესიედ	ცრემლოვიედ

Անցյալ անկատար

Եզ.	*1* ვბრწყინევდ(ი)	ვკუნესოდე	ვცრემლოოდე
	[փայլում էի]	*[հառաչում էի]*	*[արցունքակալում էի]*
	2 ჰბრწყინევდ(ი)	ჰკუნესოდე	სცრემლოოდე
	3 ბრწყინვიდა	კუნესოდა	ცრემლოოდა
Հոգն.	*1* ვბრწყინევდით	ვკუნესოდეთ	ვცრემლოოდეთ
	2 ჰბრწყინევდით	ჰკუნესოდეთ	სცრემლოოდეთ
	3 ბრწყინვიდეს	კუნესოდეს	ცრემლოოდეს

Անցյալ անկատարի հաճախական

Եզ. 1	ვბრწყინვიდი	ვკუნესოდი	ვცრემლოოდი
	[փայլում էի] *(հաճախ)*	*[հառաչում էի]* *(հաճախ)*	*[արցունքակալում էի]* *(հաճախ)*
2	ჰბრწყინვიდი	ჰკუნესოდი	სცრემლოოდი
3	ბრწყინვიდის	კუნესოდის	ცრემლოოდის
Հոգն. 1	ვბრწყინვიდით	ვკუნესოდით	ვცრემლოოდით
2	ჰბრწყინვიდით	ჰკუნესოდით	სცრემლოოდით
3	ბრწყინვიდიან	კუნესოდიან	ცრემლოოდიან

I հրամայական

Եզ. 2	ბრწყინევდ(ი)	კუნესოდე	ცრემლოოდე
	[փայլի՛ր]	*[հառաչի՛ր]*	*[արցունքակալի՛ր]*
3	ბრწყინევდინ	კუნესოდენ	ცრემლოოდენ
Հոգն. 2	ბრწყინევდით	კუნესოდეთ	ცრემლოოდეთ
3	ბრწყინვიდედ	კუნესოდედ	ცრემლოოდედ

I ստորադասական (I տիպի)

Եզ. 1 ვბრწყინვიდე
2 ჰბრწყინვიდე
3 ბრწყინვიდეს
Հոգն. 1 ვბრწყინვიდეთ
2 ჰბრწყინვიდეთ
3 ბრწყინვიდენ

ვკუნესი *և* ვცრემლოვი *բայերը* I *ստորադասականում* (I *տիպի*) *խոնարհվում են այնպես, ինչպես անցյալ անկատարի հաճախականում, միայն թե հետագա շրջանի հուշարձաններում հոգնակի թվի 3-րդ դեմքում* ოდიან *վերջավորության փոխարեն հաճախադեպ է* ოდინ-*ը:*

Ներկա

ա) Ենթակայական կարգով			*բ) Խնդրային կարգով*		
Եզ. 1.3	უყუარ	ვსძულ	3.1	მიყუარს	მძულს
	[սիրում եմ]	*[ատում եմ]*		*[սիրում եմ]*	*[ատում եմ]*
2.3	უყუარ	სძულ	3.2	გიყუარს	გძულს
3.3	უყუარს	სძულს	3.3	უყუარს	სძულს

Հոգն. 1.3 უყუართ	ვსძულთ	Ներ. გჳყუარს	გუძულს
2.3 უყუართ	სძულთ	Արտ. მიყუარს	მძულს
3.3 უყუარან	სძულან	3.2 გიყუარს	გძულს
		3.3 უყუარს	სძულს

Կայուն կրավորական և չեզոք բայերը հին վրացերենում օժանդակ բայ չեն առնում, ինչպես այդ նոր վրացերենում է, օրինակ՝ მგონიე—მგონიბარ, გგონიე—გგონივარ; რაოდენმე უფროჲს მიყუართ თქუენ, უმცირჱს გიყუარ მე [*Ցառաւել սիրոյն զձեզ սակաւ սիրիցեմ*] (*Բ Կորնթ. ԺԲ, 15*)։

195. გუალი: *Այս խիստ ինքնատիպ բայը հին վրացերենում փոխվում է միայն ըստ դեմքի և համընկնում է միմիայն հրամայական եղանակի բայաձևով։ Այն գործածվում է և՛ առանց նախադրի* (გუალი, ვიდოდე მშჳდობით [*Երթ ի խաղաղութիւն*]) (*Ղուկ. Է, 50*), *և՛ տարբեր նախադրյերի կցմամբ՝* აღგუალი, აღმოგუალი, განგუალი, მიგუალი, წარგუალი *և այլն։ Վկայություններ հուշարձաններից.* მეგობარო, აღმოგუალი ზემო კერძო [*Բարեկամ, ի վեր մատիր*] (*Ղուկ. ԺԴ, 10* E) (მეგობარო, აღ-რე-გუალი ზემო კერძო C *խմբ.*)։ მიგუალი და უჩუენე თავი შენი მღდელსა [*Երթ ցո՛յց զքեզ քահանային*] (*Մարկ. Ա, 44* C)։ ლაზარე, აღდეგ და გამოგუალი [*Ղազարէ՛, արի ե՛կ արտաքս*] (*Յովհ. ԺԱ, 43* C)։ განგუალი, განგუალი, კაცი ეგე მოსისხლჱ და საცნჱ უსჯულოებითა [*Ե՛լ ե՛լ այր արեանց՝ և այր անօրէն*] (*Բ Թագ. ԺԶ, 7*)։ წარგუალეთ ჩემგან, წყეულნო, ცეცხლსა მას საუკუნესა [*Երթա՛յք յինէն՝ անիծեալք ի հուրն յաւիտենական*] (*Մատթ. ԻԵ, 41* C)։ მოგუალეთ, შევიდეთ ჩუენ გალგალად [*Ելցուք մեք առ ձեզ*] (*Ա Թագ. ԺԱ, 10*)։

ԲԱՐԴ ԲԱՅԵՐ

196. Հին վրացերենում կան բայեր, որոնք բարդ են կոչվում իրենց կազմության պատճառով։ Դրանք միմյանց հետ սերտորեն կապակցված անուն ու բայ են, կամ՝ մակբայ և բայ, որոնցից անունը ներկայացված է լինում որևէ հոլովով, իսկ բոլոր դեպքերում աննախադրբայ բայը խոնարհվում է։ Անունը կարող է դրված լինել ուղղական, տրական, սեռական, գործիական և պարագայական հոլովներով։

Անունը կարող է լինել գոյական, ածական, բայանուն, անգամ գոյականացված դիմավոր բայաձև։ Բայը կարող է լինել ինչպես անցողական, այնպես էլ անանցողական, գործածված յուրադարձ, այլադարձ, համա-

դարձ հեկրավ: Ըստ սեռի բարդ բայերը առավելապես ներգործական են, հազվադեպ՝ կրավորական կամ չեզոք:

Իբրև բարդ բայերի խոնարհվող մաս հիմնականում գործածվում են հետևյալ բայերը՝ ყოფვაჲ [*անել*], ცემაჲ [*տալ*], ღებაჲ [*բացել*], დებაჲ [*դնել*], გებაჲ [*հատուցել*], დგმაჲ [*դնել*], კლვაჲ [*սպանել*], წიფებაჲ [*հասնել*], თქუმაჲ [*ասել*], პყრობაჲ [*բռնել*], ცუმაჲ [*լցնել, հանել*] *և այլն:* ***Սրանցից առավել հաճախ է գործածվում*** **ყოფაჲ-ն, *որից կազմվում են.*** ამბორს-უყო, ბრძოლა-უყო, გზა-უყო, გულისჴმა-ყო, ზრახვა-ყო, თუალ-უყო, იავარ-ყო, მზა-უყო, მზირ-უყო, მიზეზ-ყო, სიტყუა-ყო, უვარ-ყო, უგულებელს-ყო, შეურაცხ-ყო, შებმა-უყო, ძიება-ყო, წამ-უყო, წმიდა-ყო, წყალობა-ყო, ჴელ-ყო, ჴმა-ყო *և այլն:*

197. Դեմքի քանակի հարցը բարդ բայերում: *Բարդ բայերի կազմության մեջ մտնող անունը ծագումով հաճախ ուղիղ խնդիր է, սակայն կցվելով բային, դադարում է խնդիր լինելուց, ուստի բարդ բայը մեկ դեմք պակաս ունի, քան նրա մեջ մտնող բայը՝ առանձին վերցրած: Օրինակ,* ყო-ն *երկդեմ է (նա այն), սակայն* ჴმა-ყო-ն *միադեմ է (նա),* უყო-ն *եռադեմ է (նա նրան այն), սակայն* ჴმა-უყო-ն *երկդեմ է (նա նրան): Առանձին վերցրած՝* სცა-ն *եռադեմ է (օրինակ.* იაკობ სცა ესავს პური [*Յակոբ եւ Եսաւայ հաց*]) (*Ծննդ. ԻԵ, 34*), *սակայն* ნათელ-სცა-ն *երկդեմ է (նա նրան): Ուղիղ խնդիր են առնում այն բարդ բայերը, որոնց կազմության մեջ մտնող անունը ածական է կամ դերբայ.* შეურაცხ-ყო (*նա այն*), უგულებელს-ყო (*նա այն*), წმიდა-ყო (*նա այն*), მზა-უყო (*նա նրան այն*) *և այլն, ինչպես նաև այն բայերը, որոնց կազմության մեջ մտնող անունը ծագումով անուղղակի խնդիր է, օրինակ՝* თავს-იდვა, ჯუარს-აცუ:

198. Անվան հոլովաձևը բարդ բայերում: *Քանի որ շատ դեպքերում բարդ բայի մաս հանդիսացող անունը ուղիղ խնդիր է, իսկ այն հոլովաձև է, ուստի հնարավոր է՝ անունը I բայախմբի բայաշարքերի բայաձևերի հետ առնա տրական հոլովի հոլովակերտ, սեփականի այն և փոխանցի II բայախմբի բայաշարքերին: Այս առումով խիստ ուշագրավ է* ამბორის-ყოფაჲ (ამბოვრის-ყოფაჲ) *բայը, որի անվան* (ამბორი) ***և հոլովակերտը առաջինից բացի անցնում է և II բայախմբին.*** ამბორს-უყოფს, ამბორს-უყო: ***Վկայություններ.*** დედაკაცი ვინმე ამბორს-უყოფდა ფერჴთა მისთა [***Համբուրէր զոտս նորա***] (*Ղուկ. Է, 38,* ამბოვრს-უყოფდა E): რომელსა მე ამბორს-უყო, იგი არს, შეიპყართ იგი! და მეყსეულად მოუჴდა (იუდა) იესუს და ჰრქუა: „გიხაროდენ, მოძღუარ"! და ამბორს-უყო

მას [Ընդ որում ես համբուրեցից՝ նա է, զնա ունիցիք։ Եւ վաղվաղակի մատուցեալ առ Յիսուս ասէ. ողջ լեր, վարդապետ. և համբուրեաց ընդ նմա] (Մատթ. ԻԶ, 48—49)։

Վկայակոչենք նաև այլ բարդ բայեր.

გზა-უყო: გზა-უყავთ მას, რომელი-იგი ამაღლდა დასავალით [Ճանապարհ արարէք այնմիկ, որ նստի ընդ արեւմուտս] (Սաղմ. ԿԷ, 5 Ղ)։ Սրա փոխարեն C խմբագրությունում ընթերցվում է այլ բարդ բայ. გზა-ეცით [Ճանապարհ տվեք]։

გულისჴმა-ყო: გულისჴმა-ყო იესუ ზაკულებაჲ იგი მათი [Գիտաց Յիսուս զչարամտութիւն նոցա] (Մատթ. ԻԲ, 18)։ რომელმან აღმოიკითხვიდეს, გულისჴმა-ჰყოფდინ [Որ ընթեռնուն՝ ի միտ առցէ] (Մատթ. ԻԴ, 15 C)։

თავ-უყო: თავ-უყავ მამასა და დედასა [Պատուեա զհայր քո և զմայր] (Մատթ. ԺԵ, 4 C)։ და არა თავ-ჰყოს მამასა თჳსსა [Եւ ոչ պատուիցէ զհայր իւր (Մատթ. ԺԵ, 6 C)։ Սրանց փոխարեն DE խմբագրություններում այլ բարդ բայ՝ პატივ-ეც [Պատիվ տուր] მამასა შენსა და დედასა შენსა (Մատթ. ԺԵ, 4)։ და არა პატივ-სცეს მამასა თჳსსა (Մատթ. ԺԵ, 6)։

თუალ-უყო: თუალ-უყოფდეს (თუალს-უყოფდეს C) მამასა მისსა [Ակն արկէին հօրն նորա] (Ղուկ. Ա, 62)։ თუალ-უყვნა მას სიმონ-პეტრე [Ակն արկէր նմա Սիմոն Պետրոս] (Յովհ. ԺԳ, 24 C)։ DE-ում օգտագործված այս համապատասխանությունը բոլորովին այլ բարդ բայ է. წამ-უყვნა [Աչքով արեց]։

მზირ-უყო: მზირ-უყვეს მას და მიავლინნეს მზირნი ორგულნი [Սպասեցին և առաքեցին դաւաճանս կեղծաւորեալս] (Ղուկ. Ի, 20)։

მზა-უყო: ჰეროდე ქამსა შობისა მისისასა მზა-უყო პური მთავართა მისთა [Ընթրիս առնէր Հերովդէս յաւուր ծննդոց իւրոց նախարարաց իւրոց] (Մարկ. Զ, 21)։ აჰა ესერა პური ჩემი მზა-მიყოფიეს [Ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի] (Մատթ. ԻԲ, 4)։

უდებ-ყოფაჲ: მათ უდებ-ყვეს [Նոքա յուլացեալ] (Մատթ. ԻԲ, 5)։

შეურაცხ-ყოფაჲ: ჰეროდე შეურაცხ-ყო იგი [Հերովդէս անարգ արարեալ] (Ղուկ. ԻԴ, 11)։ (ფარისეველნი) ვეცხლის მოყუარე იყვნეს და შეურაცხ-ჰყოფდეს მას [Փարիսեցիքն՝ քանզի արծաթասէրք էին, անարգէին զնա] (Ղուկ. ԺԶ, 14)։

198. **ცემა-ჲ:** თაყუანის-ცემაჲ (თაყუანის-ცემაჲ, თაყუანის ცემაჲ), ნათლის-ცემაჲ, პატივის-ცემაჲ, გზის-ცემაჲ, ნუგეშინის-ცემაჲ.

თაყუანის-ცემაჲ: რაჲთა მეცა მივიდე და თაყუანის-ვსცე მას [Զի և ես եկեալ երկիր պագից նմա] (Մատթ. Բ, 8)։ თაყუანის-ეც მამასა შენსა

სა [*Կաց յաղօթս առ հայր քո*] (*Մատթ. Զ, 6*)։ უფალსა ღმერთსა შენსა თაყუანის-ჰსცე [*Երկիր պագցես տեառն աստուծոյ քում*] (*Ղուկ. Դ, 8*)։ *Այս բառն ունի ո-նախածանցավոր կրավորական՝* თაყუანის-იცემების:

ნათლის-ცემაჲ: აჴ მე ნათელ-გცემ თქუენ წყლითა [*Ես մկրտեմ զձեզ ջրով*] (*Մատթ. Գ, 11*)։ *Այս բառի մեջ մտնող անունը հաճախ գրվում է առանձին՝* ამა იგი ნათელს-სცემს [*Ահաւասիկ նա մկրտէ*] (*Յովհ. Գ, 26 C*)։ ნათელს-სცემდით [*մկրտեսջիք*] (*Մատթ. ԻԸ, 19 C*)։

ნუგეშინის ცემაჲ: *Այս բարդ բառի առաջին մասը արդեկյական* ნუ გეშინის-*ի զուգակցված բաղադրյալն է՝* რაჲთამცა ნუგეშინის-სცეს მათ ძმისა მათისათჳს [*Զի մխիթարեսցին զնոսա վասն եղբորն*] (*Յովհ. ԺԱ, 19 C*)։

პატივის-ცემაჲ: ერი ესე ბაგითა მათითა პატივ-მცემს მე [*Ժողովուրդս այս շրթամբք պատուէ զիս*] (*Մատթ. ԺԵ, 8*)։ რომელმან პატივ-სცეს ძესა, მან პატივ-სცეს მამასა [*Որ պատուէ որդին, պատուէ զհայր*] (*Յովհ. Ե, 23*)։

200. ღებაჲ: ნათლის-ღებაჲ, ყურად-ღებაჲ, მუცლად-ღებაჲ:

ნათლის-ღებაჲ: ნათელს-იღებდეს მისგან იორდანესა ზედა [*Մկրտէին ի նմանէ ի Յորդանան գետ*] (*Մատթ. Գ, 6*)։ ნათელ-იღებდეს (ნათელს-იღებდეს C) მისგან იორდანესა მდინარესა [*Մկրտէին ի նմանէ ի Յորդանան գետ*] (*Մարկ. Ա, 5*)։ მოვიდა იესუ და ნათელ-იღო იოვანესგან იორდანესა [*Եկն Յիսուս և մկրտեցաւ ի Յովհաննէ ի Յորդանան*] (*Մարկ. Ա, 9*)։ ნათელ-სცა [*մկրտեց*], ნათელ-იღო [*մկրտվեց*]։

მუცლად-ღებაჲ: შენ მუცლად-იღო და ჰშვე ძჱ [*Յղասցիս և ծնցես որդի*] (*Ղուկ. Ա, 31*)։

ყურად-ღებაჲ: ყურად-იღე ლოცვისა ჩემისაჲ [*Ունկն դիր աղօթից իմոց*] (*Սաղմ. ԺԶ, 1*)։

201. გებაჲ: სიტყჳს-გებაჲ: ესრჱთ სიტყუას-უგებ მღდელთ-მოძღუარსა [*Այդպէս պատասխանի տաս քահանայապետին*] (*Յովհ. ԺԸ, 22*)։ შურის-გებაჲ: ღმერთმან არა-მე ყოს შურის-გებაჲ რჩეულთა მისთაჲ [*Աստուած ո՞չ առնիցէ վրէժխնդրութիւն ծառայից իւրոց*] (*Ղուկ. ԺԸ, 7*)։

202. დებაჲ: თავს-დებაჲ: ვიდრემდე თავს-ვიდებდე თქუენსა? [*Մինչև յերբ անսայցեմ ձեզ*] (*Մատթ. ԺԷ, 17*)։ *Եթե աղիք խնդիրը հոգնակի թիվով է,* დება-*ն փոխարինվում է* სხმაჲ-*ով*. მან უძლურებანი ჩუენნი თავს-ისხნა [*Նա զհիւանդութիւնս մեր վերացոյց*] (*Մատթ. Ը, 17*)։ *Այստեղ* თავი-*ն օգտագործված է անդրադարձ դերանվան նշանակությամբ*:

სახელის-დებაჲ: თუალს-უყოფდეს მამასა მისსა, რაჲძი უნდეს სახელის-დებად მისა [*Ակն ունէին հօրն նորա՝ թէ զինչ կամիցի կոչել զնա*] (*Ղուկ. Ա, 62*)։

რომელ ჰმობდა ტაძარსა მას შინა [*Իբրև տեսին քահանայապետքն և դպիրք զմանկունսն որ աղաղակէին ի տաճարին*] (*Մատթ. ԻԱ*, 15 C)։ მეცხრესა ოდენ ჟამსა ჰმა-ყო იესუ ჰმითა დიდითა და თქუა [*Ջինն ժամուն գոչեաց Յիսուս ի ձայն մեծ և ասէ*] (*Մատթ. ԻԷ, 46*)։

უვარებს—უვარ-ყო: ვითარცა ყოველნი უვარებდეს, თქუა პეტრე [*Իբրև ամենեքեան ուրանային, ասէ Պետրոս*] (*Ղուկ. Ը, 45*)։ მერმეცა უვარ-ყო პეტრე ფიცით [*Դարձեալ ուրացաւ երդմամբ*] (*Մատթ. ԻԶ, 72*)։

Ե՛վ բարդ, և՛ պարզ բայերը հանդիպում են հավասարապես. იცოდეს ღმერთი და არა ღმრთეებრ ადიდებდეს, გინა მადლ-სცემდეს [*Ծանեան զաստուած, և ոչ իբրև զաստուած փառաւորեցին՝ կամ գոհացան*] (*Հռովմ. Ա, 21* AB)։ *Նույն համարի* CD *խմբագրությունում կարդացվում է այսպես՝* იცოდეს ღმერთი და არა ღმრთეებრ ადიდებდეს მას, გინა ჰმადლობდეს։

208. Խոնարհման նմուշներ.

შეურაცხ-ვჰყოფ (*երկբաղ բայ, ուղիղ-խնդրային*), თაყუანის-ვსცემ (*երկբաղ, անուղղակի-խնդրային*[1])։

ա) Ենթակայական կարգով

Ներկա

Եզ. 1.3	შეურაცხ-ვჰყოფ [*այպանում եմ*]		თაყუანის-ვსცემ [*երկրպագում եմ*]
2.3	„ -ჰყოფ		„ -სცემ
3.3	„ -ჰყოფს		„ -სცემს
Հոգն. 1.3	„ -ვჰყოფთ		„ -ვსცემთ
2.3	„ -ჰყოფთ		„ -სცემთ
3.3	„ ჰყოფენ		„ -სცემენ

Անցյալ կատարյալ

Եզ. 1.3	შეურაცხ-ვყავ	[*այպանեցի*]	თაყუანის-ვეც	[*երկրպագեցի*]
2.3	„ -ჰყავ		„ -ეც	
3.3	„ -ყო		„ -სცა	
Հոգն. 1.3	„ -ვყავით		„ -ვეცით	
2.3	„ -ჰყავით		„ -ეცით	
3.3	„ -ყვეს		„ -სცეს	

[1] *Բերում ենք միայն որոշ բայաշարքերի բայաձևեր.*

բ) Խնդրային կարգով

Ներկա

Եզ. 3.1	ზარ-მაც[1] *[սարսում եմ]*	თანა-მაც *[պարտավոր եմ]*	ძალ-მიც *[կարող եմ]*
3.2	„ -გაც	„ -გაც	„ -გიც
3.3	„ -აც	„ -აც	„ -უც
Հոգն. Ներ.	„ -გუაც	„ -გუაც	„ -გუიც (-გჳც)
Արտ.	„ -მაც	„ -მაც	„ -მიც
3.2	„ -გაც	„ -გაც	„ -გიც
3.3	„ -აც	„ -აც	„ -უც

Անցյալ կատարյալ

Եզ. 3.1	ზარ-მედვა *[սարսեցի]*	თანა-მედვა *[պարտավոր էի]*	ძალ-მედვა *[կարող էի]*
3.2	„ -გედვა	„ -გედვა	„ -გედვა
3.3	„ -ედვა	„ -ედვა	„ -ედვა
Հոգն. Ներ.	„ -გუედვა	„ -გუედვა	„ -გუედვა
Արտ.	„ -მედვა	„ -მედვა	„ -მედვა
3.2	„ -გედვა	„ -გედვა	„ -გედვა
3.3	„ -ედვა	„ -ედვა	„ -ედვა

ՓՈԽԱՐԻՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

209. Փոխարինելի են անվանվում այն բայերը, որոնք բառային նշանակությամբ նույնանիշներ են, սակայն տարբերվում են իրարից գործածության առումով։ Հին վրացերենում փոխարինելիություն է տեղի ունենում ըստ թվի, բայաշարքի և դարձության. բայերից մեկը գործածվում է եզակի թվում, մյուսը՝ հոգնակի թվում, կամ՝ որոշ բայաշարքերում գործածվում է մի բայ, այլ բայաշարքերում՝ մեկ ուրիշը։ Որոշ բայեր փոխարինելի են ըստ երկու կարգի՝ թվի և բայաշարքի։ Հանդիպում է նաև փոխարինելիություն ըստ դարձության։

Փոխարինելիությունը ըստ թվի տեղի է ունենում համաձայն ենթակայական կամ ուղիղ-խնդրային դեմքի. անանցողական բայերը փոխարինվում են ըստ ենթակայական դեմքի թվի, անցողականները՝ ըստ ու-

[1] ზარ-მაც *բայը ըստ էության միադեմ է։*

դիք-խնդրային դեմքի թվի։ Այսուհանդերձ, եթե ուղիղ խնդիրը դրված է հոգնակի թվով, իսկ բայը՝ II բայախմբի որևէ բայաշարքով, ապա անհրաժեշտ է, որ խնդրի թիվը բայաձևում արտահայտվի ენ/ნ-ի միջոցով. აღვიღე ქვაჲ [վերցրեցի քար]—აღვიხუენ ქვანი [վերցրեցի քարեր], აღიღო ქვაჲ [վերցրեց քար]—აღიხუნა ქვანი [վերցրեց քարեր]։

Ըստ թվի ասելով՝ նկատի ունենք եզակին և ნ-ով հոգնակին, սակայն անհրաժեշտ է գիտենալ, որ հոգնակի թվի համար նախատեսված բայը կարող է օգտագործվել և եզակի թվի 3-րդ դեմքի բայաձևով այն դեպքում, եթե նրան համաձայնող անունը հավաքական է (ერი [զորք, ժողովուրդ], გუნდი [գունդ, խումբ], სიმრავლეჲ [բազմություն])։

ՓՈԽԱՐԻՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԹՎԻ

210. Փոխարինելիություն ըստ ենթակայական դեմքի թվի։

ვ||სხ-ენ: *Եզակի թվում այլադարձության ձևով գործածվում է* **ვ** *հիմքը՝* მივის [*ունեմ*], *որը ասվում է մարդկանց, առանձնապես մոտիկ ազգականների, վերաբերյալ.* მივის მამაჲ, დედაჲ, დაჲ, ძმაჲ, შვილი, ძჱ, ასული, ქმარი, ცოლი, მეზობელი, მოწაფჱ: *Հոգնակիում գործածվում է* **სხ-ენ-ը** *նորից այլադարձության ձևով.* მისხენ (მამა-დედანი, ძმანი, დანი); მისხენ ხუთნი ძმანი [*են իմ անդ եղբայրք հինգ*] (*Ղուկ. ԺԶ, 28*)։

ზი||სხედ: *Եզակիում՝* **ზი** (ვზი [*նստած եմ*], ჰზი [*նստած ես*], ზის [*նստած է*]), *իսկ հոգնակիում՝* **სხედ**. ვსხედთ [*նստած ենք*], ჰსხედთ [*նստած եք*], სხენან [*նստած են*] (*տարնմանությամբ՝* სხედან-*ի փոխարեն*)։ *Ներկայի եզակի 3-րդ դեմքի ձևն է՝* სხედს (სხედს ერი), *իսկ ներկայի հաճախականի՝* ზინ, სხენედ (*տարնմանությամբ՝* სხედედ-*ի փոխարեն*)։

ჯდე||სხედ: *Եզակիում՝* **ჯდე** (ვჯდე [*նստեցի*], შჯდე [*նստեցիր*], ჯდა [*նստեց*]), *իսկ հոգնակիում՝* **სხედ**. ვსხედით [*նստեցինք*], ჰსხედით [*նստեցիք*], სხდეს [*նստեցին*]։ *Եզակի թվի 3-րդ դեմքի ձևն է՝* სხდა (სხდა ერი)։

	Ներկա	Անցյալ կատ.	II ստորադ. (II ըղձական)
Եզ. *1*	ვჯდები [*նստում եմ*]	დავჯედ [*նստեցի*]	დავჯდე [*կնստեմ*]
2	სჯდები (შჯდები)	დასჯედ (დაშჯედ)	დასჯდე (დაშჯდე)
3	ჯდების||სხდების	დაჯდა||დასხდა	დაჯდეს||დასხდეს

Հոգն.	*1* ვსხდებით	დავსხედით	დავსხდეთ
	2 ჰსხდებით	დაჰსხედით	დაჰსხდეთ
	3 სხდებიან	დასხდეს	დასხდენ

შთავრდომა||შთაცჳვნა [*ընկնել*]։ *Եզակիում՝* ვრდომა, *հոգնակիում՝* ცჳვნა. მრავალ გზის შთავარდის იგი ცეცხლსა [*Բազում անգամ անկանի ի հուր*] (*Մատթ. ԺԷ, 15*)։ ბრმაჲ ბრმასა თუ წინა-უძღჳნ, შესცთიან და ორნივე მთხრებლსა შთაცჳვიან [*Կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ, եւ երկոքին ի խորխորատ անկանին*] (*Մատթ. ԺԵ, 14*)։

211. Փոխարինելիություն ըստ ուղիղ-խնդրային դեմքի թվի։

ღ-ება||**ხუ**-მა: *Այս հիմքերը առանց նախադրալի չեն գործածվում։ Նախադրալավոր բայաձևերի օրինակներ են.* აღ-იღებს—აღ-იხუამს [*վերցնում է, բարձրացնում է*], აღიღო—აღიხუნა [*վերցրեց, բարձրացրեց*], მოი-ღებს—მოიხუამს [*վերցնում է, տանում է*], მოიღო—მოიხუნა [*վերցրեց, տարավ*], შე-იღებს—შე-იხუამს [*վերցնում է, ընդունում է*], შეიღო—შეიხუნა [*վերցրեց, ընդունեց*], წარ-უღებს—წარ-უხუამს [*խլում է*], წარ-უღო—წარ-უხუ-ნა [*խլեց*], აღ-აღო—აღახუნა: აღაღო პირი [*բացեց բերանը*], აღახუნა ბაგენი [*բացեց շրթունքները*], ბაგენი ჩემნი აღახუენ [*Զշրթունս իմ բանաս*] (*Սաղմ. Ծ, 17*), გან-აღო—გან-ახუნა, განაღო კარი [*բացեց դուռը*], განახუნა კარნი [*բացեց դռները*]։

მოღებაჲ წიგნისაჲ [*վերցնելը գրքի*], მოხუმაჲ წიგნთაჲ [*վերցնելը գրքերի*], განღებაჲ კარისაჲ [*բացելը դռան*], განხუმაჲ კართაჲ [*բացելը դռների*]։ *Եթե բայը գործածենք կրավորական, փոխարինելիությունը կլինի ըստ ենթակայական դեմքի թվի.* განმეღო კარი [*Բացվեց իմ համար դուռը*], განმეხუნეს კარნი [*Բացվեցին իմ համար դռները*]։

გდ-ება||**სხ**-მა, შე-**გდ**-ება, შე-**სხ**-მა. შემაგდეს საპყრობილესა ცუდად; შემსხნეს საპყრობილესა ცუდად [*Արկին ի բանտ*] (*Գործք առաք. ԺԶ, 37*)։ განაგდეს იგი გარეშე საყურძენსა მას [*Հանին արտաքոյ այգւոյն (Նրան)*] (*Մարկ. ԺԲ, 8 C*)—განასხნეს იგინი [*հանեցին նրանց*]

სუ-მა||**სხ**-მა, და-**სუ**-მა||და-**სხ**-მა: *Եթե* დავსუა იგი საყდართა შენთა [*Նստուցից յաթոռ քո*] (*Սաղմ. ՃԼԱ, 11*) *Նախադասությունը փոխենք և* იგი-*ի փոխարեն դնենք* იგინი, *ապա կստանանք.* დავსხნე იგინი საყდართა შენთა; ჰრქუა უფალმან უფალსა ჩემსა: დაჯედ მარჯუენით ჩემსა, ვიდრემდის დავსხნე მტერნი შენნი ქუეშე ფერჴთა შენთა [*Ասաց տէր ցտէր իմ. Նիստ ընդ աջմէ իմմէ, մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց*] (*Մատթ. ԻԲ, 44*)։

დასხმა *է ասվում նաև հագուստի մասին, որն ընկալվում է իբրև հավաքական անուն.* და მოჰგუარეს ვირი იგი და კიცჳ მის თანა და დაასხეს სამოსელი მის ზედა, და დაჯდა იესუ მას ზედა [*Ածին զէշն եւ*

զյաւանակն, և արկին զնոցա ձորձս, և նստաւ Յիսուս ի վերայ նորա] (Մատթ. ԻԱ, 7)։ დამისხენ საჭედარსა, და მე თჳთ წარვიდე [Դրեք (հագուստը) գրաստի վրա, և ես ինքս կգնամ] (Վարք Յովհ. և Եփ.)։

დ-ება||სხ-მა: Այս բայերը առավելապես գործածվում են նախաբայերով. დადება—დასხმა [դնել], შთადება—შთასხმა [վերևից մեջը դնել], შედება—შესხმა [ներս դնել] և այլն։ დადვა იგი, დასხნა იგინი; დადვა საზღვარი [դրեց սահման], დასხნა საზღვარნი [դրեց սահմաններ]։ Նույնպես დასდვა-ին փոխարինում է նույնպես նույնպես დაასხნა-ն. დასდვა მას ჴელი [դրեց նրան ձեռք]*, დაასხნა მას ჴელნი [դրեց նրան ձեռքեր]։ კათალიკოზმან საეპისკოპოსოჲსა მის ჴელთა დასხმაჲ ეპისკოპოსად არა ინებ[ა]ს [Կաթողիկոսը չկամեցավ այդ եպիսկոպոսության եպիսկոպոս ձեռնադրել] (Վարք Խանձթ.)։

გან-ძ-ება||გან-სხ-მა: განაძო კაცი [հալածեց, վտարեց մարդ], განასხა ერი [հալածեց ժողովուրդ], განასხნა იგინი [հալածեց նրանց]։ გამოაძო იგი, გამოაძო იგინი [վռնդեց նրան, վռնդեց նրանց]։ ურჩთა განასხმიდა, რამეთუ ოპიზელთ ბერი ერთი იტყოდა, ვითარმედ სიჭაბუკესა ჩემსა სამ გზის ოპიზით განძებულ ვიქმენ მამისა გრიგოლისგან [Անհնազանդներին վտարում էր, որովհետև մի օպիզացի աբեղա ասում էր, թե երիտասարդության ժամանակ երեք անգամ վտարվել եմ Օպիզայից հայր Գրիգորի կողմից] (Վարք Խանձթ.)

გდ-ება||ყრ-ა, და-გდ-ება||და-ყრ-ა: Ավետարանում կարդում ենք. მან დააგდო ფიჩჳ თჳსი [Նորա ընկեցեալ զձորձս իւր] (Մարկ. Ժ, 50 C), իսկ մեկ այլ անգամ՝ და დაყარნა კაპარჭნი თჳსნი ეშმაკმან [Եվ նետեց սատանան իր կապարճները] (Սին. ճառընտիր, 224, 6)։

Ըստ թվի փոխարինելիություն է տեղի ունենում նաև I բայախմբի բայաշարքերում (აღვიღებ ქვასა [Բարձրացնում եմ քար], აღვიხუამ ქვათა [բարձրացնում եմ քարեր]) և բայի անցյալ ձևերում. აღებაჲ ქვისაჲ [բարձրացում քարի], აღხუმაჲ ქვათაჲ [բարձրացում քարերի], ქვაჲ აღებული [քար բարձրացրած], ქვანი აღხუმულნი [քարեր բարձրացրած] և այլն։

ՓՈԽԱՐԻՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԲԱՑԱՌԱՐԿԻ

212. ვარ բայը I բայախմբի բայաշարքերից ունի միայն ներկա և ներկայի հաճախական, իսկ II և III բայախմբերի բայաշարքերում նրան փոխարինում են ყოფა բայի կրավորական սեռի բայաձևերը, որոնք

* Բառ՝ ձեռնադրեց։

կորցրել են սեռի իմաստը, սակայն պահպանել են կրավորական ձևը, որն և երևում է հոգնակի թվում։

Ներկա		Ներկայի ճանախական	Անցյալ կատարյալ	II ստորադասական (II ապառնի)
Եզ.	*1* ვარ(ი) [*եմ*]	—	ვიყავ [*եղա*]	ვიყო [*կլինեմ*]
	2 ხარ(ი)	—	იყავ	იყო
	3 არს	არნ	იყო	იყოს
Հոգն.	*1* ვართ	—	ვიყვენით	ვიყვნეთ
	2 ხართ	—	იყვენით	იყვნეთ
	3 არიან	არიედ	იყვნეს	იყვნენ

	Ճնունանք·	II ճնունանք.	III ստորադաս.
Եզ. *1*	ყოფილ ვარ [*եղել եմ*]	ყოფილ ვიყავ [*եղել եմ*]	ყოფილ ვიყო [*եղած լինեմ*]
2	„ ხარ	„ იყავ	„ იყო
3	„ არს	„ იყო	„ იყოს
Հոգն. *1*	„ ვართ	„ ვიყვენით	„ ვიყვნეთ
2	„ ხართ	„ იყვენით	„ იყვნეთ
3	„ არიან	„ იყვნეს	„ იყვნენ

არცა იყო, არცა არს, არცა ყოფად არს [*Ո՛չ եղավ, ո՛չ կա, ո՛չ էլ լինելու է*] (*Սին. ձառընտիր, 43,3*)։

Ձօ բայը փոխարինելի է և՛ ըստ թվի, և՛ ըստ բայաշարքի·

Ներկա		Ներկայի ճանախական	Անցյալ կատարյալ	II ստորադասական (II ապառնի)
Եզ.	*1* ვზი [*նստած եմ*]	—	ვჯედ [*նստեցի*]	ვჯდე [*կնստեմ*]
	2 ჰზი	—	სჯედ (შჯედ)	სჯდე (შჯდე)
	3 ზის‖სხედს	ზინ	ჯდა‖სხდა	ჯდეს‖სხდეს
Հոգն.	*1* ვსხედთ	—	ვსხედით	ვსხდეთ
	2 ჰსხედთ	—	ჰსხედით	ჰსხდეთ
	3 სხენან	სხენედ	სხდეს	სხდენ

კაცი ჯდა [*մարդը նստեց*], ერი სხდა [*ժողովուրդը, զորքը նստեց*], ჯდომად კაცისად [*մարդու նստելը*], სხდომად ერისად [*ժողովրդի, զորքի*

նստել], კაცი მჯდომარე [նստած մարդ], ერი მსხდომარე [նստած ժողովուրդ, զորք]։

სხ հիմքով բայերը փոխարինում են այլաձև բայերի. მივის—მისხენ [դնեմ], მესუა—მესხნეს [դնեի], დასუა—დასხნა, დადვა—დასხნა, დასდვა—დაასხნა [դրեց, դրեց], განაგდო—განასხნა, განაძო—განასხნა [վտարեց, արտաքսեց]։

ვალ || ვედ, ვდი [գնալ] բայերը գործածվում են նաև առանց նախդրի, սակայն ավելի հաճախ նրանք նախդիր ունեն. მოვალ, მავალ, შევალ, გარდავალ և այլն։

ვალ բայը I բայախմբի բայաշարքերից ունի միայն ներկա և ներկայի հաճախական։ II բայախմբում նրան փոխարինում է ვედ, ვიდ-ը, իսկ ვიდ-ը գործածվում է նաև I բայախմբի անկանոնավոր բայաշարքերում. ვიდოდა, ვიდოდის:

III բայախմբի բայաձևերը կազմվում են դերբայի միջոցով. მოსრულ ვარ, მოსრულ ვიყავ, მოსრულ ვიყო:

Ներկա		Ներկայի հաճախական	Անցյալ կատարյալ	II հաճախական	II ստորադասական (II պայմանի)
Եզ.	1 მი-ვალ [գնում եմ]	—	მი-ვედ [գնացի]	მი-ვიდი [գնացի] (հաճախ)	მი-ვიდე [գնամ]
	2 „ -ხუალ	—	„ -ხუედ	„ -ხჳდი	„ -ხჳდე
	3 „ -ვალს	მი-ვალნ	„ -ვიდა	„ -ვიდის	„ -ვიდეს
Հոգն.	1 „ -ვალთ	—	„ -ვედით	„ -ვიდით	„ -ვიდეთ
	2 „ -ხუალთ	—	„ -ხუედით	„ -ხჳდით	„ -ხჳდეთ
	3 „ -ვლენ („-ვლენან)	მი-ვლედ (მი-ვლენედ)	„ -ვიდეს	„ -ვიდიან	„ -ვიდენ

იტყჳს բայը երկդեմ է [ասում է նա իրեն] և ունի միայն I բայախմբի բայաձևեր (იტყჳს [ասում է], იტყოდა [ասում էր], იტყოდის [ասելու է] և այլն)։ II և III բայախմբերում նրան փոխարինում է երկդեմ თქუა-ն (თქუა [ասաց], თქჳს [ասաց (հաճախ)], თქუას [կասի] և այլն։ უთქუამს [ասել է], ეთქუა [ասել էր] և այլն)։

ეტყჳს բայը եռադեմ է [ասում է նա նրան իրեն] և նույնպես ունի միայն I բայախմբի բայաձևեր։ II բայախմբում նրան փոխարինում է նույնպես եռադեմ ჰრქუა-ն կամ უთხრა-ն, իսկ III բայախմբում բայա-

ձևեր նա չունի (ընդհանրապես III բայախմբում բայը եռադեմ ձևեր չունի)։

ვ || სუ || სხ-ენ: Սրանցից ვ-ն և სუ-ն եզակի թվի հիմքեր են, իսկ სხ-ն՝ հոգնակի թվի։ ვ հիմքով բայը փոխարինելի է և՛ ըստ թվի, և՛ ըստ բայաշարքի։ Ըստ թվի փոխարինելիությունը ցույց է տրված վերևում (§ 210), ուստի այստեղ կքննարկենք փոխարինելիությունը ըստ բայաշարքի։

I բայախմբում ვ հիմքից (անդրադարձ գործության ձևով) կազմվում են ներկան և ներկայի հաճախականը. მივის, გივის, უვის (մյուս բայաշարքերը բացակայում են), իսկ II բայախմբի բայաշարքերում նրան փոխարինում է სუ-ն. მესუა, გესუა, ესუა; მესუას, გესუას, ესუას և այլն։ იყო ვინმე კაცი მდაბიოჲ და ესუა მას ცოლი და ესხნეს შვილნი [Կար մի գեղջուկ մարդ և ուներ կին ու ուներ երեխաներ] (Վարք. Յոանձ.)։ ხუთ ქმარ გესხნეს, და რომელა აწ გივის, არა ქმარი შენი არს [Այր հինգ փոխեալ է քո, և զոր այժմ ունիս՝ չէ քո այր] (Յովհ. Դ, 18)։

ესუა և ესხნეს բայերը կրավորական սեռի են (ըստ կազմության) անանցողական և փոխարինում են միմյանց ըստ ենթակայական դեմքի թվի։

Այս նույն բայերի հիմքից կազմվում են նախաբայավոր անցողական բայեր՝ დასუა և დასხა, որոնք փոխարինում են միմյանց ըստ ուղիղ-խնդրային դեմքի թվի։

ძეს բային II բայախմբի բայաշարքերում փոխարինում է ღდვა-ն։ ძეს-ը միադեմ է (აჰა ცული ძირთა თანა ხეთასა ძეს [Ահա տապարն առ արմին ծառոց դնի]) (Մատթ. Գ, 10), սակայն ավելի հաճախ գործածվում է նրա երկդեմ ձևը (აჰა ეგერა დირე გიც თუალსა შენსა [Ի քում ական գերանդ կայ]) (Մատթ. Է, 4 C)։ გიც ձևը առաջացել է გიძს բայաձևից ძს հնչյունակապակցության ձուլման հետևանքով։ მიც, გიც, უც բայաձևերը երկդեմ են, որոնց II բայախմբի բայաշարքերում համապատասխանաբար փոխարինում են նույնպես երկդեմ მედვა, გედვა, ედვა բայաձևերը։ Ուստի ունենք. ძალ-მიც—ძალ-მედვა [կարող եմ], ძალ-გიც—ძალ-გედვა [կարող ես], ძალ-უც—ძალ-ედვა [կարող է]; თანა-მაც (*თანა-მაძს)—თანა-მედვა [պարտավոր եմ], თანა-გაც—თანა-გედვა [պարտավոր ես], თანა-აც—თანა-ედვა [պարտավոր է]; ზედა-მაც—ზედა-მედვა [պարտավոր եմ]; ზარ-მაც [ալարում եմ], ზარ-გაც [ալարում ես], ზარ-აც [ալարում է] (տե՛ս նաև § 205)։

213. *Հին վրացերենում բայերը ինչ դարձությամբ որ խոնարհվում են I բայախմբի բայաշարքերում, նույն դարձությամբ էլ խոնարհվում են II բայախմբում.* ა-ქებს—ა-ქო, ი-მარხავს—ი-მარხა, მი-უ-გებს—მი-უ-გო *և այլն: Սակայն կան մի շարք բայեր, որոնք I բայախմբում օգտագործվում են մեկ դարձությամբ, իսկ II բայախմբում՝ մեկ այլ:*

Սրանցից է ქმნა *[անել, գործել] բայը, որը II բայախմբում խոնարհվում է համադարձությամբ, իսկ I-ում՝ չեզոքադարձությամբ: Ընդ որում չեզոքադարձության* ი *ցուցիչն ամփոփում է առաջ բերում բայահիմքում՝ բաղաձայնների կուտակման պատճառով վերջին բաղաձայնը կորչում է.* ვქმენ, ჰქმენ, ქმნა: ქმნა მას შინა საწნეხელი *[Փորեաց ի նմա հնձան] (Մատթ. ԻԱ, 33);* საქმე კეთილი ქმნა ჩემდა მომართ *[Գործ մի բարի գործեաց դա յիս] (Մատթ. ԻԶ, 10): Սակայն՝* ვიქმ, იქმ, იქმს *(ներկայի հաճախականն է՝* **იქმნ**). მამაჲ ჩემი იქმს და მეცა ვიქმ *[Հայր իմ (մինչև ցայժմ) գործէ, և ես գործեմ] (Յովհ. Ե, 17): Այսպես առաջացած բայահիմքը փոխանցվում է անկատարավոր բայաշարքերին.* ვიქმოდე, ვიქმოდი:

Հետևյալ բայերը, ընդհակառակը, I բայախումբը կազմում են համադարձությամբ, իսկ II բայախումբը՝ չեզոքադարձությամբ: ზრახავს—იზრახა: ნუ წინაჲსწარ ჰზრახავთ, რასა იტყოდით *[Մի՛ զմտաւ ածիցէք՝ թէ զինչ խօսիցիք] (Մարկ. ԺԳ, 11);* ამას რაჲ ზრახვიდა გულსა თჳსსა *[Մինչ զեռ նա զայս ածէր զմտաւ] (Մատթ. Ա, 20);* იზრახა ფარულად განტევებად იგი *[Խորհեցաւ լռելեայն արձակել զնա] (Մատթ. Ա, 19);* სხუა ზრახვა არარაჲ იზრახოთ *[Ոչ այլ ազգ ինչ խորհիցիք] (Գաղատ. Ե, 10):*

ზრუნავს—იზრუნა: ნუ ჰზრუნავთ ხვალისა, რამეთუ ხვალემან იზრუნოს თავისა თჳსისა *[Մի՛ այսուհետև հոգայցէք վասն վաղուի] (Մատթ. Զ, 34);* არავინ მაქუს სხუა ერთგულ, რომელმანმცა თქუენთჳს გულითად იზრუნა *[Ոչ զոք ունիմ համաշունչ իբրէ ընտանեբար հոգայցէ վասն ձեր] (Փիլիպ. Բ, 20):*

დრტჳნავს—იდრტჳნა: დრტჳნვიდეს მისთჳს ჰურიანი იგი *[Տրտնջէին զնմանէ հրեայքն] (Յովհ. Զ, 41);* იდრტჳნეს ღმრთისა და თქუეს *[Տրտնջեցին զաստուծոյ] (Սաղմ. ՀԷ, 19):*

ქუხს—იქუხა: ქუხდა უფალი ცით გამო *[Որոտաց տէր յերկնից] (Սաղմ. ԺԷ, 14);* უფალი აღმაღლდა ცათა შინა და იქუხა *[Տէր ել յերկինս և որոտաց] (Ա Թագ. Բ, 10):*

ვაჰრობს—ივაჰრა: ვაჰრობდით ამას, ვიდრემდე მოვიდე [Յարգեցէք զայդ՝ մինչև եկից] (Ղուկ. ԺԹ, 13)։ რაჲთა უწყოდის, რაჲ-იგი ივაჰრეს [Զի գիտասցէ թէ ո զինչ շահեցաւ] (Ղուկ. ԺԹ, 15)։ ռ-ով կազմվող բայաձև է հանդիպում նաև I բայախմբում. დაეშჱნენით, ივაჰრობდით მას შინა [Բնակեցէք և շահեցարուք ի դմա] (Ծննդ. ԼԴ, 10)։

ყივის բայը անանցողական է. ყივის ქათამი—ყივა ქათამი: Համեմատ նախադասությունում. მეყსეულად ქათამი ყივა [Իսկոյն հաւ խօսեցաւ] (Մատթ. ԻԶ, 74) բայաձևը անցյալ կատարյալ է (բայը անանցողական է), որի կողքին վկայված է նաև III ստորադասականի ეყივნოს (ეყივლოს) բայաձևը. გეტყჳ შენ, პეტრე, არლარა ეყივნოს (ეყივლოს) ქათამსა დღეს, ვიდრემდე სამ გზის უვარ-მყო მე, ვითარმედ არა მიცი მე [Ասեմ քեզ Պետրէ՝ չիցէ այսօր հաւու խօսել մինչև երիցս՝ ուրասցիս զիս չգիտել] (Ղուկ. ԻԲ, 34)։ Այդ բայաձևը ենթադրել է տալիս, որ նրա համեմատությամբ կազմված անցյալ կատարյալի բայաձևը կլինի՝ იყივნა (იყივლა): Համեմատ, ունենք այսպիսի բայաձևեր. ყივის ქათამი—იყივნა (იყივლა) ქათამმან (կիսաանցողական բայ), უყივნის (უყივლის) ქათამსა, ეყივნა (ეყივლა) ქათამსა, ეყივნოს (ეყივლოს) ქათამსა: Այստեղից պարզ է, որ այս բայը նույնպիսին է, ինչպիսին է ზრუნავს—იზრუნა-ն. ყივის ქათამი—ყივა ქათამი հնագույն բայաձևերն են, իսկ ყივის ქათამი—იყივნა (იყივლა) ქათამმან՝ հետագա ժամանակների, և նոր վրացերենում խիստ տարածված ներգործական ձևը բայի օրինակ է։

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԲԱՅԱՁԵՎԵՐ

214. Հին վրացերենում գոյություն ունեն բայաձևեր, որոնք կարելի է կոչել հարկադրական, քանի որ արտահայտում են գործողություն, որը պետք է կատարվի հետագայում կամ պետք է կատարված լիներ անցյալում։ Այս նպատակով գործածվում է բայանունը, որը դրվում է պարագայական հոլովով, և არს օժանդակ բայի հետ միասին արտահայտում է, թե ինչ պետք է կատարվի, իսկ იყო-ի հետ՝ թե ինչ պետք է կատարված լիներ։ Օրինակ. (ჰეროდე) შეკრიბნა ყოველნი მღდელთ-მოძღუარნი და მწიგნობარნი ერისანი და ჰკითხვიდა მათ: სადა შობად არს ქრისტე [(Հերովդէս) ժողովել զամենայն քահանայապետս և զդպիրս ժողովրդեանն, հարցանէր ի նոցանէ՝ թէ ուր ծնանիցի Քրիստոսն] (Մատթ. Բ, 4)։ მოსიკუდიდ იყო იესუ [Մեռանելոց էր Յիսուս] (Յովհ. ԺԱ, 51)։

Որոշ դեպքերում ა-ով ժամանակ բայը, պարագայական հոլովով դրրված բայանվան հետ միասին, պարունակում է ապագայի գաղափար և կարող է օգտագործվել ապառնիի փոխարեն. არა ხოლო თუ აღდგა, არამედ აღ-ცა-დგა და აღ-ცა-მაღლებად არს [*Ոչ թե սոսկ բարձրացավ, այլ բարձրացավ և համբարձվելու է*] (*Սին. ճառընտիր, 153, 30*)։ აწ რომელსა-მე ჟამსა ყოფად არს საქმჱ ესე? [*Ո՞ր ժամին է լինելու այս գործը*] (*Նույն տեղում, 157, 9*)։ არცა იყო, არცა არს, არცა ყოფად არს [*Ոչ եղավ, ոչ կա, ոչ էլ լինելու է*] (*Նույն տեղում, 43, 3*)։

Բայանունը, առանձին վերցրած, կարող է պատկանել և՛ ներգործական, և՛ կրավորական սեռին, սակայն հարկադրական բայաձևերում այն միշտ ըմբռնվում է իբրև կրավորական. მიგებებად ვართ [*Ընդառաջ ենք ելնելու*] (*Սին. ճառընտիր, 78, 21*)։ შემდგომად სამისა დღისა ნინევჱ დაჰქცევად არს [*Երեք օրից հետո Նինվեն տապալվելու է*] (*Նույն տեղում, 107, 33*)։ აღ-ცა-მაღლებად არს [*Համբարձվելու է*] (*Նույն տեղում, 153, 30*)։ ძჱ კაცისაჲ მიცემად არს ჯუარ-ცუმად [*Որդին մարդու մատնելու է խաչ ելանել*] (*Մատթ. ԻԶ. 2*)։ სლვა *բայը* (მი-, მო-, შე-, გან- *և այլն*) *անսեռ բայ է և այս ձևում չի վերաբերում*. ესე არს წინაჲსწარ მეტყუელი, რომელი მოსლვად იყო სოფლად [*Այս է մարգարէն, որ գալոց էր յաշխարհ*] (*Յովհ. Զ. 14 C*)։ შიშუელიცა გამოხუედ დედის მუცლით. შიშუელიცა წარსლვად ხარ (*Մերկ ելար մոր փորից. մերկ էլ գնալու ես*] (*Սին. ճառընտիր, 221, 8*)։

ԲԱՅԻ ԱՆԴԵՄ ՁԵՎԵՐ

Բայի անդեմ ձևերը երկուսն են՝ բայանունը և դերբայը։

ԲԱՅԱՆՈՒՆ

215. *Բայանվան ցուցիչն է* ა-*ն, որը կցվում է բայի ներկայի թեմային։ Այն ամփոփվում է առաջ բերում* ავ *և* ამ-*ցուցիչավոր բայերում*. ვჰფარავ—ფარვაჲ [*ծածկել, հովանավորել*], აღუთქუამ—აღთქუმაჲ [*խոստանալ*] *և այլն ու վերջանում է* ი-*ցուցիչավոր բայերի* ი-*ն։ Ընդ որում, եթե բայահիմքն ամփոփված է,* ა-*ի կցման ժամանակ այն մնում է ամփոփված*. აღვჰზრდი—აღზრდ-ა-ჲ [*սնել*], დავჰსჯი—დასჯ-ა-ჲ [*դատել*], განვჰჴდი—განჴდ-ა-ჲ [*արտաքսել*] *և այլն։ Մնացած թեմայի ցուցիչները փոխանցման չեն ենթարկվում*. ვადიდებ—დიდებ-ა-ჲ [*փառաբանել*], ვაკურთხევ—კურთხევ-ა-ჲ [*օրհնել*], განვაბნევ—განბნევ-ა-ჲ

[ցրել], განვაჭმობ—განჭმობ-ა-ჲ [չորացնել], მივსცემ—მიცემ-ა-ჲ [տալ], განვჰყოფ—განყოფ-ა-ჲ [բաժանել] և այլն։

216. *Երբեմն բայանվան* ა-*ն ոչ թե անմիջականորեն է կցվում բայժին, այլ* ნ, ოლ, ომ *միջածանցների միջոցով։*

ա) ნ-**միջածանցավոր բայանուն**: ნ-*ի ավելացումը բնորոշ է* ვ-*ով վերջացող բայահիմքերի համար.* პოვნ-ა-ჲ [*գտնել*], დატევნ-ა-ჲ [*դիմանալ*], შეწევნ-ა-ჲ [*օգնել*], ძოვნ-ა-ჲ [*արածել*], წოვნ-ა-ჲ [*ծծել*] *և այլն։*

բ) ომ-**միջածանցավոր բայանուն**: ომ *միջածանցը բնութագրական է անանցողական բայերի համար.* დგ-ომ-ა-ჲ [*կանգնել*] (ალ-, შე-, და-), დადგრ-ომ-ა-ჲ [*իջևանել*], დავრდ-ომ-ა-ჲ [*ընկնել*], განცხრ-ომ-ა-ჲ [*զվարճանալ*], ჯდ-ომ-ა-ჲ [*նստել*], სხდ-ომ-ა-ჲ [*նստել*], ხლდ-ომ-ა-ჲ [*ցատկոտել*], შურ-ომ-ა-ჲ [*աշխատել*] *և այլն։*

գ) ოლ-*միջածանցավոր բայանուն*: ჰბრძავს—ბრძ-ოლ-ა-ჲ [*կռվել*], წევს—წ-ოლ-ა-ჲ [*պառկել*]. (*წვ-ოლ-ა-ჲ-*ի փոխարեն*): მოსპ-ოლ-ვ-ა-ჲ-*ում* [*ոչնչացնել*] *հանդես է գալիս կրկնակի վերջածանց* (ოლ—ვ), *որի* ა-*ն ավելի է բայանվան* ა-*ի պատճառով։*

դ) ს-**նախածանցավոր բայանուն**: *Մի քանի բայեր բայանվան կազմության ժամանակ սկզբից ստանում են* ს. რბი-ს—სრბ-ა-ჲ [*վազել*], ვალს—ს-ლვ-ა-ჲ [*գնալ*] (ვ-*ն անդամփոխվել է* ავ-*ցուցիչավոր բայերի նմանորինակությամբ, բառ օրենքի պետք է լիներ՝* ს-ვლ-ა-ჲ), ს-ყიდ-ა-ჲ [*գնել*], გან-ს-ყიდ-ა-ჲ [*վաճառել*] (და ვითარცა არარაჲ აქუნდა მას, რაჲმცა მისცა, უბრძანა უფალმან მისმან განსყიდვაჲ ცოლისაჲ და შვილთა მისთაჲ [*Իբրև ոչ ունէր հատուցանել, հրամայեաց զնա վաճառել տէրն նորա և զկին նորա, և զորդիս*] (*Մատթ. ԺԸ, 25*)։ ს-*ն փոխանցվում է և գոյականներին.* ანუ არა ორი სირი ერთის დანგის განისყიდების [*Ոչ ապաքէն երկու ճնճղուկք դանգի միոջ վաճառին*] (*Մատթ. Ժ, 29*)։

217. **Բայանվան** ილ-**վերջածանցավոր ձևեր**: *Հին վրացերենում կան մի շարք բայեր, որոնց բայանունը կազմվում է* ილ *վերջածանցով.* ტირს (ტირის)—ტირ-ილ-ი [*լալ*], დუღს—დუღ-ილ-ი [*եռալ*], ქუხს—ქუხ-ილ-ი [*որոտալ*], დუმს—დუმ-ილ-ი [*լռել*], მტკივის—ტკივ-ილ-ი [*ցավել*], მწყურის—წყურ-ილ-ი (წყურვ-ილ-ი) [*ծարավել*], მძინავს—ძ-ილ-ი [*քնել*] (*ძინ-ილ-ი-*ի—փոխարեն*), მღჳძავს—ღჳძ-ილ-ი [*արթնանալ*], ყივის—ყივ-ილ-ი [*կանչել*] *և այլն.*

218. სი-**նախածանցավոր բայանուն**: სი *նախածանցի կցման դեպքում բայը ստանում է նաև* ილ (სი—ილ), ულ (სი—ულ), ოლ (სი—ოლ) *վերջածանցներ։*

სი-ილ: სი-მშ-ილ-ი (შიმშილი) [*սով*], სი-კუდ-ილ-ი [*մահ*], სი-რბ-

ილ-ი [վարք, փախուստ] (სრბ-ა-ჲს զուգահեռ), სი-ორძ-ილ-ი [աճում], სი-ბორგ-ილ-ი [կատաղություն], სი-ყმ-ილ-ი [սով] և այլն։

სი-ულ: სი-ხარ-ულ-ი [ուրախություն], სი-ყუარ-ული [սեր], სი-ნან-ულ-ი [ապաշխարություն], სი-ქად-ულ-ი [պարծանք]։

ს-ოლ-ა: სი-ვლტ-ოლ-ა-ჲ [փախուստ]։

Ինչպես երևում է բերված օրինակներից, ა վերջածանցով կազմվում են անցողական բայերի բայանունները։ Սրանց պետք է ավելացնել ნ-վերջածանցավոր բայանունները, իսկ մյուս ածանցները (ომ, ოლ, ილ, ს, სი) *անցողական բայերի բայանվանակերտներ են։*

Այսուհանդերձ պետք է հիշել, որ ներգործական և կրավորական սեռի բայերի բայանունը միևնույնն է։ Օրինակ. წერაჲ-*ը* [*գրել*] *բայանուն է, ինչպես* ვწერ, *այնպես էլ* ვიწერები *բայերի համար,* მალვაჲ-*ը՝* [*թաքցնել*]՝ ვმალავ-*ի և* ვიმალვი-*ի համար,* შეწუხებაჲ-*ը* [*վշտանալ, տխրել*] შევაწუხებ-*ի և* შევწუხნები-*ի համար։*

ԴԵՐԲԱՅ

219. Ներգործական սեռի դերբայ։ *Ներգործական սեռի բայն, ի տարբերություն կրավորականի, կազմում է մեկ դերբայ, որը ժամանակի գաղափար չի պարունակում։ Այն հիմնականում կազմվում է* **მ-ელ** *նախածանց-վերջածանցով, ընդ որում* **ელ** *վերջածանցը կարող է* ი-*ցուցիչավոր բայերում առնել բայահիմքի նախորդ ձայնավորը* (ვზრდი [*սնել*] —მ-ზრდ-ელ-ი [*սնող*], *հիմքն է* **ზარდ**) *իսկ* ავ *և* ამ-*ցուցիչավոր բայերում ըստ թեմայի ցուցիչի ձայնավորը.* ვმფარ-ავ [*հովանավորում եմ*]—მ-ფარვ-ელ-ი [*հովանավորող*], შევსწირ-ავ [*զոհում եմ*]—შე-მ-წირ-ვ-ელ-ი [*զոհող*], აღუთქუ-ამ [*խոստանում եմ*]—აღ-მ-თქუ-მ-ელ-ი [*խոստացող*]։ *Մյուս թեմայի ցուցիչները փոփոխության չեն ենթարկվում.* ვბრძან-ებ [*հրամայում եմ*]—მ-ბრძანებ-ელ-ი [*հրամայող*], ვჭმობ [*ձայնում եմ*]—მ-ჭმობ-ელ-ი [*ձայնող*], ვიპყრობ [*բռնում եմ*]—მ-პყრობ-ელ-ი [*բռնող*], მივსცემ [*տալիս եմ*]—მი-მ-ცემ-ელ-ი [*տվող*], ვჰყოფ [*անում եմ*]—მ-ყოფ-ელ-ი [*անող*] *և այլն։*

Որոշ դեպքերում, եթե բայի համադաս ձևերը կազմվում են ა-*ով,* მ *նախածանցի փոխարեն ստացվում է* მა. ვადიდებ [*փառաբանում եմ*]—მა-დიდებ-ელ-ი [*փառաբանող*], აღ-ვავსებ [*լցնում եմ*]—აღ-მა-ვსებ-ელ-ი [*լցնող*], აღ-ვადგინებ [*ուղղում, վերականգնում եմ*]—აღ-მა-დგინებ-ელ-ი [*ուղղող, վերականգնող*], აღ-ვაშენ-ებ [*շինում եմ*]—აღ-მა-შენებ-ელ-ი [*շինող*] *և այլն։*

Պետք է ավելացնել, որ նման անցողական բայի համապատասխան դարձությունում հազվադեպ հանդես է գալիս უ ձայնավորը. Հնարավոր է, որ այն հանդես գա նաև գերբայում. ეძიებს [փնտրում է]—მე-ძიებ-ელ-ი [փնտրող]։

Այն գերբայները, որոնք արհեստ են ցույց տալիս, կազմվում են მ—არ (տարբերակությամբ՝ მ—ალ) ածանցների միջոցով. ვ-ხატავ—მ-ხატვ-არ-ი [նկարիչ], ვს-თესავ—მ-თესვ-არ-ი [սերմնացան], ვ-ღებავ—მ-ღებვ-არ-ი [ներկարար], ვ-წერ—მ-წერ-ალ-ი [գրիչ, գրող], ვ-ჩხრეკ—მ-ჩხრეკ-ალ-ი [գրիչ] ვ-კურნ-ებ—მ-კურნ-ალ-ი [բժիշկ] (թեմայի ցուցիչի կրճատմամբ), ვკერავ—მ-კერვალ-ი [դերձակ] և այլն։ Նույն ձևով են կազմվում. მ-გმობ-არ-ი [հայհոյիչ], მა-ცხოვ-არ-ი [փրկիչ] (ა-ცხოვ-ნ-ებს—მა-ცხოვ-არ-ი)։

Երկու բայի գերբայ բացառություն են կազմում այն առումով, որ արհեստի անունը կազմվում է მ—ულ նախածանց-վերջածանցով, ընդ որում ულ վերջածանցը չի ամփոփում բայահիմքը. მ-საჯ-ულ-ი [դատավոր], მ-ზარდ-ულ-ი [դայակ]։

მო—ულ ածանցներով կազմվում է մի քանի գերբայ. მო-ქად-ულ-ი [պարծենացող], მო-საჯ-ულ-ი[1], მო-ციქ-ულ-ი [առաքյալ]։ Վերջինս կազմված է ვციქუ [պատգամաբերեմ] բայից (Եփես. Զ, 20), որի մեջ უ-ն վանկարար է և գերբայական ձևում უ ձայնավորից առաջ կորչում է։ მო-მკ-ალ-ი-ნ [հնձվոր] բոլորից առանձնանում է. (მკის—მომკალი)։

220. Կրավորական սեռի նախածանցավոր և վերջածանցավոր բայերի դերբայ։ Կրավորական սեռի դերբայները երեքն են՝ երկուսը դրական, մեկը՝ ժխտական. մեկը անցյալ ժամանակի է (օրինակ՝ აღზრდილი [սնուցված]), մյուսը՝ ապառնի (օրինակ՝ აღსაზრდელი [սնուցանելի])։ Սակայն այս «անցյալը» և «ապառնին» ըստ էության հաջորդականության կարգեր են և ոչ՝ ժամանակի. մեկը նախորդող է, մյուսը՝ հաջորդող, այն բայի ժամանակի հետ համեմատած, որը գործածված է կրավորական դերբայավոր նախադասությունում։ Օրինակ՝ მივჰგუარე მოძღუარსა აღზრდილი ყრმაჲ [Ուսուցչի մոտ տարա սնուցված մանկին] և მივჰგუარე მოძღუარსა აღსაზრდელი ყრმაჲ [Ուսուցչի մոտ տարա սնուցանելի մանկին]։ Առաջին օրինակում սնուցանումը, դաստիարակումը նախորդել է ուսուցչի մոտ տարվելուն, իսկ երկրորդում՝ հաջորդել է դրան[2]։

---

[1] მსაჯული նշանակում է «դատավոր», მოსაჯული՝ «հայցվոր»։

[2] ა. შანიძე, ქართული ენის გრამატიკის საფუძვლები, მეორე გამოცემა, თბ., 1973, § 583.

Կրավորական սեռի բայերի դերբայներն ընդհանրապես կազմվում են բայահիմքից, որն ընդհանուր է ներգործական և կրավորական սեռի բայերի համար։ Բացառություն է կազմում անցողիկ կրավորական բայերի դերբայի կազմությունը։

221. **Նախորդ-ժամանակային դերբայ։** Կրավորական սեռի բայերի նախորդ-ժամանակային դերբայը կազմվում է ულ և ილ վերջածանցների միջոցով։ ულ են ստանում ავ, ამ, ებ, ევ, ემ-ցուցիչավոր բայերը, իսկ ილ միավանկ, երկվանկ ձայնավորահիմ և ი, ობ, ოვ-ցուցիչավոր բայերը։ Երկու վերջածանցն էլ կարող են սղել նախորդ ձայնավորը. ულ-ը՝ թեմայի ցուցիչի, ილ-ը՝ բայահիմքի։

ულ վերջածանց։ Այս վերջածանցը ავ և ამ-ցուցիչավոր բայերում սղում է թեմայի ցուցիչի ձայնավորը, իսկ ავ-ցուցիչավոր բայերում უ-ին անմիջականորեն նախորդող ვ-ն կորչում է, և այնպիսի տպավորություն է ստացվում, որ ულ-ն անմիջականորեն կցվում է բայահիմքին։ Օրինակ. და-ხატ-ვა — და-ხატ-ულ-ი [նկարված] (*დახატვული-ի փոխարեն), და-მალ-ვ-ა — და-მალ-ულ-ი [թաքնված] (*დამალვული) և այլն։ შე-ბმა — შე-ბმ-ულ-ი [կապված], აღ-თქუმა — აღ-თქმ-ულ-ი [խոստացված] և այլն։ აღ-ვსება — აღვსებ-ულ-ი [լցված], აღ-შენება — აღ-შენებ-ულ-ი [շինված] և այլն։

ულ-ի կցման ժամանակ կորչում է ევ-ցուցիչավոր բայերի ვ-ն և թեմայի ցուցիչից մնում է միայն ე-ն. კურთხევა — კურთხე-ულ-ი [օրհնված], განბნევა — განბნე-ულ-ი [ցրված] և այլն։

მიცემა — მიცემ-ულ-ი [տված], დაცემა — დაცემ-ულ-ი [կործանված] և այլն։

Բացառություն է. და-წუ-ა — და-მ-წუ-არ-ი [այրված] և მოსრვა (მოსრა) — მო-მ-სრ-ალ-ი [բեկեալ] (Ղուկ. Դ, 18)։

მოზღუდვა բայի կրավորական սեռի նախորդ-ժամանակային դերբայը կազմվում է ილ-ի միջոցով. მოზღუდვ-ილ-ი [պարսպապատված]։

ილ վերջածանցի օրինակներ. დაწერა — დაწერ-ილ-ი [գրված], გან-ტეხა — გან-ტეხ-ილ-ი [կոտրված], გან-დრეკ-ა — გან-დრეკ-ილ-ი [ապաստամբված], განწმედა — განწმედ-ილ-ი [սրբված], განზრდა — გან-ზრდ-ილ-ი [սնված], დასჯა — და-სჯ-ილ-ი [դատված] և այլն։ და-ლტობა — და-ლტობ-ილი [թրջված], და-მჭობა — და-მჭობ-ილ-ი [տապալված] և այլն։ განყოფა — გან-ყოფ-ილ-ი [բաժանված], და-ყოფა — და-ყოფ-ილ-ი [պապանձված] և այլն։ Առանձնահատուկ՝ მ-ე կազմություն, ունեն მწე [օգնող] և მრე [ներող, հալածող] դերբայները, որոնց է հետևում անցողական բայերից կազմված მძლე-ն [հաղթող]։ წარწყმედა-ից

կազմվում են և՛ წარწყმედ-ილ-ი-ს, և՛ წარწყმედულ-ი-ს [կորցված, կործանված]:

222. Հարկադրող-ժամանակային և ժխտական դերբայներ: *Ինչ վերաբերում է հարկադրող-ժամանակային և ժխտական դերբայներին, ապա նրանք ունեն միատեսակ վերջածանցներ, սակայն տարբերվում են իրարից ըստ նախածանցի: Նրանց համար ընդհանուր և համապատասխան ներգործական սեռի բայի դերբայի վերջածանցը նույնն են, ուստի ներգործական սեռի, կրավորական սեռի հարկադրող-ժամանակային և ժխտական դերբայները միատեսակ վերջածանցներ ունեն: Տարբերությունն ըստ նախածանցի այն է, որ հարկադրող-ժամանակայինի նախածանցն է* სა, *իսկ կրավորական ժխտականի դերբայակերտն է* უ-*ն:*

Ուստի ունենք՝ მ-ბან-ელ-ი [*լվացող*], უ-ბან-ელ-ი [*չլվացված*], სა-ბან-ელ-ი [*լվանալի*], მა-ქებ-ელ-ი [*գովող*], სა-ქებ-ელ-ი [*գովելի*], უ-ქებ-ელ-ი [*չգովված*], მა-კურთხევ-ელ-ი [*օրհնող*], საკურთხევ-ელ-ი [*օրհնելի*], უ-კურთხევ-ელ-ი [*չօրհնված*], და-მ-სჯ-ელ-ი [*դատող*], და-სა-სჯ-ელ-ი [*դատելի*], და-უ-სჯ-ელ-ი [*չդատված*], გან-მ-ყოფ-ელ-ი [*բաժանող*], გან-სა-ყოფელ-ი [*բաժանելի*], გან-უ-ყოფ-ელ-ი [*անբաժանելի*], მი-მცემ-ელ-ი [*տվող*], მი-სა-ცემ-ელ-ი [*տրվելի*], მი-უ-ცემ-ელ-ი [*չտրված*] *և այլն:*

223. Անցողիչ կրավորականի դերբայ: *Անցողիչ կրավորական բայերի դերբայակերտն է* მ—არ-*ը (կրկնակի ր ունեցող հիմքերում՝ տարնմանությամբ* მ—ალ). დავჭენ—და-მ-ჭნ-არ-ი [*թառամած*], მოვკუედ—მო-მ-კუდ-არ-ი [*մեռած*], და-ვჯედ—და-მ-ჯდ-არ-ი [*նստած*], მოვყუმ—მო-მ-ყმ-არ-ი [*սոված*], გან-ვტეფ—გან-მ-ტფ-არ-ი [*տաքացած*], დადნა—და-მ-დნ-არ-ი [*հալված*] *և այլն: Բացառություն է կազմում.* დალპა—და-მ-პ-ალ-ი [*նեխած*] (*და-მ-ლპ-არ-ი):

Գոյություն ունի նաև զուգահեռ կազմություն բայանունից. აღდგომაჲ—აღდგომილი [*բարձրացած*], დავრდომაჲ—დავრდომ-ილ-ი [*ընկած*], დაშთომაჲ—და-შთ-ომ-ილ-ი [*մնացած*], დაჯდომაჲ—და-ჯდ-ომ-ილ-ი [*նստած*]: *Նույն տիպին է պատկանում.* დაწოლაჲ—და-წოლ-ილ-ი [*պառկած*]:

განძღომა *և* დაშურომა *բայերի դերբայը կազմվում է* მ-არ *ածանցներով.* განვძღე—გან-მა-ძღ-არ-ი [*կշտացած*], დავშურე—და-მა-შურ-ალ-ი [*աշխատած, վաստակած*] (*տարնմանությամբ*):

224. Կրավորական սեռի բայերի նախածանցավոր դերբայ: *Դերբայակերտն է* ნა *նախածանցը, որը կցվում է գլխավորապես աննախադաս բայահիմքերին.* ნა-ბან-ი [*լվացած*], ნა-გოზ-ი [*ծեփած*], ნა-გუემ-ი [*խոցված*], ნა-კუეთ-ი [*հատված*], ნა-ტეხ-ი [*կոտրած, կտոր*], ნა-ყოფ-ი [*պտղա-*

ղարկված, պատից], ნა-შობ-ი [ծնված], ნა-ცვალ-ი [փոխարինած], ნა-შრომ-ი (աշխատած) և այլն: Օրինակ. და წარიყვანნა იგინი მასვე ჟამსა ღამისასა და განბანნა იგინი ნაგუემთა მათგან [Եւ առեալ զնոսա ի նմին ժամու գիշերւոյն՝ լուաց ի վիրաց անտի] (Գործք առաք. ԺԶ, 33):

Նախածանցավոր գերբայի օրինակներ. და-ნა-ხეთქ-ი [ճեղքված] (Ղուկ. ԺԶ, 26), მო-ნა-გებ-ი (აქუნდა მონაგები ფრიად [ունէր ինչս բազումս]) (Մարկ. Ժ, 22), შე-ნა-კრებ-ი [հավաքված] և այլն:

ავ և ამ-ցուցիչավոր բայերում ნა նախածանցը կցելիս ავ-ը և ამ-ը փոխվում են ევ-ի և ემ-ի. ნა-მალ-ევ-ი [թաքցված], ნა-მარხ-ევ-ი [թաղված], ნა-მუსრ-ევ-ი [ջարդված], ნა-პარ-ევ-ი [գողացված], აღ-ნა-თქუემ-ი [խոստացված] և այլն: ავ-ը անփոփոխ է մնում այն դեպքում, երբ բայահիմքում ე կա. ნა-ტყუენ-ავ-ი (ნატყუენავსა და ნაძარცუევსა მტერთასა [կապուտ, և կողոպտված]) (Բ Թագ. ԻԴ, 10):

Այսպես կազմված գերբայները հարուստ են գոյականներին: Կարելի է ավելացնել, որ მგელ [գայլ] անունից նույն կերպ կազմվում է ნა-მგლ-ევ-ი [գայլի կծոտած]:

ავ-ցուցիչավոր բայերին են հարում ევ բայահիմքով բայերը. გან-ვჰგვი [մաքրում եմ աղբը], განვგავე [մաքրեցի աղբը]—ნაგევი [աղբ]:
ეშინის [վախենում է] բայի գերբայն է მოშიში [վախեցած]:

225. Կայուն կրավորական բայերի դերբայ: Կայուն կրավորական բայերի այն մասը, որ ներկայի բայաշարքում ունի ებ վերջավորություն (უბყრიეს և այլն), գերբայի ձևեր չունի:

ავ-ցուցիչավոր բայերի (სძინავს և այլն) գերբայը կազմվում է მ—არ-ე և მო—ე ածանցների միջոցով:

მ—არ-ე: ჰ-ღჳძ-ავ-ს—მ-ღჳძ-არ-ე-ჲ, ს-ძინ-ავ-ს—მ-ძინ-არ-ე-ჲ (წიგნის კითხვისას მძინარე და ზღაპრობასა მღჳძარე [Գիրք կարդալիս քնած, իսկ հեքիաթ պատմելիս արթուն]):

Ակնհայտ է կազմված նաև მო-წაფ-ე-ჲ-ը [աշակերտ], որի წაფ հիմքը գրական լեզվում ს-წავ-ებ-ა և ს-წავ-ლ-ა բայերով վկայված წავ-ի բարբառային ձևն է:

Նույն მო—ე ածանցներն են առնում կրավորական սեռի ეწყალის, იწამების (იწამა), ავიწყდების բայերը. მო-წყალ-ე-ჲ [ողորմած], მო-წამ-ე-ჲ [վկա], მო-ვიწყ-ე-ჲ [մոռացկոտ]:

სთრავს [հարբում է] բայի գերբայն է მ-თრ-ვ-ალ-ი [հարբեցող] (տարնմանությամբ՝ *მთრვ-არ-ი-ի փոխարեն):

226. Չեզոք սեռի բայերի դերբայ. Չեզոք սեռի բայերի գերբայակերտներն են՝ მ—ან, მ—არ (მ—ალ), მ—არ-ე (მ—ალ-ე), მო—ე:

მ—ან: მ-სუქ-ან-ი (მ-სუქ-ან-ე) [*գեր*], მ-სივ-ან-ი [*ուռած*], მ-ტკივ-ან-ი [*ցավոտ*]:

მ—არ (მ—ალ): ყვრის—მ-ყვრ-ალ-ი [*մռնչացող*], ტირის—მ-ტირ-ალ-ი [*լացող*]:

მ—არ-ე (მ—ალ-ე): დუმს—მ-დუმ-არ-ე-ჲ (მ-დუმ-არ-ი) [*լուռ*], დუღს—მ-დუღ-არ-ე-ჲ [*եռացող*], წუხს—მ-წუხ-არ-ე-ჲ [*տխրամած*], ს-ცოხნის—მ-ცოხნარ-ე-ჲ [*որոճող*], ბრწყინავს—მ-ბრწყინვ-ალ-ე-ჲ [*փայլող*]: *Բացառություն է* ელავს—ელვ-არ-ე-ი [*փայլող, փայլակ*], *սպասելի էր՝* მ-ელვ-არ-ე-ჲ:

მო-ე: უ-ყუარ-ს—მო-ყუარ-ე-ჲ [*ընկեր, բարեկամ*], ს-ძულს—მო-ძულ-ე-ჲ [*ատող*], ს-ძაგ-ს—მოძაგ-ე-ჲ [*զզվող*], ს-ცალ-ს—მო-ცალ-ე-ჲ [*դատարկ*]:

Գոյություն ունի նաև მო—ედ *նախածանց-վերջածանցը, որի միջոցով անանցողական բայից կազմվում է* მო-რბ-ედ-ი (*մտնում է բարդ* წინა-მორბედ [*նախակարապետ*]-*ի մեջ*) *և անցողականից՝* მო-ქმ-ედ-ი [*մշակ, գործավոր*], შემოქმედი [*արարիչ*]:

Նշելի է, որ կայուն կրավորական և կրավորական սեռի որոշ այլ բայերի առանձնահատկությունը այն է, որ նրանցում ներկայացված է ոչ թե ենթակայական, այլ անուղղակի- խնդրային դերը. მოყუარე, მძინარე, მთრვალი, მოწყალე, მოვიწყე:

ՈՒԴԵՏԵՐՆԵՐ*

ՄԱԿԲԱՅ

227. Տեղի մակբայ. სადა, სადა-იგი [*ուր*], აქა, იქი [*այստեղ*], მანდა [*այդտեղ*], მუნ [*այնտեղ*], ზე [*վերև*], ქვე [*ներքև*], წინა [*առաջ*], უკუანა [*հետ*], მგუერდლ [*կողքին*], შუა [*մեջ*], შორის (შორის) [*միջև*], შინაგან [*ներս*], ვინაა [*որտեղից*], ვიდრე [*ուր*], მარჯულ [*աջ*], მარცხლ [*ձախ*], აქიერ (*այստեղից*), მაგიერ [*այդտեղից*], იმიერ [*այնտեղից*], დაქუე [*ներքև*], მართლუკუნ [*ետ*], გარე [*դուրս*], გარეშე [*դուրս*], ზენათგან [*վերևից*] *և այլն*:

Մի քանի օրինակ հուշարձաններից. ზე აღდგა მკუდარი იგი [*կանգնեց մեռյալը*] (*Ղուկ. է, 15* C): ვერ ეძლო ზე აღხილვად ყოვლით-

* *Այս տերմինով* (udetera—*ոչ մեկը, ոչ մյուսը*) *հեղինակը նշում է անունից բացի մնացած բոլոր խոսքի մասերը՝ մակբայ, կապ, շաղկապ, մասնիկ և այլն*:

ურთ [Ոչ կարէր ամենևին ի վեր հայել] (Ղուկ. ԺԳ, 11)։ ვიცი ვინაჲ მოსრულ ვარ და ვიდრე ვალ, ხოლო თქუენ არა იცით, ვინაჲ მოვედ და ვიდრე ვალ [Գիտեմ ուստի եկի՝ և ուր երթամ] (Յովհ. Ը, 14)։ წინა და უკუანა და მგუარდლ კიდობნისა ღმრთისაჲსა [Առաջի տապանին առաջ, ետ և կողքին] (Բ Թագ. Զ, 4*)։

Ժամանակի մակբայ. ოდეს, ოდეს-იგი [երբ]. რაჟამს [երբ, յորժամ], აწ [արդ]. დღეს [այսօր], ხვალე [վաղը]. ზეგ [վաղը չէ մյուս օրը, այսօրն էլ հաշված երրորդ օրը], ძოლან [հնանց]. ზამთრის [ձմռանը], ზაფხულის [ամռանը], ამიერითგან [այսուհետև], არასადა [երբեք], არლა [դեռ], მარადღე (მარადღ, მარადის) [հավետ, հավերժ]. მწუხრი [երեկոյան], დილეულ [առավոտյան], სამხრის [կեսօրին], უკუანაჲსკნელ [հետո, վերջում], ხვალისაგან [առավոտը, վաղը]. შემდგომად [հետո], წუსწუთ [ամեն ակնթարթ]: კურნებაჲთ აღვასრულებ დღეს და ხვალე და ზეგ აღვესრულები [Բժշկութիւնս կատարեմ այսօր և վաղիւ և յերրորդ աւուր կատարիմ] (Ղուկ. ԺԳ, 32)։

Ձևի մակբայ. ვითარ, ვითარ-იგი (ვითარ-ეგე, ვითარ-ესე) [ինչպես], ვითარცა-იგი [դորօրինակ], ესოდენ (ესთენ) [այնչափ], ესრე, ესრეთ (ესრეთ) [այսպես], ეგრე, ეგრეთ (ეგრეთ) [այդպես], მართლ [ուղիղ], ფრიად [հույժ], ძნიად [դժվար]. მრგულიად [կլոր]. მართლიად [ուղիղ]. მძაფრიად [ուժեղ], მდუმრიად [լուռ]. მაგრიად [զորեղապես], ზედაჲზედა [սանդ-սանդ], მყის [շուտափույթ]. ბერძლ [հունարեն], მჴედრ [հեծյալ], მკუეთრ [համառոտ]. ჭეჯმა [առավել, կարի]. ზოგად [համատեղ], პირს-პირ (პირისპირ) [ընդդեմ]։

Մակբայից կարելի է կազմել ածական. წინა-ჲ [առաջ] և უკუანა-ჲ [ետ] մակբայներ են, սակայն წინა-ჲ-ჲ և უკუანა-ჲ-ჲ՝ ածականներ։ ესრეთ იყვნენ წინანი უკუანა და უკუანანი—წინა [Այսպէս եղիցին յետինք առաջինք, և առաջինք՝ յետինք] (Մատթ. Ի, 16)։ Այստեղ უკუანანი-ჲ և წინანი-ჲ հոգնակի թվով դրված անթականներ են, իսկ უკუანა-ჲ և წინა-ჲ՝ բաղադրյալ ստորոգյալի ստորոգելիական վերադիր։

Պարագայական հոլովով դրված կրկնավոր անունը ձևի մակբայ է. ასოდ-ასოდ [անդամ-անդամ], ზჯნად-ზჯნად [կտոր-կտոր]. გუნდად-გუნდად (գունդ-գունդ), ბანაკად-ბანაკად [բանակ-բանակ] և այլն։

Որոշ մակբայներ օգտագործվում են նաև իբրև կապ։

---

* *Հայերեն թարգմանությունը խիստ տարբերվում է. «Զտապանակն առեալ ի վերայ սայլի նորոյ»*

228. Կապը հին վրացերենում կարող է լինել նախադիր և ետադիր, սակայն մեծ մասամբ ետադիր է։ Որոշ կապեր դրվում են և՛ բառասկզբում, և՛ բառավերջում, այսինքն՝ և՛ նախադիր են, և՛ ետադիր։ Բացի այդ, որոշ կապեր կցվում են երկու հոլովով դրված անունների (օրինակ՝ **ვან-ը***)։*

Կ. Կեկելիձեն նշել է, որ ზედა *[վրա],* თანა *[հետ, ընդ, մոտ] և* წინაშე *[առաջ] կապերը դրվում են սեռական և տրական հոլովաձևերի հետ, ըստ այն բանի, թե ո՞ր խմբի անունների հետ են օգտագործվում. ով խմբի (մարդկանց) թե՝ ինչ խմբի (իր ցույց տվող) անունների հետ։ Ով խմբի անունները գործածվում են սեռական հոլովաձևով, իսկ ինչ խմբի անունները՝ տրական։ Սակայն այս ընդհանուր կանոնը երբեմն խախտվում է։*

Անվանական, պատմողական և կոչական հոլովները կապ չեն ստանում, իսկ մնացած հոլովաձևերի հետ կապը սովորական երևույթ է։ Ստորև բերվող հոլովաձևերը եզակի թվով են, քանի որ თ*-ով հոգնակիում հոլովաձևերը չեն զանազանվում։*

229. Կապերը ուղղական հոլովաձևի հետ: წყაროებრ *(որպես աղբյուր],* პირუტყუებრ *[որպես անասուն]:* **ებრ-ը** *վերջասում է նախորդ ձայնավորը.* მამებრ *[որպես տղամարդ]. այն գործածվում է և սեռական հոլովի հետ։*

230. Կապերը տրական հոլովաձևերի հետ:

ზედა: *Տրական հոլով է պահանջում գլխավորապես* **ինչ** *խմբի անունների հետ գրվելիս.* გზასა ზედა *[ճանապարհի վրա],* ზღუასა ზედა *[ծովի վրա],* კლდესა ზედა *[վեմի, ժայռ քարի վրա],* თივასა ზედა *[խոտի վրա],* საკურთხეველსა ზედა *[զոհասեղանի վրա],* საყდარსა ზედა *[աթոռի վրա] և այլն։ Գործածվում է և սեռական հոլովաձևերի հետ (§ 231)։*

თანა: *Գործածվում է հիմնականում* **ինչ** *խմբի անունների հետ.* საფლავსა თანა *[գերեզմանի մոտ],* მთასა თანა *[լեռան մոտ],* წყაროსა თანა *[աղբյուրի մոտ],* ზღუასა თანა *[ծովի մոտ],* წყალსა თანა *[ջրի մոտ]։ Գործածվում է և սեռական հոլովի հետ (§ 231)։*

შორის: *Գործածվում է իբրև նախադիր և ետադիր.* შორის თესლებსა *[ի մէջ ազգաց] (Եզեկ. ԺԶ, 21),* თესლებსა შორის *[ի մէջ ազգաց] (Եզեկ. ԻԹ, 12):*

შინა: ბნელსა შინა *[խավարի մեջ],* ნათელსა შინა *[լույսի մեջ],* გულსა შინა *[սրտի մեջ],* დაბასა შინა *[ավանի մեջ],* მას დღესა შინა

[այն օրը], ეზოსა შინა [բակի մեջ], ზღუასა შინა [ծովի մեջ] և այլն։

წინაშე (*տե՛ս § 233*)։

ქუეშე: ცხედარსა ქუეშე [*ընդ մահճօք*] (*Մարկ. Դ, 21*)։

გარე: *Ե՛վ նախադիր է, և՛ ետադիր.* ველსა გარე [*դաշտից դուրս*], გარე ქალაქსა [*քաղաքից դուրս*]։

გარეშე: *Նախադիր է.* გარეშე ეზოსა [*բակից դուրս*], გარეშე ქალაქსა [*քաղաքից դուրս*]։

231. **Կապերը սեռական հոլովաձևերի հետ:**

—თჳს: *Սա միայն ետադիր է և ավելացվում է միմիայն սեռական հոլովաձևերին.* კაცისათჳს [*մարդու համար, մասին*], მოყუსისათჳს [*ընկերոջ համար, մասին*], დედისათჳს [*մոր համար, մասին*], *ապա՝* იაკობისთჳს [*Հակոբի համար, մասին*], ამისთჳს [*սրա համար, մասին*]: თჳს-*ը, ընդհանրապես, անմիջականորեն միանում է սեռական հոլովաձևին, սակայն հնարավոր է, որ նրանց միջև գրվի* **ვე** *մասնիկը.* ყოვლისავეთჳს [*վասն ամենայնի իրաց*] (*Մատթ. ԺԸ, 19*)։

—გან: ერისაგან [*ժողովրդից: զորքից*] მოყუსისაგან [*ընկերոջից*], დედისაგან [*մորից*], იაკობისგან [*Հակոբից*], ამისგან [*սրանից*]։ *Նույն* **გან**-*ը գործածվում է և գործիական հոլովաձևի հետ: Այն միայն ետադիր է։*

—ებრ: ძალისაებრ [*ըստ ուժի*], შეწევნისაებრ [*ըստ օգնության*], მისებრ [*նրա նման*], ამისებრ [*սրա նման*]։ *Այս ևս ետադիր է (տե՛ս § 229)։*

ზე: *Ցույց է տալիս ժամանակ.* მრავალნი კეთროვანნი იყვნეს ელისეს ზე წინაჲსწარმეტყუელისა [*Բազում բորոտք էին առ Եղիսեիւ մարգարէիւ*] (*Ղուկ. Դ, 27* C)։ ზე-*ն ետադիր է։*

თჳნიერ: *Առավելապես նախադիր է.* თჳნიერ ფიცისა [*առանց երդման*], თჳნიერ სისხლისა [*առանց արյան*], თჳნიერ ყრმებისა და დედებისა [*թող զկանայս և զմանկունս*] (*Մատթ. ԺԴ, 21*) *և այլն։ Հազվադեպ է գործածվում իբրև ետադիր.* ამას თჳნიერ [*առանց սրա*] (*Երր. ԺԲ, 14* AB *խմբ.*), რომლისა თჳნიერ (CD *խմբ.*)։

თანა: *Ետադիր է և գլխավորապես գործածվում է մարդ նշող անունների հետ։* მე არცა ერთი ბრალი ვპოვე ამას თანა [*Ես՝ և ոչ մի ինչ պատճառ գտանեմ ի նմա*] (*Յովհ. ԺԸ, 38*)։ მამისა თანა [*հոր հետ*], აბრაჰამის თანა [*Աբրահամի հետ*], ქმრისა თჳსისა თანა [*իր ամուսնու հետ*], სიძისა თანა [*փեսայի հետ*]։ *Գործածվում է նաև տրական հոլովաձևերի հետ։*

წინაშე: *Հիմնականում նախադիր է.* წინაშე მთავრისა [*իշխանի առաջ*], წინაშე მამისა [*հոր առաջ*], წინაშე ძისა კაცისა [*մարդու որդու առաջ*] և

այլն: Գործածվում է նաև տրականի հետ. წინაშე საკურთხეველსა [զոհասեղանի առաջ], წინაშე დაბასა მაგას [այդ ավանի առաջ], წინაშე საფლავსა მას [այն գերեզմանի առաջ], წინაშე ტაძარსა მას [այն տաճարի առաջ]: Ինչպես երևում է բերված օրինակներից, այն գործածվում է սեռականով՝ ով խմբի, իսկ տրականով՝ ինչ խմբի անունների հետ, սակայն այս կանոնը ամենուր ճշտորեն չի պահպանվում:

Պարագայական հոլովաձևով դրված գոյականը ցույց է տալիս փոխակերպված լրացում. კრეტსაბმელი იგი ტაძრისაჲ შის განიპო **ორად** [*Եւ ահա վարագոյր տաճարին ցելաւ յերկուս ի վերուստ մինչեւ ի վայր*] (*Մատթ. ԻԷ, 51*): მე დავდევ მეუფედ [*Ես կացի թագաւոր*] (*Սաղմ. Բ, 6*): დადგინებულ ვარ მე ქადაგად და მოციქულად და მოძღურად წარმართთა [*Եդաւ ես քարոզ եւ առաքեալ եւ վարդապետ հեթանոսաց*] (*Բ Տիմոթ. Ա, 11*): სპასალარად თორნიკ განაჩინეს [*Թոռնիկին սպարապետ նշանակեցին*] (*Վարք Յովհաննի և Եփթ.*):

Պարագայականի կիրառությունների արտահայտման համար սովորական է այս հոլովի ებ-*ով հոգնակի ձևը.* დაჰრენით საჭნისნი თქუენნი ჭრმლად და მანგლები თქუენი **ლახურებად** [*Կոտորեցէք զխոփս ձեր ի սուսերս, եւ զգերանդիս ձեր ի գեղարդունս*] (*Յովել. Գ, 10*): დაშჭრიდენ ჭრმლებსა მათსა საჭნისებად და ლახურებსა მათსა-მანგლებად [*Կոտորեսցեն զսուսերս իւրեանց ի խոփս եւ զգեղարդունս իւրեանց ի մանգաղս*] (*Միք. Դ, 3*):

259. Կոչական: *Այս հոլովը ունի միայն մեկ կիրառություն. արտահայտում է դիմում, որը կարող է ուղեկցվել և որոշիչով.* სადა არს, სიკუდილო, საწერტელი შენი? სადა არს, ჯოჯოხეთო, ძლევაჲ შენი? [*Ո՞ւր է մահ, յաղթութիւն քո. ուր է դժոխք, խայթոց քո*] (*Ա Կորնթ. ԺԵ, 55*)։ ამიერითგან, ძმანო ჩემნო საყუარელნო, მტკიცე იყვენით და შეურყეველ [*Այսուհետև եղբարք իմ սիրելիք, հաստատուն եղերուք, անշարժ կացէք*] (*Ա Կորնթ. ԺԵ, 58*)։

Կոչականի ձևը կարող է սաստկացվել դիմում արտահայտող ჵ (*հե*)-*ով, որը դրվում է անունից առաջ.* ჵ დედაკაცო, დიდ არს სარწმუნოებაჲ ეგე შენი [*Ով կին, դու, մեծ են հաւատք քո*] (*Մատթ. ԺԵ, 28*)։ ემსგავსე შენ სამყაროთა ზეცისათა, ჵ წმიდაო, თაყუანის-ცემით ქუაბსა მაგას დიდებულსა, ჵ უბრწყნელო! (*Փիլիպոս, Բեթղեհեմի Ճարակնոց*)։

Ծանոթություն: *Կոչականի փոխարեն դիմում արտահայտելու համար թարգմանական հուշարձաններում կարող է երբեմն հանդիպել նաև անվանական հոլովաձևը, հատկապես, եթե անվան առաջ կա* ეგე *հոդը.* იხარებდ, ბერწო ეგე, რომელი არა შობდ [*Ուրախ լեր, ամուլ, որ ոչ ծնանէիր*] (*Գաղատ. Դ, 27*)։ და შენ ბეთლემ, ქუეყანაჲ ეგე იუდაჲსი [*Եւ դու Բեթղեհէմ երկիր Յուդայ*] (*Մատթ. Բ, 6*)։ ნუ საკლველებსა და მსხუერპლებსა შემომწირევდით ჩემდა ორმეოცსა წელსა უდაბნოსა მას შინა, სახლი ეგე ისრაჱლისაჲ [*Մի թէ զոհս եւ պատարագս մատուցէք ինձ զամս քառասուն յանապատին, տունդ Իսրայէլի*] (*Գործք Է, 42*) (*տարբերակ՝* სახლო ისრაჱლისაო)։ სული ეგე არა-წმიდაჲ, განვედ კაცისა მაგისგან [*Ել, այսդ պիղծ, ի մարդոյ այտի*] (*Մարկ. Ե, 8*)։ *Տարբերակ.* სულო არა-წმიდაო, განვედ მაგის კაცისაგან—C։

ԳԵՐԱԴՐԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՁԵՎԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

260. Գերադրական աստիճանի ձևերը (ա՛ կարճ, ա՛ երկար) պահանջում են տրական կամ սեռական հոլովով անուն։

ա) Տրականի օրինակներ. რაოდენ უმჯობეს არს კაცი **ცხოვარსა** [*Որչա՞փ եւս առաւել է մարդ քան զոչխար*] (*Մատթ. ԺԲ, 12* D)։ ჭეშმარიტად (ჰეროდიადა) ლომისა ძუვისა **ლეკუსა** უფიცხლეს არს (*Սին. ճառընտ., 210, 22*)։ რაჲ უსუბუქეს არს **განსუენებასა** კაცისასა ამის სოფლისა ზრუნვათა და შფოთთაგან (*Վարք հար.*)։ კაცთა ხილული **ხმენილსა** უფროჲს სარწმუნოდ შეჰრაცხიან (*Սին. ճառընտ. 33, 12*)։ აწ რაჲმე უსასტიკეჲს არს **ზღუასა** (*Սին. ճառընտ., 220, 29*)։

բ) *Սեռականի օրինակներ.* არა არს მოწაფჱ უფროჲს **მოძღურისა თჳსისა**, არცა მონაჲ უფროჲს **უფლისა თჳსისა** [*Ոչ է աշակերտ առաւել քան զվարդապետ, եւ ոչ ծառայ՝ քան զտէր իւր*] (*Մատթ. Ժ, 24*)։ რაოდენ უმჯობეს არს კაცი **საცხოვრისა** [*Որչափ եւս առաւել է մարդ քան զոչխար*] (*Մատթ. ԺԲ, 12 E*)։ უმჯობჱს არიან ძუძუნი შენნი უფროჲს **ღჳნისა** [*Բարի են ստինք քո քան զգինի*] (*Երգ երգոց Ա, 1*) **თაფლისა** უტკბოჲსსა და უსარგებლჱსსა იტყოდა (*Սին. ճառըն., 86, 7*)։ სული უფროჲს არს **საზრდელისა** [*Ոգի առաւել է քան զկերակուր*] (*Մատթ. Զ, 25*)։ იყოს უკუანაჲსკნელი საცთური უძჳრეს პირველისა [*Լինիցի յետին մոլորութիւնն չար քան զառաջինն*] (*Մատթ. ԻԷ, 64*)։ უმწარეს **ნავღლისა** ჰპოვო და უმახჳლესა ორ-პირისა [*Դառնագոյն եւս գտանիցես քան զլեղի, եւ սրեալ առաւել քան զսուր երկսայրի*] (*Առակ. Ե, 4*)։ ცხოველ არს სიტყუაჲ ღმრთისაჲ და მჴე და უმკუეთელჱს უფროჲს ყოვლისა **მახჳლისა** ორ-პირისა [*Կենդանի է բանն Աստուծոյ եւ ազդող և հատու քան զամենայն սուր երկսայրի*] (*Եբր. Դ, 12*)։ უპირადჱს მრავლისა ჟამისა [*Յառաջ քան զբազում ամս*] (*Ա Եզր. Զ, 14*)։ უფროჲს ოცისა ლიტრისა (*Վարք Յովհաննի և Էփթ.*)։ არარაჲ უმოლხინესი პირველის გიორგისა (*Նույն տեղում*)։

Հետզհետե սեռականի գործածությունը տրականի համեմատությամբ գերակշռող է դառնում։

Գերադրական աստիճանի ձևը 1-ին և 2-րդ դեմքերի դերանուններից պահանջում է -სა *վերջահանգ ձևեր.* (ჩემსა, შენსა, ჩუენსა, თქუენსა)։ მამაჲ ჩემი უფროჲს **ჩემსა** არს [*Հայր իմ մեծ է քան զիս*] (*Յովհ. ԺԴ, 28*)։ აჰა ესერა მოვალს უძლიერესი ჩემსა [*Գայ զօրագոյնն քան զիս զկնի իմ*] (*Մարկ. Ա, 7*)։ უპირადჱს **ჩემსა** არს [*Զի յառաջ էր քան զիս*] (*Յովհ. Ա, 30*)։ უპატიოსნესი **შენსა** [*Պատուականագոյն եւս քան զքեզ իցէ*] (*Ղուկ. ԺԴ, 8*)։ უკუეთუ იყოს **ჩუენსა** უხუცეს (*Վարք հար.*)։ *Նույն վիճակն է նաև 3-րդ դեմքի դերանունների դեպքում.* არს სხუაჲ უსაშინელესი-ღა ამისსა (*Վարք հար.*)։ შენ ეცინი კორნხიპსა და სიბრძნე შენი უმრუდეს **მისსა** არს (*Խրատք հարանց*)։ უმცირესი იგი უფროჲს მისსა არს (*Մատթ. ԺԱ, 11*)։ ვიპოვენით უუბადრუკეს მათსა (*Խրատք հարանց*)։-სა *վերջահանգն ձև է պահանջում նաև գերադրական աստիճանի ձևը* თ-*ով հոգնակիում դրված որոշ անունների հետ գործածվելիս.* მამაჲ ჩემი უფროჲს **ყოველთასა** არს (*Յովհ. ԺԲ, 29*)։ ქურივმან ამან გლახაკმან უმეტჱს **ყოველთასა** შეწირა [*Այրին այն աղքատ աւելի արկ քան զամենեսին*] (*Ղուկ. ԻԱ, 3*)։ და კუალად წარავლინნა სხუანი მონანი, უმრავლესნი **პირველთასა** [*Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազումս քան զառաջինսն*] (*Մատթ. ԻԱ, 36*)։ იქმენ უქუემოჲს **ყოველთა**

კაცთასა (*Մարդոց համար*)։ უკუეთუ ამას ხოლო ცხორებასა ქრისტჱსსა მოსავ ვართ, უსაწყალობელჱს ყოველთა კაცთასა ვართ [*Եթէ այսու կենօքս միայն յուսացեալ եմք ի Քրիստոս, ողորմելի եմք, քան զամենայն մարդիկ*] (*Ա Կորնթ. ԺԵ, 19*)։

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Համաձայնություն ըստ թվի

261. ჩუენ և თქუენ դերանունները որպես ուղիղ խնդիր։

ჩუენ *և* თქუენ *դերանունները բայի հետ ոչ միայն այն դեպքում են հոգնակի թվով գործածվում, երբ իրենք ենթակա են հանդես գալիս* (*օրինակ*՝ ჩუენ წარვედით, თქუენ წარხუედით, ჩუენ დავწერეთ, თქუენ დასწერეთ *և այլն*), *այլ նաև այն ժամանակ, երբ ունեն ուղիղ խնդրի իմաստ, և անցողական բայը 2-րդ բայախմբի բայաձևերով է գործածված։ Օրինակ*՝ არავინ დამიდგინნა ჩუენ [*Ոչ ոք կալաւ զմեզ ի վարձու*] (*Մատթ. Ի, 7*)։ *Այստեղ եթե* ჩუენ *բառի փոխարեն լիներ* მე, *ապա նախադասությունը հետևյալ տեսքը կստանար.* არავინ დამიდგინა მე։ *Այլ օրինակ*՝ უფალო, მიჴსნენ ჩუენ, რამეთუ წარვწყმდებით [*Տէր, փրկեա զմեզ՝ զի կորնչիմք*] (*Մատթ. Ը, 25*)։ *Այստեղ ևս եթե* ჩუენ *բառը փոխարինենք* მე-*ով, ապա նախադասությունը կստանա հետևյալ տեսքը.* უფალო, მიჴსენ მე, რამეთუ წარვწყმდები։ *Նման օրինակներ են.* ქრისტემან შემიყუარნა ჩუენ [*Քրիստոս սիրեաց զմեզ*] (*Եփես. Ե, 2*)։ უკუეთუ უარ-ვყოთ, მანცა უარ-მყვნეს ჩუენ [*Եթէ ուրանամք, և նա ուրանայ զմեզ*] (*Բ Տիմոթ. Բ, 12*) *և այլն*։

თქუენ *դերանվան վկայություններ.* რომელმან თქუენ შეგიწყნარნეს, მან მე შემიწყნაროს [*Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի*] (*Մատթ. Ժ, 40*)։ რომელმან თქუენ შეურაცხ-გყვნეს, მან მე შეურაცხ-მყოს [*Որ զձեզ անարգէ, զիս անարգէ*] (*Ղուկ. Ժ, 16*)։ არა გიცნი თქუენ [*Ոչ գիտեմ զձեզ*] (*Մատթ. ԻԵ, 12*)։ ვიცი *բայը ծագումով* II *հաճախականի ձևն է*։ გპოვნეს თქუენ მძინარენი [*Գտանիցէ զձեզ ի քուն*] (*Մարկ. ԺԳ, 36*)։ მე შეგიყუარენ თქუენ [*Սիրեցի ես զձեզ*] (*Յովհ. ԺԳ, 34*) *և այլն*։

262. Անունը ნ-ով հոգնակիում։ ნ-*ով հոգնակիով դրված անունը (ենթակա կամ ուղիղ խնդիր) համաձայնում է բայի հետ ըստ թվի, իսկ* ებ-*ով հոգնակիում՝ սովորաբար ոչ*։ შენ **შემუსრენ** თავნი ვეშაპთანი წყალთა შინა [*Դու խորտակեցեր զգլուխս վիշապաց ի վերայ ջրոց*] (*Սաղմ. ՀԳ, 13*), *բայց նույն տեղում կա նաև*՝ შენ **შემუსრე** თავები ვეშაპისაჲ მის [*Դու փշրեցեր զգլուխս վիշապին*] (*Սաղմ. ՀԳ, 14*)։ *Այս-*

ենք ուշադրություն արժանի է նաև այն, որ որոշիչը որոշյալի հետ առաջին դեպքում համաձայնում է ըստ թվի (თავნი ვეშაპთანი), *իսկ երկրորդ դեպքում՝ ոչ* (თავები ვეშაპისა მის):

263. Երկու կամ ավելի անուններ որպես ուղիղ խնդիր: *Եթե միավորյալ նախադասության մեջ կա անվանական հոլովով դրված երկու (կամ ավելի) ուղիղ խնդիր, բայն այնպես է համաձայնում նրանց հետ, ինչպես* ნ-*ով հոգնակիի դեպքում՝ մեկ անվան հետ.* ზენან შჯულის მწერალი და აპოლო ადრე წარმოგზავნენ [*ԶԶենոն օրինական դպիր և զԱպողոս փութով արձակեսջիր*] (*Տիտ. Գ, 13*)։ წარიყვანნა იესუ პეტრე და იაკობ და ძმაჲ მისი [*Առնու Յիսուս զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս զեղբայր նորա*] (*Մատթ. ԺԷ, 1*)։

264. მოხედნა նայել, նայել, պահպանել:

მოხედვა *բայի հետ ուղիղ խնդիր չի դրվում, բայց նրա 2-րդ բաղադրիչի բաղաձայները երբեմն ի հայտ են բերում ուղիղ խնդրի ցուցիչ, իսկ սա այն բանի վկայությունն է, թե այն բայը հնագույն շրջանում հոգնակի թվում ունեցել է ուղիղ խնդիր* (თუალნი?): კურთხეულ არს უფალი ღმერთი ისრაჱლისაჲ, რამეთუ **მოხედნა** (მოჰხედა-DE) და ყო ჴსნაჲ ერისა თჳსისაჲ [*Օրհնեալ տէր Աստուած Իսրայէլի, զի յայց ել մեզ՝ և արար փրկութիւն ժողովրդեան իւրում*] (*Ղուկ. Ա, 68 C*)։ *Նման բաղաձայներից են նաև* განიცინნა *և* უხეთქნა:

265. ებ-ով հոգնակիով դրված անունն իբրև ենթակա:

ებ-*ով հոգնակիով դրված ենթակայի հետ բայը ըստ թվի սովորաբար չի համաձայնում.* მშჳლდები ძლიერთაჲ მოუძლურდა: აჰა ესერა გუნდები მოვალს ქუეყანით შორით [*Գունդք գան յերկրէ հեռաւոր անէ*] (*Երեմ. Դ 16 Օշկի*)։ ნუუკუე სახლებ არა გიდგს ჭამად და სუმად? [*Միթէ տունս ո՞չ ունիցիք ուտել և ըմպել*] (*Ա Կորնթ. ԺԱ, 22*)։ სადაცა იყოს მძორი, მუნცა შეკრბეს ორბები [*Ուր իցէ դիակն, անդ ժողովեսցին արծուիք*] (*Մատթ. ԻԴ, 28*)։ *Վերջին նախադասության մեջ* ორბები-*ն* ებ-*ով հոգնակի է, իսկ* შეკრბეს *բայը՝ եզակի* (შეკრბეს=*կհավաքվի, բայի ձևը 2-րդ ապառնի է*)։ ორბი-*ն եթե դրված լիներ* ნ-*ով հոգնակիով, բայը կհամաձայներ նրա հետ ըստ թվի և նախադասությունը կունենար հետևյալ տեսքը՝* სადაცა იყოს მძორი, მუნცა შეკრბენ ორბნი:

266. ებ-ով հոգնակիով դրված անունը որպես ուղիղ խնդիր:

ებ-*ով հոգնակիով դրված ուղիղ խնդիրը չի կարող համաձայնել բայի հետ ըստ թվի։ Օրինակներ՝* მშჳლდები შემუსრა და ფარები მათი დაწუა ცეცხლითა [*Զաղեղունս փշրեաց, զվահանս խորտակեաց և զվառս այրեաց հրով*] (*Սաղմ. ԽԵ, 10*)։ შევწირო შენდა ზუარაკები და ვაცები [*Բեր մատուցից զուարակս և նոխազս*] (*Սաղմ. ԿԵ, 15*)։ მოჳ-

გუარეს მას ეშმაკეულები მრავალი [*Մատուցին առ նա դիւահարս բազումս*] (*Մատթ. Ը, 16*)։ წარმოიღეთ ჰორლები და შთაიცუთ ჯაჭუები თქუენი [*Առէք յառաջ զգեղարդունս, զգեցարուք զզրահս ձեր*] (*Երեմ. ԽԶ, 4*)։ *Այստեղ եթե* ჰორლები *և* ჯაჭუები *բառերը* ნ-*ով հոգնակիով գրված լինեին, ապա նախադասությունը կկազմվեր հետևյալ կերպ՝* წარმოიხუენით ჰოროლნა და შთაიცუენით ჯაჭუნი თქუენნი։

267. Որոշյալը ებ-ով հոգնակիում: *Որոշյալի ֆունկցիայով օժտված* ებ-*ով հոգնակիով գրված անունը, որոշիչի հետ ըստ թվի չի համաձայնում անկախ նրանից՝ այդ որոշիչը հատկանշային է, թե վարող։ Օրինակներ՝* სულები იგი უკეთური [*Այս չարս*] (*Դարձք. ԺԹ, 13*)։ ტბები კეთილი (*Դարձք, ԻԹ, 71*)։ მამებსა არა მცირეთსა [*Ցարանց ոչ սակաւք*] (*Դարձք, ԺԷ, 12*)։ მოსრა ვენაჴები მათი [*Եհար զայգիս... նոցա*] (*Սաղմ. ՃԴ, 33*)։ მშჯლდები ძლიერთაჲ: მთავრები ქალაქისაჲ [*Արամբք պատուաւորօք քաղաքին*] (*Դարձ, ԻԵ, 23*)։ მისცა მათ სოფლები წარმართთაჲ [*Ետ նոցա զգաւառս հեթանոսաց*] (*Սաղմ. ՃԴ, 44*)։ რემაკები აქლემთაჲ [*Երամակք ուղտուց*] (*Եսայի Կ, 6*)։ ნათესავები ისრაელისაჲ [*Զազգն Իսրայէլի*] (*Սաղմ. ՀԷ, 55*)։ სხუაჲცა ნავები, რომელი იყო მის თანა [*Զայլ եւս նաւսն որ էին ընդ նմա*] (*Մարկ. Դ, 36*) *և այլն։ Հազվադեպ հանդիպում է նաև համաձայնություն ըստ թվի.* შთადვა მათ შინა თუალები პატიოსნები [*Դրեց նրանց մեջ թանկագին ակներ*] (*Բուլամ.*)։ ვაცები ჭრელები [*Այծս կապույտս և սպիտակս*] (*Ծննդ. Լ, 35*)։

268. ებ-ով հոգնակին ու թվափոխ բայերը:

Թվով իրար փոխարինող բայեր են შთაგდება-ნ [*իջուցանել*] (*եզ.*) *և* შთათხევა-ნ [*արկանել*]։ ცხენები და მჴედრები შთასთხია ზღუასა (*Շարակ. Ա, 1*)։ *Եթե այստեղ անունները գրված լինեին* ნ-*ով հոգնակիով, բայը կստանար խնդրի հոգնակիության ցուցիչ և նախադասությունը կունենար հետևյալ տեսքը* ცხენნი და მჴედარნი შთასთხინა ზღუასა: *Այլ օրինակներ՝* დასხეს მძორები მონათა შენთაჲ [*Արկին զդիակունս ծառայից քոց*] (*Սաղմ. ՀԸ, 2*) (დასხეს *և ոչ՝* დადვეს, *քանի որ* მძორები-ნ *հոգնակի թվով է*)։ განასხა სულები იგი უკეთური [*Եհան զայսսն բանիւ*] (*Մատթ. Ը, 16*)։ *Բերված օրինակներից երևում է, որ* ებ-*ով հոգնակիով գրված անվան հետ (ուղիղ խնդրի հետ) թվով փոխարինող այն բայն է գրվում, որը համապատասխան է հոգնակի թվի համար։*

269. Հավաքական անունը որպես ենթակա և բայը: *Որպես ենթակա գործածվող անվան հետ բայը հաճախ գրվում է հոգնակի թվով.* რაჟამს უკუე **იხილეს** იგი ერმან მან, **შეშფოთნეს** ფრიად [*Երբ արդեն տեսավ նրան ժողովուրդն սաստիկ շփոթվեց*] (*Սին. ճառըն. 250, 26*)։ **დაგუესხნეს** ჩუენ ზედა ერი მრავალი სარკინოზთაჲ [*Հարձակվեց մեզ վրա*

սարակինոսների բազում զորքը (Մխ. ճառընտ. 267, 11)։ **ღაღად-უყვეს** ყოველმან სიმრავლემან [*Աղաղակէին ամենայն բազմութեամբն*] *(Ղուկ. ԻԳ, 18)։* სასტიკად **მბრძოდეს** მას სარკინოზთა ერი [*Սարակինոսների զորքը սաստկությամբ կռվեց նրա դեմ*] *(Հայր)։*

Միաժամանակ, սակայն, պետք է իմանալ, որ հավաքական անվան հետ սովորական է նաև եզակի թվով դրված բայաձևը։ Օրինակ. **მისდევდა** მას ერი მრავალი [*Երթային զհետ նորա ժողովուրդք բազումք*] *(Մատթ. Դ, 25)։ Մի կողմից ունենք.* ყოველმან ერმან **იხილეს** იგი [*Ողջ ժողովուրդը տեսավ նրան*] *(Մարկ. Թ, 15), իսկ մյուս կողմից՝* **იხილა** იგი ერმან მან [*Տեսավ նրան ժողովուրդն*] *(Մարկ. Զ, 33)։ Թվով իրար փոխարինող բայերից հավաքական անունների հետ գործածվում է այն, որը հատկորոշ է հոգնակի թվին։ Ընդ որում՝ միևնույնն է, հավաքական անունը նախադասության մեջ ենթակա է, թե՝ ուղիղ խնդիր.* **დასხდა** ერი იგი ჭამად და სუმად და აღდგეს სიმღერად [*Նստաւ ժողովուրդն ուտել և ըմպել՝ և յարեան ի խաղալ*] *(Ա Կորնթ. Ժ, 7)։* **განასხა** ერი იგი ტაძრისაგან [*Եհան զժողովուրդն ի տաճարէ*]։

270. Անունը՝ ուղղականով, բայը՝ հոգնակի։

Ն-*ով հոգնակիով դրված ենթական որոշիչի ու բայի հետ համաձայնում է ըստ թվի. օր.՝* ძმანი ჩემნი არიან აქა [*Իմ եղբայրները այստեղ են*]։ ძმანი ჩემნი აღდგეს და წარვიდეს. [*Իմ եղբայրները ելան ու գնացին*]։ ძმანი ჩემნი ამას იქმოდეს [*Իմ եղբայրներն այս էին անում*] *և այլն։ Սակայն միաժամանակ պատահում է, երբ անունը ուղղականով դրված լինի, իսկ բայը՝ հոգնակիով։ Սրա լավագույն օրինակն է կուռքերի բնութագրությունը սաղմոսում.* კერპნი წარმართთანი ოქროჲსანი და ვეცხლისანი, ქმნულნი ჴელთა კაცთანი: **პირ** აღგს და არა იტყჳან: **თუალ ასხენ** და არა ხედვენ: **ყურ ასხენ** და არა ესმის, **ცხვირ ასხენ** და არა იყნოსენ: ჴელ ასხენ და არა იქმან, ფერჴ ასხენ და არა ვლენან: არცაღა ჴმობენ ჴორჴითა მათითა [*Կուռք հեթանոսաց ոսկի եւ արծաթ են, ձեռագործք են որդւոց մարդկան։ Բերան ունին՝ եւ ոչ խօսին, աչս ունին՝ եւ ոչ տեսանեն։ Ականջս ունին՝ եւ ոչ լսեն, ունչս ունին՝ եւ ոչ հոտոտին։ Ձեռս ունին՝ եւ ոչ շօշափեն, ոտս ունին՝ եւ ոչ գնան. եւ ոչ գոյ բարբառ ի կոկորդս նոցա*] *(Սաղմ. ՃԺԴ, 12—15, հայկ. խմբ. 4—7)։*

Այստեղ აღგს-*ը և* ასხენ-*ը թվով իրար փոխարինող բայեր են, որոնք արտահայտում են* აქუს *բայի „նշանակությունը։ Մարդը մեկ բերան ունի և դրա համար էլ* აღგს *է գործածված, իսկ մնացածների համար* ასხენ *է, և անգամ «քթի» համար, սակայն* ცხვირი-*ն* [*քիթը*] *այստեղ ցույց է տալիս ունչերը, ինչպես հուն.* ῥίς, *որը հոգնակի թվով նշանակում է նաև ունչեր* ῥῖνας ἔχουσι։ *Այստեղ թվարկ-դասագործվելիս նշանակում է նաև ունչեր*

ված անունները («երկրանիշ» բացի) ցույց են տալիս առարկաներ, որոնք մարդը ունի զույգ-զույգ՝ աչքեր, ականջներ, ռնգեր, ձեռքեր, ոտքեր։ Սրանք բոլորը բերված վկայության մեջ ուղղական հոլովաձևով են գրված (თუალ, ყურ, ცხჳრ, ჴელ, ფერჴ), *որը ընդհանուր է երկու թվերի համար էլ (եզ. և հոգն.), իսկ բայը գրված է հոգնակիով* (ასხენ)։ *Այս դեպքում հոգնակի թվի իմաստը ոչ թե անվան ձևով է արված, այլ՝ բայի։ Սրա յուրատեսակ նմանությունն է հոդավոր անունների հոգնակի ձևը* კაცი ესე, კაკი ეგე, კაცი იგი, *որոնք հոգնակի թվում հետևյալ ձևերն ունեն՝* კაცნი ესე, კაცნი ეგე, კაცნი იგი, *որտեղ հոգն. թվի իմաստը միայն անունն է տալիս, իսկ հոդը՝ ոչ։*

Նման իրավիճակ է նաև այստեղ. **თუალ არიან** მათა და ვერ ჰხედ-ვენ, **ყურ არიან** მათა და არა ესმის [*Որոց աչք են և ոչ տեսանեն, և ականջք՝ և ոչ լսեն*] *(Երեմ. Ե, 29)*։ სხუაცა **ცხოვარ არიან** ჩემნი, რომელ არა არიან ამის ბაკისანი [*Նա և այլ ևս ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ*] *(Յովհ. Ժ, 16 C)*։ მესმის, რამეთუ **წვალება** რაჲმე თქუენ შორის არიან [*Լսեմ եթէ հերձուածք գոն ի ձեզ*] *(Ա Կորնթ. ԺԱ, 18)*։

Բերված օրինակներում բայը միշտ անանցողական է (ასხენ, არიან), *բայց նման իրողություն անցողական բայերի հետ էլ վկայված է.* და დაგიყენნე თქუენ, რაჲთა არა **ისხნეთ ქმარ** [*Եւ ի նոսա գրաւիցիք՝ չլի-նել առն*] *(Հռութ Ա, 13)*։ **თუალ აგნა** ცოლმან ეგჳპტელისა უფლისა თჳსისამან იოსებს [*Եւ արկ կին տեառն իւրոյ զաչս իւր ի վերայ Յովսե-փայ*] *(Ծննդ. ԼԹ, 7)*։

Բերված օրինակներում არა ისხნეთ ქმარ *հետևյալն է նշանակում. «ամուսին չառնեք», իսկ* თუალ აგნა იოსებს—*«աչքերը հառեց Հովսե-փին»։ Նման օրինակ է նաև հետևյալը՝* შჳლ ვისხენ და ალვზარდენ და მათ შეურაცხ-მყვეს [*Որդիս ծնայ և բարձրացուցի և նոքա զիս անար-գեցին*] *(Եսայի Ա, 2)*։

271. Անդրադարձ դերանվան համաձայնումը անվան և բայի հետ ըստ թվի։

Հոգնակիով գրված անդրադարձ თავი *դերանունը ըստ թվի համա-ձայնում է ստացական դերանվան ու բայի հետ. ասվում է՝* თავი ჩემი, თავი შენი, თავი თჳსი, *բայց* თავნი ჩუენნი, თავნი თქუენნი, თავნი თჳს-ნი։ დაიცვენით თავნი თქუენნი ყოვლისაგან ანგაჰრებისა [*Զգոյշ լերուք յամենայն ագահութենէ*] *(Ղուկ. ԺԲ, 15)*։ უჩუენენით თავნი თქუენნი მღდელთა [*Ցուցէք զանձինս քահանայից*] *(Ղուկ. ԺԷ, 14)*։ რომელნი ესვენ თავთა თჳსთა [*առ ոմանս պանծացեալս յանձինս*] *(Ղուկ. ԺԸ, 9)*։ თქუენ ნუ ჰორჴუამთ თავთა თქუენთა მოძღუარს [*դուք մի զոք կոչէք վարդապետ*] *(Մատթ. ԻԳ, 8 C)*։

Սակայն, եթե անհրաժեշտ է գործիական հոլովաձև, հոգնակի թվի փոխարեն գործածվում է եզակի ձևը՝ ნუ ჰგონებთ და იტყჳთ თავით თჳსით [Մի՛ համարիցիք ասել յանձինս] (Մատթ. Գ, 9)։

ՈՐՈՇԻՉ—ՈՐՈՇՅԱԼ

Անունը կարող է որոշանալ հոդով, հատկանշային և վարող անուններով։

272. Հոդավոր անուններ։ Հոդը սովորաբար հաջորդում է անվանը. კაცი ესე, კაცი ეგე, კაცი იგი։ Այս կարգը խախտվում է այն դեպքում, եթե անվանը նախորդում է որոշիչ։ Նման դեպքերում հոդը անջատվում է և դրվում անունից առաջ. ერი იგი, սակայն ყოველი იგი ერი მიჰჴდევდა მას [Ամենայն ժողովուրդն գայր առ նա] (Մարկ. Բ, 13)։ ვეცხლმან მან შენმან [Մնասն քո] (Ղուկ. ԺԹ, 18)։ Սակայն შენმან მან ვეცხლმან [Մնասն քո] (Ղուկ. ԺԹ, 16) Այսպիսիք են նաև ყოველი იგი განმსყიდველი: ველური ეგე ზეთისხილი (Հարո)։ დიდსა **მას მდინარესა** (Հարո)։ შენსა **მაგას** უფლებასა (Եփռ.)։ ახლისა **ამის** მოწამისაჲ (Հարո) և այլն։

273. Ածական անունը՝ որոշիչ։ Որպես որոշիչ գործածված ածականը որոշյալին կարող է նախորդել կամ հաջորդել։ Հնագույն հուշարձաններում գերակշռում են հաջորդության (այսինքն՝ հետո դրվողների) դեպքերը։ Օրինակ՝ დიდი-ն հաճախ է գործածված Ավետարանում։ Ինչպես Ի. Իմնաիշվիլու կազմած «Համաբարբառ-բառարանից» է երևում „დიდი"-ն գործածվում է հետևյալ անուններից հետո. დანახეთქი დიდი, დაყუდებაჲ დიდი, მოხრებელი დიდი, ნათელი დიდი, სასწაულები დიდი, სიხარულსა დიდსა, სიცხისაგან დიდისა, ქარისაგან დიდისა, შიში დიდი, წინაჲსწარმეტყუელი დიდი, ჴირი დიდი, ქალაქი არს მეუფისა დიდისაჲ, განკჳრვებითა დიდითა, ნესტჳთა დიდითა, სიცხითა დიდითა, სისხლითა დიდითა, შიშითა დიდითა.

კეთილი-ն գերադասությամբ հաջորդում է որոշյալին. გულითა კეთილითა, თესლი კეთილი, მისაცემელი კეთილი, მწყემსი კეთილი, ნაყოფი კეთილი, საქმჱ კეთილი, საწყაული კეთილი, თესლნი იგი კეთილნი և այլն։ Միաժամանակ սակայն, այն պատահում է նաև որոշյալից առաջ. კეთილი ნაწილი, კეთილი ლჳნოჲ, კეთილი კაცი, კეთილი მარგალიტი, კეთილი ნიჭი, კეთილსა მარგალიტსა, კეთილისა საქმისათჳს.

Ահա ինչպիսի տեսք ունի նախադասությունը Ավետարանի մի հատվածում. **კეთილმან** კაცმან **კეთილისაგან** საუნჯისა გამოიღის კეთილი, და **ბოროტმან** კაცმან ბოროტისაგან საუნჯისა გამოიღის ბოროტი [Մարդ

բարի՝ ի բարի գանձուց սրտի իւրոյ հանէ զբարիս, և մարդ չար՝ ի չար գանձուց սրտի իւրոյ հանէ զչարիս] (Մատթ. ԺԲ, 35)։

Բերված նախադասության մեջ კეთილი-ն և ბოროტი-ն գործածված են թե գոյականի և թե ածականի նշանակությամբ։ Իբրև ածական კეთილი-ն ու ბოროტი-ն նախորդում են որոշյալին։ Այլ օրինակներ ახალი և ძველი բառերով. არავინ დაადგის სადგმელი **ახალი** უმურკნველი სამოსელსა **ძუელსა** [Ոչ ոք արկանէ կապերտ անթափ ի վերայ հնացեալ ձորձոյ] (Մատթ. Թ, 16), არცა შთაასხიან ღჳნოჲ **ახალი** თხიერთა **ძუელთა**, რაჲთა არა განხეთქნეს თხიერნი იგი ღჳნომან ახალმან, არამედ შთაასხიან ღჳნოჲ ახალი თხიერთა ახალთა [Եւ ոչ արկանեն գինի նոր ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ տիկքն պատառին, եւ գինին հեղու եւ տիկքն կորնչին. այլ արկանեն գինի նոր ի տիկս նոր] (Մատթ. Թ, 17)։ Այստեղ որոշիչը միշտ հաջորդում է [որոշյալին]. Նույն արտահայտությունը կրկնվում է Մարկոսի (Բ, 22) և Ղուկասի (Ե, 37—38) ավետարաններում, բայց Հովհաննու ավետարանում ընթերցվում է՝ ყოველმან კაცმან **კეთილი** ღჳნოჲ პირველად წარმოდგის [Ամենայն մարդ զանուշ գինի յառաջագոյն պաշտէ] (Յովհ. Բ, 10)։ Այսպիսին է նաև არავინ სუამნ **ძუელსა** ღჳნოსა [Ոչ ոք ըմպէ զհինն (գինի)] (Ղուկ. Ե, 39), որտեղ որոշիչը նախորդում է որոշյալին։ Այլ օրինակներ ახალი ածականով. მოძღურებაჲ ახალი, სამარჳ ახალი, საფლავი ახალი, սակայն միաժամանակ՝ ახალსა სამარესა, სისხლი ჩემი **ახლისა აღთქუმისაჲ:**

Բերված օրինակներից ակնհայտ է, որ Ավետարանի լեզվում որոշիչ-որոշյալի հարցում մեծապես գերազանցում են այն դեպքերը, երբ որոշիչը հաջորդում է որոշյալին։

Այլ հուշարձաններում, ինչպիսիք են Շուշանիկի, Եվստաթիոս Մցխեթցու և Հաբո Տփղիսեցու վկայությունները, դրությունը այլ կերպ է. այս հուշարձաններում որոշիչի նախորդումը եթե չի գերազանցում, ապա ետ էլ չի մնում շրջուն շարադասությունից։ Այստեղ հանդիպում է ինչպես ცრემლითა მწარითა [արցունքով դառն], այնպես էլ მწარითა ცრემლითა [դառն արցունքով] (Շուշ.). ლუაწლსა დიდსა և დიდსა ლუაწლსა (Շուշ.), დიდითა დიდებითა և სარწმუნოებითა დიდითა (Եվստ.), შუენიერი მონასტერი և მონასტერი შუენიერი (Վարք Հով. և Էփթ.), ქალაქსა მას დიდსა և დიდსა მას ქალაქსა (Հաբո)։

274. Թվական անունը՝ որոշիչ։ Քանակական թվականը շարահյուսորեն այնպիսի դիրքում է, ինչպես ածական անունը. այն համաձայնում է անվան հետ եզակի թվով. **ხამისა თთჳსა** გზასა (Հաբո)։ ხუთი პური და ორი თევზი, ასი დრაჰკანი, ასი ცხოვარი [հարիւր ոչխար]

(Մատթ. ԺԹ. 11)։ ექუსი წელი ციხესა მას ალასრულა (Շուշ.)։ ვითარ იქმნა იგი ათის წლის (Խանձթ.)։ ვითარცა იყო იონა მუცელსა ვეშაპისასა სამ დღე და სამ ღამე *և այլն։*

Եթե որոշյալ անունը 5-ով *հոգնակի թվով է, թվական անունն էլ կդրվի հոգնակի թվով.* შეემთხჳნეს მას ორნი კაცნი [*Պատահեցին նմա զինաւորք երկու*] (*Մատթ. Ը. 28*)։ მეგობარო, მავასხენ მე სამნი პურნი [*Բարեկամ, տուր ինձ փոխ երիս նկանակս*] (*Ղուկ. ԺԱ, 5*)։

Ինչ վերաբերում է տեղին, ապա քանակական թվականը գրեթե մշտապես նախորդում է որոշյալին. ეჩუენა პირველად მარიამს მაგდანელსა, რომლისაგან განსრულ იყო **შჳდი ეშმაკი** [*Երևեցաւ Մարիամու Մագդաղենացւոյ, յորմէ հանեալ էր զեւթն դեւս*] (*Մարկ. ԺԶ. 9*)։ მარიამ, რომელსა ერქუა მაგდანელი, რომლისგან განსრულ იყვნეს შჳდნი ეშმაკნი [*Մարիամ, որ կոչէր Մագդաղենացի, յորմէ եօթն դեւ ելեալ էր*] (*Ղուկ. Ը. 2*), *տարբերակ՝* ეშმაკნი შჳდნი—D։

275. Դերանուններ՝ որոշիչ: *Ստացական դերանունը* (ჩემი, შენი, მისი, ჩუენი, თქუენი, მათი, თჳსი) *սովորաբար հաջորդում է որոշյալին.* მამაჲ ჩემი, დედაჲ შენი, სახლი მისი, პური ჩუენი, ქალაქი თქუენი, ვენაჴი მათი, ასული თჳსი *և այլն։*

ყოველი-*ն* [*ողջ, ամենայն*] *նախորդում է որոշյալին.* ყოველი ერი, ყოველი სიტყუაჲ, ყოველმან ხემან *և այլն։ Ժամանակի պարագա արտահայտելիս* ყოველი-*ն հաջորդում է որոշյալին.* დღე ყოველ [*ամբողջ օրը*] ღამე ყოველ [*ամբողջ գիշերը*]։

276. Գոյական անուններ՝ որոշիչ: *Որպես որոշիչ գործածված գոյական անունը դրվում է սեռական հոլովով, որը կարող է և՛ նախորդել, և՛ թե հաջորդել որոշյալին։ Եթե այն հաջորդում է, ապա համաձայնում է իր որոշյալի հետ ըստ հոլովի և թվի, որի հետևանքով էլ ստացվում է կրկնակի հոլովում՝ սեռ.—ուղղական, սեռ.—անվանական, սեռ.—պատմողական և այլն։ Բառ այսմ էլ ունենք՝* მდოგჳსა მარცუალი [*մանանխոյ հատն*]* (*Մարկ. Դ. 3*), *որոշիչը նախորդում է որոշյալին*) *և* მარცუალი მდოგჳსაჲ (*զհատ մանանխոյ*] (*Մատթ. ԺԷ. 20, որոշիչը հաջորդում է որոշյալին և համաձայնում է նրա հետ հոլովով*)։ *Ավետարանի լեզվում մեծապես գերադասվում են այն դեպքերը, երբ որոշիչը հաջորդում է որոշյալին։* წინაშე სპარსთა მეფისა (*Շուշ., որոշիչը նախորդում է*), იჴმნა მეფისაგან სპარსთაჲსა (*Շուշ., որոշիչը հաջորդում է*), ქართლისა მთავარნი (*Նվառ*), მთავარნი ქართლისანი (*Նվառ*)։

---

* *Համապատասխանեցնելու համար հայերենը շրջել ենք (ծան. խմբ.)։*

Վերոբերյալ օրինակում მდოგვსაჲ-ը (მარცვალი მდოგვსაჲ) *հոլովված է կրկնակի անգամ՝ սեռական-անվանական հոլովով* (მდოგვსა-ჲ) *իսկ* მთავარნი ქართლისანი *օրինակում երկրորդ բառը* (ქართლისა-ნ-ი) *հոգնակի թվի սեռական-անվանական հոլովաձևով է։ Այս դեպքում որոշիչը* (ქართლისანი) *համաձայնում է որոշյալին ըստ հոլովի և թվի։*

277. **Երկու և ավելի որոշիչ՝ սեռական հոլովաձևով:**

Սեռական հոլովով դրված որոշիչը համաձայնում է որոշյալին ըստ հոլովի. სისხლი ვაცთაჲ: *Եթե որոշիչը երկուսն է՝ հնագույն հուշարձաններում երկուսն էլ համաձայնում էին* (სისხლი ვაცთაჲ და კუროთაჲ), *իսկ հետագա շրջանի հուշարձաններում՝ միայն երկրորդը.* სისხლი ვაცთა და კუროთაჲ [*արիւն նոխազացն եւ ցլուցն*] (*Եբր. Թ, 4 CD*): მევობარი მეზუერეთა და ცოდვილთაჲ [*բարեկամ մաքսաւորաց եւ մեղաւորաց*] (*Մատթ. ԺԱ, 19*)։

Եթե որոշիչը երեքն է՝ ուշ շրջանի հուշարձաններում որոշյալին համաձայնում է երրորդը. ღმერთი მშჳდობისა, სიხარულისა და კაცმოყუარებისაჲ იყავნ თქუენ თანა [*Թանձթ.*)։

278. **Բաղադրյալ տեսքի որոշիչ–որոշյալ:** *Կան մի շարք որոշիչ-որոշյալներ, որոնք բաղադրիչներ են կամ մոտ են բաղադրիչներին. Որոշիչը նախորդում է որոշյալին և այն չունի աճական ձայնավոր. Այսպիսիք են.* ღმრთის მშობელი, ღმრთის მეტყუელი, ღმრთის მოყუარე, ერის მთავარი, ერის თავი, ერის კაცი, ნათლის მცემელი, ქველის მოქმედი, ეზოჲს მოძღუარი, სჯულის მეცნიერი, ზეთის ხილი, დის წული, ძის ცოლი, ისრის პირი, დანაკის ქუდი, მამათ მთავარი *և այլն։*

279. **Վերադիր:** *Հատուկ անվան որոշիչ գործածված և նրա հետ հոլովով համաձայնեցված գոյական անունը վերադիր բառ է։ Այն, սովորաբար, հաջորդում է հատուկ անվանը. Վերադիր բառի օրինակներ են.* ესაია წინაჲსწარმეტყუელი, იოვანე წინამორბედი, პავლე მოციქული, კირიონ კათალიკოზი, დავით ეპისკოპოსი, ჴსართან ხუცესი, გაბრიელ მღდელი, ვახტანგ მეფეჲ, დემეტრე ჯპატოსი, ვარსქენ პიტიახში, უსტამ ციხის თავი, ალექსანდრე მჭედელი, სჳმონ მოგჳ, დიოს კერპი, მცხეთა ქალაქი *և այլն։ Վերադիր բառերով անունների հոլովման մասին տես § 52։*

ԱՅԼԵՎԱՅԼՔ

280. **Կապը երկու անունների հետ:** *Եթե կապը երկու կամ երեք անունների է վերաբերում, այն դրվում է նրանցից մեկի՝ սովորաբար առաջինի հետ։*

ურთ [*հանդերձ*]. შევიდა ფარაო ეტლებითურთ და მჴედრებით შუა ზღუასა [*Շարական Ա, 19*]:

გან [*-ից*]. და მიეცნეთ თქუენ მამა-დედათაგან და ძმათა და მეგობართა [*Մատնեսջիք եւ ի ծնողաց եւ յեղբարց եւ յազգականաց եւ ի բարեկամաց*] (*Ղուկ. ԻԱ, 16*): სახლისაგან და ტომისა დავითისა [*ի տանէ Դաւթի*] (*Ղուկ. Ա, 27*): შიშისაგან და მოლოდებისა [*Յերկիւղէ՝ և ի կարծեաց եկելոց*] (*Ղուկ. ԻԱ, 26*):

თჳს [*վասն*]. ფიცისა მისთჳს და მის თანა მეინაჴეთა [*Վասն երդմանցն եւ կոչնականացն*] (*Մարկ. Զ, 26*): იგი თავადი ტკბილ არს უმადლოთათჳსცა და უკეთურთა [*Նա քաղցր է ի վերայ չարաց և ապաշնորհաց*] (*Ղուկ. Զ, 35*): რომელი შჳოთისათჳს და კაცის-კლვისა შეგდებულ იყო საპყრობილესა [*Վասն խռովութեան եւ սպանութեան արկեալ էր ի բանտ*] (*Ղուկ. ԻԳ, 25*): მოვიდეს იგი და ამხილოს სოფელსა ცოდვისათჳს და სიმართლისა და საშჯელისა [*Նա եկեալ յանդիմանեսցէ զաշխարհ վասն մեղաց, եւ վասն արդարութեան եւ վասն դատաստանի*] (*Յովհ. ԺԶ, 8*): *C-ում սրա փոխարեն կարդում ենք.* იგი მოვიდეს და ამხილოს სოფელსა ცოდვათათჳს და სიმართლისათჳს და სასჯელისათჳს, *այսինքն՝ այստեղ բոլոր անուններն ունեն* თჳს *հարադրումը:*

ზედა [*վերայ, ընդ*]. მიმოხუალთ ზღუასა ზედა და ჴმელსა [*Ցածիք ընդ ծով եւ ընդ ցամաք*] (*Մատթ. ԻԳ, 15*):

წინაშე [*առաջի*]. მეფეთა წინაშე და მთავართა [*Առաջի դատաւորաց եւ թագաւորաց*] (*Ղուկ. ԻԱ, 12*):

წილ [*փոխարեն*]. სახიობისა წილ და ქნარისა (*Սին. ճառընտ. 32, 20*):

281. Կապի տեղը ուռչյալ անվան հետ գործածվելիս: *Եթե անվանը հաջորդում է ուռչիչ, կապը կարող է դրվել կամ ուռչյալից, կամ՝ ուռչիչից հետո: Օրինակ՝* ვითარ განშორებულ არიან ცანი ქუეყანისაგან, ეგრე განშორებულ არიან გზანი ჩემნი **გზათაგან** თქუენთა და ზრახვანი ჩემნი ზრახვათა **თქუენთაგან** [*Որպէս հեռի են երկինք յերկրէ, այնպէս հեռի են ճանապարհք իմ ի ճանապարհաց ձերոց եւ խորհուրդք իմ ի խորհրդոց ձերոց*] (*Եսայի ԾԵ, 9*): *Այստեղ առաջին դեպքում* გან-*ը կցվել է ուռչյալին* (გზათაგან თქუენთა), *իսկ երկրորդ դեպքում՝ ուռչիչին* (ზრახვათა თქუენთაგან):

282. მცა մասնիկի առանձնահատկությունը: *Այս մասնիկի առանձնահատկությունն այն է, որ նախադասության մեջ այն չի կարող համադրվել բայի ստորադասական ձևին և անպայմանորեն այն փոխում է հրամանականի:* რაჲთა [*զի*] *շաղկապը ստորադասական եղանակ է պա-*

համընկնում ինչպես, օրինակ, այստեղ՝ და ვითარ განთენა, ზრახვა ყვეს ყოველთა მღდელთ მოძღუართა და მოხუცებულთა იესუჱსთჳს, **რაჲთა მოკლან** იგი [*Իսկ ընդ առաւօտն, խորհուրդ արարին ամենայն քահանայապետքն եւ ծերք ժողովրդեանն վասն Յիսուսի սպանանել զնա*] (*Մատթ. ԻԷ, 1*)։ *Այլ օրինակ՝* ხოლო მღდელთ მოძღუარნი იგი და ყოველი კრებული ეძიებდეს იესუჱსთჳს მოწამესა, **რაჲთა მოკლან** იგი, და არა ჰპოებდეს [*Իսկ քահանայապետքն եւ ամենայն ատեանն խնդրէին հակառակ Յիսուսի վկայութիւն ինչ, զի սպանանիցեն զնա եւ ոչ գտանէին*] (*Մարկ. ԺԴ, 55*), *իսկ Ադիշի ավետարանում գրված է՝* ...რაჲთამცა მოკლეს იგი და ვერ ჰპოვებდეს։

მოკლან-*ը ստորադասականի ձեւ է, իսկ* მოკლეს-*ը՝ սահմանականի, որը պայմանավորված է նախադասության մեջ հայտնված* მცა *մասնիկով։ Նման խոավիճակ է նաև այլուր՝* შეწყალის მე ერი ესე რამეთუ სამი დღჱ არს, ვინაჲთგან მელიან მე და არარაჲ აქუს რაჲ ჭამონ [*Գթամ ես ի վերայ ժողովրդեանդ. զի արդ երեք աւուրք են՝ մինչ աստ կան եւ ոչ ունին զինչ ուտիցեն*] (*Մարկ. Ը, 2*)։ *Սրա փոխարեն Ադիշի Ավետարանում ասված է.* არარაჲ აქუს, **რაჲმცა ჭამეს**։

Համեմատիր, ասենք՝ რაჲთა ჭამონ *&* რაჲთამცა ჭამეს, რაჲთა მოკლან *&* რაჲთამცა მოკლეს։ *Այլ օրինակներ.* ოდეს ყოფილ არს აქამომდე, თუმცა მამათა და დედათა ერთად ეჭამა პური? (*Շուշ.*)։ არა ჯერ-არს შენდა, ვითარმცა გესუა შენ იგი ცოლად [*Չէ արժան քեզ ունել զդա*] (*Մատթ. ԺԴ, 4*)։ ძმაო მიქელ, გენება, რაჲთამცა დიდისა იოვანე ზედაზნელისა ცხორებაჲ აღგწერე და მიუძღუანე თქუენსა მას უდაბნოსა (*Զեդազնեցի*), ვინ არს, რომელსამცა უდაბნოსა ზედა პური დაგებული ედვა და იგი ჭამდა! (*Սին. ճառըն. 249, 37*)։

მცა *մասնիկի ազդեցությունը տարածվում է նաև միավորյալ նախադասության մի քանի բայերի վրա.* ნუ შემემთხუევინ მე ეგე ყოფად, ვითარმცა **დაგიტევე** შენ და **მივიქეც** და **წარვედ** სახიდ ჩემდა [*Մի պատահեսցի ինձ թողուլ զքեզ եւ դառնալ ի քէն. զի ուր դու երթայցես՝ երթայց...*] (*Հռութ. Ա, 16*)։

283. Պայմանա-հետևանքային նախադասություն։ *Եթե բարդ ստորադասական նախադասության մեջ արտահայտված է պայման ու նրա հետևանքը, երկու նախադասության մեջ էլ (գլխավոր և երկրորդական) սովորական է* მცა *մասնիկի գործածումը։ Երկրորդական նախադասության մեջ գործածվում է* უკუეთუმცა (*կամ* თუმცა)։ ***Օրինակներ.*** უკუეთუმცა აქა იყავ, არამცა მომკუდარ იყო ძმაჲ იგი ჩემი [*Եթէ աստ լեալ էիր, եղբայրս իմ չէր մեռեալ*] (*Յովհ. ԺԱ, 21*)։ ესე უკუეთუმცა იყო წინაწარმეტყუელი, უწყოდამცა, ვინ და რაბამი დედაკაცი შეეხების მას [*Սա*

թէ մարգարէ ոք էր, ապա գիտէր, թէ ով եւ որպիսի ոք կին մերձենայ ի սա| (*Ղուկ. Է, 39*)։ *Ադիշի Ավետարանում վերջին նախադասությունը այսպես է ներկայացված.* ესე თუმცა იყო წინაწარმეტყუელი, უწყოდამცა, რაბამი დედაკაცი შეეხების მას: შე-თუმცა-საძლებელ იყო, თუალნიმცა თქუენნი აღმოიჴადენით და მომცენით მე |*Եթէ հնար ինչ էր՝ զաչս ձեր հանեիք եւ տայիք ինձ*| (*Գաղատ. Դ, 15*)։ უკუეთუმცა მე მიცოდეთ, მამაჲცამცა ჩემი იცოდეთ |*Եթէ զիս գիտէիք՝ եւ զհայրն իմ գիտէիք*| (*Յովհ. Ը, 19*)։ უკუეთუმცა უწყოდა სახლისა უფალმან, რომელსა ჟამსა მპარავი მოსლვად არს, იღჳძებდ-მცა |*Եթէ գիտէր տանուտէր՝ յորում պահու գող գայ, հսկէր՝ եւ ոչ տայր ական հատանել զտանն իւրոյ*| (*Մատթ. ԻԴ, 43*)։ ვინმცა მცნა მე ფრთენი ვითარცა ტრედისანი, აღ-მცა-ვფრინდი, ავიმაღლე, განვეშორე, მი-მცა-ვედ და განვისუენე უდაბნოს |*Տայր ոք ինձ թեւս որպէս աղաւնւոյ, թռչէի վերանայի, հեռացեալ դադարէի յանապատի*| (*Սաղմ. ԾԴ, 7—8*)։ უკუეთუმცა სიტყუასა წერილთასა იკითხევდ, განგიმარტეთმცა: და უკუეთუმცა ჩუენ გკითხევდ, მიგიგეთმცა (*Վարք Յովհ. և Եփթ.*)։ უკუეთუმცა გიყუარდი მე, გიხაროდამცა |*Եթէ սիրէիք զիս, ապա ուրախ լինել էր ձեր*| (*Յովհ. ԺԴ, 28*)։

284. Անվան համաձայնությունը երկրորդական նախադասության բայի հետ: *Եթե անունն ունի որոշիչ երկրորդական նախադասություն, իսկ հետո գալիս է գլխավոր նախադասությունն, անունը համաձայնում է ոչ թե գլխավոր, այլ երկրորդական նախադասության բայի հետ, ընդ որում, միևնույնն է՝ անունը ենթակա է, թե՝ խնդիր.* ყოველმან ხემან რომელმან არა გამოიღოს ნაყოფი კეთილი, მოეკუეთოს და ცეცხლსა დაედვას |*Ամենայն ծառ, որ ոչ առնիցէ զպտուղ բարի, հատանի եւ ի հուր արկանի*| (*Մատթ. Լ, 10*)։ *Այսպես է.* სანადიროჲმან შეიპყრას, *բայց* სანადიროჲ რომელ დაარწყუეს, შეიპყრას ფერჴი მათი |*Որս զոր թաքուցին՝ առցէ զոտս նոցա*| (*Սաղմ. ԼԴ, 8*)։ იესუ ქრისტე ღამესა რომელსა მიეცემოდა, მოიღო პური |*Տէր Յիսուս ի գիշերին յորում մատնէր՝ առ հաց*| (*Ա Կորնթ. ԺԱ, 23*)։ მამაჲ შენი რომელი ჰხედავს დაფარულთა, მოგაგოს შენ ცხადად |*Հայրն քո որ տեսանէ ի ծածուկ հատուսցէ քեզ յայտնապէս*| (*Մատթ. Զ, 4*)։ ყოველთა სიტყუათა რომელთა გეტყოდა შენ, დაიმარხენ გულსა შენსა და ყურითა შენითა ისმინენ. |*Զամենայն զբանս, զոր խօսեցայ ընդ քեզ, լուր ականջօք քովք և դիր ի սրտի քում*| (*Եզեկ. Գ, 10*)։ კაცთა მათ, რომელთა შეიპყრა იესუ, ეკიცხევდეს მას და ჰსცემდეს |*Եւ արքն, որ պահէին զնա, այպն առնէին զնովաւ եւ հարկանէին*| (*Ղուկ. ԻԲ, 63*)։ კაცსა, რომელსა ჰრქჳან იესუ, თიჴაჲ შექმნა და მცხო თუალთა ჩემთა |*Այր մի, որում Յիսուսն ասեն, կաւ*

արար և ծեփեաց զաչս իմ] (*Յովհ. Թ, 11*)։ ყოველი წული რომელი შევნ ებრაელთა, მდინარესა შთასთხევდით [*Զամենայն արու որ ծնանիցի եբրայեցւոց ի գետ ընկեսջիք*] (*Ելից. Ա. 22*)։

285. Այլևայլ կազմության բայեր և նրանց հետ դրվող անվան հոլովը։

Եթե այլևայլ նախադասություններում անվան հետ դրված է երկու կամ ավելի բայեր, որոնք տարբեր կազմության են, ապա անունը հոլովական առումով այն բայի հետ է համաձայնում, որն ավելի մոտ է իրեն։ Օրինակ. ჰრცხუენოდენ და შეძრწუნდენ ყოველნი მტერნი ჩემნი [*Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ամենայն թշնամիք իմ*] (*Սաղմ. Զ, 11*)։ ჰრცხუენოდენ მტერთა, შეძრწუნდენ მტერნი։

მტერნი-*ն այստեղ համաձայնեցված է իրեն ավելի մոտ գտնվող բայի հետ* (შეძრწუნდენ მტერნი)։ *Եթե այդ բայերի տեղերը փոխենք, կստանանք հետևյալը՝* შეძრწუნდენ და ჰრცხუენოდენ ყოველთა მტერთა ჩემთა։ *Նման օրինակ է հետևյալը.* ყოველი დაბადებული თანა-კუნესის და თანა-ელმის მოაქამდე [*Ամենայն արարածք հեծեն և երկնեն մինչև ցայժմ*] (*Հռովմ. Ը, 22*)։ *Բայերը տեղափոխելիս, կստանանք հետևյալը՝* ყოველსა დაბადებულსა თანა-ელმის და თანა-კუნესის მოაქამდე։ იხილა იესუ ერი იგი და შეეწყალნეს იგინი [*Տեսեալ զժողովուրդն՝ գթացաւ ի նոսա*] (*Մատթ. Թ, 36*)։ იხილა იგი მამამან და შეეწყალა და მირბიოდა იგი და დავარდა ქედსა მისსა [*Եւ տես զնա հայրն և գթացաւ, յարեաւ և ընթացաւ ընդ առաջ, անկաւ զպարանոցաւն նորա*] (*Ղուկ. ԺԵ, 20*)։ შეეწყალა-*ն պահանջում է տրական հոլով* (შეეწყალა მას), მირბიოდა-*ն և* დავარდა-*ն՝ անվանական* (მირბიოდა იგი, დავარდა იგი)։ *Սակայն եթե այստեղ* მამამან-*ն է, ապա այն պատճառով, որ ամենամոտ բայը* იხილა-*ն է։ Միջնադարյան նախադասության համապատասխան օրինակներից է՝* ნეტარ არიან, რომელნი-იგი ქრისტჱსთჳს იწამნეს და დასთხინეს სისხლნი მათნი [*Երանելի են, որք վասն Քրիստոսի վկայեցան և հեղեցին զարիւնս իւրեանց*] (*Սին. ճառըն. 274, 10*)։

დასთხინეს-*ը համաձայնում է պատմողական հոլովաձևով ենթակայի հետ.* რომელთა-იგი დასთხინეს։

Նշված կարգը տարածվում է նաև այն դեպքերի վրա, երբ մեկ բայի հետ գործածված են երկու ուղիղ խնդիր՝ մեկը եզակիում, իսկ մյուսը՝ հոգնակիում։ Բայն այն խնդրի թվով է դրվում, որն ամենամոտն է նրան։ ჯუარს-აცუეს იგი და ძჳრის მოქმედნი იგი [*Հանին զնա ի խաչ և զչարագործսն*] (*Ղուկ. ԻԳ, 33*)։

286. Բայանունը և ուղիղ խնդիրը։ *Անցողական բայի պարագայականում դրված բայանունը համապատասխանում է եվրոպական լեզուների*

ինֆինիտիվին (անորոշ դերբային)։ Այն ուղիղ խնդիր է պահանջում անվանական կամ տրական հոլովով։

ա) Անվանականով. ესრე ჭერ-არს ჩემდა **აღსრულებად** ყოველი სიმართლე [*Այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն*] (*Մատթ. Գ, 15*)։ ორგული, აღმოიღე პირველად ძელი თუალისაგან შენისა და მაშინ იხილო **აღმოღებად წუელი** თუალისაგან ძმისა შენისა [*Կեղծաւոր, հան նախ զգերանդ յականէ քումմէ, եւ ապա հայեսցի հանել զշիւղն յականէ եղբօր քոյ*] (*Մատթ. Է, 6*)։ ძალ-მიც **დარღუევად** ტაძარი ესე და მესამესა დღესა აღშენებად [*Կարող եմ քակել զտաճարն Աստուծոյ, եւ զերիս աւուրս շինել*] (*Մատթ. ԻԶ, 61*)։

შეუძინა **მივლინებად** სხუათ მონათ [*Եւ յաւել միւս եւս ծառայ յղել*] (*Ղուկ. Ի, 11*)։ აგარაკსა მიგცემ შენ დაფლვად მკუდარი შენი [*Զագարակն տամ քեզ... թաղեա զմեռեալն քո*] (*Ծննդ. ԻԳ, 11*)։

բ) Տրականով. ეგერა მოძიებად ვალს ჰეროდე და წარწყმედად ყრმასა მაგას [*Քանզի ի խնդիր է Հերովդէս կորուսանել զմանուկդ*] (*Մատթ. Բ, 13*)։ იწყეს მუსრვად თავსა ჰუვილისასა [*Եւ սկսան հասկ կորզել*] (*Մատթ. ԺԲ, 1*)։ **სმენად სიბრძნესა** სოლომონისსა [*Զի եկն ի ծագաց երկրի լսել զիմաստութիւնն Սողոմոնի*] (*Մատթ. ԺԲ, 42*)։ მოგუევლინნა ჩუენ უფალმან შემუსრვად მაგას [*Առաքեաց զմեզ Տէր սատակել զդա*] (*Ծննդ. ԺԹ, 13*)։

Ինչ խոսք, ուղիղ խնդրի փոխարեն նման դեպքերում կարող է համարել լրացումը դրված լինել տրական հոլովով. ნუ ჰგონებთ, ვითარმედ მოვედ **დაჴსნად შჯულისა** [*Մի համարիք եթէ եկի լուծանել զօրէնս*] (*Մատթ. Ե, 17*)։ (აბრაჰამ) განყო ჴელი **მოღებად** მახჳლისა და დაკლვად ძისა თჳსისა [*Ձգեաց Աբրահամ զձեռն՝ առնուլ զսուրն եւ զենուլ զորդին իւր*] (*Ծննդ. ԻԲ, 10*)։

287. Անուղղակի խնդիրը անցողական բայի 3-րդ բայախմբի բայաձևերի հետ:

Անուղղակի խնդիր պահանջում է նաև անցողական բայի 3-րդ բայախմբի բայաձևերի հետ. მჱეცნიცა ველისანი მიმიცემიან მას [*Զգազանս անապատի ետու նմա*] (*Երեմ. ԻԸ, 14*)։ მოგიცემიეს **მოშიშთა** შენთა სასწაული [*Ետուր երկիւղածաց քոց*] (*Սաղմ. ԾԹ, 6*)։

288. Հաճախականի գործածությունը: *Հաճախականը կոչված է արտահայտելու այնպիսի գործողություն, որը հաճախ կրկնվելիս է եղել անցյալում կամ այնպիսին, որը սովորական է և մինչև պահպանում է։ Հաճախ ներկայի հաճախականը, անցյալ անկատարի հաճախականը և II հաճախականը խառնված են լինում միմյանց։ Օրինակ.* არა გაჴსოსა, ძმანო ჩემნო საყუარელნო, რაჟამს-იგი **ცხდით** ერთობით და **ციკეთ-**

ხვიდით წამებასა წმიდათასა და გჳკჳრნმოთმინებაჲ იგი მათი და **ვიტყოდით** ურთიერთას: ნეტარ არიან, რომელნი-იგი ქრისტჱსთჳს იწამნეს და დასთხინეს სისხლნი მათნი [*Ո՞չ հիշեք, եղբայրք իմ սիրելիք, յորժամ նստէինք ի մի և կարդայինք զվկայաբանութիւնս սրբոց և օրհնէաք ի վերայ [զորոց] նոցա, և ասէինք զմիմեանս, երանելի են որք վասն Քրիստոսի վկայեցան և հեղեցին զարիւնս իւրեանց*] (*Սին. ճառընտ.* 274, 8—9)։ *Այստեղ* ვსხდით-*ը 2-րդ համախականն է,* ვიკითხვიდით-*ը և* ვიტყოდით-*ը՝ անցյալ անկատարի համախականն, իսկ* გჳკჳრნ-*ը՝ ներկայի համախականը: Այլ օրինակներ.* რაჟამს **იტყჳნ**, ბრძნად **ალალის** პირი თჳსი და წესი **განუჩინის** ენასა თჳსსა (*Վարք Նինոյի.*)։ რომელი გარდამრე საქმე არნ, მას აუწყიან (*Նույն տեղում*)։

289. Օտար լեզուների ազդեցությունը: *Հին տեքստերում օտար լեզուների ազդեցությունը շատ տեղերում է հանդես գալիս, բայց այստեղ կբերենք միայն մի քանի բնորոշ նմուշ:*

Հունարանություն: *Հունարեն լեզվի* xαι *բառն ունի և* და *շաղկապի, և* ცა *մասնիկի նշանակություն, այնպես ինչպես ռուսերենի* и-*ն: Հունարենից թարգմանված կամ ըստ հունարենի խմբագրված բնագրերում երբեմն հանդիպում ենք* და-*ի գործածման՝ մասնիկի նշանակությամբ, սակայն միաժամանակ գործածված նաև* ცა *մասնիկը: Այդպիսի* და-*ն գրվում է համապատասխան բառից առաջ: Օրինակ՝* უკეთუ დასაბამი იგი წმიდა არს, **და თბეცა**: უკეთუ ძირი იგი წმიდა არს, **და** რტონიცა [*Եթէ սկիզբն սուրբ է, և զանգուածն, և արմատն, այս և ոստքն*] (*Հռովմ. ԺԱ, 16*)։ ეგრეთცა **და** ქმარიცა თჳსთა ჴორცთა ზედა არა უფალ არს [*Նոյնպէս և այրն իւրում մարմնոյ ոչ իշխէ*] (*Ա Կորնթ. Է, 4*)։

Ասորաբանություն-հայկաբանություն: ჴელითა *ձեռն որոշակի գրքերում նշանակում է* կողմից. ჴელითა მოსესითა [*ի ձեռն Մովսէսի*] (*Ղևտ. Ժ, 11*)—*Մովսեսի կողմից:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5
Հայերեն հրատարակության առթիվ 7
Ներածություն 10
Վրաց այբուբենը 10
Հնչյունների դասակարգումը 17
Ուղղագրական երևույթներ 19
Հիմնական հնչյունական երևույթներ 21

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անուններ 36
Հոլովում 36
Որոշյալ անուններ 51
Դերանուններ 55
Բառածանցում 60
Բառակազմություն 70
Բայ 73
Խոնարհման կարգեր 74
Դեմք և թիվ 74
Ենթակայական ցուցիչներ 76
Խնդրային ցուցիչներ 82
Ժամանակ և եղանակ 86
Կերպ 86
Դարձողություն 87
Բազմակիություն 87
Հետևողություն 87
Բայաշարք 88
Բայածանցման կարգեր 91
Ուղղություն և կողմնորոշում 91
Սեռ 96
Ներգործական սեռ 96

Կրավորական սեռ 96
Շարժուն կրավորական 96
Կայուն կրավորական 101
Չեզոք սեռ 103
Դարձություն 103
Խոնարհում 109
Ներգործական սեռ 109
Թեմա 109
Անձական 115
Կրավորական սեռ 139
Շարժուն կրավորական 139
Նախածանցավոր կրավորական 139
Վերջածանցավոր կրավորական 146
Անածանց կրավորական 150
Կայուն կրավորական 153
Չեզոք սեռ 155
Բարդ բայեր 158
Փոխարինելիություն 165
Փոխարինելիություն ըստ թվի 166
Փոխարինելիություն ըստ բայաշարքի 168
Փոխարինելիություն ըստ դարձության 172
Հարկադրական բայաձևեր 173
Բայի անդեմ ձևեր 174
Բայանուն 174
Դերբայ 176
Ուղեսուններ 181
Մակբայ 181
Կապ 183
Շաղկապ 187
Մասնիկ 190

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Ենթակա և խնդիր 196
Գերադրական աստիճանի ձևերի շարահյուսական նշանակությունը . . 206
Համաձայնություն 208
Որոշիչ-որոշյալ 213
Այլևայլք 216

ՇԱՆԻՁԵ ԱԿԱԿԻ ԳԱԲՐԻԵԼԻ

ՀԻՆ ՎՐԱՑԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ШАНИДЗЕ АКАКИЙ ГАВРИЛОВИЧ

ГРАММАТИКА ДРЕВНЕГРУЗИНСКОГО ЯЗЫКА
(на армянском языке)

Հրատարակչական խմբագիր Ժ. Թ. ԱՓԻՆՅԱՆ
Նկարիչ Լ. Ա. ՍԱԳՈՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
Տեխնիկական խմբագիր Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Սրբագրիչներ Զ. Գ. ՆԱԹԱՆՅԱՆ, Հ. Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ,
Գ. Ա. ԶՈՐԱՆՅԱՆ

ИБ № 195

Հանձնված է շարվածքի 21.07.1982թ.։ Ստորագրված է տպագրության 18.08.1983թ.։
ՎՖ 04486։ Չափը $60 \times 90^{1}/_{16}$։ Թուղթ № 1։ Տառատեսակ «Գրքի սովորական»,
բարձր տպագրություն։ Պայմ. 14,13 մամ., տպագր. 14,13 մամուլ։
Հրատ.-հաշվարկ. 12,12 մամուլ։ Տպաքանակ 1000։ Պատվեր № 591։ Գինը 2 ռ. 30 կոպ.։
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյանի փ., 24 գ։
Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Маршала Баграмяна, 24 г.
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 378310, ք. Էջմիածին։
Типография Издательства АН Арм. ССР, 378310, г. Эчмиадзин.

A II / 70189